


Ս.Շ. ՄՈՒՐԱՂՅԱՆ

ՇԱՏԱԽԻ ԲԱՐԲԱՌԸ



Մ. Հ. ՄՈՒՐԱԳՅԱՆ

ՇԱՏԱԽԻ ԲԱՐԲԱՌԸ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

19 ● ԵՐԵՎԱՆ ● 62

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկա աշխատության մեջ ուսումնասիրվում են Շատա-
խի բարբառի հնչյունաբանությունը, բառապաշարն ու
ձևաբանությունը: Այդ բարբառով բերվում են նմուշներ,
որոնց մի մասը գրի է առնվում առաջին անգամ:

Գիրքը նախատեսված է հայ բարբառագիտությամբ, հա-
յոց լեզվի պատմությամբ, ժողովրդական բանահյալու-
թյամբ զբաղվողների ու հետաքրքրվողների համար:

Հրատարակվում է
Նրևանի Պետական համալսարանի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
Ս. Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

МУРАДЯН
Марлена Айрикян

ШАТАХСКИЙ ДИАЛЕКТ

(На армянском языке)

И з д а т е л ь с т в о

Ереванского государственного университета

19 Երևան 62

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Շատախի բարբառը հայերենի մահացող բարբառներից մեկն է: Նրանով խոսում են միայն տարեց շատախցիները: 1921 թվականին Սովետական Հայաստան ներգաղթած շատախցի հայերը բնակություն են հաստատել Էջմիածնի, Արտաշատի, Վեդու, Աշտարակի շրջանների մի շարք գյուղերում և այլ վայրերում:

Բարբառի ուսումնասիրության համար նյութեր հավաքելիս մենք հաճախ ենք եղել շատախցիների շրջանում. մի քանի ամիս մնացել ենք Արտաշատի Քաղցրաշեն գյուղում, որտեղ շատախցիները կազմում են բնակչության հիմնական մասը: Քաղցրաշենում սովորել ենք բարբառը, որով աղատ կարողանում ենք խոսել:

Բարբառային նյութեր հավաքելու գործում մեզ մեծ շահով օգնել են շատախցիներ Զադո Ջիրբայելյանը (95 տարեկան), Հայրիկ Մուրադյանը (55 տարեկան), Մուրադ Մանուկյանը (72 տարեկան), Ալթուն Գաբրիելյանը (70 տարեկան), Մարթա մայրիկը (68 տարեկան), մոկացիներ Ռազիկ Միրզոյանը (83 տարեկան), Համբարձում Հակոբյանը, Արտաշես Շահինյանը և այլ անձինք, որոնց հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Ժողովրդի կենդանի խոսքն ուսումնասիրելուն զուգընթաց ծանոթացել ենք բանահյուսական գրավոր նյութերին, այդ թվում՝ «Սասնա ծռեր» ժողովածուի Շատախի, Մոկսի պատումներին, Ե. Լալայանի «Վասպուրականի բանահյուսությանը» և այլ աղբյուրների: Գրավոր նյութերն ունեն մի հիմնական թերություն՝ գրված են ոչ գիտական տառադարձությամբ և չեն ներկայացնում բարբառի հարազատ հնչյունական համակարգը: Շատախցիների կենդանի խոսքն օգնել է մեզ՝ ճիշտ կողմնորոշվելու այս խնդրում:

Աշխատության մեջ պատմական մոտեցմամբ քննել ենք բար-

բառի հնչյունաբանությունը, բառապաշարն ու ձևաբանությունը՝ իբրև ելակետ ունենալով գրաբարի համակարգը: Համեմատել ենք Շատախի և նրան ավելի մոտ գտնվող՝ Վանի ու Մոկաց բարբառների լեզվական իրողությունները՝ նրանց հարաբերակցությունը պարզելու նկատառումով: Աշխատությունն ավելի ամբողջական ներկայացնելու նպատակով իբրև հավելված տվել ենք բարբառում գործածվող՝ հին հայերենից ավանդված բառերի բառացանկը, ինչպես նաև բարբառային ինքնուրույն բառերի բառարանը: Բերել ենք նմուշներ Շատախի բարբառով, որոնց զգալի մասը գրի ենք առել անձամբ՝ շատախցիներից: Մասնակի շարահյուսական դիտողություններ ենք արել, շոշափելով միայն այն առանձնահատկությունները, որոնցով բարբառը տարբերվում է արդի հայերենից:

Շատախի, նրա հայության մասին հաղորդել ենք պատմականորոշ տեղեկություններ՝ նպատակ ունենալով ընթերցողին ծանոթացնել հայ ժողովրդի այդ հատվածի անցյալին:

ՆԵՂԻՍԱ:

Շ Ա Տ Ա Խ¹

Վեհանիստ լեռներով, անտառախիտ, խոր ու մթին ձորերով Հայկական Տավրոսի լեռնաշղթան ձգվում է Վանա լճի հարավային ափերի երկարությամբ: Նրա վրա իշխող Վարագի, Արտոսի, Առնոսի, Կոռոպաշի, Նդերովի, Նեմրութի երկնասույզ գագաթները դարեր շարունակ գյուցազներգության, խորհրդավոր ավանդությունների անսպառ աղբյուր են եղել հայ ժողովրդի համար: Այդ լեռնաշխարհում է ընկած Շատախը: Դա մի հսկա, ոլորապտույտ ձոր է, որն իր բազմաթիվ մանր ու մեծ ենթաձորերով ու լեռնահովիտներով տարածվում է Արտոսի արևմտյան գեղատեսիլ լանջերից մինչև Արևելյան Տիգրիսի գետահովիտը: Շատախի ձորերից նշանավոր են՝ Շատախի գյալին², Վախրովի գյալին, Գանգան (Գյանգյան) գյալին: Իր տեսարաններով ամենագրավիչը Շատախի գյալին է: Նրա խորքից գոռ աղմուկով հոսում է փրփրաբաշ Առնոսը՝ ճեղքելով վայրի խնձորենիների, տանձենիների, ընկուղենիների, հաստաբուն կաղնիների մթին անտառը: Շատախի գյալիի ձորալանջերից դեպի ձորի խորքը գահավիժում են քաղցրահամ ու ձյունափրփուր ջրերով խոխոջող անհամար աղբյուրներ՝ միախառնվելով մայր Առնոսի ջրերին:

Զրառատ է Շատախը: Նրա լեռներից ու ձորերից սկիզբ է առնում Արևելյան Տիգրիսը՝ բազմաթիվ վտակներով: Շատախցի շինականն իր արտը ջրում էր հենց արտում բխող աղբյուրների ջրերով: Միայն Ջնուկ գյուղի հանդերում կա մոտ երկու հարյուր աղբյուր: Շատախը հարուստ է փարթամ բուսականությամբ, լեռ-

¹ Գառմական Հայաստանի գավառներից մեկն է. ներկայումս գտնվում է Թուրքիայի տիրապետության սահմաններում:

² Դյալի նշանակում է ձոր (ջրդերեն ցօլ ձոր) բառից):

նային համեղ բանջարեղենով, անուշաբույր ծաղիկներով, ճոխ արոտատեղերով, խոտհարքներով ու թալուտ անտառներով:

Իր բնական դիրքի շնորհիվ Շատախը գերազանցապես անասնապահական շրջան էր: Ոչխարաբուծությունը կաղմում էր գլխավոր ճյուղը: Տարածված էր նրբագեղմ, անգորական այծերի (չուռ) բուծումը: Գալառի կենտրոնում՝ Թաղում, ինչպես և Կոռովանք ու Կաճեթ գյուղերում գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկը մեղվաբուծությունն էր: Զարգացած ոչխարաբուծությունը հնարավորություն էր ստեղծել ջուլհակության լայն տարածման համար: Բազմաթիվ շինականների տներում դրված էր ջուլհակի դազգահը: Թաղում ամեն տղամարդը ջուլհակ էր: Կանայք լվանում, գզում ու մանում էին բուրդը, ներկում բույսերից իրենց իսկ պատրաստած մշտակալուն, բնական ներկերով, տղամարդիկ գործում էին գույներզգուն, նուրբ շալե կտորներ և շնչին գներով վաճառում վաշխառուններին:

Թաղի ջուլհակային շատ արհեստանոցներում XX դարի ըսկըզբներին կիրառվում էր վարձու աշխատանք, բայց գավառի մնացած գյուղերում հիմնականում իշխում էր բնատնտեսության ձևը:

Շատախն ուներ 110 գյուղ, որոնցից 58-ը՝ հայաբնակ, իսկ մնացածը՝ քրդաբնակ:

Օսմանյան հրեշավոր բռնապետության պայմաններում Շատախի հմայիչ լեռնաշխարհը իր բնակիչների համար դժոխք էր դարձել: Շատախցին ապրում էր ծայրահեղ կարիքի և իր ֆիզիկական գոյությանը մշտապես սպառնացող վտանգի պայմաններում: Պատահական չէ, որ բնության ամենադյուրիշ պատկերները երգելիս Շատախցի շինականը դրսևորել է իր վիշտը.

Առնոսն ի մըկյլիր՝
Խոնավն ի կյալու,
Թուխ աշկն ի լըցվիր՝
Միտ կանի լուլու:

Դառն էր Շատախի հայության անցյալը: Դարեր շարունակ նրա մայրենի հողը ասպատակում էին օսմանյան սուլթաններից հրահրված արյունոտ ալազակախմբեր: Մասսայական կողոպուտը, հայրենի օջախի հրկիզումը, սիրասուն կանանց ու աղջիկների առևանգումը, ազգային ճնշման ծանր լուծը շատախցուցե կյանքի մշտական ուղեկիցներն էին:

Արյունատենչ հրոսակախմբերի սանձարձակություններից խու-

ստիեկու համար շատախցին հարկադրված իր կյանքի զգալի մասն անց էր կացնում հարազատ օջախից հեռու, քարայրերում, վայրի անտառներում և այլուր՝ պանդխտության պայուսակն ուսած: Այդ կացութիւնը խոր արտացոլում է գտել նրա երգերում.

Հըմեն ի՞նչպիսիք ուր պճն կընգիր ի,
եսն իմ մուլքըվիր,
Հըմեն քյար ուր տեղ տոտրիր ի,
եսն իմ կըլորվիր:

Բայց ծանր պայմաններն ու դառնութիւնները չեն ընկճել շատախցուն, չեն հասցրել հուսահատութեան, այլ դարձրել են ավելի տոկուն, հաստատակամ, շարիքի նկատմամբ անհաշտ ու անխնա, ըմբոստ ու խիզախ: Բազմիցս նա դուրս է եկել իր թշնամիների դեմ, հերոսաբար պաշտպանել իր կյանքն ու պատիւը՝ հայրենի հողը ներկելով թշնամիների ու սեփական արշամբ:

* * *

Շատախի խոր անցյալի մասին տվյալներ քիչ կան: Դա պատմական Հայաստանի նախկին Մոկաց Աշխարհի Զերմածոր գավառն է: Թուրքական տիրապետութեան շրջանում Շատախը, ինչպէս Մոկսը, մտել է Վանի վիլայեթի մեջ:

Շատախի հայութեանը պատիւ են բերում 1907—1915 թվականների ընթացքում նրա մղած ազգային-ազատագրական կռիւները, որոնք լի են հայրենասիրութեան և խիզախութեան դրանորման բաղմամբով օրինակներով: 1915 թվականի՝ սուլթանական կարգերի դեմ ուղղված արեւմտահայկական զինված պայքարի ընթացքում շատախցիները փառքով պսակեցին իրենց անունը:

Հայտնի է, որ սուլթան Համիդ II-ը 1890 թվականին ներում շնորհեց բոլոր այն քրդական հրոսակախմբերին, որոնք օրենքից դուրս էին հայտարարված և ընդհանուր շարիք էին թե՛ հայ, թե՛ քուրդ, թե՛ թուրք աշխատավորութեան համար: Դրանք կողոպտում էին, սպանում Տաճկաստանի ժողովուրդներին՝ առանց ազգային տարբերութեան, կտրում էին քարավանների ճանապարհները, թալանում անցորդներին, երկիրը շարունակ պահում սպառնալիքի տակ: Համիդ II-ը նպատակ ուներ դրանցից հենարան ստեղծել իր

¹ Շատախ է կոչվում նաև Սասունի շրջաններից մեկն իր յոթ գյուղերով, որ կապ չունի մեր քննութեան առարկա հանդիսացող Շատախի հետ:

պետութեան համար: Նա ավագակախմբերին՝ զինեց, ապահովեց ռազմամթերքով, զինվորական բարձր կոչումներ շնորհեց պարագլուխներին և դրանց գործողութիւններն ուղղեց արևմտահայութեան դէմ: Անդեն, անպաշտպան, իր խաղաղ աշխատանքով ըզբաղված ժողովրդի համար ստեղծվեց տագնապալի վիճակ: Մանր կացութեան մեջ ընկալ նաև Շատախի հայութիւնը:

1894 թվականից սկսեցին մոլեգնել համիդական զնդերը: Մոլեգնութիւնը ծայրահեղութեան հասավ 1895—1896 թվականներին: Թուրքիայում շմաց հայկական մի բնակավայր, որի վրայով շանցներ խուժանի արհամիրքը: Գյուղերը ծխում էին հայկական լեռնաշխարհով մեկ: Շատախի Կոճեր և Խումար բնակավայրերը ամբողջովին մոխրակույտ դարձան: Այս ավագակային հարձակումից հետո համիդական ցեղապետերը Շատախի հայկական ու քրդական գյուղերը դարձրին իրենց կալվածքները, որով շատախցին ընկալ կրկնակի ճնշման տակ՝ մի կողմից սուլթանական պետութեան, մյուս կողմից՝ համիդական աղաների:

Այս դժվարին կացութեան մեջ Շատախի հայութիւնը հանդես բերեց մեծ տոկունութուն. նա ոչ միայն վերականգնեց իր նորմալ վիճակը, այլև ահալոր սպառնալիք դարձավ համիդական հրոսակախմբերի համար: Շատախցիներին օգնութեան ձեռք մեկնեցին գավառի քրդական Կիտ և Սոքանց գյուղերի բնակիչները, Մոկսի հայերն ու քրդերը:

Շատախցին զինվեց...

1907 թվականի աշնանամուտին գրավանցիների ցեղապետ Ամար աղան, սովորութեան համաձայն, զինված ծառաների գլուխ անցած, մտալ Շատախի գլխին՝ իր կալվածատիրական հարկը գանձելու: Միժանց գյուղի զինված շինականները հրաժարվեցին հարկ վճարել և կալվածատիրոջը գյուղից վռնեցին: Աղան Զնուկ գյուղում արժանացավ նույն «պատվին»: Նա որոշեց բախտը փորձել Կոռովանքում: Այստեղ գյուղացիք հայտարարեցին, թե իբրև հյուր կարող են ընդունել նրան, բայց իբրև կալվածատեր այլևս չեն ճանաչում: Ամարը բորբոքված մերկացրեց դաշույնն ու հարձակվեց գյուղացիների վրա, բայց վերջիններս դուրս բերեցին իրենց թաքցրած զենքերը և ուղղեցին Ամարի կրծքին: Նրա ծառաները սարսափահար փախան, իսկ աղային գյուղացիք խեղդամահ արին:

Այս դեպքից մի քանի օր անց Հարմշատ գյուղի զինված շի-

նականները ոչնչացրին խալիւանցիների ցեղապետ Հաջի աղային ու նրա հրոսակախումբը՝ ետ խլելով 1896 թվականի եղեռնի ժամանակ իրենցից զավթված արոտավայրերը:

Գավառում սկսվեց մասպալական շարժում ճորտատիրական լուծը թոթափելու համար: Դա Շատախի հայության զարթոնքն էր:

Համիդականները սուլթանական կառավարության օգնությամբ փորձ արին վերականգնել իրենց խախտված ճորտատիրական իրավունքը: Հրոսակախմբերը շարժվեցին Շատախի հայկական բնակավայրերի մրա, սակայն բոլոր հարձակումները ավարտվեցին պարտությամբ:

Պետական պահապան զորամասերն ու ոստիկանությունը անվերջ հետապնդում էին հայ շինականներին: Դրուժությունը հատկապես սրվեց 1914 թվականի հոկտեմբերին: Ռուսական զորքը ամբողջ Կովկասյան ճակատով սկսել էր իր հաղթական առաջընթացը Թուրքիայի տերիտորիայում: Արևմտահայությունը իր ազատագրման հույսը կապում էր ռուսական զենքի հաղթանակի հետ: Թուրքական կառավարությունն իր թիկունքում տեսնելով այնպիսի վտանգավոր ուժ, ինչպիսին հայ ժողովուրդն էր, դիմեց ամենավաղագ միջոցի՝ ծրագրելով հայ ժողովրդի բնաջնջման գաղափարը: Նա զորակոչի անվան տակ սկսեց խումբ-խումբ հավաքագրել մարտի ընդունակ հայ տղամարդկանց և մասսայաբար գնդակահարել: Դրան հաջորդեց անպաշտպան մնացած կանանց, ծերունիների ու երեխաների տեղահանումն ու ոչնչացումը: Չնայած գազանային հալածանքներին, Շատախի հայությունը միահամուռ կերպով հրաժարվում էր զորք տալ սուլթանական պետությանը՝ Ռուսաստանի դեմ կռվելու: 1915 թվականի մարտի կեսերին թուրքական մի ջոկատ, Արեֆ էֆենդու հրամանատարությամբ, կառավարական զորակոչի հրամանը կատարելու և զինվորական հարկերը դանձելու նպատակով ներխուժեց Շատախի Կաճեթ գյուղը: Գյուղացիները հանկարծակիի գալով, փախան և պատսպարան գտան հարևան Կաղպի գյուղում: Կաճեթը կողոպտելուց և հրկիզելուց հետո զորքերը ներխուժեցին Սակ, որտեղ ձախողվեց նրանց վայրագ ծրագիրը: Շատախի գյուղի շինականների զինված ջոկատները շրջապատեցին և ոչնչացրին թուրքական զորքերին: Նույն վիճակին արժանացավ Սվտիկին գյուղի թուրքական ջոկատը:

Կայմակամ՝ Համդին ապստամբների դեմ հանեց Շատախի

1. Կայմակամ՝ զավտապետ:

ու հարեան գավառների պահակային ջոկատները, ոստիկանությունը, երկու հազարից ավելի համիդականներ, միաժամանակ օգնություն խնդրեց Վանի կուսակալից, որն ուղարկեց 600 հոգուց կազմված մի գումարտակ: Թշնամու զորքերի ընդհանուր թիվը հասնում էր մոտ վեց հազարի, որը մի քանի անգամ գերազանցում էր ապստամբների ուժերին: Թուրքական պաշտոնական չափազանցված տվյալների համաձայն, Շատախի ապստամբ հայերը միավորում էին ընդամենը 500 հրացանավոր: Բայց կարևորը ուժերի ոչ թե թվական մեծությունն էր, այլ մարտունակությունը, բարոյական ոգին, հետապնդած նպատակը: Օսմանյան բռնապետությունից ազատվելու և Ռուսաստանին միանալու հեռանկարը Շատախի ապստամբներին տալիս էր մեծ թափ և խիզախություն: Ամենուրեք ապստամբները պարտության էին մատնում թշնամուն: Անգամ վիրավորները հրաժարվում էին դուրս գալ կրակի գծից և կովում էին մինչև վերջին շունչը: Ամեն մի ապստամբ մի բան էր մտածում՝ «Ինքը նահանջելու տեղ չունի, քանի որ թիկունքում իրեն են ապավինել կանայք, երեխաներ, ծերունիներ, հարազատներ... Յուրաքանչյուր մարտիկ խիզախորեն իրեն նետում էր վտանգի մեջ: Շրջկենտրոնի և շատ գյուղերի դպրոցներ վերածվել էին զինանոցների, ուր պատանի աշակերտները կապարե գնդակներ էին ձուլում և լցնում դատարկ պարկուճները: Թաղեցի մի փոքրիկ, անվեհեր աղջիկ՝ տասներկուամյա Սրբուհի Կուկոյանը, արհամարհելով ամեն վտանգ, ցերեկով, թե գիշերվա մթին, կրակի տակ կապ էր պահպանում կովոդ ջոկատների միջև:

Շատախի զինված գյուղացիները 1915 թվականի մարտին թուրքական զորքերից մաքրեցին գավառի հայկական բնակավայրերը և Արևելյան Տիգրիսի աջ ափի երկարությամբ ամրացրին իրենց դիրքերը: Նրանք փակեցին հաղորդակցության ճանապարհները Վանի հետ, ոչնչացրին հեռախոսագծերն ու կապի միջոցները, գրավեցին կամուրջները և կտրեցին թշնամու ներխուժման բոլոր հնարավոր ուղիները:

Փեսանդաշտ գյուղախմբի զինված շինականները, թվով 170 հոգի, գրավեցին Բարագոտիկի, Արտոսի, Շահրուրա բերդի լեռնանցքները և կտրեցին Վանից թշնամուն օգնության եկող թուրքական զորքերի ուղին՝ անհուսալի դրություն ստեղծելով հակառակորդի համար:

Այս իրադարձությունները տագնապահար արին նահանգի կու-

սակալ Ջևղեստ փաշային: Բայց վերջինիս օգնության ձեռք մեկնեց դաշնակցական թափթփուկ Արամ փաշան, որը 1915 թվականի ապրիլի 3-ին սուրհանդակներ ուղարկեց Շատախ՝ շինականներին «խաղաղեցնելու» նպատակով: Նրա դավադրական գործարքը ձախողվեց. թուրքական մի բանդա Հիրճ գյուղում հարձակվեց Արամ փաշայի սուրհանդակների վրա և ոչնչացրեց նրանց:

Հակառակ նահանգային դաշնակցական կոմիտեի բազմաթիվ որոշումներին և համառ ջանքերին, Շատախի աշխատավորները զենքը ցած չգրին:

Թուրքական զորքերին մերժեցին օգնել Մոկսի քրդերը: Վերջիններս իրենց համերաշխությունը հայտնեցին հայերին և արգելեցին թշնամու ուժերին՝ Մոկսն օգտագործել Շատախի ապստամբների վրա հարձակվելու համար:

Սոզվանց, Պոլս և Քրմենց գյուղերի շրջաններում, Խուքտան կամուրջի մոտ և Թաղում Շատախի հայությունը կատաղի մարտեր մղեց թշնամու գերազանց ուժերի դեմ: Սոզվանց գյուղը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ: Մայիսի 8-ին ապստամբները վերագրավեցին գյուղը, և թուրքական զորքն սկսեց բոլոր դիրքերից նահանջել: Թշնամին պարտության մատնվեց... Գավառն ազատագրվեց օսմանական լծից:

Մայիսի 10-ին Շատախ հասավ դաշնակցական Դրոյի կամավորական գունդը: Նրա գալը քուրդ աշխատավորության համար կատարյալ արհամիրք էր: Իր դաժանություններով Դրոն ետ չէր մնում համիդական բանդիտներից: Նա բնաջնջման ու ավերի մատնեց Շատախի քրդական բնակավայրերը: Նրա ոճրագործության զոհ դարձավ Սոքանց գյուղը, որը մշտական օգնություն էր ցույց տալիս Շատախի հայությանը: Դրոյի սանձարձակ գործողություններն արդարացի զայրույթ առաջացրին Շատախի հայ աշխատավորության մեջ, որը շնայած դաշնակցական խմբապետերի հալածանքներին, հրաժարվում էր կռվել բարեկամ քրդերի դեմ:

Շատախի, ինչպես և Վանի ամբողջ նահանգի, Բիթլիսի, էրզրումի հայության համար սպասվում էր ամենածանր հարվածը՝ հայրենի երկրի կորուստը, նրա ամայացումը: Այն ժամանակ, երբ չախչախված սուլթանական զորքերի մնացորդները փախչում էին Արևմտյան Հայաստանի վերջին շենքերից, երբ արևմտահայերը սկսել էին վայելել ռուսական բանակի պաշտպանությունը, երբ զեռ նոր էին իրենց հողի վրա զգում ազատության բերկրանքը և

պատրաստվում էին ցած դնել զենքն ու անցնել խաղաղ աշխատանքի, ստիպված եղան հրաժեշտ տալ իրենց մայր երկրին: 1915 թվի հուլիսի 18-ին Շատախի հայությունը իր զինված խմբերի պաշտպանության տակ հեռացավ այնքան սիրելի, հարազատ լեռնաշխարհից, որի պաշտպանության համար չէր խնայել իր անհամար որդիների արյունը: Նրան սպասում էին նոր, ավելի ծանր փորձություններ. քաղց, ծարավ, անօթևան կյանք, հալածանքներ, դեգերումներ օտար երկրքի տակ և մահ: Շատախցին դիմացավ այդ բոլորին. մի ձեռքով զենքը, մյուսով իր մանուկներին գրկած նա անցավ Շատախից Վան, Վանից Պարսկաստան, նորից Վան, նորից Պարսկաստան և այնտեղից դեպի Արևելքի անապատներն ու իրաքի կիզիչ տափափտանները՝ չախջախելով իր դեգերումների ճամփաները կտրող ամեն մի բանդա, հաճախ թողնելով իր հերոսների դիակները օտար վայրերում անհիշատակ ու անգերեզման:

Չնայած այդ փորձություններին, Շատախի ժողովուրդը կարողացավ մեր լուսավոր դարին հասցնել իր սերունդը, իր գողտրեկ բարբառը, հուզաթաթավ և դյուլթիչ երգերը, խորաթափանց, պատկերավոր ու սրամիտ առածները, հանելուկները, անեկդոտներն ու ժողովրդական բանահյուսության այլ նմուշներ, որոնք հայ ժողովրդի մշակույթի դարավոր պատմության մեջ իրենց արժանի տեղն ունեն:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը վերջ դրեց ամբողջ հայ ժողովրդի, այդ թվում նաև շատախցիների բազմադարյան տառապանքներին ու անհեռանկար դեգերումներին: 1921 թվականի աշնանը շատախցիների հիմնական մասը Միջագետքի անապատներից փոխադրվեց Սովետական Հայաստան, բնակություն հաստատելով Արտաշատի, Էջմիածնի, Աշտարակի, Վեդու շրջաններում, Նրևանում և այլուր: Նրանց համար ստեղծված են խաղաղ ու երջանիկ կյանքի պայմաններ: Նրանք վայելում են իրենց սոցիալիստական հայրենիքի բոլոր բարիքները:

Շատախցիների մի մասը ղեռնա բնակվում է արտասահմանում՝ Իրաքի ռեսպուբլիկայի տարբեր շրջաններում, Ամերիկայում և այլ վայրերում:

Բ Ա Ր Բ Ա Ռ Ը

Շատախի բարբառը պատկանում է բարբառների կթ ճյուղին և ձևաբանությամբ ամենից ավելի մոտ է Մոկաց, իսկ հնչյունաբանությամբ ու բառապաշարով՝ Վանի բարբառներին:

Պրոֆ. Հր. Աճառյանը, 1911 թվականին գրած իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, Մոկաց, Ոզմիի, Դիադինի բարբառների հետ միասին Շատախի բարբառը դասում է Վանի ենթաբարբառների շարքը¹: Իր հետագա աշխատություններում («Հայոց լեզվի պատմություն», «Քննություն Վանի բարբառի») իբրև Վանի ենթաբարբառներ հիշատակում է միայն երեքը՝ Դիադինի, Մոկաց և Ոզմիի բարբառները՝ ոչինչ չասելով Շատախի բարբառի մասին²:

Պրոֆ. Մ. Աբեղյանը «Սասնա ծռեր» պատումների ժողովածուի առաջին հատորի «Ընդհանուր նախաբանում» գրում է. «Մոկսի, Շատախի, Գավաշի, Սպարկերտի և Հայոց Ջորի բարբառները Վանա բարբառի ենթաբարբառներն են»³ (ընդգծումն իմն է—Մ. Մ.):

Պետք է նկատել, որ այս եզրակացությունը հիմնված է ոչ թե կենդանի խոսքի, այլ բարբառային գրավոր նյութերի ուսումնասիրության վրա, նյութեր, որոնք հաճախ ճիշտ կամ բավարար պատկերացում չեն տալիս այս կամ այն բարբառի մասին:

Շատախի բարբառի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ այս բարբառը, որոշ ընդհանրություններ ունենալով հանդերձ Վանի բարբառի հետ, վերջինիցս էականորեն տարբերվում է լեզվական, հատկապես ձևաբանական բաղմամբով առանձնահատկու-

¹ Ցե'ս. Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911, էջ 150—155:

² Ցե'ս. Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, 1951, էջ 340:

³ «Սասնա ծռեր», հ. I, էջ 4—60:

թյուններով, որոնք հիմք են տալիս Շատախի բարբառը չհամարել Վանի ենթաբարբառը: Այս առումով կարևոր է նաև այն հանգամանքը, որ գրաբարի նկատմամբ Վանի և Շատախի բարբառները հաճախ իրարից անկախ դիրք են ունենում՝ անմիջական շփման կետեր չունենալով միմյանց հետ:

Քննենք տարբերություններից մի քանիսը:

Հոգնականի կազմութունը՝.— Շատախի բարբառում բաղաձայնով վերջացող բաղմավանկ բառերը, բացառությամբ կ, ք, գյ, ն-ի հանգող բառերի, հոգնակիում պահպանել են գրբ. $f(>ք)$ հոգնակիականությունը, բայց վերջինիս իմաստի մթազնման հետևանքով ավելացրել են նաև եր, ստացվել է քյե հոգնակականությունը: Վանի բարբառում բաղաձայնով վերջացող բաղմավանկ բառերի հոգնակին, բացառությամբ ն-ի հանգող բառերի, կազմվում է ներ մասնիկով ($<նի+եր$): Օրինակ՝

Դրաբար՝ ամուլ-ք, կաքաւ-ք, թագաւոր-ք, ալոջ-ք

Շատախ՝ ամուլ-քյեր, կաքյավ-քյեր, թոկլուոր-քյեր, ալոջ-քյեր
Վան՝ ամուլ-ներ, կաքյավ-ներ, թակավոր-ներ, ալոջ-ներ

Շատախի բարբառը կ, ք, գյ բաղաձայններով վերջացող բաղմավանկ բառերի հոգնակին կազմում է տեր ($<տի+եր$) մասնիկով, իսկ Վանի բարբառը՝ նույն ներ մասնիկով: Օրինակ՝

Շատախ

Վան

իրիկ—իրկւտեր

իրիկ—իրիչներ

կլրաուկ—կլրաուտեր

կլրաուկ—կլրաուչներ

էրմունդլ—էրմընդլեր

արմունդլ—արմընլեր

էրկանքլ—էրկոնքլեր

էրկանքլ—էրկանչներ

Հոլովումը.— Շատախի բարբառը պահպանել է գրբ. հայցական հոլովի զ նախդիրը, որը գործածում է որոշյալ առման դեպքում: Վանի բարբառը չի պահպանել զ նախդիրը: Օրինակ՝

Շատախ.— Ըղծիւկ իփրցինքլ, կերանքլ, ըղփըշեր թալըցինք, քլի պոժին չըթրդինքլ:

Վան.— Ծիւկ իփրցինքլ, կերանքլ, փշեր թալինքլ, քլի պոժին չըթողինքլ:

Զգալի տարբերություն կա այս երկու բարբառների հոգնակի հոլովման համակարգների միջև, այսպես՝

1 Մեր աշխատության մեջ բարբառային բառերի ուղղագրության մասնակի ղեկավարվել ենք պրոֆ. Հր. Աճառյանի տառադարձությամբ:

Շատախի բարբառ

Վանի բարբառ

Սեռ.—ու

Սեռ.—աց

Տր. { անորոշ—ու
որոշյալ—ոն

Տր.—աց

Բաց.—ոց

Բաց.—աց

Գործ.—ով

Գործ.—ով

Շատախի բարբառում որպես հոգնակի թվի հոլովիչ հիմնականում հանդես է գալիս ու-ն, որը բաղաձայնի նախորդելիս հընչյունափոխվում է ո-ի. այսպես՝ տրականում որոշյալ առման դեպքում ունենք=ոն, իսկ բացառականում՝=ոց: Պատկերը շատ ավելի պարզ է Վանի բարբառում, որտեղ տեռական, տրական, բացառական հոլովները, գրաբարի նման, ունեն հոլովական միենույն վերջավորությունը (-աց): Գործիական հոլովի կազմությունը երկու բարբառներում նույնն է: Վերցնենք մի օրինակ.

քուռակ > Շատախ՝ քուռիկ
> Վան՝ քյուռակ

Շատախ

Վան

Ուղղ. քոռկրտիր

քյուռալներ

Սեռ. քոռկրտիրու

քյուռալներաց

Տր. { քոռկրտիրու
քոռկրտիրոն

քյուռալներաց

Հայց. (ըզ)քոռկրտիր,
(ըզ)քոռկրտիրոն¹

քյուռալներ,
քյուռալներաց

Բաց. քոռկրտիրոց

քյուռալներաց

Գործ. քոռկրտիրով

քյուռալներով

Դ ե Ր ա ն ու ն ն ե Ր ը.— Գրաբարի այս, այդ, այն դերանունները Վանի բարբառում դարձել են էս կամ էսա, էտ կամ էտա, էն կամ էնա: Մերձավոր առարկան նշող այս դերանունը Շատախի բարբառում չի պահպանվել, դրա փոխարեն գործածվում է նա, որը գրբ. նա ցուցականի իմաստաշրջված ձևն է: Այդ, այն դերանունները Շատախի բարբառում դարձել են ոտ, տն: Այսպիսով գրբ. այ երկբարբառը Վանի բարբառում տվել է է, իսկ Շատախի

¹ Հայցական հոլովում բերված երկրորդ ձևերը գործածվում են անձի առման դեպքում:

բարբառում ա: Նշված գերանունների հիմնական մեծ վանի բարբառը պահպանել է գրաբարյան նույն գերանունների սեռական հոլովի երկրորդ ձևում հանդես եկող սո, դո, նո հիմքերը, ինչպես և Ե հոլովակազմիչը (գրբ. այսորիկ>Վ. բարբ. իսոր. այգորիկ>Խառ. այնորիկ>ինոր), իսկ Շատախի բարբառը չի պահպանել ո՛չ դո. նո հիմքերը. ո՛չ էլ Ի հոլովակազմիչը. ուտ, տն գերանունները Շատախի բարբառում ենթարկվում են ու հոլովման՝ շտարբերվելով նույն թեթույթով հոլովվող գոչականներից:

Շատախի բարբառում մերձավոր առանդան Նշող հոն գերանունը ևս ենթարկվում է ու հոլովման, սակայն այս դեպքում սեռական հոլովում հանդես է գալիս գրաբարյան նույն հոլովի Ե հոլովակազմիչը (գրբ. նա—նորա>Շատախ՝ հոն—հաթու), որը բարբառում պահպանվում է նաև մյուս թեթ հոլովներում՝ սեռականի համաբանության մը:

Վերահիշելու ցուցական գերանունների հոլովման պատկերը երկու բարբառներում.

Մերձավոր առարկան նշող գերանունը

Վաճի բարբառ

Ուղղ. էս, էսա
Սեռ. իսոր
Տր. իսոր
Հայց. էն, իսոր
Բաց. իսորմից, իսորից
Գործ. իսորմով, իսորով

Շատախի բարբառ

Ուղղ. նո
Սեռ. նորու
Տր. նորու
Հայց. (ըզ)նո, (ըզ)նորու
Բաց. նորուց
Գործ. նորով

Երկրորդ գեմքի մոտ գտնվող առարկան նշող գերանունը

Ուղղ. էս, էսա
Սեռ. իսոր
Տր. իսոր
Հայց. էս, իսոր
Բաց. իսորմից
Գործ. իսորմով

Ուղղ. տա
Սեռ. տուտ
Տր. տուտ
Հայց. (զ)տա, (զ)տուտ
Բաց. տուտց
Գործ. տուով

Երրորդ գեմքի մոտ գտնվող առարկան նշող գերանունը

Ուղղ. էն, էնա
Սեռ. ինոր
Տր. ինոր

Ուղղ. տն
Սեռ. տնու
Տր. տնու

Հայց. էն, ինոր
Բաց. ինորմից
Գործ. ինորմով

Հայց. (զ)էն, թն (զ)ոնու
Բաց. թնուց
Գործ. թնով

Բ ա յ ւ .—Գրաբարյան ե, ի, ու խոնարհիչները Շատախի բարբառում միաձուլվելով, տվել են ի, իսկ վանի բարբառում՝ ե: Շատախի բարբառում իբրեւ խոնարհիչ հանդես է գալիս ի և ա, իսկ վանի բարբառում՝ ե և ա ձայնավորները:

Սահմանական ներկայի վերջավորությունները երկու բարբառներում.

ե զ ա կ ի	հ ո գ ն ա կ ի
Գրբ., վան, Շատախ	Գրբ., վան, Շատախ
I դ. եմ > եմ — իմ	եմք > ենք — ինք
II դ. ես > ես — իս	էք > էք — էք
III դ. է > ի — ի	են > են — ին
I դ. ամ > ամ — ամ	ամք > անք — անք
II դ. աս > աս — աս	ալք > աք — էք
III դ. ալ > ա — ա	ան > ան — ան

Անց. անկատարի վերջավորությունները.

ե զ ա կ ի	հ ո գ ն ա կ ի
Գրբ., վան, Շատախ	Գրբ., վան, Շատախ
I դ. էի > ի — է	էաք > ինք — էնք
II դ. էիր > իր — էս	էիք > իք — էք
III դ. էր > էր — էր	էին > ին — էն
I դ. ալի > ի — է	ալաք > ինք — էնք
II դ. ալիր > իր — էս	ալիք > իք — էք
III դ. ալր > էր — էր	ալին > ին — էն

Մ ա ն ո թ .—Շատախի բարբառում անց. անկատարի եզակի II դեմքում դիմացին ւ վերջավորության փոխարեն ունենք ս(-էս), որը գալիս է սահմանական ներկայի II դեմքից (-իս): Նույն երեւիլով ձևավորվում է նաև ըղձական, հարկադրական եղանակների անց. ապառնի ժամանակներում, ինչպես և օժանդակ բայի անց.

անկատարում: Վանի բարբառում այսպիսի օրինաչափություն չի նկատվում, և վերոհիշյալ ժամանակներում նա պահպանում է եզակի II դեմքի Ի վերջավորությունը (-իր):

Միավանկ բառերի մոտ սահմ. ներկայում և անկատարում Վանի բարբառը դնում է կու մասնիկ, իսկ Շատախի բարբառը, բաղաձայնով սկսվող մյուս բոլոր բայերի ձևով՝ կը: Օրինակ՝

Ն ե ր կ ա		ա ն կ ա տ ա ր	
Վան	Շատախ	Վան	Շատախ
կու կյում	կըկյում	կու կյի	կըկյէ
կու կյոս	կըկյոս	կու կյեր	կըկյէս
կու կյո	կըկյո	կու կյեր	կըկյէր
կու կյոնքի	կըկյոնքի	կու կյինքի	կըկյէնքի
կու կյոքի	կըկյէքի	կու կյիքի	կըկյէքի
կու կյոն	կըկյոն	կու կյին	կըկյէն

Շատախի Փեսանդաշտ գյուղախմբի (Կայնեմեբան, Շիդան, Կաղազիս, Առեղ գյուղերով), ինչպես և Կվերս գյուղի խոսվածքներում սահմ. ներկան ու անկատարը, սովորական բայաձևերից բացի, ունեցել են շարունակական ժամանակի բայաձևեր, որոնք կազմվել են ինի (=մեջ) մասնիկի միջոցով: Օրինակ՝

ս օ վ ո ր ա կ ա ն Ն ե ր կ ա	շ ա ր ո ն ա կ ա կ ա ն Ն ե ր կ ա
կըզորկիմ	կըզորկիմ ինի
կըզորկիս	կըզորկիս ինի
կըզորկի	կըզորկի ինի

և այլն:

Վանի բարբառի որևէ խոսվածքում շարունակական ժամանակի բայաձևեր չեն հանդիպում:

Օ ժ ա ն դ ա կ բ ա չ ի խոնարհման մեջ գրաբարի ներկայի դիմաց Շատախի բարբառն ունի ի հիմքով ձևեր, իսկ Վանի բարբառը՝ ե հիմքով ձևեր: Նույն բայի գրաբարյան անց. անկատարի դիմաց Շատախի բարբառն ունի է հիմքով ձևեր, իսկ Վանի բարբառը՝ ի հիմքով:

Ն ե ր կ ա ժ ա մ ա ն ա կ

եզակի	հոգնակի
Գրբ., Շատախ, Վան	Գրբ., Շատախ, Վան
եմ > իմ — եմ	եմք > ինքի — ենքի
ես > իս — ես	էք > էքի — էքի
է > ի — ի	են > ին — են

Ա ն ց . ա ն կ ա տ ա ր

Գրբ., Շատախ, Վան	Գրբ., Շատախ, Վան
էի > է — ի	էաք > էնքի — ինքի
էիր > էս — իր	էիք > էքի — իքի
էր > էր — էր	էին > էն — ին

Հարկադրական եղանակի կազմության մեջ վանի բարբառում պիտի եղանակիչը պահպանել է բառային որոշ ինքնուրույնություն՝ չի ձուլվել բայահիմքին, այնինչ Շատախի բարբառում այդ եղանակիչի առաջին վանկը «մաշվելով» դուրս է ընկել, իսկ երկրորդ վանկը հնչյունափոխվելով (տի > տը//տ) և բոլորովին զրկվելով ինքնուրույնությունից, իբրև մասնիկ ձուլվել է բայահիմքին, այնպես, ինչպես սահմանական ներկայի կը մասնիկը: Օրինակ՝

Վանի բարբառ

Շատախի բարբառ

հ ա ր կ ա դ ր ա կ ա ն ա պ ա ռ ն ի

պիտի սիրեմ, պիտի ուզեմ	տըսիրիմ, տուզիմ
պիտի սիրես, պիտի ուզես	տըսիրես, տուզես
պիտի սիրի, պիտի ուզի	տըսիրի, տուզի
պիտի սիրենք, պիտի ուզենք	տըսիրինք, տուզինք
պիտի սիրէք, պիտի ուզէք	տըսիրէք, տուզէք
պիտի սիրեն, պիտի ուզեն	տըսիրին, տուզին

ա ն ց . ա պ ա ռ ն ի

պիտի սիրի, պիտի ուզի	տըսիրէ, տուզէ
պիտի սիրիր, պիտի ուզիր	տըսիրէս, տուզէս
պիտի սիրէր, պիտի ուզէր	տըսիրէր, տուզէր
պիտի սիրինք, պիտի ուզինք	տըսիրէնք, տուզէնք
պիտի սիրիք, պիտի ուզիք	տըսիրէք, տուզէք
պիտի սիրին, պիտի ուզին	տըսիրէն, տուզէն

Տը (տ) մասնիկով բայը Շատախի բարբառում ունի լայն գործածություն. արտահայտում է նաև սահմանական ապառնու, պայմանական եղանակի իմաստները: Բարբառում կա սահմանական ապառնու դերբայով կազմություն ևս (կուրտուլու իմ), սակայն այն քիչ գործածական է, իսկ տը մասնիկով ձևը շատ տարածված է:

Վանի բարբառում սահմանական ապառնու և պայմանական եղանակի արժեքով մեծ մասամբ հանդես են գալիս սահմանական ներկան ու անկատարը:

Զգալի տարբերություն կա այս երկու բարբառների ժխտական խոնարհման սիստեմների միջև:

Երկու բարբառներում էլ սահմ. ներկայի ու անկատարի ժխտական խոնարհումը կազմվում է ժխտական դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով, բայց Վանի բարբառում էլ մասնիկով բայերի (կյըրեւ, կյըրկեւ) ժխտական դերբայն ունի ե վերջավորություն (կյըրոե, կյըրկե), իսկ Շատախի բարբառում՝ ի վերջավորություն (կյըրի, կյըրկի): Բացի այդ, Վանի բարբառում միշտ իբրև շեշտակիր հանդես է գալիս օժանդակ բայը (չե'մ), Շատախի բարբառում սահմ. ներկայում շեշտն անցնում է խոնարհվող բայի առաջին վանկին, և օժանդակ բայի (չիմ) ձայնավորը շեշտից՝ զրկվելով, հնչյունափոխվում է ր-ի (չըմ):

Սահմանական ներկան ու անկատարը երկու բարբառներում...

Վանի բարբառ

Շատախի բարբառ

Ներկա ժամանակ

չե'մ լըսե	չըմ լը'սնի
չե'ս լըսե	չըս լը'սնի
չի' լըսե	չը լը'սնի
չե'նք լըսե	չընք լը'սնի
չե'ք լըսե	չըք լը'սնի, չե'ք լըսնի
չե'ն լըսե	չըն լը'սնի

անց. անկատար

չի' լըսե	չը լը'սնէ
չի'ր լըսե	չե'ս լըսնի
չե'ր լըսե	չե'ր լըսնի
չի'նք լըսե	չե'նք լըսնի
չի'ք լըսե	չե'ք լըսնի
չի'ն լըսե	չե'ն լըսնի

Հետաքրքրական է վաղախատար դերբայի ժխտական խոնարհումը: Հնչյունական և շեշտադրության տարբերություններից բացի, նկատելի է հետևյալը. Վանի բարբառը կորցնում է վաղափատար դերբայի -եւ վերջավորության (խակյեր) ր ձայնորդը, իսկ Շատախի բարբառը ոչ միայն պահպանում է այն, այլև վաղախատար դերբայի մի երկրորդ ձև է հանդես բերում՝ բառավերջի-ի ածականով. այդ երկու ձևերն էլ հավասարապես գործածական են (խակյիր, խակյիրի):

Վանի բարբառ

Շատախի բարբառ

վ ա ղ ա կ ա տ ա ր ն եր կ ա

չե՛մ խակյե	չըմ խա՛կյիր, չըմ խա՛կյիրի
չե՛ս խակյե	չըս խա՛կյիր, չըս խա՛կյիրի
չի՛ խակյե	չը խա՛կյիր, չը խա՛կյիրի
չե՛նք խակյե	չընք խա՛կյիր, չընք խա՛կյիրի
չէ՛ք խակյե	չըք խա՛կյիր, չէ՛ք խակյիրի, չէ՛ք խակյիրի
չե՛ն խակյե	չըն խա՛կյիր, չըն խա՛կյիրի

ա ն ց . վ ա ղ ա կ ա տ ա ր

չի՛ խակյե	չէ՛ խակյիր, չէ՛ խակյիրի
չի՛ր խակյե	չէ՛ս խակյիր, չէ՛ս խակյիրի
չէ՛ր խակյե	չէ՛ր խակյիր, չէ՛ր խակյիրի
չի՛նք խակյե	չէ՛նք խակյիր, չէ՛նք խակյիրի
չի՛ք խակյե	չէ՛ք խակյիր, չէ՛ք խակյիրի
չի՛ն խակյե	չէ՛ն խակյիր, չէ՛ն խակյիրի

Ըղծական եղանակի ժխտական խոնարհման մեջ Շատախի բարբառը գիտե շեշտի երկու գործածություն՝ 1) երբ շեշտվում է խոնարհվող բայի առաջին վանկը՝ (չըխա՛կյնիմ, չո՛ւզիմ, չո՛ւտիմ), 2) երբ շեշտվում է վերջին վանկը (չըխակյնի՛մ, չուզի՛մ, չուտի՛մ): Առաջին դեպքում բայաձևերն արտահայտում են հիմնականում ըղծական եղանակի իմաստ, իսկ երկրորդ դեպքում, մեծ մասամբ՝ պայմանական և հրամայական եղանակների իմաստ (Չուզի՛մ՝ չըմ ի՛ կցո, չուտի՛ս, չըպիրի՛ս): Վանի բարբառում ըղծական եղանակի ժխտական խոնարհումը շեշտի գործածության արդպիսի

1 Չհաշված ժխտական չը նախամասնիկը:

տարբերութիւն չի ճանաչում, և շեշտը դրվում է վերջին վան-
կի վրա:

Խոնարհման պատկերը երկու բարբառներում.

Վանի բարբառ

Շատախի բարբառ

ը դ ձ ա կ ա ն ա ս լ ա ո ն ի

չըխաճնե՛մ	չըխա՛կնիմ, չըխակնի՛մ
չըխաճնե՛ս	չըխա՛կնիս, չըխակնի՛ս
չըխաճնի՛	չըխա՛կնի, չըխակնի՛
չըխաճնե՛նք	չըխա՛կնինք, չըխակնին՛ք
չըխաճնե՛ք	չըխա՛կնեք, չըխակնե՛ք
չըխաճնե՛ն	չըխա՛կնին, չըխակնի՛ն

ա ն ց. ա ս լ ա ո ն ի

չըխաճնի՛	չըխա՛կնե, չըխակնե՛
չըխաճնի՛ր	չըխա՛կնես, չըխակնե՛ս
չըխաճնե՛ր	չըխա՛կներ, չըխակնե՛ր
չըխաճնի՛նք	չըխա՛կնենք, չըխակնեն՛ք
չըխաճնի՛ք	չըխա՛կնեք, չըխակնե՛ք
չըխաճնի՛ն	չըխա՛կնեն, չըխակնեն՛

Հ ն չ յ ու ն ա բ ա ն ու թ յ ու ն ի ց. — Գրաբարի ու ձայնավորը
Շատախի բարբառում միավանկ և երկվանկ բառերի սկզբում տա-
լիս է տ (=wo), իսկ Վանի բարբառում՝ վա (=vuo):

Գրբ.	Շատախ	Վան
ոխ	ւոխ (=wox)	վոխ (=vuoX)
ողջ	ւոխճ	վոխճ
ոսպն	ւոսպ	վոսպ
ոտն	ւոտ	վոտ
որձ	ւորց	վորց
ոզնի	ւոզնեկ	վոզնիկ

Գրբ. բառասկզբի Բ-ն Վանի բարբառում ս և շ բաղաձայններից
առաջ տալիս է կ, իսկ Շատախի բարբառում, ինչպես առհասա-
րակ, այս դեպքում էլ դառնում է ք. օրինակ՝

Գրաբար	Վան	Շատախ
քսան	կսան	քյսան
քսեի	կսեի	քյսեի
քշեի	կշեի	քլշեի

Վանի բարբառում կյ ($< q$), զյ ($< q, < k$), կ ($< k, < q$), ֆյ ($< p$) հնչյունները բաղաձայնի նախորդելիս փոխվում են յ-ի կամ հյ-ի, իսկ Շատախի բարբառում մնում են անփոփոխ: Այսպես՝ բայերում.

Գրաբար	Վան	Շատախ
գանդատեի	կյոյտեի	կյոնգլտվեի
զնգզնգալ	զըլզընգլոլ	զընգլզընգլոլ
ճգնաւոր	ճըհնտվոր	ճըկնտւոր
փոնգտալ	փըռընհյտալ	փըռընգլտալ
բակլալ	բոլլո	բոկլա
անկանեի	իյնեի	ընգյնեի
թիկնեի	թիյնեի	թիկնեի

Գոյական անունների հոգնակիներում.

Վան	Շատախ
արմունգլ—արմըյներ	էրմունգլ—էրմընգլտեր
լէղունգլ—լէղըյներ	լէղունգլ—լէղընգլտեր
կըրունգլ—կըրըյներ	կըրունգլ—կըրընգլտեր
աղաճոնքլ—աղաճոնհյներ աղաճոհյներ	աղոճոնքլ—աղոճոնքլտեր
առցունքլ—առցունհյներ առցոհյներ	արտսունքլ—արտսունքլտեր
առիքլ—առիհյներ	հոռիքլ—հոռըքլտեր

քսեի ($< p + տի + եր$) հոգնակիակերտը Վանի բարբառում տալիս է հյտեի, իսկ Շատախի բարբառում՝ քյտեի: Օրինակ՝

Վան	Շատախ
կլերեզման—կլերեզմիհյտեր	կլերեզման—կլերեզմոնքլտեր
մառան—մառանհյտեր, մառահյտեր	մառան—մոռոտնքլտեր

Գրբ. ր ձայնորդը Շատախի բարբառում դառնում է ռ՝ ծ ($< \delta$), է ($< \delta$), մասամբ ա ($< ա$) հնչյուններին նախորդելիս, իսկ Վանի

բարբառում՝ ծ(<ծ), ն(<ն), ն(<ը), չ(<չ), չ(<ջ), տ, ց (<ց), ց(<ձ), փ, մասամբ ք բաղաձայններից առաջ: Բերում ենք այն օրինակներից, որոնց մեջ ր-ն վանի բարբառում դարձել է ո, իսկ Շատախի բարբառում մնացել է անփոփոխ:

Գրաբար	Շատախ	Վան
բարդ	պորթ	պոռթ
բերդ	պերթ	պեռթ
կորդ	կորթ	կոռթ
շուրթն	շուրթ	շուռթ
փրթանել	փըրթնել	փըռթնել
քարթու	քլարթաւ	քլառթու
բաղարջ	պողարճ	պողառճ
մրջիմն	մըրճեմ	մըռճեմ
շրջել	շըրճել	շըռճել, սըռճել
աթջ	աթճ	առլ
փարչ	փարչ	փառչ
ամբարտաւան	տմբարտովան	ամպտառտովան
աշակերտ	աշկերտ	աշկեռտ
հպարտ	խտպարտ	խըպառտ
սիրտ	սիրտ	սիւտ
ցուրտ	ցուրտ	ցուռտ
ճրտուն	ճըրտուն	ճըռտուն
աթձակել	տրցկել	առցկել
բարձ	պորց	պոռց
հարցանել	խտրցցել	խառցուցել
որձ	ւորց	վոռց
փրփուր	փըրփուր	փըռփուր

Գրաբարյան յ նախահնչյունը վանի բարբառում ջնջվել է, իսկ Շատախի բարբառում դարձել է ն: Օրինակ՝

Գրաբար	Վան	Շատախ
յարդ	տրթ	հտրթ
յեսան	էսան	հէսան
յիշոց	իշունց	հիշունց
յիսուն	իսուն	հիսուն
լղի	ըղի	հտղի
յաշողել	տճողել	հտճողել

Ձայնավորով սկսվող բառերի մեծ մասը Շատախի բարբառում ստանում է հ նախահնչյուն-հազագ, որպիսին Վանի բարբառում չի հանդիպում: Օրինակ՝

Գրարար	Վան	Շատախ
ագի	ռկի	հռկի
ագուգա	ռկիւկլո	հռկիւկլո
ակահ	ակաի	հռկաի
այգի	իկի	հիկի
ամեն	ըմեն	հըմեն
երեկ	էրէկ	հէրէկ
օգն	էօկ	հօկ
երկայն	էրկէն	հէրկէն
ուստ	ուստ	հուստ

Վանի և Շատախի բարբառների միջև կան բազմաթիվ այլ տարբերություններ ևս, որոնց վրա կանգ չենք առնում:

Շատախի բարբառը ավելի մոտ է Մոկաց բարբառին, հատկապես ձևաբանությանը, սակայն այս բարբառների միջև նույնպես կան զգալի տարբերություններ: Մոկաց բարբառը բաղաձայնական համակարգով նման է Շատախի բարբառին՝ ենթարկված է պայթական բաղաձայնների առաջին տեղաշարժին¹, բայց ձայնավորական համակարգով բավականին տարբերվում է Շատախի բարբառից: Ահա մի քանի օրինակ:

Մոկաց բարբառում միավանկ բառերի մեջ գրաբարյան ե-ն մեծ մասամբ դառնում է ի, իսկ Շատախի բարբառում մնում է ե. այսպես՝

Գրարար	Մոկա	Շատախ
գես	կլիս	կլլետ
բերդ	պիրթ	պերթ
դեղ	տիղ	տեղ
թել	թիլ	թել

¹ Պրոֆ. Ա. Ղարիբյանի կարծիքով Մոկաց բարբառն ունի եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ (տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1954, էջ 61), սակայն այս կարծիքը չի համապատասխանում իրականության, որովհետև գրաբարյան ձայնեղ պայթականների ու կիսաշփականների դիմաց Մոկաց բարբառն ունի խուլ հնչյուններ: Օրինակ՝ գեղ > տիղ, բերդ > պիրթ, ձեռ > ծիռ և այլն:

Գրաբար	Մոկս	Շատախ
թե	թիվ	թեվ
թեփ	թիփ	թեփ
խելք	խիլք	խելք
ծեփ	ծիփ	ծեփ
հեա	խհա	խեա (խրա)

Գրաբարյան ուն Մոկաց բարբառում բառամիջում սովորաբար դառնում է ու կամ իւ, որ օրինաչափ չէ Շատախի բարբառի համար.

Գրաբար	Մոկս	Շատախ
ալևոր	խտլվոր	խտլոր
աթու	աթու	աթու
ամոլ	ամոլ	ամոլ
բոկիկ	ալեալիկ	ալոալիկ
բողկ	պիւղկ	պողկ
գոգ	կլիւք	կլոք
գոդ	կլիւդ	կլոդ
գոմ	կլիւմ	կլոմ
գոմէշ	կլիւմէշ	կլոմէշ

Մոկաց բարբառում գրաբարի ուն փակ վանկում արտասանվում է աու || ոու¹, իսկ Շատախի բարբառում՝ ու || իւ:

Գրաբար	Մոկս	Շատախ
աշուն	աշաուն	աշուն
գարուն	կլտրաուն	կլտրուն
գունդ	կլտունդ	կլիւնդ
մուկն	մաուկ	մուկ
ծուկն	ծաուկ	ծիւկ
տուն	տաուն	տուն
շուն	շաուն	շուն
դուն	տաուն	աիււ
անուն	անաուն	անուն

¹ Ու ձայնավորի աու արտասանությունը պրոֆ. Նր. Աճառյանի կազմած Մոկաց բարբառի բառարանում չի զբանցված (տե՛ս Քննություն վանի բարբառի, էջ 242-ից), այնինչ դա նաև որոշակի օրինաչափություն է, որը մոկացի ծերունիները հեա զրուցելիս հնարավոր եղավ նկատել:

Զեարանության մեջ նկատելի է հետևյալ տարբերությունը՝
Շատախի բարբառից. Մոկաց բարբառում բայերի սահմանական
հղանակի անց. անկատարի եզակի ձևերում բացակայում են բա-
յական դեմքերը, որոնք լրացվում են համապատասխան դերանուն-
ներով: Օրինակ՝

Գրաբար—ուտէի, ուտէիր, ուտէր

Շատախ.—կուտէ, կուտէս, կուտէր

Մոկս.—իս կաուտէր, տիւ կաուտէր, տն կաուտէր

Մոկաց և Շատախի բարբառների դիրքը միմյանց նկատմամբ
պարզելու համար (ենթաբարբառային կամ անկախ) պահանջվում
է Մոկաց բարբառի մանրամասն քննություն:

ՀԱՅՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅՑՈՒՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Շատախի բարբառն ունի 45 հնչյուն, որոնցից՝

9 ձայնավոր՝ ա, օ (=օ), է, ր, ի, ու, իւ (=յ), օ, էօ (=օ̇).
4 երկբարբառ՝ ե (=ie), ո (=uo), հ̈ (=üö), աո (wo), որոշ
գյուղերի խոսվածքներում հանդիպում է նաև քե (օր. կրեք=կար).
33 բաղաձայն.

ա) ձայնորդներ՝ լ, մ, յ, ն, ր, ո, լ

բ) ձայնեղ-պայթականներ՝ բ, գյ, դ

գ) խուլ-պայթականներ՝ պ, կ, կյ, տ

դ) շնչեղ-խուլ պայթականներ՝ փ, ք, քյ, ֆ

ե) ձայնեղ-շփականներ, զ, ժ, հ, ղ, վ

զ) խուլ-շփականներ՝ խ, ս, շ, ֆ

է) ձայնեղ-կիսաշփականներ՝ ձ, ջ

ը) խուլ-կիսաշփականներ՝ ծ, ճ

թ) շնչեղ-խուլ կիսաշփականներ՝ ց, չ

Հակառակ վանի բարբառի, Շատախի բարբառը չունի ճյ և գ
բաղաձայնները:

Բարբառը չունի նաև շնչեղ-ձայնեղներ:

Ա ր տ ա ս ա ն ու թ յ ու ն ր

Ա-ն ունի կոշտ, որոշ չափով շրթնայնացված արտասանու-
թյուն՝ լեզվի ստորին բարձրացմամբ: Կատկային ձայնավոր է:

Պ-ն փափուկ է՝ ադրբեջաներենի օ հնչյունի նման: Միջնալեզ-
վային, վերին բարձրացման ձայնավոր է:

Իւ-ն առաջնալեզվային, վերին բարձրացման ձայնավոր է։
նման է գերմաներենի ü ձայնավորին։

Էօ-ն առաջնալեզվային, միջին բարձրացման ձայնավոր է։
նման է գերմաներենի ö ձայնավորին։

Մնացած ձայնավորները պահպանում են հայերենի սովորա-
կան արտասանությունը։

Բարբառի ձայնավորների աղյուսակը

	Առաջնա- լեզվային	Միջնալեզ- վային	Ետնալեզ- վային	Կատկային
Վերին բարձրացում	ի, իւ	ո, էօ	ու	—
Միջին բարձրացում	է	ը	օ	—
Ստորին բարձրացում	—	—	—	ա

Ե երկբարբառը արագ արտասանվող իե (ie) է։

Գրբ. ո-ին բառամիջում համապատասխանում է ո ($=\text{uo}$), իսկ բառասկզբում համա-
պատասխանում է ու ($=\text{wo}$) երկբարբառը, որի առաջին բաղադրիչը
(ւ) արտասանվում է որպես ձայնորդ ու, այսինքն՝ ձայնավոր չէ և
ունի մի փոքր աղմուկ։ ւ բաղադրիչի արտաբերման ժամանակ
շրթունքները առաջ ձգվելով, խիստ մոտենում են, բայց չեն միա-
նում։

ձ երկբարբառն արտասանվում է իւէօ ($=\text{üö}$)։

Բաղաձայնների մասին խոսելուց առաջ նշենք, որ բարբառի
պայթական բաղաձայնական համակարգը ենթարկված է առաջին
տեղաշարժի, այսինքն՝ գրաբարի ձայնեղ ք, գ, դ, ձ, ջ հնչյուննե-
րին բարբառում համապատասխանում են պ, կյ, տ, ծ, ճ։ Սակայն
նկատելի է, որ պ(<ք), տ(<դ), ծ(<ձ), ճ(<ջ) հնչյունները բար-
բառում ունեն ձայնեղություն որոշ երանգ, իսկ գրաբարի խոսքերին
համապատասխանող խոսքերը՝ պ(<պ), տ(<տ), ծ(<ծ), ճ(<ջ),
այդպիսի երանգ չունեն։

Գյ, կյ, քյ բաղաձայնները ետնալեզվային քմայնացած հըն-
չյուններ են։

ւ-ն շրթնային ձայնորդ է, նման է անգլերենի w-ին. հայերե-
նի ու հնչյունի ձայնորդ տարբերակն է¹։

Հ-ն բարբառում ձայնեղ է։

¹ ւ ձայնորդի արտասանության մասին խոսել ենք ևս երկբարբառի
կապակցությունը։

Բարբառի բաղաձայնների աղյուսակը

[illegible]

Ա.

Գրաբարի ա-ին Շատախի բարբառում սովորաբար համապատասխանում է ա, ինչպես.

Բառասկզբում՝ ահ>ախ, աղ>աղ, ակն>ակ, ազգ>անկ, ամպ>ամբ, արտ>արտ, ազատ>ազատ, ալոջ>ալոշ, աղիք>աղիք, անուն>անուն, արագիլ>առակյել և այլն:

Բառամիջում՝ թագ>թաք, թաթ>թաթ, կաղ>կաղ, առատ>առատ, երագ>երագ, թանկ>թանգ, օտար>ոտար, կերակուր>կերակուր և այլն:

Բառավերջում գրաբարի ա-ն պահպանվել է մի շարք բայերի հզակի հրամայականում. խաղալ-խաղա՛, կաղալ-կաղա՛, աղալ-աղա՛, սել (<ասել)—սա՛, ծել (<ածել)—ծա՛ և այլն:

Ինչպես վանի, Ղարաբաղի, Շատախի, Ուրմիայի և այլ բարբառներում, այնպես էլ Շատախի բարբառում գործում է «Աճառյանի օրենքը», ըստ որի՝ պ (ծագած գրաբարի ք-ից), կյ(<զ), ա (<դ), ծ(<ձ), ն(<ջ), որոշ դեպքերում նաև վ հնչյուններին հաջորդելիս ա ձայնավորը դառնում է ա, իսկ պ(<պ), կ(<կ), ա (<ա), ծ(<ծ), ն(<ճ) հնչյուններից հետո մնում է անփոփոխ՝ Այժմ տեսնենք, թե ինչ չափով է գործում «Աճառյանի օրենքը» Շատախի բարբառում, և ինչպիսի շեղումներ կան այդ օրենքից.

Ա>ա՝ պ(<ք)-ին հաջորդելիս. բակ>պոկ, բահ>պոխ, բան>պոն, բանել>պոնել, բաժին>պոժին, բագուկ>պոգուկ, շարաթ>շոպոթ, ուրաթ>ուրպոթ և այլն:

Ա>ա նաև այն դեպքում, երբ նրան նախորդող բ-ն անփոփոխ է՝ բագ>բոա, բախ>բոխ, բագէ>բոգո, բակալ>բոկլա, ամբար>ամբոր և այլն:

Ա-ն չի հնչյունափոխվում պ(<պ)-ին հաջորդելիս. պագ>պաք, պաղ>պաղ, պատ>պատ, պատիժ>պատիճ, անապատ>հոնոպատ, ապաւեն>ապավեն և այլն:

Մի շարք բառերում պ (<պ)-ից հետո ա-ն դառնում է ա, ինչպես՝ պապանձել>պոպոնձվել, պատասխան>պոտտոխան, պատարագ>պոտորաքլ և այլն, որ արդյունք է բառերի բազմավանկ լինելու (այս մասին տե՛ս էջ 33-ի դ. կետը):

Ա-ն դառնում է ա՝ կյ (<զ)-ին հաջորդելիս. գաբ>կյոփ,

¹ Տե՛ս նր. Աճառյան, Քննութուն վանի բարբառի, 1953, էջ 18—19:

գազ (բույսը) > կյոգ, գալ > կյոլ, գազան > կյոզոն, գալար > կյո-
լոր, շաղգամ > շոխկյոմ, գանգատ > կյոնգյոտ, անագան > հո-
նեկյոն, արեգակն > արեկյոկ և այլն:

Ա-ն փոխվում է տ-ի նաև գյ (<գ)-ից հետո. գաղ (չափ) >
գյոզ, գաճ > գյոն, մանգաղ > մանգյոզ, կորնգան > կորընգյոն
և այլն:

Աղգական > ասկական բառում զգ հնչյունակապակցությունը
դարձել է սկ, և կ-ից հետո ընկնող ա-ն մնացել է անփոփոխ:

Գաղափար > ֆաղափար բառը, որտեղ գ > ք-ից հետո ա-ն
մնացել է անփոփոխ, փոխառություն է արևմտահայ գրական լեզ-
վից:

Կ (<կ)-ին հաջորդելիս ա-ն չի հնչյունափոխվում. կալ > կալ,
կաղ > կաղ, կար > կար, կաթն > կաթ, ակախ > հեկախ, երկաթ
> էրկաթ, հակառակ > խակառ և այլն:

Բացառություն են՝

կարծ > կած, որտեղ ա > տ հնչյունափոխությունն առաջա-
ցել է բառը համանուն կած (= շերտ) բառից տարբերակելու ան-
հրաժեշտությունից.

ականատ > հեկեմատ, որտեղ ա > տ հնչյունափոխությունը
արդյունք է բառի բազմամասնի լինելու:

Ա-ն դառնում է ո՝ տ (<դ) հնչյունից հետո. դալ > տալ,
դահ > տախ, դաշտ > տաշտ, դառն > տոռ, արդար > արտոր կար-
դալ > կարտոլ և այլն:

Ա-ն դառնում է տ նաև նախորդող դ-ի անփոփոխ մնալու
դեպքում. զնդան > սընդոն, դարդ > դորդ:

Բացառություն է՝ դահիճ > դախին, որտեղ առաջնալեզվային
ձայնեղ դ-ի և ետնալեզվային խուլ խ-ի միջև ա-ն մնացել է ան-
փոփոխ:

S (<տ)-ից հետո ա-ն մնում է ա. տաղ > տաղ, տաք > տաֆյ,
տալ > տալվ, տասն > տաս, տաշտ > տաշտ, տանիք > տանիս,
կտալ > կրտալ և այլն:

Տանտիկին > տոնդրիկն բառում տ-ից հետո ա-ն դարձել է
ո՝ բառի աճման, շեշտի տեղափոխությունից հետևանքով. տուն—
աա՛ն, որից՝ տոնդրիկ՛ն (հմմտ. պա՛ղ—պտղոպէ՛րա՛ն, տա՛քլ—
տոքլոթէ՛ն և այլն):

Ա-ն դառնում է ո՝ ծ (<ծ)-ից հետո. ձագ > ծաքյ, ձախ > ծոխ,
ձաւար > ծովար, փորձանք > փործոնքյ և այլն:

Ծ(<ծ)-ից հետո ա-ն մնում է անփոփոխ. ծառ>ծառ, ծափ>ծափ, ծաղր>ծաղր, ծաղիկ>ծաղիկ, ծարաւ>ծարաւ, կեղծաւոր>կեղծաւոր և այլն:

Ա-ն դառնում է տ՝ ճ(<ջ)-ից հետո. արջառ>աճառ, արջասպ>արճասպ, ջրադաց>ճաղաց և այլն:

Այս հնչյունափոխութիւնն առկա է նաև նախորդող ջ-ի անփոփոխ մնալիս. խոնջան>խոնջոն, խրխնջալ>խըրխըջալ, ապա-բանջան>առաբնջոն և այլն:

Ծ(<ճ)-ից հետո ա-ն մնում է անփոփոխ. ճաղ>ճաղ, ճար>ճար, ճաշ>ճաշ, ճանկ>ճանգյ, ճարտար>ճարտար և այլն:

Բառամիջում վ-ին հաջորդելիս ա-ն դառնում է տ. վարդ>վորթ, վանք>վոնքյ, վարձք>վորցիկ, վազել>վոզել, վարել>վորել, վաթսուն>վոթսուն, աստուածածին>աստվորածին:

Վայելել>վայելել բառում վ-ից հետո ա-ն չի դառնում միջնալեզվային տ, միջնալեզվային յ-ի ազդեցութեամբ:

Երկու և ավելի վանկ ունեցող բառերում վերջնավանկի վ-ին հաջորդող ա-ն շեշտի տակ մնում է անփոփոխ. աւազ>ավազ, գաւակ>գովակ, գուարթ>գըվարթ, շուար>շիվար, բուրուռ>պիւրվալ, աստուած>աստված, հաւատ>խավատ, ձաւար>ծովար, հիւանդ>խիվանդ, պողովատ>պօղվատ, սարկաւազ>աօր-կովարյ, ամբարտաւան>ամբարտավան:

«Անառկանի օրինքից» դուրս Շատախի բարբառում ա>տ հնչյունափոխութիւնն առկա է նաև՝

ա) գ-ից հետո, ինչպես՝ գատել>գառցել, գատիկ>գառիկ, գանգակ>գառցակ, գաւակ>գովակ, դարդարանք>գորտորտնք և այլն:

Այս օրենքը չի տարածվում եռավանկ բառերի վերջնավանկում գ-ին հաջորդող ա-ի վրա, որտեղ, շեշտի տակ, ա-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ աւազակ>տվոզակ, գավազան>կյովոզան, խարազան>խորոզան:

բ) ա>տ՝ Ժ-ից հետո. Ժած>ժոժ, Ժամ>ժամ, Ժանգ>ժոնգյ, Ժածիկ>ժոժիկ, Ժառանգ>ժոռանգյ, դժուար>աքժոր և այլն:

գ) ա>տ՝ բառասկզբի հավելում հանդիսացող ձայնեղ հ-ից հետո. ափն>հոփ, ագի հոկյի, առաջ>հոռան, սոխք>հոռիքյ, ալահ>հոկախ, արթուն>հորթուն, աղբիւր>հոխպիւր, անապատ>հոնոպատ, անագան>հոնոկյոն, ականատ>հոկոնատ և այլն:

Այս օրենքին է ենթարկվում նաև ալեւոր>խոււոր բառը,

որն սկզբում կրել է այլևոր > հալիւոր փոփոխութիւնը, հետո՝
հալիւոր > խալիւոր:

դ) Նկատելի է բառերի բազմաձևանկութեամբ պայմանավորված
ա > տ հնչյունափոխութեան (մասնավորապես չշեշտվող վանկե-
րում). աղաչել > աղոցել, անթեղոց > տնքորոց, թաւակել > բովով-
վել, ծարաւել > ծորովակ, կիւրակէ > կըրտկի, մարգարիտ >
մորկյըրիտ, սատանայ > սատոնո, փարատել > փորտակել, աս-
տուածածին > տսավորածին և այլն:

Այսպիսով ա > տ հնչյունափոխութիւնը Շատախի բարբա-
ռում տեղի ունի խլացած կամ անփոփոխ մնացած ձայնեղ պայ-
թականներից, ձայնեղ շփականներ վ, գ, ժ, հ-ից հետո, ինչպես
նաև ա ունեցող բազմաձևակ բառերի մեծ մասում:

Ա-ի հնչյունափոխութեան ալլ դեպքեր.

Մի շարք բազմաձևակ բառերում Ա-ին նախորդող բառասկզբի
և բառամիջի ա-ն դառնում է ը, ինչպես՝ անկանել > ընգյնել, անցա-
նել > ընցնել, գերանդի > կյերընդի և այլն:

Գրաբարյան ա-ի դիմաց երբեմն հանդես է գալիս է. օրինակ՝
բառասկզբում՝ Բ-ից և լ-ից առաջ.
ալիւր > էլուր, արիւն էրուն, արմունկ > էրմունգյ, արժան > հեժուն,
արի > էրի.

բառամիջում՝ գդալ > կյրտել, զրահ > զրէխ:

Ա-ն դառնում է յէ բառասկզբում՝ ղ-ից առաջ. աղանի > յէղ-
վընել, աղեղնակ > յէղյակ:

Ա > օ. — ուղարկել > օօրօխել (< * ուրաղիւ > հօրախել, հօ-
րօխել):

Ա > ու. — անթ > հունթ:

Ե

Գրաբարյան Ե հնչյունը միաձևակ բառերի սկզբում դառնում է
յէ, ինչպես՝ ես > յէս, երգ > յէրգ, եզն > յէզ, եզր > յէրզ, եղկ > յէլխյ:
Բացառութիւն են՝

եփ > էփ (ե > է),

երբ > ճեփ (ե > ճե):

Ղ և ռ բաղաձայններից առաջ բազմաձևակ բառերում ևս բա-
ռասկզբի Ե-ն դառնում է յէ. օրինակ՝ եղիճ > յէղէճ, եղնիկ > յէղնիկ,
եղեգն > յէղէգյ, եղունկ > յէղունգյ, եռալ > յէռալ, եռանդ > յէռանդ:

Բացառությամբ է՝ եղբայր>ախպէր, որ ժագում է սղբայր ձե-
սից:

Բաղմավանկ բառերում ր-ից առաջ բառասկզբի Ե-ի դիմաց
ունենք է. օրինակ՝ երազ>էրազ, երակ>էրակ, երամ>էրամ, երան
>էրան, երեկ>հէրէկ, երեց>էրէց, երկու>էրկու, երդումն>հէր-
տում, երթալ>էրթուլ, երեւնջ>էրիւնջ, երկաթ>էրկաթ, երկաջն>
>հէրկէն, երկանք>էրկանք, երկինք>էրկինք, երանի>էրանէկ,
երերալ>էրերալ, երեւլ>էրեւլ, երեւնակ>էրեւնակ և այլն:

Բացառությամբ է՝ երեսուն>յէսուն. բարբառային ձևում նախ
տեղի է ունեցել ր>ն հնչյունափոխություն, ապա ո-ին նախորդող
Ե-ն բառասկզբում դարձել է յէ (հմմտ. եռալ>յէռալ, եռանդ
>յէռանդ և այլն):

Գրական լեզվից փոխառյալ երկիր>յէրկիր, եպիսկոպոս
յեպիսկոպոս բառերում բառասկզբի Ե-ն արտասանվում է յէ.

Բայերի եզակի Յ-րդ դեմքում հանդես եկող գրք. Ե նախահա-
վելվածը բաղաձայնով սկսվող մի շարք բառերում պահպանվել է
և արտասանվում է է. օրինակ՝ եհան>էրան, եզար>էզար,
երաց>էպոց, եթող>էթող, ելաց>էլոց:

Երեք բառ ունենք, որոնց մեջ Ե նախահավելվածը դարձել է ի.
Էբեր>իպի, ելից>իլից, ետ>իտու:

Բառամիջում գրաբարյան Ե-ն սովորաբար վեր է ածվել իե
երկբարբառի (նշանակում ենք Ե տառով). Օրինակ՝ բեմ>պեմ
(piem) բերդ>պերք, գետ>կյետ, դեղ>տեղ, թել>քել, թեղ>քեղ,
թեփ>քեփ, խելք>խելք, կեռ>կեռ, ծեփ>ծեփ, նետ>նետ,
բեռն>պեռ, աներ>աներ, անթեղ>անթեղ, բեռն>պրվեռ, գետին
>կյետին, գերանդի>կյերնդի և այլն:

Սակայն զգալի թվով բառերում, առանց որևէ որոշակի կանո-
նի ենթարկվելու, գրաբարի Ե-ն բառամիջում, արդի հայերենի
նման, արտասանվում է պարզ է՝ խառնվելով պարզ ձայնավորի
վերածված գրաբարյան է ($=ե+յ$) հնչյունի հետ: Օրինակ՝ բերան
>պէրան, եղեգն>յէղէյ, հերու>իւերու, յեսան>հէսան, ցերեկ
>ցէրեկ, փեթակ>փէթակ, փեսայ>փէսա, աւետարան>ավէտ-
րան, հեծանիլ>իւէծենլ և այլն: Այս փաստերը ենթադրել են տա-
լիս, որ Ե>իե հնչյունափոխությունը Շատախի բարբառում համե-
մատաբար ուշ շրջանի երևույթ է և դեռ չի ընդգրկել նման տիպի
բոլոր դեպքերը, ուստի մի շարք բառերում Ե-ն պահպանում է իր
գրաբարյան արտասանությունը, այսինքն՝ պարզ ձայնավոր է:

Ն>Ի՝

Բառասկզբում՝ երեք>իրեք, եփել>իփել, հլանել>իլնել (ել-նել-ից), հտել>հիտել:

Բառամիջում՝ մեք>մինք, ձեզ>ձի, թեկն>թինկ, բերել>պի-րել, դեղել>տիղել, գննուլ>զինել, ծեփել>ծիփել, հերկել>խի-րկել, մծեխ>մըծիկ, շերեփ>շիրեփ, սերտել>սիրտել, փետել>փի-տել, փետուր>փիտուր, քերթել>քիրթել, հրեշտակ>խրիշտակ, տեսանել>տիսնել և այլն:

Ն>ա(ա).—դեռ>առու, հրեկ>աբուլալ, ախտեղ>սառ, սառեց:

Նույն հնչյունափոխությունը՝ բարեկամ>պարեկամ, խաչե-րկաթ>խոռոմեղաք, կանեփ>կանափ, անթեղոց>առթառոց, բա-րեկենդան>պարեկոնդոնք, վերալ>վար (<վարու-ից) բառերում արդյունք է բառի ա(ա) ձայնավորների առնամանություն:

Ն-ն դառնում է օ լեզակ>լօղակ բառում:

Ն>ը՝ երեկոյ>հըրկուն:

Ն>իւ՝ երդիք>հիրտիւ:

Է

Գրաբարի է-ին սովորաբար համապատասխանում է է:

Բառասկզբի համար կան հետևյալ օրինակները՝ էգ>էք, էշ>էշ, էական բայի ներկայի հոգնակի 2-րդ դեմքը՝ էք>էք, և ան-կատարի բոլոր դեմքերը՝ էի>է, էիր>էս, էր>էր, էաք>էնք, էիք>էք, էին>էն:

Բառամիջում՝ կէս>կէս, մէշ>մէշ, շէկ>շէկ, շէն>շէն, սէր>սէր, մէշք>մէշկ, անէծք>անէսկ, օրէնք>օրէնք, մէշկապ>մէշկապ, ապաւէն>ապաւէն:

Բառամիջի է-ն դառնում է ի խէժ>խիժ բառում:

է>օ՝ մողէզ>մօղօզիկ:

Բառավերջի է-ն հնչյունափոխվում է ա-ի թէ>թա, բաղէ>բոգա բառերում:

է>ի՝ կիւրակէ>կըրակի:

Ը

Գրաբարյան ը-ն Շատախի բարբառում սովորաբար մնում է ը: Բառասկզբի համար բառացանկում կան հետևյալ օրինակները՝ ընկեր>ընգյեր, ընտրել>ընդրել, ընծա>ընձա:

Բառասկզբում բաղաձայնների միջև առկա է գրաբարի գաղտնավանկ ր-ն, որը երբեմն լիարժեք հնչում է ստանում, ինչպես՝ քունել>պրոնել, գդակ>կլլատակ, զնդան>սրնդոն և այլն:

Բառավերջում, ինչպես գրաբարում, ր չի հանդիպում:

Ի

Բառասկզբում ի-ն սովորաբար մնում է անփոփոխ. Օրինակ՝ ինն>ին, ինչ>ինչ, իլիկ>իլիկ, իջանել>իննել, իննսուն>ինսուն և այլն:

Բացառություն է՝ իմ>յէմ, որ արդյունք է բառի ուղղական հոլովի յէս ձևի անալոգիայի:

Բառամիջում ի-ն մեծ մասամբ մնում է անփոփոխ. խիճ>խիճ, ծիլ>ծիլ, կիր>կիր, հին>խին, գինի>կյինի, գիշեր>կյիշեր. սիրել>սիրել, բաժին>պոժին, բաղանիք>պողնիս, դարբին>տորպին և այլն:

Բառամիջում շեշտի տակ ի-ն կարող է դառնալ ե կամ է: Այսպես՝

ի>ե.—գիժ>գյեժ, ջիղ>ճեղ, լինղ>լեճղ, կշիռ>կըշեռֆյ, դրակից>տրկեց, թիթեռնիկ>թըրթընեկ, մրջիմն>մըրեմն:

ի>է.—հզիճ>յէլէճ, թոնիր>թոնէր, կաթիլ(ք)>կաթլիք:

Մի շարք բառերում բառամիջի անշեշտ ի-ն դառնում է ր. ճիպո>նրպէոֆյ, ճիպոտ>նրպոտ, դիպանել>տրպնել, պատինճան>պատր՝ջոն:

Շեշտի տակ ի>ու (իւ) հնչյունափոխություններ ունենք երկու բառ. երդիք>հիւրտիւս, ուրիշ>հըրուշ:

Ի-ն հնչյունափոխվել է ո-ի կոծիծ>կուծոց բառում, որտեղ առաջին վանկի ո-ի առաջընթաց առնմանությունը ի-ն դարձել է ո (կոծոծ), ապա վերջին ո-ի ետընթաց տարնմանությունը առաջին վանկի ո-ն դարձել է ու. կոծոծ>կուծոց (հմտ. կոտոշ>կուառշ, փողոց>փուղոց):

Բառավերջում ևս ի-ն հիմնականում մնում է անփոփոխ. ձի>ծի, ալի>ալի, ադի>հուկյի, բարի>պորի, դարի>կյորի, գերի>կյերի, յդի>հուդի, անալի>ալնի, ածիլի>առոժի և այլն:

Ի-ն դառնում է ա(տ) հետևյալ բառերում՝ մի>մա, եդի(ցորեն)>յէլա:

Մեր բառարանի՝ բառասկզբում ու ունեցող 25 բառերից 19-ում ունենք ո>ւո(=wo) հնչյունափոխություն: Այդ բառերից 9-ը միավանկ են ոխ>տխ, ողջ>տխձ, ոտն>տտ, որդն>տրք, որձ>տրց և այլն, 8-ը՝ երկվանկ (ոզնի>տզնեկ, ոչխար>տչխար, ոսկի>տսկի, որդի>տրտի, ոստին>տստին և այլն), մեկը իսկական բարդություն է, ոիի առաջին բաղադրիչը ո-ով սկսվող միավանկ բառ է (որբեայրի>տրպտվորի), մյուսն էլ երկվանկ բառի ածանցյալ ձև է (ոսկի—ոսկերիչ>տսկրիճ): Այսպիսով՝ միավանկ և երկվանկ բառերի սկզբում գրք. ո-ն վեր է ածվում տ (wo) երկբարբառի:

Այս կանոնից շեղվում են երեք բառ՝
ուլ>վավ, որ>վար, ողջոյն>վօխնում:

Նաավանկ բառերում բառասկզբի ո-ն պահպանել է գրաբարյան արտասանությունը, այսինքն՝ պարզ օ ձայնավոր է: Այս կանոնի համար բառարանում ունենք երեք օրինակ՝ ողողել>օղօղել, ողորմել>օղօրմալ, որոճալ>օրօճալ:

Բառամիջում գրաբարյան ո-ն սովորաբար վեր է ածվել ուօ՝ (=ւօ) կամ ո (=նօ) երկբարբառի, ըստ որում ո>ն հնչյունափոխությունը հիմնականում հանդիպում է ձայնեղ մնացած կամ խլացած պայթականներից հետո:

Ո>ն (=ուօ) կամ ո (=նօ) փոփոխությունը տեղի ունի թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերում, թե՛ շեշտի տակ, թե՛ առանց շեշտի: Օրինակ՝ բողկ>պոկ, բով>պոփ, գող>կյոք, գում>կյոմ, գող>կյող, թոն>թոն, ալոջ>ալոյ, ամուլ>ամուլ, ափսոս>ափսոս, ալեւոր>խուլոր, հորդել>խորանել, ջորի>նոթի, լողանալ>լոխկոնալ, փողոց>փողան:

Սակայն կան միավանկ և բազմավանկ մի շարք բառեր, որոնք բառամիջում պահպանել են ո-ի գրաբարյան արտասանությունը, ինչպես ո-ով սկսվող եռավանկ բառերը բառասկզբում: Այսպես՝ մեր բառարանի՝ ո ունեցող գրաբարյան 159 բառերից ընդամենը 27-ում ո-ի դիմաց բարբառը բառամիջում ներկայացնում է օ: Օրինակ՝ խոխ>խօխ, ծով>ծօվ, հով>խօվ, սով>սօվ, կողով>կօղօվ, պողովատ>պօղվատ, սովորել>սօվրել, զոքանչ>զօֆյանչ, թոնիր>թօնէր, թոռմիլ>թօռմեկ և այլն:

¹ Ուօ-ն բարբառում նշանակվում է ո տառով:

Այսպիսով՝ գրաբարյան ու-ի երկբարբառացման պրոցեսը Շատախի բարբառում լայն տարածում գտնելով հանդերձ, չի ընդգրկել նման տիպի բոլոր օրինակները, և կան որոշ թվով բառեր, որոնց մեջ ու-ն շարունակում է մնալ պարզ ձայնավոր:

Երկու ո ունեցող բազմավանկ բառերի մեծ մասում առաջին վանկի ո-ն երկրորդ վանկի ո-ի տարնամանությունը հնչյունափոխվել է ու (իւ)-ի. օրինակ՝ բորբոս > պիւրպօս, գոգնոց > կյիւկյնոց, խոլորել > խուլըւել, կոծիծ > կուծոց (կոծիծ > կոծոց > կուծոց), կոտոշ > կուտոշ, կորկոտ > կուրկոտ, մոլորել > մուլըւել, փողոց > փուլոց, ոլորել > ուլըւել, ոսկր > ուսկոր (< ոսկոր ձևից):

Բառամիջում ո > տ հնչյունափոխությունը երեք բառ տեսնենք. բորակ > պուրակ, թոթոշ > քյոտթոթոշ, շնորհաւոր > շնոխտուոր:

ՈՒ

Բաղաձայններից առաջ, ինչպես և բառավերջում, ու-ն սովորաբար մնում է ու:

Բառակզբում՝ ուրախ > ուրախ, ուրազ > ուրաֆյ, ուրանալ > ուրանալ, ուղտ > ուփտ, ունջ > ուն և այլն:

Բառամիջում՝ անդունդ > անդունդ, անուն > անուն, բրուտ > պրուտ, թուր > բուր, ապուր > ապուր և այլն:

Բառավերջում՝ թթու > բրբու, կատու > կատու, կծու > կըծու, առու > առու և այլն:

Պ(<բ), կյ(<գ), տ(<դ), ծ(<ձ), ճ(<ջ) բաղաձայններին հաջորդելիս ու-ն դառնում է իւ. բու > պիւվ, բուանել > պիւանել, բուրդ > պիւրք, բուրվառ > պիւրվալ, գունդ > կյինդ, գութան > կյիւքան, դու > տիւ, դուն > տիւտ, դուրս > տիւս, ձու > ծիւ, ջուր > ճիւր և այլն:

Ձայնավորներից առաջ գրաբարյան ու-ն վեր է ածվում վ-ի. օրինակ՝ աղուէս > աղվէս, նուէր > նըվէր, գուարթ > գըվարք, ձուս-ծեղ > ծըվուզեղ և այլն:

Ու-ի հնչյունափոխության առանձին դեպքեր.

Բառակզբում՝

Ու > ր. — ուղեղ > ըղեղ, ուրիշ > նըրուշ:

Ու > տ. — տղորդ > տղորթ:

Ու > օ. — ուղարկել > հօրօխկել:

Բառամիջում՝

Ու>օ.—շուխա>շօթ, գլուխ>կլլլօխ, թրթուր>թրթօր:

Ու>ի.—գուռ>կրռիճճ:

Ու>ո.—քուռակ>քոռիկ, փուխ>փոխք:

Յ. ԵՐԿԱՍՏԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Գրաբարի երկբարբառները Շատախի բարբառում վեր են ածվել պարզ ձայնավորների կամ երկհնչյունների, հետևյալ կերպ.

ԱՅ

Բառասկզբում և բառամիջում դարձել է է. օրինակ այծ>էծ, այրել>էրել, գայլ>կլլել, հայր>խէր, մայր>մէր, լայն>լէն, ձայն>ծէն, երկայն>հէրկէն և այլն:

Այլ բառը ստացել է իրիկ ձևը. բառասկզբի ի-ն սկզբում եղել է է (էրիկ). նախ տեղի է ունեցել այ>է հնչյունափոխություն. դա հաստատվում է նրանով, որ նույն բառը բարբառական մեջ պահպանվել է այ>է փոփոխությամբ, ինչպես՝ սկեսրայր>կէսրէր: Էրիկ բառը, որն այս ձևով հանդիպում է մի շարք բարբառներում, վերջնավանկի ի-ի հետընթաց առնամանությամբ դարձել է իրիկ:

Բառասկզբի այ-ը վեր է ածվել ա-ի գերանունների մեջ: օրինակ՝ այդ>առ, այն>առն, այլ>ալ, այդքիկ>առոքք, այնոքիկ>առոքք, ալստեղ>հոստեղ, այդտեղ>հոստեղ, ալստեղ>հոստեղ:

Այ>ա հնչյունափոխություն բառասկզբում հանդիպում է նաև այրի>որպովորի բարբառական մեջ:

Բառամիջում այ>ա հնչյունափոխություն ունենք մայր բառի կոչականում՝ մարէ:

Բառամիջում ձայնավորից առաջ այ-ը չի վերաժվում պարզ ձայնավորի. օրինակ՝ ինայել>թրնայել, կլայել՝ կոլայել:

Երկու բառ բառամիջում կրել են այ>օ հնչյունափոխություն. գայո>ֆյօռ, պայծառ>պօծառ:

Բառավերջում այ-ը գտնում է ա կամ ո. ամիրայ>ամրո, բակլայ>բոկլա, կիժայ>կըթխո, տղայ>տըղա, շուշփայ>շուշփո և այլն: Այսօրինակ բառերը որոշիչ հոդ, անորոշ հոդ կամ հոգնակի քլ (<ք) մասնիկ ստանալիս բառավերջի ա-ն փոխում են ե-ի. օրինակ՝ բոկլա—բոկլէն, բոկլէք, բոկլէմ, տըղա—տըղէն,

տըղէմ, ամբո—ամբէն, ամբէք: Անկասկած այս դեպքում ունենք այլ>է օրինաչափ հնչյունափոխութիւնն բառամիջում, ալն է՝ գրբ. տղայն>բարբ. տըղէն, տղալ+մի>տըղէմ, բակլայն>բոկլէն, բակլայք>բոկլէք, ամիրայք>ամրէք:

Բառավերջում այ-ը մնացել է անփոփոխ միավանկ հայ>խայ բառում:

Վերայ-ը բարբառում դարձել է վոր, կրելով հետեւյալ փոփոխութիւնները. վերայ>վորտ, որտեղ է>ա հնչյունափոխութիւնն առաջացել է բառի վերջին վանկի ա-ի առնամանությամբ, որից հետո բառավերջի ա-ն կրճատվել է, մնացել է վոր:

Ծնծղայ բառը դարձել է ցընծղակ: Բառավերջի կ-ն հետագա հավելում է, իսկ բառավերջի այ երկբարբառից մնացել է ա պարզ ձայնավորը: Բառի փոփոխութիւնն ընթացել է այսպես՝ ծնծղայ>ցընծղա>ցընծղակ:

Աւ

Ձայնավորից առաջ, ինչպես և բառավերջում աւ-ը դառնում է ալ: Այդ օրինաչափութիւնը պահպանվում է նաև այն դեպքում, երբ ձայնավորների սղման հետեւնքով աւ-ին հաջորդում է բաղաձայն:

Բառասկզբում աւաղ>ավազ, աւել>ավել, աւելորդ>նավորթ, աւետարան>ովետարան, աւէրակ>ավէրակ և այլն:

Բառամիջում՝ գաւազան>կյովազան, թաւախել>թովովել, գաւակ>զովակ, խաւարծիլ>խովառծիլ, խաւիծ>խավիծ, ձաւար>ծովար և այլն:

Բառավերջում՝ իրաւ>իրավ, ծարաւ>ծարավ, կաքաւ>կաքյավ, գրաւ>գյրրավ և այլն:

Աւ-ը մնացել է աւ կամ դարձել է ու՝ ո հնչյունից առաջ. օրինակ՝ թագաւոր>թոկյաւոր, մեղաւոր>մեղաւոր, երկնաւոր>յերկնաւոր, երկրաւոր>յերկրաւոր, կնքաւոր>քյաւոր և այլն:

Բաղաձայնից առաջ աւ-ը դառնում է օ:

Բառասկզբում՝ աւծ>օց, աւր>օր, աւղ>օղ, աւծել>օծնել, աւր>օր և այլն:

Բառասկզբում աւ>օ>ու հնչյունափոխությամբ երկու բառ կա՝ աւտար>ուտար (<օտար-ից), աւրան>ուրան (<օրան-ից):

Բառամիջում՝ աղաւթք>աղօթկ, արաւտ>արօտ, արաւր>խարօր, լաւշտակ>լօշտակ, անաւար>նօսր:

Հետաքրքրական է աղանի բառը, որի աւ երկբարբառը գրական լեզվում բաղաձայնից առաջ, որպէս բացառութիւն, օ չի դարձել: Բարբառում աղանի-ն դարձել է յէղվրենէկ, հետեյալ կերպ՝ աղանեակ (փոքրացուցիչ ձևը) > *յեղօնէկ (աւ-ը բաղաձայնից առաջ օրինաչափորեն դարձել է օ), ապա՝ *յէղօնէկ > *յէղունէկ (օ > ու հնչյունափոխութեամբ. հմմտ. օտար > ուտար, օրան > ուրան), *յեղունէկ > *յեղուրենէկ > յեղվրենէկ (ու-ն ձայնավորից առաջ հնչյունափոխվել է վ-ի. հմմտ. նուէր > նըվէր, զուարթ > զըվարթ և այլն):

Եա

Ենթարկվել է հետեյալ փոփոխութիւններին.

Եա > Ե. — լեարդ > լերք, վառեակ > վառեկ, ցորեան > ցորեն, կոբեակ > կորեկ, աղանեակ > յէղվրենէկ և այլն:

Եա > ա. — լուանեակ > լուանակ:

Եա > ո. — իրեանք > ուրոնք (կաղմվել է անոնք ղերանվան համաբանութեամբ):

Անցյալ դերբայի և անց. կատարյալի երրորդ դեմքի վերջավորութիւնների մեջ Եա-ն դարձել է ի. օրինակ՝ գրեալ > կյըրիր, տեռեալ > տիսիր, կարդացեալ > կորսւոցիր, խօսեաց > խօսից և այլն:

Իւ

Բառասկզբում դառնում է ու, ինչպես՝ իւր > ուր, իւրեանք > ուրոնք:

Բառամիջում նույնպէս դառնում է ու, ըստ որում պ(<բ), ա(<դ), կյ(<գ), ծ(<ձ), ճ(<ջ) հնչյուններին հաջորդելիս վեր է ածվում իւ (= ü)-ի. օրինակներ՝ ձիւթ > ծիրք, ձիւն, > ծիւն, հիւր > խոճը, խիւս > խուս, արիւն > էրուն, ալիւր > էլուր, աղբիւր > հոխիւր և այլն:

— ութիւն ածանցի իւ-ի դիմաց բարբառն ունի է. օրինակ՝ ազատութիւն > ազոտութէն, եղբայրութիւն > եխպրութէն և այլն:

Բառավերջում իւ-ը դառնում է իվ.՝ օրինակ՝ արծիւ > առծիվ, թիւ > քիվ, հովիւ > խօվիվ և այլն:

Իւ-ի հնչյունափոխութեան առանձին դեպքեր.

Իւ > յէղ. — ծագում է ավելի հին՝ եղ ձևից: Սկզբում եւ երկբարբառը տվել է Ե, ապա Ե-ն դարձել է յէ, որն օրինաչափ է միավանկ բառերի սկզբում (հմմտ. ես > յէս, եզն > յէզ և այլն):

գրւլ>կյեղ.—ծագում է ավելի հին՝ գեղ ձեից՝ եւ երկբարբառի պարզեցմամբ:

Հարիւր>խարիւր:

կիւրակէ>կերակի, միւսոն>մրոռն.—Այս բառերում սկզբում տեղի է ունեցել իւ>ի, ապա՝ ի>ը հնչյունափոխություն (հմմտ. ճիպոն>ճըպեոֆյ, ճիպոտ>ճըպոտ, դիպանել>տըպնել և այլն):

ճիւլ>ճօղ.—իւ-ը նախ դարձել է ու, ինչպես հիւր>խուր, խիւս>խուս և այլ բառերում, ապա տեղի է ունեցել ու>օ հնչյունափոխություն (հմմտ. ջուխտ>ջօթ, գլուխ>կլլօխ և այլն):

Ոյ

Այս երկբարբառը հանդիպում է միայն շեշտի տակ:

Բառարանում ոյ-ով սկսվող երկու բառ կա միայն. ոյծ, որ տվել է լոծ (արտասանվում է wož) և ոյր, որ տվել է վիր:

Բառամիջում ոյ-ը դառնում է ո (=ու), ըստ որում, ալ (<բ), կյ (<գ), գյ (<գ, կ), յ հնչյուններին հաջորդելիս ո (=ու) հիփոփվում է՝ տալով ձ: Օրինակներ՝ թոյլ>թուլ, կոյր>կոր, շոյան>շուս, քոյր>քյոր, բոյժ>պօթ, բոյն>պոն, գոյն>կյոն, լոյս>լոս, անոյշ>անոշ, բնոյժ>պրնոթքյ, կապոյտ>կապոտ, բնկոյզ>գյոֆ:

Ծանոթ.— ու>ն կամ ո հնչյունափոխության պրոցեսում նախ ոյ երկբարբառը զրկվել է իր յ տարրից, դարձել պարզ ձայնավոր, որից հետո ո ձայնավորը երկբարբառացել է:

Մի շարք բառերում ոյ-ը տալիս է ու. օրինակ՝ յոյս>հուս, նմոյշ>նրմուշ, ողջոյն>վօխնուս, պատրոյզ>պատրուֆյ, երեկոյն>հրկուսն և այլն:

Բառավերջի ոյ-ի դիմաց բարբառն օյ ունի միավանկ խոյ>խօյ բառում, այնինչ միավանկ կոյ>կո բառի մեջ բառավերջի ոյ երկբարբառը դարձել է ո (=ու):

4. ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ ԴԱՄԱԿԱՐԱՐ ԳՐԱԲԱՐԻ ՀԱՄԱՄԱՏՈՒՅՅԱՄԵ

Բարբառի բաղաձայնական համակարգը գրաբարի համեմատությամբ ենթարկված է առաջին տեղաշարժի, որի հետևանքով գրաբարի ձայնեղ պայթականների ու ձայնեղ կիսաշփականների դիմաց բարբառում հիմնականում հանդես են գալիս խուլ պայթականներ և խուլ կիսաշփականներ, իսկ խուլ պայթականներն ու խուլ կիսաշփականները մեծ մասամբ մնում են նույնը:

Պատկերը հետևյալն է.

Գրաբար

Բարբառ

բ, գ, դ, ձ, շ	>	պ(փ), կլ(քլ), տ(թ) ծ(ց), ճ
պ, կ, տ, ծ, ճ	>	պ կ տ ծ ճ
փ, ք, թ, ց, չ	>	փ քլ թ ց չ

Ս ա ն ո թ .— Թնգայիններ մ և ն-ից հետո ձայնեղ պայթեղաններն ու ձայնեղ կիսաշփականները բարբառում չեն խլանում, քակ խուլերը դառնում են ձայնեղ:

Բ

Բառասկզբում և բառամիջում գրաբարի բ-ին համապատասխանում է՝ պ. օրինակ՝ բարի > պարի, բարձր > պեցցըր, բեր > պըպուկ, աղբիւր > հոխպիւր, եղբայր > ախպեր և այլն:

Կան մի շարք բարբառային և փոխառյալ բառեր, որոնց մեջ բ-ն անփոփոխ է. օրինակ՝ բարբառային՝ բոս (=խոսք), բոսկ (=ծխամորճ), բեր (=կիթ), բըլուն (=բութ կտրիչ), բօա (=անամեջ փալա), բօր (=գլորան), բըռիկ (վալրի խոտ է). փոխառյալ՝ բազէ > բոզո, բադ > բուտ, բարտի > բորգի, բախտ > բոխտ, բակլալ > բոկլա, բրեն (=վերք), բոշ, բոզառ:

Բ-ն չի խլանում նաև ռնգային մ-ից հետո. օրինակ՝ ամբար > ամբոր, բամբակ > պոմբոկ, գմբեթ > քըմբեթ, թումբ > թումբ և այլն:

Հետաքրքիր ձևափոխության է ենթարկվել բոտոտ > մընդիտ բառը: Վանի բարբառն ունի բըտոտ: Շատախում բառասկզբի երկու բաղաձայնների միջև ավելացել է ն (բընդոտ, հմմտ. գտանել > կընդեն), որից հետո, ռնգային ն-ի մասնակի առնամանությանը, բառասկզբի բ-ն դարձել է մ, ստացվել է մընդոտ > մընդիտ:

Բառավերջում բ-ն հնչյունափոխվում է փ-ի, եթե ռնգայինի չի հաջորդում. օրինակ՝ գար > կյոփ, երբ > քեփ, սուրբ > սուրփ, Յակովբ > Հոկոփ և այլն:

Գ

Գ-ով սկսվող բառերի մեծ մասում գ-ն դառնում է կյ. օրինակ՝ դար > կյոփ, գաղաթն > կյոկյոթ, գազ (բույսը) > կյոզ, գալ > կյոլ, գալլ > կյել, գառն > կյոռ, գետ > կյետ, գերի > կյերի, գին > կյին, գիշեր > կյիշեր, գիրդ > կյիրդ, գործ > կյոճ (գործվածք):

Մի շարք բարբառային և փոխառյալ բառերի սկզբում գ-ն դառնում է գյ. օրինակ՝ գյամբովել, գյըխշել, գյիսկ, գյըմք, գյօտ, գիժ>գյեծ, գահ>գյտն, գազ (չափը) գյտզ, գղթոր>գյըթոր, գոռ>գյոռ, գոեհ>գյըռեխ, գրաւ>գյըրավ:

Բառասկզբում գ-ն հնչյունափոխությամբ չորս բառ ունենք. գլորել>կըլորել, գոց>կոծ, գտանել>կընդնել, գործ>կօրծ (աշխատանք):

Բառասկզբի գ-ն դառնում է ֆ գաղափար>ֆաղափար, գութ>ֆութ բառերում, որոնք բարբառին անցել են արևմտահայ գրական լեզվից:

Բառասկզբի գ-ն դառնում է ֆյ գայո>ֆյօռ, գմբեթ>ֆյըմբէթ բառերում:

Բառամիջում գ-ն մեծ մասամբ դառնում է կյ. ագանել>խակյնել, ագի>հոկյի, անագան>հոմոկյոմն, արեգակն>արեկյոմի, թագաւոր>թոկյոււոր, մզիւլ>մըկյլիւլ, պագանել>պակյնել և այլն:

Բառամիջի գ-ն դառնում է կ հետևյալ բառերում. ագացան ռկոցան, ճգնաւոր>ճըկնուոր, ունգի>նուկի (ուխ դրափոխությամբ), մագնիտ(ոս)>մըկլտուզ, ձգել>իսկել, ձգտալ>զըկըռտալ:

Բառամիջի գ>ֆյ հնչյունափոխությամբ երկու բառ կա. գուգել>գուֆյել, տալգր>տէֆյըր:

Ն ռնգայինին հաջորդելիս բառամիջում և բառավերջում գ-ն դառնում է գյ. հանգուց>խսնգյծրց, հանգչել>խանգյել, ժանգառ ծոնգյոռ, ժառանգ>ծոռանգյ:

Բառամիջի գ-ի փոփոխության յուրահատուկ ձևեր են հանդիպում հետևյալ բառերում.

լոգանալ>լոխկոմալ, որտեղ գ>խկ փոփոխությունը, ինչպես նշել է պրոֆ. Աճառյանը, արդյունք է լոդալ և լոգանալ մերձանիշ բառերի խաշաձևան¹:

Սագել>ծաղկել.—բարբառային ձևը Աճառյանը համարում է արևի դուրս գալու մասին պատկերավոր արտահայտություն²:

կանգնել>կայնել:

Բառավերջում գ-ն սովորաբար դառնում է քյ. գոգ>կյծքյ, ձագ>ծոքյ, պագ>պաքյ, թագ>թաքյ, էգ>էքյ, սուգ>սուքյ, մարագ>մարաքյ, եղեգն>յեղեքյ:

¹ Տե՛ս Հ. ր. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, էջ 56:

² Տե՛ս նույն տեղը:

Բացառություն են՝

երգ>յէրք (զ>ք),

ազգ>ասկ (զգ>սկ կապակցության մեջ գ>կ):

Օգն>հօկյ.—գ>կյ հնչյունափոխությունը ցույց է տալիս, որ կյ-ն սկզբում եղել է բառամիջում, որովհետև այս փոփոխությունը հատուկ է բառամիջին (հմտ. ագանել>խակյնել, պագանել>պակյնել). ուստի այստեղ գ>կյ փոփոխությունը կատարվել է ավելի շուտ, քան բառավերջի ն-ի անկումը, և բառն սկզբում ունեցել է հօկյն ձևը, հետագայում ն-ն ընկել է, մնացել է հօկյ:

Դ

Բառակցքում դառնում է տ. դալ>տոլ, դալար>տոլար, դահ>տոխ, դամոն>տոմոն, դաա>տատ, դուրս>տիւս, դադարել>տտարել և այլն:

Մի շարք բարբառային և փոխառյալ բառերի սկզբում դ-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ դէղէզ (=իշամեղու), դըզէզ (=բզեզ), դիկ, դըվթիկ, դեհ>դեխ, դունչ>դունչ, դահիճ>դախիճ:

Բառամիջում Ե-ից և խ(<ղ)-ից հետո դ-ն դառնում է տ. արդար>աքառք, բրդել>պըրտել, երդիկ>ճիւրտիւս, երդումն>հէրտում, խեղդել>խիխտել, հորդել>խորտել, նորդի>որտի, վարդավառ>վորտովոր, վարդապետ>վորտապետ:

Բացառություն է խարդախ>խարթախ, որտեղ Ե-ից հետո բառամիջի դ-ն դարձել է ք:

Բառամիջի դ>տ հնչյունափոխությամբ կա մի բառ ևս՝ դադարել>տտարել, որտեղ դ>տ-ն հաջորդում է ձայնավորի:

Ն ռնգայինից հետո թե՛ բառամիջում, թե՛ բառավերջում դ-ն մնում է անփոփոխ. անդունդ>անդունդ, գինդ>կյինդ, գունդ>կյիւնդ, զնդան>սընդոն, խնդալ>խընդոլ, գերանդի>կյեքընդի:

Բացառություն է խնդրել>խընթրել, որտեղ ն-ից հետո դ-ն դարձել է ք:

Նշված դիրքերից բացի, բառամիջի դ-ն այլ դիրքում հանդես չի գալիս:

Բառավերջում դ-ն գլխավորապես հանդիպում է Ե-ից հետո և

գառնում է թ. բարդ>պտրք, լհարդ>լերթ, կորդ>կորթ, մարդ>մարթ¹, բերդ>պերթ, բարդ>պիրլ, վարդ>վորթ:

Այդ>ուտ գերանվան մեջ բառավերջի դ-ն ձայնավորից հետո հնչյունափոխվել է ա-ի:

9.

Սովորաբար մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ զատիկ>զառիկ, գաւակ>գավակ, գենուլ>գինել, գղջւլ>գըխնուլ, գուգել>գուքյել, զոքանչ>զօքյանչ և այլն:
Զնդան գարձել է սընդուն:

Զգուել>վիսալ փոփոխության հնարավոր ուղին է՝ զգուել>զըզվալ, ապա՝ զ/վ դրափոխությամբ՝ զըվզալ, որը հանդիպում է մի շարք բարբառներում, այնուհետև բառասկզբի զը տարրի կըրճատում, վ-ի և գ-ի միջև բարեհնչյունության համար ի ձայնավորի հաջևելում *վիզալ, որից հետո՝ վ ձայնեղի տարնմանությամբ՝ գ-ի խլացում (վիսալ):

Բառամիջում գ-ն մնում է գ. ազնիւ>ազնիվ, բազուկ>պազուկ, գզել>կյըզել, գազան>կյազուն, խոզան>խօզուն, հնազանդ>խնազունդ, ծառգարդար>ծռռգարատո և այլն:

Բացառութիւն է՝ ազգ>ասկ (զգ>սկ):

Բառավերջում ևս գ-ն մնում է գ. աւազ>ավազ, գազ>կյազ, երազ>երազ, ընկուզ>զյոզ, խոզ>խօզ, կուզ>կուզ և այլն:

Բառավերջի գ-ն ընկնում է մեզ>մի, ձեզ>ծի դերանունների մեջ:

Բառավերջի գրաբարյան գ-ի դիմաց բարբառն ունի ձ՝ և յնգալիներից հետո. քանզ>քյունձ, կորիզ>կողինձ, գուռզ>կըռինձ:

թ.

Բոլոր դիրքերում մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ թագ>քաֆյ, թամբ>քամֆյ, թաղիք>քաղիս, թութ>քութ, թուզ>քուզ և այլն:

Բառամիջում՝ երթալ>երթալ, աղաթք>աղօթկ, արթուն>հոթթուն, անթեղոց>ունթուրոց և այլն:

¹ Մարդ>մարք բառը թեք հոլովներում ստանում է մարս հիմքը (մարտ-ու, մարտ-ոց, մարտ-օվ): Այս դեպքում ր-ին հաջորդող դ-ն, լի-նելով բառամիջում՝ զառնում է s (հմտ. երդումն>նէրսում, արդար>արսուր և այլն):

Բառափոխում՝ բոլթ>պոլթ, բլթ>պրլիթ, արծաթ>առծար,
երկաթ>երկար և այլն:

Ժ

Մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ ժահ>ժոհլ, ժառ>ժև, ժամ>ժոմ, ժա-
ռանդ>ժոռանդլ, ժպտալ>ժլմտալ և այլն:

Բառամիջում՝ բաժին>պոժին, արժան>մլժոմն, ժածիկ>ժո-
ժիկ, բաժան>պոժոմն և այլն:

Կաթիլքակ>կոմիջլքակ բառում չփակա՛ն ժ-ն բնկնկով և
ռնգայնից հետո, դարձել է կիսաշփական ջ այնպես, ինչպես զ-ն
նույն դիրքում պա՛նում է ռ (հմմտ. քան զ>քյոնձ, կորիզ>կո-
ղինձ, գոռզ>կըռինձ):

Բառափոխում եւ ժ-ն մնում է անփոփոխ, ժամ>ժոմ, կարժ
>կոմ, ոլթ>ուծ, վարժ>վորժ և այլն:

Բացառություն է՝ պատիժ>պատին (ժ>ճ):

Լ

Մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ լաճ>լան, լայն>լն, լեզու>լեզու, լինդ>
լննդ, լոլս>լոս և այլն:

Բառամիջում՝ բլթ>պրլիթ, անալի>ալնի, ալիւր>էլուր, ու-
լունք>ուլնեկ և այլն:

Բառափոխում՝ ալլ>ալ(եկ), գալլ>կլել, բարկանալ>պար-
կոնալ:

Ըստ հնչյունափոխության ունենք անցյալ դերբայի-կալ>-իր
վերջավորության մեջ. գրեալ>կլըրիւր, երգեալ>յէրէիւր, բերեալ>
պիրիւր և այլն:

Խ

Մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ խաղ>խազ, խաժ>խաժ, խալ>խալ, խա-
ղող>խաղող, խալիժ>խավիժ և այլն:

Բառամիջում՝ աշխարհ>աշխար, խրինջալ>խըրիւջալ, մո-
խիր>մոխիր, կախել>կալսել:

Բառավերջում՝ ձախ>ծով, հանուխ>կանուխ, բացախ>բացալ, գլխ>կյլլով, մարսխ>մարսի և այլն:
Շաղախի, գարձի է շողողիլ:

Ն

Հիմնականում մնում է անփոփոխ Որինակ՝ ծառ>ծառ, ծիլ>ծիլ, մածուն>մածուն, կայծակ>կէծակ, այծ>լծ, մեծ>մեծ, կոծ>կոծ և այլն:

Բառակզրի համար բացառություն են՝ ծնծղայ>ցընծղակ, ծղխնի>երխան:

Ն ռնդայինից հետո ծ-ն ձայնեղանալով դառնում է ձ. անծեղ>անձեղ, ծնծղայ>ցընծղակ:

Բառավերջի ծք>սկ հնչյունակապակցության մեջ ծ-ն դրոկվում է իր տ բաղադրիչից, մնում է շփական ս-ն, որինակ՝ մանուածք>մանվասկ, անէծք>անէսկ, լելվասկ(<լենվածք), սլրվվասկ(<սլրվածք), սլրովասկ(<սռնվածք) և այլն:

Հետաքրքրական է կաձկաժ բառը, որը զրարարի կասկաձ ձևի տարբերակն է: Բառը կազմվել է կաժ արմատի կրկնությամբ: Գրաբարում բարդության առաջին բաղադրիչի ծ-ն նախորդելով Լրկրորդ բաղադրիչի կ-ին՝ զրկվել է իր պայթական տ տարրից և դարձել շփական ս: իսկ բարբառային ձևում նույն ձ-ն մնացել է անփոփոխ (կաժկաժ):

Ձուածեղ գարձի է ծրվողեղ:

Աստուածածին>ուսովորածին բառում առաջին ծ-ն Լրկրորդ ձ-ի տարնամանությունից գարձի է ր:

Կ

Սովորաբար մնում է անփոփոխ:

Բառակզրում՝ կար>կառ, կարել>կառել, կատու>կատու, կարկուտ>կառկուտ, կուշտ>կուշտ, կուռն>կուռ, կռունկ>կրոունգլ և այլն:

Բառամիջում՝ կերակար>կերակուր, կարկասան>կուրկուտան, ակահ>հոկալ, ախանջ>ախանջ, սարկատագ>ստրկովաքլ և այլն:
Կակիժրակ>կոնջրրտկ բառում բառամիջի կ>ն հնչյունափոխությունը բառակզրի կ-ի տարնամանության արդյունք է:

Բառավերջում՝ մուկն>մուկ, պարկ>պարկ, քուռակ>քուրկ, տատրակ>տատրակ, նապաստակ>լրպստրակ և այլն:

Բառավերջում կ-ն դառնում է քյ՝ եղկ>յէզքյ, շապիկ>շապիքյ, կծիկ>կըծիքյ բառերում:

Ն ռնգայինից հետո կ-ն դառնում է գյ. ընկեր>ընգյեր, ծունկըն>ծոնգյ, խունկ>խոնգյ, տնկել>տընգյել, կանկար>կանգյար և այլն:

Հ

Բառասկզբում դառնում է խ. համ>խամ, հազ>խազ, հազալ>խազալ, համար>խոմար, հալ>խալ, հալիլ>խել, հալիլի>խալի, հառկ>խաշկ, հատանիլ>խառնել, հում>խում, հպարտ>խապարտ և այլն:

Բացառություն են կազմում՝ հունձ>հունձ, հաստատ>հաստատ:

Հ-ն բառասկզբում չի դառնում խ մի շարք փոխառյալ բառերում. օրինակ՝ հալ, հազրո, հաշի, հէշ, համալ, հայվան և այլն:

Բառամիջում հ-ն սովորաբար դառնում է խ. շնորհաւոր>շնոխուոր, շնորհք>շընոխքյ, պահել>պախել, պահէզ>պախրէզ, պահք>պախս, օրհնել>օխնել և այլն:

Բացառություն են՝ ահա>ախահ, ժահր>ժախր, ռահան>ռախոն:

Բառավերջում նույնպես հ-ն դառնում է խ. ահ>ախ, դահ>առի, զրահ>զըրէխ, մահ>մախ:

Բ-ից հետո բառավերջի հ-ն ընկնում է. աշխարհ>աշխաբքյ, խոնարհ>խոնար:

Չ

Բառասկզբում չառնում է ծ. ձագ>ծաքյ, ձախ>ծախ, ձայն>ծէն, ձեռք>ծեռ, ձիւն>ծիւն, ձմեռուկ>ծըմրուկ, ձուկն>ծիւկ և այլն:

Բացառություն են՝ ձգել>խսկել, ձգտալ>զըկրոտալ: Առաջին օրինակում ետնալեզվային խուլ պայթական կ(<գ)-ի ազդեցությամբ ձ-ն զրկվել է իր պայթական դ բաղադրիչից, միաժամանակ նույն կ-ի առնմանությամբ խլացել է, դարձել ս(<զ>*զ>ս): Երկրորդ օրինակում ձ-ն, դարձյալ կ(<գ)-ի ներգործությամբ, զրկվել է իր պայթական դ բաղադրիչից:

Բառամիջում և բառավերջում և ռնգայինից հետո ձ-ն մնում է անփոփոխ. աղանձ>աղանձ, բրինձ>պրբինձ, գինձ>կյինձ,

դանձանակ>կյտնճոնակ, թանձր>թանձր, խնձոր>խրնձոր,
հունձ>հունձ և այլն:

Բ-ից հետո բառամիջում և բառավերջում ձ-ն դառնում է ց.
արձակիլ>արցկիլ, խուրձ>խուրց, որձ>ւորց, վարձք>վորցկ,
բարձ>պորց, բարձր>պոցըր:

Բացառություն է՝ փորձ>փորժ (բ-ից հետո ձ>ժ):

Բառավերջի ձ-ն դառնում է ս մաղձ>մախս բառում:

Ձ-ն այլ դիրքերում հանդես չի գալիս, բացի օձ>օց բառից,
որտեղ բառավերջում ձ-ն հաջորդում է ձայնավորի և դառնում է ց:

Ղ

Բարբառում Ղ-ով բառ չի սկսվում: Փոխառյալ բառերի ու
հատուկ անունների մեջ Ղ-ն դառնում է կ. օրինակ՝ ղուրուշ>կու-
րուշ, ղարիբ>կարիբ, Ղամարլու>կոմարլու, Ղազար>կազար,
Ղուկաս>կուկաս և այլն: Բացառություն է՝ Ղեռնդ>Ղեվոնդ, որ-
տեղ բառասկզբի Ղ-ն մնում է անփոփոխ:

Բառամիջում Ղ-ն չի հնչյունափոխվում ձայնավորից առաջ.
աղանձ>աղանձ, աղիք>աղիքյ, աղօթք>աղօթկ, բաղարչ>պու-
ղարճ, գեղին>տեղին, պղինձ>պրղինձ և այլն:

Բացառություն է՝ կթղայ>կըթխա, որտեղ ձայնավորից ա-
ռաջ Ղ-ի դիմաց բարբառն ունի խ: Այս բառը միջին դարերից
սկսած հանդիպում է և՛ կթղա, և՛ կթխա ձևով: Շատախի բարբա-
ռը վերցրել է վերջին՝ խ-ով ձևը:

Աղեղն դարձել է անեղ, որտեղ առաջին Ղ-ի հնչյունափոխու-
թյունն արդյունք է երկրորդ Ղ-ի տարնմանության:

Բառամիջի Ղ-ն չի փոխվում ձայնորդ կամ ձայնեղ բաղա-
ձայնից առաջ. օրինակ՝ աղուէս>աղվէս, քաղանիք>պողնիս,
թողուլ>թըղնել, ծաղր>ծաղըր, մեղր>մեղըր և այլն:

Բաղեղն>պոռնիս բառում առաջին Ղ-ն երկրորդ Ղ-ի տարնմա-
նություն բարձել է ա, իսկ երկրորդ Ղ-ն թրթռուն ա-ի տարնմա-
նություն խլացել է, դարձել խ:

Բառամիջում խուլ բաղաձայնի նախորդելիս Ղ-ն սովորաբար
խլանում է. օրինակ՝ աղբ>ախփ, աղբիւր>նոխպիւր, առողջ>
առոխճ, գաղտ(ուկ)>կյախտիկ, եղկ>յեխքյ, գղթոր>գյըխթոր,
մեղք>մեխքյ, քաղցր>քյախցըր և այլն:

Սակայն կան որոշ բառեր, որոնց մեջ խուլ բաղաձայնից ա-

ռաջ դ-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ աղքատ>աղփյատ, բողկ>պօղկ, ծաղկել>ծաղկել, կեղծաւոր>կեղծաւոր և այլն:

Մղխնի բառը դարձել է նրխան:

Բառամիջի դ-ի դիմաց բարբառը լ է հանդես բերում մակաղել>մողտլել, մղել>մըլել, եղա>ելա բառերում:

Անթեղոց>տնթորոց բառում դ-ի դիմաց բարբառն ունի ր:

Բառավերջում դ-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ աղ>աղ, գող>կյօղ, գեղ>տեղ, թեղ>թեղ, խաղ>խաղ, խաղող>խաղող և այլն:

Թող-ը իբրև անկախ բայ գործածվելիս (թողնել բայի հրամայական ձևը) չի հնչյունափոխվում (թո՛ղ), իսկ իբրև եղանակավորող բառ գործածվելիս դառնում է թըխ (թըխ պիրի, թըխ ուտի):

Բառավերջում դ-ն ընկնում է կոճղ>կոճ բառում:

Ճ

Բառասկզբում, առանց բացառության, ց-ն մնում է անփոփոխ. ճախարակ>ճախրակ, ճակատ>ճակատ, ճաղ>ճաղ, ճանապարհ>ճամբուխ, ճաշ>ճաշ, ճգնաւոր>ճըկնուոր, ճկոյթ>նըկոթ և այլն:

Բառամիջում և բառավերջում նույնպես ց-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ արճիճ>առնին, կոճակել>կոնկել, վիճակ>վինակ, որոճալ>օրօնալ, պըճեղն>պընեղ, լաճ>լան, խիղճ>խիխն, կարճ>կաոճ և այլն:

Բառամիջում և բառավերջում ց ընդգայինից հետո ց-ն դառնում է ջ. օրինակ՝ ճնճղուկ>նընջղուկ, պատինճան>պտտընջոն, ճանճ>նանջ, մաճ>մանջ և այլն:

Մ

Բոլոր դիրքերում մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ մաղ>մագ, մաթիլ>մաթիլ, մասուր>մասուր, մարազ>մարաբյ, մարգարիտ>մորկյրիտ, միւտոն>մըտոն, մշակ>մըշակ և այլն:

Բառամիջում՝ ամպ>ամբ, ամառն>ամառ, դմակ>տըմակ, խմել>խըմել, թումբ>թումբ և այլն:

Բառավերջում՝ բեմ>պեմ, դեմ>տեմ, ծամ>ծամ, մոմ>մոմ, մըջիմն>մըբնմ, շամամ>շոմամ, համ>խամ և այլն:

Բացառություն է՝ քցիմ>քյըծեփ, բառավերջի մ>փ տարբերությունը:

Զ

Բառասկզբի յ-ն դառնում է հ. օրինակ՝ յաղթել>հաղթել, յաջողել>հաջողել, յար>հար, յարդ>հարք, յիսուն>հիսուն, յոյս>հուս և այլն:

Բացառություն են՝ յօրանջել>օրջկլալ, յստակ>ստակ, որոնց մեջ բառասկզբի յ-ն չի պահպանվել:

Յետ բառն ունի երեք ձև՝ հիտեմ, իետօվ, իսկ որպես բայի հարադրյալ՝ յեա (յէա կլու, յէա տալ, յէա լու):

Ն

Սովորաբար մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ նախանձ>նախանձ, նախիր>նախիր, նաւակատիկ>նավակատիկ, նեխել>նեխել, նեա>նետ, նման>նման, նմոյշ>նմուշ, նշխար>նշխարք և այլն:

Բառասկզբի ն-ն ընկնում է հետևյալ հարադրական բայերում՝ նշանք տալ>շնք տալ, նշմար տալ>շմար տալ:

Նապաստակ դառնում է լրպրատակ (բառասկզբի ն>լ հնչփ.):

Բառամիջում՝ անադան>հոնոկյոն, աներ>աներ, անթ>հոնթ, փանգատ>կյոնգյոտ, փինի>կյինի, քրնջնակ>քրնջնակ, ականջ>ականջ, աղանձ>աղանձ, աղանի>յեղվրենկ և այլն:

Հիվանդանոց>խրվրնգորոց բառի մեջ երկրորդ ն-ն առաջին ն-ի տարնմանությամբ հնչյունափոխվել է ր-ի:

Բառամիջի ն-ն ընկել է ունջ>ուն բառում:

Բառավերջում՝ աշուն>աշուն, արժան>հեժոն, արիւն>երուն, քաժին>պոժին, գարուն>կյորուն, գին>կյին, գոլն>կյոն, երեսուն>յեռսուն և այլն:

Գոյականների մեջ բաղաձայնի հաջորդող վերջնահնչյուն ն-ն ընկել է. օրինակ՝ ակն>ակ, աղեղն>անեղ, ամառն>ամառ, արմուկն>էրմունգյ, գոռն>աիռ, ինն>ին, պճեղն>պրենեղ, դառն>տառ, տառն>տառ, երգումն>հերաում, խօսումն>խօսաում և այլն:

Ողջոյն դարձել է վօխնում (<*ողջումն-ից):

Բոլոր դիրքերում մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ շաղ>շաղ, շաղգամ>շոխկյոմ, շարժել>շա-
ծել, շերեփ>շիրեփ, շիւղ>շուղ, շուք>շուքյ և այլն:

Շարժք գարձել է ժողկ՝ շ/ժ դրափոխությամբ:

Բառամիջում՝ աշուն>աշուն, գիշեր>կյիշեր, նշան>նըշան,
շուշան>շուշան, պաշտել>պաշտել և այլն:

Բառավերջում՝ անոյշ>անոշ, գոմէշ>կյումեշ, թոթոշ>քյոո-
թոթոշ, ուրիշ>նըրուշ, ճաշ>նաշ և այլն:

9

Մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ չար>չար, չիր>չիր, չափ>չափ, չորք>չորս,
չորեքշաբթի>չօրօղշքաթթ, չուան>չըվան և այլն:

Բառամիջում՝ ամաչել>ոմչընալ, ոչխար>ոխչար, փչել>
փքչել, կանչել>կանչել և այլն:

Բացառութիւն են՝ աղաչանք>ողոմնաքյ, խաչերկաթ>խոռ-
նեկաթ (բառամիջի չ>ն հնչի):

Բառավերջում՝ չամիչ>չամիչ, չանչ>չանչ, կանաչ>կանաչ,
խաչ>խաչ, գոքանչ>գօքյոմնչ, կակաչ>կակաչ:

Բացառութիւն է՝ ոսկերիչ>ոսկրին (չ>ն):

Բառավերջի չք>շկ հնչյունակապակցության մեջ չ-ն դառնում
է շ. օրինակ՝ աչք>աշկ, ինչ(ք)>իշկ, համարիչ(ք)>խամբրիշկ,
կոտրիչ(ք)>կոտրիշկ և այլն:

10

Մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ պագ>պաքյ, պահել>պախել, պաշտել>պաշ-
տել, պնակ>պընակ, պղինձ>պըղինձ, պոշ>պոշ, պոուկ>պրոուկ
և այլն:

Բացառութիւն է՝ պսակ>փսակ:

Բառամիջում՝ անապատ>նոնոպատ, ապարանջան>տոպըն-
ջոն (պ/ր>ն փոփոխությամբ), ապաւէն>ապովեն, ապուր>ա-
պուր, գիպանել>աըպենել, լրպրթել>լըպըստրալ, կապերտ>կտր-
պետ (պ/ր դրափոխությամբ), հպարտ>խտպարտ, ճիպո>նը-
պեոքյ և այլն:

Երեք բառ կա, որոնցում պ-ն դարձել է շփական հնչյուն։
Դրանք են՝

Թաթական > քաթվան. — պաթական բ-երի տարնմանությամբ
և բառավերջի շփական ն-ի առնմանությամբ պաթական պ-ն
հնչյունափոխվել է շփական վ-ի։

Ժպտալ > ժլմտալ. — շփական ժ-ի և պաթական տ-ի միջև,
առաջինի առնմանությամբ և երկրորդի տարնմանությամբ, պ-ն
դարձել է մ։

Սպիտակ > սրվտակ. — անցել է հետևյալ փոփոխությունե-
րը՝ սպիտակ > սիպտակ (պ/ի դրափոխությամբ) > սրվտակ։ Շփա-
կան ս-ի և պաթական տ-ի միջև, դարձյալ առաջինի առնմանու-
թյամբ և երկրորդի տարնմանությամբ պ-ն դարձել է վ։

Ռնգայինի հաջորդելիս պ-ն ձայնեղանում է, դառնում բ. ու-
նենք ընդամենը երկու օրինակ, մեկը բառամիջի, մյուսը՝ բառա-
վերջի համար. ճանապարհ > ճամբոխ, ամպ > ամբ։

Բառավերջում պ-ն մնում է պ. կապ > կապ, կոպ > կոպ, ոսպն
> տսպ, պարապ > պարապ, պապ > պապ։

Բառավերջի պ-ի դիմաց բարբառն ունի ր ազապ > ազար և
ռուպ > ռուր՝ բառերում։

Պ > փ՝ վիշապ > վիշափ։

2

Սովորաբար դառնում է ն։

Բառասկզբում՝ ջարդել > ճոքանել, ջեր > ճեր, ջիդ > ճեդ, ջոկ >
ճոկ, ջոջ > ճոճ, ջուր > ճիւր, ջրաւն > ճըրաւն, ջրցանել > ճըրճը-
նել և այլն։

Բառասկզբի ջ-ն չի խլանում մի քանի բարբառային և փո-
խառյալ բառերում՝ ջըվուլ, ջօրօլ (= հաղիվ), ջըրա (հերթ), ջո-
նտիպէր (= աեգր), ջուխա > ջօթ։

Բառամիջում՝ գղջալ > գըխնուլ, թրջել > քըքջել, իջանել > ին-
նել, հաջել > խաքնել, ոջիլ > լոնիլ, ողջոյն > վօխնում, առաջաւ >
հիռնել, արջաւ > անոռ, արջաւապ > արնոպա, պղպջակ > պօղօճակ
և այլն։

Բառամիջում և բառավերջում ն ռնգայինից հետո ջ-ն մնում
է անփոփոխ. օրինակ՝ ափանջ > ափանջ, երինջ > էրինջ, հրնջնակ >
էրնջնակ, խոնջան > խոնջան և այլն։

Բացառություն է՝ խնջել > խրնջել (ն-ից հետո ջ/լ)։

Բառավերջում ջ-ն դառնում է ն. օրինակ՝ վերջ>վերն, ստերջ>ստերն, ունջ>ուն, առաջ>հռոան, առողջ>առողսն, արջ>արն բաղարջ>պողարն:

Բառավերջի ջ-ն հնչյունափոխվել է չ-ի աջ>աչ, ջոջ>նոչ, ալոջ>ալոչ բառերում:

Կամուրջ>կարմունջ բառում վերջնահնչյուն ջ-ն մնացել է անփոփոխ, որովհետև նրանից առաջ ավելացել է ն ոնգայինը:

Ռ

Ռ-ով սկսվող կան մի քանի բարբառային և փոխառյալ բառեր. ոտ, որկել, որջել, ուռյ, ոէս, ոուպ>ոուր, ոեհան>որհուն:

Հակառակ վանի բարբառի, որտեղ Ռ-ով բառ չի սկսվում, այլ Ռ-ից առաջ դրվում է ը ձայնավոր, Շատախի բարբառը ազատ կերպով բառասկզբում ո է գործածում, առանց ը-ի հավելման (վերևի օրինակների հետ համեմատի՝ր, վանի բարբառում՝ ոեհան>ըոհան, ոուպ>ըոուր):

Բառամիջում Ռ-ն մնում է անփոփոխ. անառակ>անառակ, առնուլ>առնել, առաջ>հռոան, առաջին>հրոնին, առիւծ>առուծ, առու>առու, ժառանգ>ժռռանգյ, ճանկուել>ճռնգյրոթել և այլն:

Բառամիջի Ռ-ն դարձել է ր թիթեռնիկ>թրթրենկ բառում (ռ>ր/թ գրափոխությանը):

Բառավերջում Ռ-ն մնում է անփոփոխ. ամառն>ամառ, աթոռ>աթոռ, աստառ>աստառ, բառ>պոռ, բեւեռ>պըվեռ, բուռն>պիւռ, դուռն>տիւռ, գալո>բյոռ, ժանգառ>ժռնգյոռ, կառ>կառ, ձեռն>ծեռ և այլն: Բացառություն է՝ վարդավառ>վորառ-վար (առաջին ը-ի առնմանություն):

Բառավերջի Ռ-ի գիմաց բարբառը լ ունի դեռ>տալ և բուրվառ>պիւռվալ բառերում:

Ս

Տոլոր դեպքերում մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ սալ>սալ, սալոր>սալոր, սակառ>սակառ, սամի>սամի, սանդ>սանդ, սարդ>սարդ, սարեակ>սարեկ, սեամ>սեմֆյ, սեր>սեր, սէր>սէր, սղոց>սրդոց, սնար>սընար, ստերջ>ստերն և այլն:

Բառամիջում՝ ապրուստ>ապրուստ, ասեղն>ասեղ, աստղ

Չասորդ, աստուած>ասոված, արտասուք>արտսունք, լուսնակ
>լուսնակ, լակ>լրսնել, խսիր>խրսիր, հարսանիք>խարսնիս,
մրսել>մրսել և այլն:

Բացառություն է՝ հակ>խաշկ (ս>շ):

Բառակերչում՝ աղոէս>աղվես, արօս>արօս, բոյս>պոս,
դաս>տոս, դուրս>տիւս, երես>հիրես, պահաս>պակաս, պէս
>պես:

Բացառություն է՝ սաղմոս>սաղմոց:

Վ

Մնում է անփոփոխ:

Բառակերչում՝ վազել>վազել, վախ>վախ, վալրի>վերու,
վաստակ>վաստակ, վարդ>վարդ, վերայ>վար, վեց>վեց, վիզ>
վիզ, վիճակ>վիճակ և այլն:

Բառամիջում հանդիպում է ու-ից հետո կամ բարդության՝ վ-ով
սկսվող երկրորդ բաղադրիչում. օրինակ՝ բուրվառ>պիտվալ, վար-
դավառ>վարտավար, բովել>պովել, գովել>կյեովալ, ժողովել>
ծողվել, խոռովել>խրոսովել, հովել>խովիվ, սովորել>սովրել, պո-
ղովատ>պօղվատ և այլն:

Բառավերջում նույնպես վ-ն հանդիպում է ու-ից հետո. բով
>պով, ծով>ծով, կողով>կօղով, կով>կօվ, հով>խօվ, ով>վալ,
սով>սօվ և այլն:

Տ

Սովորաբար մնում է անփոփոխ:

Բառակերչում՝ տաղ>տաղ, տանձ>տանձ, տաշել>տաշել,
տէր>տէր, տուն>տուն, տօն>տօն և այլն:

Բացառություն է՝ տաղել>դաղել (բառակերի տ>դ տարբե-
րությունը):

Տարգալ դարձել է կյրտել (տ/զ>կյ փոփոխությանը):

Բառամիջում տ-ն մնում է ա. ամբարտաւան>ամբարտավան,
ախտեղ>նոստեղ, աստառ>աստառ, աստղ>աստղ, արտասուք
>արտսունք, գատիկ>գատիկ, պատկեր>պատկերք:

Պատճառ>պանառ բառում բառամիջի տ-ն ն-ից առաջ ըն-
կել է:

Ն ռնգայինից հետո տ-ն ձայնեղանում է, դառնում դ. օրինակ՝
գաանել>զընդնել, ընտրել>ընգրել, տանտիկին>տանդրկին, սանր
>սանդըր, բոտոտ>մընդիւտ և այլն:

Բ ձայնորդից հետո թե՛ բառամիջում, թե՛ բառավերջում տ-ն
չի փոխվում. օրինակ՝ աշակերտ>աշկերտ, հպարտ>խտպարտ,
պարտք>պարտ, արտ>արտ, արտասուք>արտսունք և այլն:

Բացառություն են՝ բարախ>բորդի, մարա>մարդ (բ-ից հետո
տ>դ տարբերությունը):

Տ>դ հնչյունափոխություն ունենք նաև բարբառային խրդրուց
կամ խրդրաց բառում, որ ծագում է հետ >խեբաց բառակապակ-
ցությունից:

Բառավերջում տ-ն սովորաբար մնում է անփոփոխ. օրինակ՝
ազատ>ազատ, առատ>առատ, արատ>արատ, կոշտ>կոշտ,
կուշտ>կուշտ, միտք>միտ և այլն:

Բառավերջի տ>թ հնչյունափոխությունը բառ կա՝
ջուխտ>ջոթ, սուտ>սութ:

Բ

Բառակզբում ր չկա:

Երկու ձայնավորների միջև ր-ն մնում է անփոփոխ. երերալ,
էրէրալ, երեւիլ>էրէվալ, երեք>իրեք, երեկ>հէրէկ, երեց>
էրէց, երինջ>էրինջ, զօրութիւն>զօրութն և այլն:

Բացառություն են՝ արագիւլ>առակիւլ, ջրհորդան>ճօռօքան,
որոնցում ձայնավորների միջև ր-ն դարձել է ո:

Բ-ն մնում է անփոփոխ նաև ձայնավորից առաջ. օրինակ՝
ընթրիք>իրնթրիս, ընտրել>ընդրել, հրահան>խրախանգյ, հրա-
ման>խրամանք, հրեշտակ>խրիշտակ և այլն:

Բառամիջում ր-ն դառնում է ռ այն ծ-ին և ց-ին նախորդե-
լիս, որոնք ծագում են գրաբարի նույն բաղաձայններից. օրի-
նակ՝ արծաթ>առծաթ, արծիւ>առծիվ, խաւարծիւ>խաւառծիւ,
կրծել>կրոծել, ործկալ>ռոծկալ, պրծանել>պրոծնել, արճիճ>
առնիճ, կարճ>կառն և այլն:

Բացառություն է՝ գործ>կործ (=աշխատանք), որտեղ ծ
(<ծ)-ից առաջ ր-ն մնացել է նույնը՝ բառը համանուն գործ>
կյճոծ (=գործվածք) բառից տարբերակելու անհրաժեշտությունից:

Գրաբարի ջ-ին և ձ-ին համապատասխանող ն, ց (կամ ծ)
հնչյուններից առաջ ր-ն մնում է անփոփոխ. օրինակ՝ մըջիմն>

մըրենմ, արջ>արն, վերջ>վերն, արջասպ>արնեպա, թրջել>թըր-
նել, ստերջ>ստերն, արձակել>տրցկել, խուրձ>խուրց, փորձել>
փործել և այլն:

Բացառությունն է՝ դարձ>տոռց, որտեղ *ց*(<*ձ*)-ից առաջ
ր-ն դարձել է *ռ*:

Տ(<*տ*)-ից առաջ բաղմավանկ բառերում թե՛ բառամիջում,
թե՛ բառավերջում *ր*-ն մնում է *ր*. օրինակ՝ աշակերտ>աշկերտ,
հպարտ>խտպարտ, ամբարտաւան>ամբարտովան, արտասուք>
արտսուկք, —սակալն մի քանի միավանկ բառերի մեջ նույն *ր*-ն
հանդիպում է *ւ*՝ *ր*, *ւ*՝ *ռ* ձևով. օրինակ՝ արտ>արտ || առտ,
պարտք>պարտ || պառտ (կա նաև՝ պառքյ, պառքյընտեր «պար-
տատեր») գորտ>կյճառ, պորտ>պոռտ.

Գրաբարի դ-ին համապատասխանող տ (կամ ք)-ին նախոր-
դելիս *ր*-ն չի հնչյունափոխվում: Օրինակ՝ արդար>արտար, եր-
դիկ>նիրախիւ, երդում>ներսում, հորդել>խորտել, բերդ>
պերթ, բուրդ>պիրթ, բարդ>պարթ և այլն:

Բառավերջում ձայնավորից հետո *ր*-ն մնում է անփոփոխ.
աթար>աթար, ալիւր>ելուր, ալբիւր>նոխպիւր, ապուր>ապուր,
բոլոր>պիւլոր և այլն:

Բացառությունն են՝ թրթուր>թրոթոռ, կոր>կոռ, քակոր>
քյակոռ, փրփրեմ>փառփառ:

Ր-ն հնչյունափոխվում է նաև հետևյալ բառերում՝ բուրվառ>
պիտվալ (*ր*>*ռ*՝ վ-ից առաջ), երեսուն>յէսուն (*ր*>*ռ*՝ *ս*-ից
առաջ), բարձր>պոնցքը, (առաջին *ր*-ն դառնում է *ն*՝ երկրորդ
ր-ի տարնմանությունմբ), խաչերկաթ>խռռմկաթ (*ր*>*ռ*՝ *չ*-ից
առաջ):

Բառավերջի *ր*-ի դիմաց բարբառը լ ունի կերակուր>կերակուլ
և վարագոյս>վորակիւլ (կա նաև վորակիւր) բառերում:

Եթե ընդհանուրի բերենք վերը ասվածները և հաշվի չառնենք
բացառությունները, ապա բարբառում *ր*>*ռ* հնչյունափոխությունը
օրինաչափ կերպով տեղի է ունեցել ծ(<*ծ*), ճ(<*ճ*), մասամբ էլ
տ(<*տ*) բաղաձայններից առաջ:

8

Մնում է անփոփոխ:

Բառասկզբում՝ ցանել>ցանել, ցորեան>ցորեն, ցողուն>ցող,
ցուրտ>ցուրտ, ցից>ցից և այլն:

Ցասում>սասում.— բառակզբի ց-ն դարձել է ս՝ բառամիջի
ս-ի առնմանությամբ:

Բառամիջում՝ ազցան>ռկոցան, անցանել>ընցնել, զրուցել>
զըրոցել, խեցի>խեցիկ, կացին>կացիք, քաղցր>քյախցոր և այլն:
Հրցանել>հըրհընել.— բառամիջի ց-ն դարձել է ճ՝ բառա-
սկզբի ճ(<չ)-ի առնմանությամբ:

Բառավերջում՝ բաց>պոց, երեց>երեց, զրուց>զըրոց, թաց
>թաց, լաց>լոց, կիծոց>կըթոց և այլն:

Բացառությոն է՝ գոց>կոծ (ց>ծ):

Ի

Իրաբարի և ձայնորդը պահպանվել է միայն աւոր>աւոր
(աւոր), ւոր ածանցի մեջ (արտասանվում է՝ aʷor, əʷor, ʷor):
Օրինակ՝ աւելոր(<ալի+աւոր)>խաւոր, կեղծաւոր>կեղծաւոր,
կնքաւոր>քյաւոր, թագաւոր>թոկյաւոր, շնորհաւոր>շնոխաւոր,
սելւոր, աքնւոր, բերւոր, ճըրւոր, քյաղւոր և այլն:

Բարբառում և ձայնորդ հանդես է գալիս նաև տ երկբարբառի
մեջ՝ բառակզբում. օրինակ՝ որբ>ւորփ (worp'), որդի>ւորաի
(worti). սակայն այս ձայնորդը գրաբարի ւ-ի հետ կապ չունի,
ալլ առաջացել է ուշ շրջանում՝ իբրև արդյունք ո պարզ ձայնա-
վորի երկբարբառացման:

Փ

Սովորաբար մնում է նույնը:

Բառասկզբում՝ փառք>խառքյ, փարչ>փոքչ, փոխ>փոխ,
փոխինդ>փոխինդ, փռել>փըռել, փոխել>փոխել, փրթանել>
փըրթնել և այլն:

Բացառությոն է՝ փլել>պըլնել (փ>պ):

«Փորել» բայն ունի երկու տարբերակ՝ փորել և պորել... վեր-
ջին ձևը նշանակում է՝ «որևէ գործիքով որևէ բանի մեջը փորել,
միջուկը հանել»:

Բառամիջում՝ ափսոս>ափսոս, թափել>թափել, շուշփալ>
շուշփա, տափակ>տափակ, փափուկ>փափուկ և այլն:

Բառավերջում՝ ափ (ձեռքի)>ափ, ափն>հոփ, եփ>հփ,
թուփ>թուփ, խուփ>խոփ, ծափ>ծափ, ծեփ>ծեփ, շերեփ>շի-
րեփ և այլն:

Բառասկզբում դառնում է ֆյ. օրինակ՝ քակել > ֆյակել, քակոռ > ֆյակոռ, քայլք > ֆյէլֆյ, քիթ > ֆյիթք, քոյր > ֆյոր, քսան > ֆյսան և այլն:

Բառասկզբի ֆ-ն մնացել է անփոփոխ բուռակ > ֆոռիկ և բուրք > ֆորք բառերում:

Քիմֆ դարձել է կրմունֆյ:

Բառամիջում ձայնավորից առաջ ֆ-ն դառնում է ֆյ. օրինակ՝ աղ-քատ > աղքյատ, զոքանչ > զօքյունչ, թքանել > բքքյել, կաքաւ > կաքյավ, շաքար > շոքյոր և այլն:

Բացառությոն են՝ այսքան > էսֆան, այդքան > էտֆան, այնքան > էնֆան, որոնց մեջ ձայնավորից առաջ ֆ-ն մնացել է անփոփոխ:

Բառավերջում ֆ-ն մեծ մասամբ դառնում է ֆյ. օրինակ՝ ապրանք > ապրանֆյ, երկանք > էրկանֆյ, թամբ > թամֆյ, ինքն > ճիենֆյ, մեք > միենֆյ, սեամ > սէմֆյ, խելք > խելֆյ, մեղք > մեխֆյ, փառք > փառֆյ և այլն:

Ծք > սկ, ցք > սկ, սք > սկ չք > շկ, շք > շկ, ձք > ցկ, թք > թկ հնչյունակապակցությունների մեջ ֆ-ն դառնում է կ. օրինակ՝ անէծք > անէսկ, մանուածք > մանվասկ, աքացի > ասկի (ք/ց դրափոխությամբ և բառամիջի ա-ի անկմամբ), խօսք > խօսկ, մէջք > մէշկ, աչք > աշկ, աղօթք > աղօթկ, շարժք > ժոշկ, (ժ՝ շ դրափոխությամբ), վարձք > վարցկ և այլն:

Մի շարք անեզական բառերի ֆ-ն փոխարինվում է ս-ով, ինչպես՝ բաղանիք > պողնիս, բանալիք > պուլնիս, երդիք > ճիւրտիս, թաղիք > քաղիս, պահք > պախս, տանիք > տանիս, մորուք > մուրուս, հարսանիք > խարսնիս և այլն: Այդ ս-ն գրբ. նույն բառերի հայցական հոլովի վերջավորությունն է:

5. Ս Ղ Ո Ւ Մ

Մի շարք բազմավանկ բառերում բառամիջի ձայնավորները, իթե շեն գտնվում երկրորդական կամ հիմնական շեշտի տակ, սըղվում են:

Այսպես՝

Ա-ն սղվում է՝ ազանել > խակյնել, անցանել > քնցնել, արձակել > արցկել, արաատք > արտսուցքյ, հատանել > խատնել, հաւա-

նել>խավնել, ճախարակ>նախրակ, ճանապարհ>նամբախ, մոտ-
 նել>մըտնել, պագաճնել>պակյնել, անախի>ալնի և այլ բառերում:
 Ե-ն սղվում է՝ ալեւոր>խալւոր, աւելի>ալվել, աւելորդ>
 հալվորք, աւերել>ալքել, բարեկենդաճ>պարկեմգոմքյ, զիտե-
 նալ>կյիտնալ, ձմերուկ>ծըմրուկ, ոսկերիչ>ոսկիրին և այլ բա-
 ւերում:

Ո-ն սղվում է՝ սուլորել>սովրել, ոլորել>ուրել, պողովատ>
 պօղվատ բառերում:

6. ՀՆՅՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՑ

Բառասկզբի ա ձայնավորի կորուստ՝ ածել>ծել, ասել>սել,
 անօսք>նօսք:

Բառասկզբի ն-ի կորուստ՝ նշանք տալ>շոմքյ տալ, նշմար
 տալ>շմար տալ:

Բառասկզբի ս-ի կորուստ՝ սկեսուր>կիսուր, սկեսրայր>կէս-
 րէր, ստեպղին>տապղին:

Բառավերջի ն-ի անկում՝ ակն>ակ, աղեղն>աճեղ, ամանն>
 աման, ասեղն>ասեղ, գագաթն>կյոկյոթ, դառն>տոռ, դուռն>
 տիւռ, եաւթն>յօթ, թոռն>թոռ, հիմն>խիմ և այլն:

Բառավերջի յ-ի անկում՝ ագուգալ>հոկյիւկյա, ամիրալ>
 ամրո, բակլալ>բոկլա, կիժղալ>կըթխո, տղալ>տըղա, շուշփալ
 >շուշփո, կոլ>կո և այլն:

Բառամիջի լ-ի կորուստ՝ ջրադաց>նոդաց, սուրբ>սըփ, քար-
 շել>քյեշել, օրհնել>օխնել, մրսել>մըսել, արժան>նեժան, ար-
 ժել>աժել, արջառ>անոռ, երբ>նեփ, խարշել>խաշել, կարժ>
 կոժ, շարժք>ժոշկ, շարժել>շաժել, շնորհաւոր>շնոխտաւոր,
 շնորհք>շընոխքյ:

Խ-ի կորուստ՝ ջուխտ>ջօթ, խորիսխ>խորիս:

Տ-ի կորուստ՝ պատճառ>պանառ:

Բառամիջի ն-ի կորուստ՝ կնունք>կընուփյ, ունչ>ուն:

Ղ-ի կորուստ՝ կոճղ>կոճ:

Հ-ի կորուստ՝ աշխարհ>աշխար, խոնարհ>խոնար, սկիհ>սկի:

7. Կ Ր Ճ Ա Ց Ո Ւ Մ

Մի շարք բառեր և բառակապակցություններ հաճախ գործած-
 վելուց «մաշվել են», կորցրել իրենց այս կամ այն մասը: Այսպես՝

Այստեղ>սառո՛ բառասկզբի այ-ի և բառավերջի դ-ի կրճատմամբ:

Անկողին>գյճղիքյ՝ բառասկզբի ան-ի կրճատմամբ (անկողին>անգյճղիք>գյճղիքյ):

Աղեղնակ>յէղյակ՝ բառասկզբի աղ-ի կրճատմամբ. և ձայնավորը մնալով բառասկզբում, դ-ից առաջ օրինաչափորեն դարձել է յէ (հմմտ. եղեգն>յէղէֆյ, եղնիկ>յէղնիկ):

Ընդ այս>դո (=այսպէս):

Ընդ այս վայր>դըսովե (=ալստեղով):

Ընդ այն վայր>դընովե (=ալստեղով):

Ընդ որ>դոր,

Ընկող>գյճղ:

Մինչև ուր>չաւր:

Հիմա(կ)>մըկա:

Հետ իրերաց>խըդրուց, խըդրաց:

Հեծեծալ>խիծալ:

Ձարկանել>զոռնել:

Կարենամ>կէնիմ:

Կնքաւոր>քյուոր:

Ձգուել>վիսալ (զգուել>զըզվալ>զըվզալ, ապա բառասկզբի զը-ի կրճատմամբ և ի ձայնավորի հավելմամբ՝ *վիզալ>վիսալ),
Բեւեռուել>վըռվել:

8. ՀՆՁՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ

Երկու բաղաձայնի միջև, երբեմն էլ բաղաձայնական որևէ կապակցությունից առաջ ավելացվում է ա կամ ի ձայնավոր՝ բարենշյունության համար: Օրինակ՝ ազգան>տկոցան, կլայեկ>կալայեկ, հպարտ>խապարտ, լղի>հռղի, զգուիլ>վիսալ, խիթել>խիթել, շուար>շիվար, (շուար>շվար>շիվար), քսակ>քսիկ, ձգեկ>խսկել և այլն:

Բարբառում շատ տարածված է և հազազի հավելումը ձայնավորով սկսվող բառերի սկզբում, ըստ որում՝ ձայնավորն այս դեպքում հաճախ ենթարկվում է հնչյունափոխության: Այս հավելումն ամենից շատ հանդիպում է ա և ե ձայնավորներից առաջ: Օրինակ՝ ախահ>հոկախ, ախանաո>հոկոնաո, աղբիւր>հոխալիւր, անագան>հոնոկյոն, անիթ>հունթ, ասակեկ>հոտոկեկ, երբ>հեփ, երգիք>հիւրտիւս, երզնուկ>հէրտըվնալ, երդումն>հէրտում, երե-

կոյ>հրրկուն, երես>հիրես, երեկ>հէրէկ, երկայն>հէրկէն, իմա-
նալ>հիմնալ, ինքն>հիմնք, իրեար>հիրուր, ուրիշ>հրուշ:

Բաղաձայնից առաջ հագագ ավելանում է լի>հլին բառում:

Ն հնչյունի հավելում՝ մեք>մինք, մաճ>մանջ, յիշոց>հի-
շունց, կամուրջ>կարմունջ, գտանել>կրնդնել, արտասուք>արտ-
սունք արմուկն>էրմունգլ, կրուկն>կրունգլ, փոթ>փոնթ,
քիթ>քինթ, լսել>լրսնել, բոտոտ>մընդիտ և այլն:

Դ-ի հավելում ն հնչյունակապակցության մեջ՝ ծանր>ծան-
դր, ծունր>ծունդր, մանր>մանդր, սանր>սանդր և այլն:

Բ-ի հավելում մը-ի մեջ. արմաւ>ամբրավ, թմրել>թմբբել,
համարանք>խամբրոնք և այլն:

• Բ-ի հավելում՝ պահեղ>պախքեղ, հանգուց>խանգոյց, լո-
ղուն>լոդրուն, նապաստակ>լըպըստրակ, լօշտակ>լոշտրակ:

Ռ-ի հավելում՝ ածելի>ռոծլի, ժանդ>ժոնգրո:

9. ԴՐԱՓՈՒՈՒԹՅՈՒՆ

ն/լ.—անալի>ալնի, բանալիք>պոլնիս:

պ/ր>ռ.—ապրշում>ռոբրշում, ապարանջան>ռուպրնշոն:

չ>ն/ր>ռ.—խաչերկաթ>խոռոնկաթ:

ր/մ.—արմաւ>ամբրու:

ս/պ.—արջասպ>առնոպս:

ք>կ/ ց>ս.—աքացի>ասկի (<*ացկի):

լ/ի.—լինել>լինել:

ու/ն.—ունգի>նուկի:

դ/ր.—եզր>յերզ:

ր/ու>վ.—ցրուել>ցըվրել:

10. Շ Ե Շ Տ

Շեշտը սովորաբար դրվում է բառի վերջին վանկի վրա: Օրի-
նակ՝ թթուկ—թուլցի՝, էվա՛ր—էվարի՛ն և այլն:

Որոշ եղանակային ձևերի ժխտական խոնարհման ժամանակ,
ինչպես և արգելական հրամայականում, շեշտն ընկնում է ոչ թե
ժխտական մասնիկի, այլ բայի առաջին վանկի վրա: Օրինակ՝ չըմ
ո՛ւտի, չըս ո՛ւտի, չըմ կլի՛տի, չըմ կէ՛նի, չըմ տի՛սիրի, մը զո՛նի,
մէ՛րթէք և այլն:

Մանոք.—եթե ժխտվող բայը միավանկ է, շեշտն ընկնում է ժխտական մասնիկի վրա: Օրինակ՝ մի՛ տու, մի՛ ծա:

Մանոք.—Եթե ժխտվող բայը միավանկ է, բայց իրենից առաջ ունի ի նախդիր, շեշտն ընկնում է վերջինիս վրա: Օրինակ՝ չըմ ի՛ կլո, չըս ի՛ տա:

II. ՇԵՇՏՆԻ ՀԵՏ ԿՑ.ՊՎԾ.Ծ ԷՆԶՅՈՒՆԱՓՈՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գրաբարում և ժամանակակից հայերենում, այնպես էլ Շատախի բարբառում բառի աճման հետևանքով տեղի է ունենում շեշտի տեղափոխություն դեպի վերջին վանկը, որի հետ կապված՝ հնչյունափոխություն:

Նշենք մի քանի դեպք:

Ա>ու.—պազ—սլողոպէրան, շաղ—շողոդել, տաքլ—տաքլաթէն, ճանջ—ճոնջոյեր, պակաս—պտկոսաթէն, կարաս—կորոսաքեր և այլն:

Ե>ի.—յէզներ—յէզներոն, օրեր—օրիրու, ծել—ծիցի, սել—սիցի, քյօմեր—քյօմիրու և այլն:

Ի>ը (փակ վանկում).—կյիր—կյրրել, վիզ—վըզի, կյին—կյրնել, սիրտ—սըրտի, միտ—մըտափոխ, խիմ—խըման:

Ու(իւ)>ը (փակ վանկում).—ցուրտ—ցըրտուց, էրուն—էրըն-կյետ, ճիւր—ճըրտուն, շուն—շընխէր, քյուն—քընուկ:

Ո(ո)>ու.—լոս—լուսու, կուր—կուրու, քյուր—քյուրոջ և այլն:

Մանոք.—բառերի մեծ մասում ո(ո)-ն չի հնչյունափոխվում օրինակ՝ փոս—փոսի, փոր—փորի, կյոն (<դոյն)—կյոնի, ծոը (<ծոր)—ծոբու, պոն (<բոյն)—պոնի և այլն:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ձայնալորներից ա-ն բարբառում բազմաթիվ օրինակներում մնացել է ա. փոխվել է ո-ի՝ խլացած կամ ձայնեղ մնացած պաշ-լականներից, ձայնեղ շփականներ վ, գ, ժ, հ-ից հետո, ինչպես և ա ունեցող բազմավանկ բառերի մեծ մասում: Մի շարք բառերի մեջ ր և լ ձայնորդներից առաջ բառասկզբի գրք. ա-ի դիմաց բարբառն ունի է:

Գրք. ե-ն միավանկ բառերի սկզբում հնչյունափոխվել է յէ-ի: Բազմավանկ բառերում դ և ո-ին նախորդելիս նույնպես դարձել է յէ: Ր հնչյունից առաջ բառասկզբի ե-ի դիմաց բարբառն ունի է: Բառամիջում գրաբարյան ե-ն մեծ մասամբ վեր է ածվել ե(=իե)

երկբարբառի, սակայն մի շարք բառերում մնացել է պարզ ձայնավոր և չի երկբարբառացել:

Գրբ. $\text{Է}(=\text{է} + \text{յ})$ -ի դիմաց բարբառն ունի պարզ է ձայնավոր:

Ը-ն համարյա փոփոխություն չի կրել:

Ի-ն ենթարկվել է մասնակի փոփոխությունների. մի շարք բառերի մեջ շեշտի տակ դարձել է ե կամ է:

Գրբ. պարզ ո ձայնավորը միավանկ և երկվանկ բառերի բուկղբում վեր է ածվել տ ($=\text{wo}$) երկբարբառի, իսկ եռավանկ բառերի սկզբում պարզ օ ձայնավոր է: Բառամիջում գրբ. ո-ն մեծ մասամբ դարձել է ուօ (նշանակել ենք ո տառով), ըստ որում $\text{պ}(<\text{բ})$, $\text{կյ}(<\text{գ})$, $\text{տ}(<\text{դ})$, $\text{ծ}(<\text{ձ})$, $\text{ճ}(<\text{ջ})$, երբեմն էլ լ հնչյուններից հետո դարձել է $\hat{\text{ո}}$ ($=\text{üö}$): Սակայն որոշ թվով բառերի մեջ ո-ն հանդես է գալիս որպես պարզ օ ձայնավոր:

Ու-ն մեծ մասամբ մնացել է անփոփոխ: $\text{Պ}(<\text{բ})$, $\text{կյ}(<\text{գ})$, $\text{տ}(<\text{դ})$, $\text{ծ}(<\text{ձ})$, $\text{ճ}(<\text{ջ})$ հնչյուններից հետո դարձել է իւ: Ձայնավորից առաջ վերածվել է վ-ի:

Երկբարբառներից այ-ը դարձել է ե կամ ա(ու), բայց ձայնավորներից առաջ մնացել է այ: Աւ-ը բաղաձայնից առաջ դարձել է օ, ձայնավորից առաջ և բառավերջում՝ ալ: Եւ-ն դարձել է ե, Խաւ-ը՝ եվ: Իւ-ը դարձել է ու, իսկ $\text{պ}(<\text{բ})$, $\text{տ}(<\text{դ})$, $\text{կյ}(<\text{գ})$, $\text{ծ}(<\text{ձ})$, $\text{ճ}(<\text{ջ})$ հնչյուններից հետո՝ իւ: Բառավերջում վերածվել է իվ երկհնչյունի: Ոյ-ը դարձել է ո կամ $\hat{\text{ո}}$:

Բաղաձայններից՝ ձայնեղ պայթականներն ու ձայնեղ կիսաշփականները խլացել են, սակայն մ և ն ռնգայիններից հետո մնացել են անփոփոխ:

Մյուս բաղաձայնները ենթարկվել են մասնակի փոփոխությունների: Խուլ պայթականները ռնգայիններին հաջորդելիս ձայնեղացել են:

Բառերը ենթարկվել են հնչյունական փոփոխությունների նաև ձայնավորների սղման, բաղաձայնների կորստի, հավելման, բառի այս կամ այն մասի կրճատման, առնմանություն, տարնմանություն, դրափոխություն և հնչյունական այլ օրենքների ներգործությամբ:

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇԵՐՏԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաջերեն ամեն մի բարբառի բառապաշար իր մեջ ունի երեք հիմնական շերտ՝ 1) գրաբարից ավանդված բառերի, 2) բարբառային բառերի, 3) բարբառի կատարած փոխառությունների: Քրննենք այդ շերտերից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

I. ԳՐԱԲԱՐԻՑ ԱՎԱՆԴԱՄ ԲԱՌԵՐ

Բարբառի բառադանձի հիմնական մասը կազմում է այս շերտը, որի կրած արտաքին, ձևական փոփոխություններին ծանոթացանք «Հնչյունաբանություն» բաժնում, իսկ այստեղ կքննենք նույն բառադանձը իմաստաբանական առումով:

Գրաբարից ավանդված բառերի մի մասը բարբառում բառիմաստի փոփոխություն չի կրել. այդ բառերից են՝ խակյնել(<ազանել), խուլոր (<ալևոր), ալի (<ալի), էլուր (ալիւր), ականջ (<ականջ), ադ (<ադ), չեղվընեկ (<ազաւնի), հոխպիւր (<ադքիւր), էրազ(<երազ), ախպէր(<եղբայր), մէր(<մայր), խէր (<հայր), պակյնել(<պազանել), պօծառ(<պայծառ), գինեկ(<գենուկ), վիճակ (<վիճակ), քյոր (<քուր), սիրել (<սիրել), զուրմոնալ (<զարմանալ) և այլն:

Սակայն կան զգալի թվով բառեր, որոնք իմաստափոխվել են: Իմաստափոխությունների պատճառները զանազան են: Ծանոթանանք դրանցից մի քանիսին.

ա) Հաճախ մի առարկայի անունն անցնում է մի այլ առարկայի՝ այդ երկու առարկաների մեջ եղած որևէ հատկանիշի նմա-

նության հիման վրա: Այսպիսի փոխանցման հետևանքով բառը
ենթարկվում է իմաստափոխության, որովհետև հատկացվում է
մի այլ հասկացության: Այս կարգի իմաստափոխության են են-
թարկվել հետևյալ բառերը.

Ագի>հոկիյ.—գրաբարում, արտահայտել է «սուշ» իմաս-
տը, իսկ բարբառում նշանակում է կանացի զգեստի զղանցք:

Աթոռ>արթռ.—գրաբ. նշ. «աթոռ», իսկ բարբառում՝ թոնրի
վրա դրվող՝ փայտից շինված փոքրիկ տեղանք:

Ածել>ծել.— գրաբարում արտահայտել է «բերել», «տեղա-
փոխել», «շարժել», «բանեցնել», «դրդել» և մի շարք այլ իմաստ-
ներ, իսկ բարբառում նշանակում է «լցնել»:

Աղեղնակ>յէղյակ.— գրաբարյան իմաստն է՝ «ծիրանի գոտի»,
իսկ բարբառայինը՝ «ծիածան»:

Անցուցանել>ընցցել.— գրբ. իմաստն է՝ «անցկացնել», բար-
բառում այդ իմաստը պահպանվել է, բացի առաջացել է մի նոր
իմաստ ևս՝ «հանգցնել»:

Արբանակ>հրպրնեկ.— գրաբարում արտահայտել է «սպա-
սաժիոր», «ծառա» իմաստները, իսկ բարբառում նշանակում է
«ձեռնահաս երեսխա»:

Գոհ>գյրոնիս.— գրբ. իմաստն է՝ «ցեխ», բարբառայինը՝ «թա-
րախ»:

Հիւ>ուսի.—գրբ. նշ. «ձյունադեզ», բարբառում՝ «ձնհեղեղ»:

Նալթ>նալթ.— բարբառում նշանակում է «լուցկի». օրինակ՝
«Նալթ էզոր՝ ըզկըրակ կըլաց»: Բարբառում նալթին ասում են
կազիադ, որը փոխառություն է թուրքերենից:

Նեղանալ>նեղոնալ.— գրբ. արտահայտում է «նեղը քնալ»,
«նեղվել», «վիրավորվել» իմաստները, իսկ բարբառում նշանակում
է «հոգնել»:

Շուրթն>շուրթ.— գրբ. իմաստն է՝ «շրթունք», իսկ բարբա-
ռայինը՝ «թոնրի եզր»: Բարբառում շրթունքին ասում են պրոուկ
(հոգն. պրոկրտեր):

Ձեր>ճեր.— գրաբարում նշանակել է բարեխառն, պայծառ
փղ, եղանակ (գոյական է եղել), բարբառում վեր է ածվել ածականի՝
«վճիտ», «պարզ» նշանակությամբ. օրինակ՝ ճէր կյիքի (=վճիտ
գինի), ճեք ետլի (=պարզ հայելի): Նույն արմատից բարբա-
ռում կազմվել է ճէրեկ բառը, որ նշանակում է հեղուկը ծոր տալով
բամել:

բ) Մի շարք բառեր ննթարկվել են իմաստափոխության՝ փոխաբերական առումներով գործածվելու շնորհիվ, այսպես՝

Ակահ>հռկախ.—գրաբարում նշանակել է «անդյակ», իսկ քարբառում ասացել է «արթուն», «զգոն» իմաստները։ Նույն արմատից բարբառում կազմվել է «հեղեղակ» բայը, որ նշանակում է «արթնանալ»։—Տըղէն առլ չըհո'կոթիրի (=Երեւանի ղեռ չի արթնացի)։

Անկեալ>անգյալ.—գրաբարում եղել է անկանիմ բառի անցյալ դերբայը և նշանակել է «ընկած», բարբառում աչք վեր է ածվել ածականի՝ ստանալով «ծուլ» «անբան» իմաստները։

Մամ>ծամ.—գրաբ. նշանակում է «շինծու մազ», «մազերի զարդ», «զարդարած մազ». բարբառում նշանակում է «կնոջ մազ»։

Մուռ>ծուռ.—գրաբ. իմաստն է՝ «թեք», իսկ քարբառայինը՝ «խենթ», «խելառ»։

Հատանել>խառնել.— գրբ. նշանակում է «կտրել», «բաժանել», բարբառում՝ «սատկել»։

զ) Բառիմաստի նեղացման հետևանքով իմաստափոխվել են մի շարք բառեր։

Ընկույզ>զյոզ.—բարբառում այսպես է անվանվում ոչ թե լոբկույզը, այլ նրա միջուկը, իսկ ընկույզին ասում են կոփյով։

Ախոջ>ալոջ.—գրբ. նշանակում է առհասարակ «էգ ուլ», բարբառում՝ «մայրացու ուլ»։

Թեղ>թեղ.— գրբ. նշ. առհասարակ «ղեզ», իսկ բարբառում այդպես անվանվում է միայն կալաված հացահատիկի կույտը։

Շուշիալ>շուշիալ.—գրբ. նշ. «կտավ», իսկ բարբառում՝ «մետաքսե կտոր»։

դ) Հաճախ այս կամ այն առարկայի անունը փոխանցվում է նրա հետ կապված մի այլ առարկայի. օրինակ՝

Թաթ>թաթ.—գրբ. նշ. «թաթիկ», «տոտիկ», բարբառում այդ իմաստներից բացի արտահայտում է նաև «գոլգազ» իմաստը. օրինակ՝ «Յէմ մամիկ ձի թաթ կրկնութի» (=Տասն ինձ համար գոլգազ է գործում)։

Կարծ>կոծ.—գրբ. նշ. «մանված թել», բարբառում՝ նաև «նրբագեղմ աթի շուրդ»։

Նաշ>նաշ.— գրաբարյան նշանակություներն է «դագաղ», իսկ քարբառայինը՝ «դիակ»։

Իմաստափոխության են ենթարկվել նաև այնպիսի բառեր, ինչպես՝

Գար>կյոփ.—գրբ. նշ. «խաշնգեղ», իսկ բարբառում ալգպես կոչվում են խափարծլի արմատամերձ տերևները:

Դիր>տիր.— գրբ. նշ. «դիրք», «կարգ», «կերպ», բարբառում՝ «անգամ». օրինակ՝ «Տիրմ էլ իկլին, տիրմ էլ քլոցին» (=Մի անգամ էլ եկան, մի անգամ էլ գնացին). «Իրեքլ տիր վըլոցիր իմ» (=Երեք անգամ լվացել եմ):

Թեր>թէրէն.— գրբ. նշ. «համար», «կողմ», բարբառում՝ «փոխարեն»:

Ճաշ>նաշ.— գրբ. նշ. «ճաշ», բարբառում ալգպես անվանվում է երկրորդ նախաճաշը, իսկ ճաշին ասում են խրամէնց:

Նա>նո.—գրաբարում նշում է հեռավոր առարկան, իսկ բարբառում՝ մերձավոր. փոխարինում է «սա» դերանվանը:

Գրաբարից ավանդված բառերի թվում կան մի շարք այնպիսի բառեր ու արմատներ, որոնք արդի գրական լեզվում չեն պահպանվել կամ քիչ գործածական են, իսկ բարբառում լայնորեն օգտագործվում են. օրինակ՝ ակախ>հեկախ, աղուն>աղուն, (=աղալու որևէ բան), անագան>հոնոկյոն (=ուշ), անթ>հունթ (=թեփառակ), ատակել>հոտակել (=ժամանակ գանել), բոտոտ>մընդիտ (=փայտի ճիճու), դեհ>դէխ (=կողմ), հորդել (=մաքրել> իմաստով)>խորակել, անջ>ուն (=մուր), աղղորդ>աղղոր, բեւեռ(=գամ)>պըվեռ, պահհգ>պախրէզ(=բանջարանոց), ձար(=մազ) արմատից՝ ծորումադ, հիււ>ուսի, ցիւ(=ծածկ) արմատից՝ ցըվիշկ, փրթանել>փրթնել(=պոկվել) և այլն:

II. ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌՆԵՐ

Բարբառի բառապաշարի մեջ էական տեղ են գրավում նաև բարբառային բառերը: Դրանք այն բառերն են, որոնք գրաբարից ավանդված չեն և հայտնի որևէ լեզվից չեն փոխառնվել, այլ հանդիպում են միայն բարբառներում: Այս խմբի մեջ մտնում են թե՛ արմատական և պարզ բառեր, թե՛ ածանցավոր ու բարդ կազմություններ: Կան նաև հին հայերենից ավանդված կամ բարբառային և փոխառյալ որևէ բառով կազմված բաղադրություններ:

Բարբառում հանդիպող արմատական բառերի մի մասը հայերենի մեզ ծանոթ արմատները կամ դրանց ձևափոխություններն են, որոնք գրաբարում իբրև առանձին բառեր չեն գործածվել, այլ կազմել են զանազան բաղադրություններ, իսկ բարբառում հանդես են գալիս որպես ինքնուրույն արմատական բառեր: Բարբառային արմատական բառերի խմբում կան նաև մեզ առայժմ անծանոթ բառեր, ինչպես՝ լիթ (= խուրձ), լոզ (ծառ կտրելու գործիք է), ժիշկ(=գալուկ), կորձ (=փշրված կեղև), կօքլօլ (բնկույզ), կուբջ և այլն:

Քննենք բարբառային արմատական բառերից մի քանիսը.

Անգյ.—նշ. «հաշմանդամ», «ծուլլ»: Կապվում է հայերենի անկ արմատի հետ, որով ունենք՝ անկում, տնանկ, սնանկ և այլն: Անկ արմատի կ բաղաձայնը բարբառում և ռեզայինի ազդեցությամբ հնչյունափոխվել է գյ-ի, ինչպես՝ ընկեր > ընգյեթ, կանկար > կանգյար և այլ բառերում:

Բուս.—նշ. «խոսք», «խոսակցություն»: Ծագում է հայերենի բան (=խոսք) գոյականի հոգն. հայցականից՝ ն-ի անկումով. բան, հոգն. բանք, հյց. բանս > բուս (հմմտ. պահք, հյց. պահս > բարբ. պաս):

Քեր.—նշ. «ոչխարի կիթ»: Հայերենի բեր արմատն է, որից ունենք՝ բերք, բերել և այլն:

Թավ.—նշ. «տերև»: Նույն արմատով գրական հայերենում ունենք թավուտ:

Լուպ.—նշ. «բուռ»: Հնդեւրոպական արմատ է, որ հայերենում իբրև աղբյուրի գիտվում է առաջին անգամ: Հանդիպում է նաև հայերենի այլ բարբառներում, օր., Ուրմիայի բարբ. լըփ (=բուռ, ճանկ), Վանի բարբ. լըպել (=բուռվ հավաքել) և այլն: Լուպ բառը կապվում է գոթերեն lofa (=բուռ), շոտլանդերեն lof, իռլանդերեն lue, լատիշերեն lēpa, ուսերեն лапа, քրդերեն lōp (=բուռ, ճանկ) բառերի հետ, որոնք ծագում են հնիւ. lēp, lōp արմատից:

Խար.—նշ. «խոտհարք»: Հայերենի փար արմատն է, որից ունենք՝ փարկանել, փարված (<հարուած) և այլն:

Կիբյ.—հայերենի կիել բայի արմատն է, որ բարբառում առանձին հանդես է գալիս որպես ածական:

Կոլով.—նշանակում է «կաղ անասուն»: Կոլ արմատը բուս

երևույթին կաղ բառի տարբերակն է: Լ և ղ ձայնորդները հայերենում հաճախ հերթագայվում են (հմմտ. մառախուղ-մառախլապատ, աղի-անալի, խեղ-սխալ <ղ+խալ և ալն>): Կոլով բառը գարմանալիորեն նման է ռուսերեն ка́лека բառին, որը նշանակում է «հաշմանդամ»:

Կօպ.—նշանակում է «ձեռքը կամ ոտքը ծուռ»: Բնդհանուր է հայերենի կոպիտ բառի արմատի հետ (կոպ), որ նշանակում է «անկանոն», «տձև», «անհարթ»:

Ճուլ.—նշանակում է «ճյուղավոր զլխով ձեռնափայտ»: Հաճանաբար կապվում է հայերեն ճիւղ արմատի հետ:

Պարզ բառերի մեջ են մտնում բազմաթիվ բայեր, որոնցից են՝

Թալել.—կազմվ. թալ բարբ. բայարմատով:

Ժրեել.—կազմվ. գրաբարից ավանդված ժիբ ածականով, նշանակում է «առողջանալ»:

Լաղել.—կազմվ. քրդերեն ləz (=շուտ) մակրայով, նշանակում է «շտապել»:

Լըլել.—կազմվ. Լիլ (=ցելի) արմատով, որը հնդեւրոպական տիլ, տիղմ (<*stēl) արմատի տարբերակն է: Լըլել նշանակում է «ցելխոսկել»:

Լրպել.—կազմվ. լուպ արմատով և նշանակում է «բռով հավաքել»:

Խաշկել.—կազմվ. խաշկ (<հասկ) բառով և նշանակում է «հասկակալվել»:

Կոժել.—կազմվ. կոժ (<կարժ) արմատով:

Կյճմել.—կազմվ. կյճմ (<դոմ) արմատով:

Հրնթել.—կազմվ. հրնթ (<անթ) արմատով:

Ճէրել.—կազմվ. ճէր (<ջեր) արմատով:

Մոլել.—կազմվ. մոլ (=հարդով խառնված շաղախ) բարբ. բառով և նշանակում է «ծեփել»:

Բ) ԱՐՄԱՏԻ ԿՐԿՆՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Բարբառի բառակազմական միջոցներից մեկը արմատի կրկնությունով բառեր կազմելու տեխնիկան է: Արմատի կրկնությամբ են կազմված բարբառային այնպիսի բառեր, ինչպես՝ խըրխիր (<խիր+խիր), հիբեպիբես (<եբես+ու+եբես), աէմուտէմ (գէմ+ու+գէմ), պըտպըտուն (պուտ+պուտ+ուն), թըրթընեկ

($\langle$ թիւ + թիւ + ն + եկ), ճրոճրոնեկ ($\langle$ ճրո | ճրո + ն + եկ), խինած-
խինիկ ($\langle$ հինած + հին[ած] + իկ), պըտպըտալ (բնածաշնական է),
խըշխըշալ (բնածաշնական է), կէրկէր (կայր + կայր), որ նշ. «հեքիաթ»
(առաջացել է հեքիաթ պատմել սկսելու սովորական արտահայ-
տությանից՝ «կէ՛ր, կէ՛ր, արշիկըմ կէր»):

Գ) ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Բառակազմական այս միջոցը բարբառում ավելի տարածված է, քան արմատի կրկնությունը բառեր կազմելու տեխնիկան: Հա-
րադրական բարդության տեսակներից ամենից շատ բարբառում
հանդիպում են հարադրական բայեր: Դրանցից են՝

Արեվ առնել. — նշ. «արևի լույս ստանալ»:

Այս արտահայտությամբ կազմված նախադասության մեջ
տրամաբանական ենթական սովորաբար հանդես է գալիս որպես
ուղիղ խնդիր, իսկ հարադրական բարդության գոյականը (արև)
գիտակցվում է որպես ենթակա: Օրինակ՝

«Արև առիր Շատխու սարեր»:

«Արև առից Ծիծանից ծնր»:

Արեվ տեսնել. — նշանակում է 1. «կյանք առնել», 2. «լավ օր
տեսնել»:

Արև տալ. — նշանակում է «մահանալ»: Օրինակ՝ «Ղյն զուր
արև իտու քյի» (=նա իր արևը քեզ տվեց, — այսինքն՝ մահացավ):

Զրրք տալ. — նշանակում է «պարծենալ», «գլուխ գոմել». օրի-
նակ՝ «Տոլօ զըրթ իտու, թի արճ ի սպանիր»:

Ընգյեց անել. — նշ. «վիժել» (ասվում է անասունների համար):

Թօլ խանել. — նշ. «վրեժ լուծել». օրինակ՝ «Մըկրօ ըզ՛Դորմօ
աըփից, Պըարօ կըլնուց զոնու թօլ էխան» (=Մկրտն Դարմոյին
ծեծեց, Պարոն գնաց նրա վրեժը լուծեց):

Լէք անել. — նշ. «խաբել», «պլոկել», «մի բան կորզել»: Օրի-
նակ՝ «Խա՛շ, էն ա՛ստված, տիւ ձի լէք կանիս» (=Աստված վկա,
դու ինձ խաբում ես, կողոպտում ես):

Լնս տալ. — նշ. «լուսավորել»:

Խոբթուր տալ. — նշ. «խոսել», «զրուցել». օրինակ՝ «Կուդի՞ս իտ
ձի խոբթուր տա» (=Ուզո՞ւմ ես ինձ հետ խոսել, զրուցել):

Խաղ սել ($\langle$ խաղ ասել). — նշ. «երգել»:

Խոկյի տալ. — նշ. «մահանալ»:

Կան կյալ.—նշ. «զբոսնել», «ման գալ», «պատյո գալ»—
«փնտրել». օրինակ՝

«—Դո՞րն էս

— Կան կրկնէ: Հըտըվ քչի կան կրկնէ»:

(=«—Որտեղ էիր:

—Ման էի գալիս: Քեզ էի փնտրում»):

Կույք կյալ.—նշ. «քունը գալ». օրինակ՝ «Յէմ կուքջ իրի»
(=Քունս եկավ):

Կույք տանել.—նշ. «քունը տանել»:

Հըբ կէնալ.—նշ. «լռել», «հանգիստ մնալ» (<ի ուշ կայանալ):
Օրինակ՝ «Հը՛շ կաց» (=Լռի՛ր, հանգի՛ստ կաց):

Մըժուլ անել.—նշանակում է «զբաղվել», «ժամանակ կորց-
նել». օրինակ՝ «Մըժուլ մա՛նի, էրի ձի հօկլ» (=Ժամանակ մի՛ կոր-
ցընի, արի ինձ օգնելու):

Յուլ ռիկ.—նշանակում է «խոտվել» (յուլ՝ գնալ, ռիկ՝ խոտվ)-
օրինակ՝ «Յէս քլէնէ տըլոմ սիկ» (=Քեզանից կխոտվեմ):

Շուքյ տալ.—նշ. «ցուլց տալ» (<նշան-ի ք տալ):

Շմաւ տալ.—նշ. «ծածուկ կամք հայտնել» (<նշմար տալ):

Պար պրոնել.—նշ. «շուրջպար սկսել»:

Վտզն կյալ.—նշ. «հրաժարվել», «ձեռք քաշել»:

Փալ տալ.—նշ. «թիկնել»:

Խանգյ տալ.—նշ. «հանգիստ տալ», «կանգ առնել», «հանգըս-
տանալ». օրինակ՝ «Չուր խասա կյնդ՝ էրկու խանգ տըվի» (=Մինչև
հասա գլուղ, երկու տեղ կանգ առա, հանգստացա):

Ունգյ տընել.—նշ. «ականջ դնել», «լսել»:

Բարբառային հարադրական բարդությունների թվում կան մի
շարք բաղճյունական հարադրություններ. դրանցից են՝ խէր ու մէր
(=ծնողներ), ճոճ ու պըզտիկ (=ամենքը), ծեթ ու պէտ (=բո-
լորը, ամեն ինչ, թե՛ մեծ, թե՛ փոքր), ճար ու ճամբոխ (=հնար,
միջոց), տուն ու տեղ (=ունեցվածք, բնտանիք), ջուլ ու փալաս
(=ունեցած-չունեցած), խորթ ու բորթ (=անհարթ), քյար ու քյը-
ռա (=քարքարոտ), ճիժ ու պիժ (=երեխաներ), տակ ու վէրէն
և այլն:

Դ) ԿՑԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Կցական բարդությամբ են կազմված՝

Պշկոռել (<աչք+առնել):

Դրոտամ ($\langle \text{առ} + \text{տամ} \rangle$):
 Զինի ($\langle \text{զ} + \text{ին} \langle \text{ձգել} \rangle \text{իսկել բալի արմատից} \rangle$):
 Ինչըի ($\langle \text{ինչ} + \text{ցեղ} \rangle$):
 Խըրդնոմ ($\langle \text{հերոս} + \text{զ} + \text{ալն} + \text{ամ} \rangle$):
 Խըղբուց, իրըբաց ($\langle \text{հետ} + \text{իրեար} + \text{աց} \rangle \text{ուց}$):
 Խըլիսոն ($\langle \text{հետ} + \text{լուսոն} \rangle$):
 Կանծել ($\langle \text{կան} + \text{ածել} \rangle$):
 Հոնցեղ ($\langle \text{հ(հազազ)} + \text{ալն} + \text{ցեղ} \rangle$):
 Հոնկյուի ($\langle \text{հ(հազազ)} + \text{ալն} + \text{գահ} \rangle$):
 Հոռիկող ($\langle \text{հ(հազազ)} + \text{առ} + \text{ի} + \text{կող} \rangle$):
 Մոմեկու ($\langle \text{մէկ} + \text{մէկ} + \text{ու} \rangle$):
 Մէկըսմէկ ($\langle \text{մէկ} + \text{զ} + \text{մէկ} \rangle$):
 Ձէ՛չիս ($\langle \text{չէ} + \text{չէ} + \text{հո} \rangle$),
 Ձըպի ($\langle \text{ոչ պիտի} \rangle$),
 Ձիսո՛ ($\langle \text{չէ} + \text{հո} \rangle$):

Ե) ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Իսկական բարդությամբ, ինչպես և ածանցմամբ նոր բառեր կազմելը բարբառում ամենատարածված բառակազմական միջոցներն են: Հայերենի՝ մեզ ծանոթ արմատներով, բարբառային արմատական բառերով, երբեմն էլ փոխառյալ որևէ բառի ու ընդհանուր հայերեն կամ բարբառային որևէ արմատի միաձուլմամբ բարբառում կազմվել են բազմաթիվ իսկական բարդություններ: Դրանցից շատերի բաղադրիչները միմյանց հետ միաձուլված են հոգակապով: Իբրեւ հոգակապ բարբառում հանդես է գալիս ա ձայնավորը, որը հաճախ հանդիպում է հնչյունափոխված ձևով (ա > օ > ւ):

Բարբառում շատ գործածական իսկական բարդություններից են՝

Ակոավեր, որ կազմված է ակոա և ավեր արմատներից, նշանակում է «անկանոն ատամներ ունեցող»:

Ալլէգ, բաղադրված է աղ և լէգ ($\langle \text{լիզել} \rangle$) արմատներից և նշանակում է անասուններին աղով կերակրելու տեղ:

Բոռնկոտ, բարդված է բան (=իբ) և կոտ (=զլուխ) բառերից և նշանակում է նվեր, որը տրվում է իբրև աչքալուսանք՝

¹ Կլոխ ($\langle \text{զահ} \rangle$) բառի ստուգաբանությունը տե՛ս Հր. Աճառյան, Քննություն վանի բարբառի, էջ 191:

նոր ծնված երեխայի համար: Հավանաբար առաջացել է բան + ի + կոտ բառակապակցությունից:

Թանխուս, կազմված է թան և խիս արմատներից:

Խորբուպեր, բաղադրված է թորքերեն խարբար և հայերեն բեր > պեր արմատներից:

Խոկյատուոց (< հոգի + ա + դարձ):

Մորթմաղ, բարդված է մար (= մազ) և մաղ արմատներից՝
տ (< ա) հոդակապով:

Կուլումաղ (< կալ + ա + մաղ):

Կոնոփատ (< կանեփ + հատ):

Կոնոթկ (< կոլ + ն + արկ[անել]):

Հոկյապատ, կազմված է հոկյի (< ազի) + ա + պատ բաղադրիչներից և նշանակում է ժապավեն, որը կարվում է կանացի հագուստի քղանցքի շուրջը:

Խոնգյուկուտոր (< հանդ + ա + կոտոր):

Հընթըտակ (< հ(հագազ) + ունթ (< անթ) + ա + տակ):

Ճըրթոթլին (< շուր + արբ + ի + ն) նշանակում է Շըրթլի հող:

Շըլկըտար (< շալակ + ա + տար):

Պոդապերան (< պոդ + ա + բերան):

Պորտուոնո (< բերան + ա + դն + ա): Այսպես կոչվում է կալսող անասունների բերանը զրվող փալտե օղը:

Ջոնոխպեր (< ջան + եզրայր) նշանակում է «ամուսնու եղբայր»:

Սոկոռկուտ (< սակառ + ա + կուտ). սակառ կոչվում է դարմանի մեծ կողովը, իսկ սոկոռկուտ բառը ծաղրական արտահայտություն է և նշանակում է մարդ, որի գլուխը սակառ է, այսինքն՝ մեծ է և դատարկ:

Սըռտոմեկ (< սառ + տանել) նշ. «մրսել»:

Քյարգոխ (< քար + դ + ռիս). այդպես կոչվում են բոպիկ քալիլիս ոտքի տակ առաջացած կոշտուկները:

Քյեթրոթլիթ (< քեթր (= ծուռ) + ա + քիթ):

Քյեթրովիզ և այլն:

2) ԱԾԱՆՑԱՎՈՐ ԿԱՋՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարբառում գործածական են հետևյալ ածանցները.
—ական, —կան (< ական-ից). —Գոլականներից կազմում է ածականներ. պէտքովան, տընական, թողովան, խէրկան, մէրկան, սըլուքովան և այլն:

-կան (<ուկ+ան-ից).—Բայաճիմքերից կազմում է ածականներ. մըրսկան, լըծկան, պոռոցկան, խէծկան և այլն:

-ան.—1. Բայաճիմքերից կազմում է ածականներ. զորկան, կըծան, վոզան, նըվան, ըրռան և այլն:

2. Կազմում է գոյականներ. լորան, շարան, մէրան, կըթան, թացան, քէշան, աշան, խօփան և այլն:

-անց.— 1. Կազմում է մակբայներ. հիտեանց, կողքանց, հրոճեմանց, մօտանց, դոտանց և այլն:

2. Կազմում է ածականներ, որոնք հաճախ հանդես են գալիս իբրեւ գոյական. խէրանց, ախպրանց, քյորանց և այլն:

-անց, -ենց.— Կազմում են հատուկ գոյականներ, հատկապես՝ տեղանուններ. Հոտորճանց, Կորիճանց, Հինենց, Հոշկանց, Սօքյանց, Սօղվանց, Քըրմենց և այլն:

-առ.— 1. Կազմում է ածականներ. փէկոատ, կոմճատ, պոչատ, քլընատ և այլն:

2. Կազմում է նաև քիչ թվով գոյականներ, ինչպես՝ հոկոնատ, փէտատ և այլն:

-առար>րար, -ար.— Կազմում են գոյականներ և մակբայներ. կըզրար (<զիզ+արատ), լիսրար, կիսրար (կէս+արար), կյոխտար (<գաղս+ար) և այլն:

-եկ.— Կազմում է գոյականներ՝ փաղաքշական նշանակությամբ. ուլեկ, մատեկ, որթեկ (=հորթ), յէղվընեկ, ճրոճըռնեկ, խէրվընեկ, թըրթըռնեկ, աղսանեկ և այլն:

-եզ.— Այս ածանցով հանդիպում են հատ ու կենտ բառեր, օրինակ՝ դէղէզ, դըզէզ:

-էն.— Այս ածանցով միայն մեկ բառ ենք նկատել՝ պըռտէն, որ նշանակում է «մշակված կավ»:

-իկ.— 1. Կազմում է գոյականներ. խուրիկ, բըռիկ (վայրի խոտ է), նըվիկ, տճիկ, քըռիկ, կոտիկ, ածիկ, տոնիկ, քյոխթրիկ, քլըռփոխիկ և այլն:

2. Գոյականներին տալիս է փաղաքշական իմաստ. օրինակ՝ հոխպրիկ, սանդրիկ, պոնցրիկ, խօրօտիկ, քյախցրիկ և այլն:

Է.— Կազմում է հարաբերական ածականներ. քյարէ, խօտէ, արընէ, էրկըթէ, մըսէ, կավէ և այլն:

-էղէն.— խողէղէն, յէղէղէն, ճըրէղէն, ծըվէղէն, խըրէղէն և այլն:

-ի.—1. Կազմում է ածականներ. տնթի, պտրի, ծըրի, ճըրի (=ջրալի) և այլն:

2. Գոյականներ՝ կորի (=արտի միջի առու), պըռսկի, ափնի, տոքլի և այլն:

Մ ա ն ո թ .—ափին Շատախի բարբառում կոչվում է արտի ստորին ծայրը: Կազմված է ափն գոյականից՝ ի ածանցի միջոցով և ունի եղակի թվի իմաստ: Վանի բարբառում ափնի կոչվում են այգու շորս պատերի տակ եղած մասերը ներսից: Այստեղ բառը կազմված է նույն ափն գոյականից, բայց ոչ թե ի ածանցով, այլ էի հոգնակիակերտ մասնիկով, որից առաջ ափն բառի ն-ն չի մնացել: Ափնի բառը վանի բարբառում ունի հոգնակի թվի իմաստ: Այսպիսով, ձևով այդ բառը երկու բարբառներում էլ նույնն է, բայց իմաստով, մասամբ և բաղադրությամբ՝ տարբեր:

-իշկ (<իշ+ք).—Կազմում է գոյականներ. ցըվիշկ (<ցիւ+իշ+ք), պըղիշկ, կտրիշկ, խամբրիշկ և այլն:

-ման (<ումն վերջավորությամբ գոյականների եզ. սեռ. վերջ.-ից).—Կազմում է ածականներ. լըման (<ելման), վառման, չէուման:

—մանց (<ումն վերջավորությամբ գոյականների հոգն. սեռ. վերջ.-ից).—Կազմում է մակրայններ. զոտմանց, նըստոմանց, կոլ-նոմանց և այլն:

-ոնքյ.—Այս ածանցով մի գոյականի ենք հանդիպել՝ շըր-նոնքյ, որ նշանակում է «մի որևէ բանի հակառակ երեսը»:

-ոտ, -օտ.—Կազմում է որակական ածականներ. ցըմբըոտ, պըրթոտ, գյըոտ, խօրօտ, փըրճոտ, մածնոտ, անծոտ, վէրքյոտ և այլն:

-ոց.—Կազմում է տեղ ցույց տվող և այլ գոյականներ. բոկոց, մեղրոց, շոխկոց, տըթխոց, խէծոց, պտրթոց, վտրոց, կըթոց, կոնտփոց և այլն:

-վաճֆյ. -վոնֆյ (<վի+աճք, վի+ունք).—Կազմում են հավաքական իմաստով գոյականներ. քչեղվաճֆյ, տոլմաճֆյ:

-վի.—Այս ածանցով կազմված մի բառ ենք նկատել՝ տխվի (=անձեռնմխելի, սրբապատկան):

-ու.—1. Կազմում է հարաբերական ածականներ. տանու, վէրու (=վայրի), ածու և այլն:

2. Մակրայնի մօտու, զոտու:

-ուրթ.—Այս ածանցով հանդիպում են հատուկ կենտ մակրայններ. խընութ, մօրութ և այլն:

-ուկ.— 1. Կազմում է որակական ածականներ. պաղուկ, վրու-
տուկ, ծամուկ, փրրթուկ (=պոկված), պրրտուկ (=բրդված),
ծախուկ և այլն:

2. Մի քանի գոյական՝ փրշրուկ (ճաշի տեսակ է), տվլուկ
(=ավելուկ) և այլն:

-ուն.— 1. Կազմում է ածականներ. լողրուն, պրտպրտուն
(=պուտավոր), սօղրուն, քյրփսուն և այլն:

2. Գոյականներ՝ աղուն, մաժուն և այլն:

-ույ.— Կազմում է գոյականներ. խրրուքյ, նազուքյ (ճախա-
րակի մաս է), մըտմըտուքյ և այլն:

-ուրփյ, -օրկ, -օրփյ (<ոյթ+ք).— Կազմում է գոյական-
ներ. սովրութքյ, տաքյօթկ, պընթթքյ:

-ւորի, -աւոր.— քյաւոր (<կնաւք + աւոր), սելւոր, կյնոժ-
ւոր, քյտղւոր, ճըրւոր, ամոլւոր, բէրւոր, ծոցւոր, կալւոր և այլն:

-օվի.— ճըրօվի, ծալօվի, պէրօվի, տարօվի, տընօվի և
այլն:

Նախածանցներից գործածական են՝

— աւն.— անսիրտ, անճիրես, անկըշտում, անըսպեռ, անտեր
անեկ և այլն:

չ.— չըտես, չըպէր, չըխօսկան, չըկամ և այլն:

ՅՈՒՐԱԶԱՏՈՒԿ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՈՃԵՐ ՈՒ ՍՐՏԱԶԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ձի պըրծում կա (=ի՛նձ փրկություն կա)

մի պըրծում կա

քի պըրծում կա

ծի պըրծում կա

տնու պըրծում կա

տնոնց պըրծում կա

Նույնի ժխտականը՝

ձի պըրծում չըկա

մի պըրծում չըկա և այլն:

ձի պըկեր ի (=ի՛նձ հարկավոր է) կամ՝ ձի պըկեր կըկո:

քի պըկեր ի

տնու պըկեր ի և այլն:

Ժխտականը՝

ձի պըկեր չի (=ի՛նձ պետք չէ) կամ՝ ձի պըկեր չի կո:

ձի կըպի (=ուզում եմ)

քի կըպի (=ուզում ես)

տնու կըպի (=ուզում է)

Ժխտականը՝

ձի չըպի (=չեմ ուզում) և այլն:

ձէնէ կըկցո (բառացի՝ ինձանից կգա,— մենէ կըկցո
նշանակում է՝ կարող եմ)

քէնէ կըկցո (=կարող ես) ծենէ կըկցո

տնուց կըկա (=կարող է) տնոցմէ կըկցո

Ժխտականը՝

ձէնէ չի կցո (բառացի՝ ինձանից չի գա,—նշանակում է՝ չեմ
կարող)։

քէնէ չի կցո (=չեմ կարող) և այլն:

ձի կըշտում կա (=ազատ չեմ)

քի կըշտում կա (=ազատ չեմ) և այլն:

Ժխտականը՝

ձի կըշտում չըկա (=անկուշտ եմ)

քի կըշտում չըկա

տնու կըշտում չըկա և այլն:

կցոխ ընգցիւր է (=քիչ մնաց ընկնելի)

կցոխ ընգցիւր էս

կցոխ ընգցիւր էր և այլն:

կցոխ առէր է (=քիչ մնաց առնելի)

կցոխ առէր էս

կցոխ առէր էր

կցոխ կտարէր է

կցոխ տարէր է և այլն:

Ղն զուր արեւ իտու ձի (բառացի՝ նա իր արեւը տվեց ինձ,—
նշանակում է՝ մահացավ): Ասում են նաև՝ զուր արեւվ իտու քի,
զուր արեւվ իտու մի:

Խըտ յէմ կըշտին (բառացի՝ իմ կողքի հետ,—նշանակում է՝
ինձ մոտ):

Չէ՛ չիս (=իհարկեմ): Օրինակ՝ չէ՛ չիս յէս քի կըսիրիմ:

Տըլում ռիկ (=կիսուովեմ):

Նվաստացուցիչ արտահայտութիւններ և անեծքներ.—Քյ ծէն ծըմէն, քյ բոժ քլըռէն «ձալնդ ծմակում (լինի), հասակդ (մարմինդ)՝ քարակոյտի մեջ»: Մոխի՛ր կոտ «մոխիր գլխիդ»: Մա՛մ կըտրած: Քյ ծամ կըտրիմ: Փուճ կօքջօվ «դատարկամիտ, հիմար»: Քյ խէր խըտ շան տոնա «հայրդ շան հետ ոռնա»: Չըրդարև խատնիս «մինչև արևի ծագելը սատկես»: Ժուռ մուռ մեռնիս «ջահել-ջահել մահանաս» (ծուռ՝ խակ): Շընխէր «հայրդ շուն»: Մըռմըռուոր: Կոպտուոր: Տիրամօր քլըրքլըրուկ: Քյ խոկլին քյ պէնից կյո վէ «հոգիդ բերանիցդ դուրս գա,—ալսինքն՝ չարչարվես»: Անդլ մորեկս «ծուլլ, անբան» և այլն:

III. ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ

Բարբառը բավական թվով փոխառութիւններ ունի քրդերենից և թուրքերենից: Դրանց մի մասը շատ գործածական է և դարձել է բարբառի բառապաշարի անհրաժեշտ տարրը: Բերենք մի քանի օրինակ.

Քրդերենից՝ բոժ (=հասակ) <քրդերեն bəžn բառից: n(=ն) վերջնահնչյունը հալերենում ընկել է այն գոյականների անալոգիայով, որոնք բառավերջի ն-ն չեն պահել (հմմտ. մուկն > մուկ, ձուկն > ձիւկ, դուռն > տիւռ և այլն): Բըբեն (=վերք) <քրդ. brin: Բրինգար (=վիրավոր) <քրդ. brindar: Դյալի (=ձոր) <քրդ. gəli: Դոհբո (=գազան) <քրդ. dəhbə: Դիկ (=աքլոր) <քրդ. dik: Զոգոն (=ամառանոց) <քրդ. zozan: Էվար (=երեկո) <քրդ. ewar: Հեդի (=կամաց) <քրդ. hedî: Հիվի (=աղաչանք) <քրդ. hivi: Մադգա (=ախորժակ, տրամադրութիւն) <քրդ. məhdə: Մըժ (=մէգ) <քրդ. mēž: Նեհիր (=որս) <քրդ. neçir և այլն:

Թուրքերենից՝ բարբառ—հավասար, բարբը(ել)—հաշտվել, բէշարո—լաստանալ, գյոմի—առաջատանալ, դասաուր—թուլլալ, արվութլուն, դավի—վեճ, դիլոք—աղաչանք, գուլում—արհավիրք, քըմախ (անել)—ազահել, քըմախքյոթ—ազահ, խաթուն—մեծ տիկին, խարջ(ել)—ծախսել, վատնել, հոգըր(ել)—պատրաստել, մալուլ—տրտում, մալիլ (մնալ)—հիանալ, ոռհոթ—հանգիստ, որից՝ ոռհոթել—հանգստանալ և այլն:

Նորագույն շրջանում բարբառի բառապաշարը հարստացել է ուսերենից փոխառված մի շարք բառերով, ինչպես՝ սովէտ, կուխօզ, տրաքտօր, կոմբայն, տէպլոտատ (<теплотат), սովխօզ, բադիօ, տէլէվիզօր, զափօդ և այլն:

Հաճախ միևնույն հասկացությունը, երբ այն վերաբերում է տարբեր առարկաների կամ առարկայի տարբեր հատկանիշների, արտահայտվում է տարբեր բառերով, որով ստեղծվում է բառամասոր մասնավորում ըստ վերաբերության:

Այսպես՝ նստելու գործողությունն արտահայտվում է հետևյալ բառերով. նստել վերաբերում է մարդկանց:—«Հոկո մէր նըստիր ի պիւրթ կրկըզի»:—Դռալքյել վերաբերում է շանը, գալլին և այլ գազանների:—«Կլել, առուծ դռալքիւ ին»:—Լամըսվել վերաբերում է կատվին:—«Կատուն լամըսվալ»:—Մաղալել վերաբերում է ոչխարին:—«Ոչխար մոպուլից»:

Գրական հայերենում բոլոր կենդանիների մահը արտահայտվում է սառկել բառով (<սատակել): Բարբառում սառկելը վերաբերում է այն կենդանիներին, որոնց միսը չի ուտվում (շուն, կատու, առյուծ, գանազան միջատներ, սողուններ և այլն): Իսկ ընտանի և վայրի այն կենդանիների ու թռչունների համար, որոնց միսն ուտվում է, գործածվում է խառնել (<հատանել) բառը:

Ուտելու պրոցեսն օրվա տարբեր ժամերին արտահայտվում է հետևյալ բառերով.

Ակոաստ—առաջին նախաճաշ:

Ճաշ—երկրորդ նախաճաշ:

Խրամէնց—ճաշ:

Հրնթրիս—առաջին ընթրիք:

Պաշիվ—երկրորդ, թեթև ընթրիք քնելուց առաջ:

Հնձված խոտի ու հացահատկի տարբեր քանակություններն արտահայտվում են հետևյալ բառերով.

Ուրան (<օրան)—հնձված հացահատիկ:

Տէզ (<դէզ)—հացահատկի կամ խոտի մեծ դեղ:

Վուա—խոտի մեծ խուրձ:

Լեթ—խոտի փոքր խուրձ:

Գլըդիշ—հացահատկի հինգ խրձանոց դեղ:

Պորթոց (<բարդոց)—հացահատկի քսան խրձանոց դեղ:

Խուրձ—հասկերից կազմված խուրձ (խոտի համար չի գործածվում):

Թեղ—կալսված հացահատկի կույտ:

Անասնագոմեր՝

Կյոմ (<գոմ)—գործածվում է ոչխարի համար:

Քյոզ՝ զառնների և ուլերի համար.

Ախոռ կամ հոխոռ՝ ձիերի, էջերի համար:

Փորքյախ՝ խոշոր եղջերավոր անասունների համար:

Բրդի տեսակներ՝

Պիւթ կոչվում է ամեն կարգի բուրդը.

Կոժ՝ նրբագեղմ ալծի բուրդը.

Դրվթիկ՝ սովորական ալծի բուրդը.

Փուռտիկ՝ ոչխարի, ալծի մանր մազիկները.

Առվանք՝ գլխած բրդի տակաւքը:

Տարբեր տարիքի ոչխարներ ունեն իրենց առանձին անունը.

Ոչխար կոչվում է անասունի տվյալ տեսակն ընդհանրապէս.

Կյոռ՝ մինչև մեկ տարեկան ոչխարը.

Կավրո՝ մեկից երկու տարեկան ոչխարը.

Շուշաք՝ մայրացու ոչխարը.

Մաֆյի՝ մայր ոչխարը:

Տարբեր տարիքի ալծերի անունները.

Ու կոչվում է մինչև մեկ տարեկան ալծը.

Գլխկ՝ մեկից երկու տարեկան ալծը.

Ալոչ՝ մայրացու ալծը.

Էծ՝ մայր ալծը:

Խոշոր եղջերավոր անասունների տեսակները.

Տավար—վերաբերում է թե՛ կովին, թե՛ եզին, թե՛ զոմեշին:

Վորթեկ—մինչև մեկ տարեկան հորթ:

Խէրվընեկ—մեկից երկու տարեկան հորթ:

Էրինջ—մայրացու կով:

Կով—մայր կով:

Ահոռ—երկուսից երեք տարեկան ցուլ:

Յէզ—եզ:

Լծված եզների յուրաքանչյուր զույգն ունի իր անունը, այսպէս՝ գութանից հաշված, առաջին զույգը կոչվում է ամուլ, երկրորդը՝ տոտուն, երրորդը՝ սարծիլ, չորրորդը՝ խուրիկ:

Թելի տեսակները.

Թնրզան՝ բամբակի նորր թել, մոխրոնձ՝ կոճի թել, լաքան՝ կանեփի թել, կոժ՝ մանված թել:

Պարանի տեսակները.

Թոկ—կարճ պարան՝ անասուններին կապելու համար:

Չրվան—ալծի մազից հյուսված պարան:

Շրթիտ—կանեփի թելից հյուսված պարան:

Պարան—բամբակի թելից հյուսված պարան:

Ա Մ Փ Ո Փ Ա Ի Մ

Բառապաշարի հիմնական շեշտը կազմում են հին հայերենից ավանդված բառերը, որոնց մի մասը ենթարկվել է իմաստափոխության: Զգալի թիվ են կազմում և այն բառերը, որոնք թեև հին հայերենում չկան, բայց բաղադրված են հայերենին ծանոթ արմատներից՝ բառակազմական տարբեր միջոցներով՝ կրկնությամբ, հարադրությամբ, բառաբարդմամբ, ածանցմամբ:

Կան մեզ անծանոթ մի խումբ բառեր, որոնք գրաբարից ավանդված չեն: Այդ բառերի մեջ կարող են լինել այնպիսիք, որոնք պատահաբար դուրս են մնացել մեր մատենագրությունից, բայց պահպանվել են բարբառում, կարող են լինել և այնպիսիք, որոնք բարբառին անցել են զանազան մեռած լեզուներից:

ՋԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՌՅԱԿԱՆ

ՀՈԳՆԱԿԻԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.—Բարբառն ունի հոգնակիա-
կերտ -եր, -բյեր, -տեր, -բյտեր, -ստար, -բյ, -ներ և այլ մասնիկ-
ներ:

Միավանկ բառերի հոգնակին կազմվում է -եր մասնիկով,
ինչպես՝ աշկ (<աշք)—աշկեր, աղ—աղեր, ասկ (<ազգ)—ասկեր,
ամբ (<ամպ)—ամբեր, էծ (<ալծ)—էծեր (նաև՝ էծվանք), տուն—
տներ, կով—կովեր, խող (<հող)—խողեր, կլինդ (<գինդ)—կլըն-
դեր, հունթ (<անթ)—հընթեր, պոկ (<բակ)—պոկեր, պոխ
(<բահ)—պոխեր, պիւվ (<բու)—պըվեր, բոս—բոսեր, բէր—բէ-
րեր, զիսկ—գրսիկ, թավ—թավեր և այլն:

Բազմավանկ այն բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը
միավանկ է և բարդության մեջ պահպանում է իր հիմնական իմաս-
տը, հոգնակին կազմում են դարձյալ -եր մասնիկով. օրինակ՝ հըն-
թըտակ—հընթըտակեր, ատվրժէր—ատվրժէրեր, խըռընցավ—խըռըն-
ցովեր, ատվրտակ—ատվրտակեր և այլն:

Ն վերջնաձևչյունը կորցրած միավանկ գոյականները հոգնա-
կին կազմելիս վերականգնում են ն-ն. օրինակ՝ ակ (<ակն)—ակ-
ներ, հոփ (<ափն)—հոփներ, պեռ (<բեռն)—պեռներ, լէզ
(<եզն)—լէզներ, կյու (<գառն)—կյուներ, ախու (<դուռն)—
առներ, ւոտ (<ոտն)—ւոտներ (նաև՝ ւոտքեր), ծեռ (<ծեռն)—
ծեռներ (նաև՝ ծեռքեր), պիւռ (<բուռն)—պըռներ, բոժ (<բոժն)—
բոժներ և այլն: Բացառություն է՝ խիմ (<հիմն)—խըմեր, որտեղ
Բ-ն չի վերականգնվում:

Որոշ միավանկ բառեր վերոհիշյալ գոյականների ազդեցու-
թյամբ հոգնակին կազմելիս ն են ավելացնում. օրինակ՝ ծառ—ծառ-

ներ, դիկ(=աքլոր)—դրկներ, կյիւնդ(=գունդ)—կյընդներ, լուպ(=բոււ)—լըպներ, ճոււ-ճըոներ, թեւ-թեոներ և այլն:

Բազմավանկ բառերի հոգնակիի կազմությունը շատ կանոնավոր է և պայմանավորված է բառի վերջին հնչյունով:

Բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերի մեծ մասը, բացառությամբ կ, ֆյ, զյ, ն-ի հանգող բառերի, հոգնակին կազմում է ֆյն բաժանիկով, որն առաջացել է ֆյ(<ք) և եր(<եար) բաժանիկների համագրությամբ. օրինակ՝ աթար—տիտրքեր, աթու—տիտքեր, ալուչ—տուչքեր, հոկոնատ (<ակնատ)—հոկոնտուքեր, ախանչ—տոնչքեր, հոխպիւր (<աղբիւր)—հոխպըրքեր, անիծ—տնրծքեր, աճուռ—տճուռքեր, խարօր (<արօր)—խորօրքեր, պոսեխ (<բաղեղն)—պոսրիքեր, մընդիւտ (<բոստոտ)—մընդիւտքեր, պըվեւ (<բեւեւ)—պըվըրքեր և այլն:

Կ, ֆյ, զյ բաղաձայններով վերջացող բազմավանկ բառերը հոգնակին կազմում են տեւ(<տի+եար>եր) բաժանիկով. օրինակ՝ յէղվընեկ(<աղանեակ)—յէղվընկտեր, իրիկ—իրկրտեր, ապրանք—ապրոնքտեր, հոռիք (<առիք)—հոռըքտեր, տվողակ—տվողկտեր, հըրպընեկ (<արբանեակ)—հըրպընկտեր, էրմունդ (<արմունկ)—էրմընդտեր, պողոկ (<բաղոկ)—պողկրտեր, պըպոկ (<բիք)—պըպկրտեր, կլըտոկ (<գդակ)—կլըտոկտեր, լեղունգ (<եղունկ)—լեղնգտեր, էրկանք—էրկոնքտեր, ողսոնեկ—ողսոնկտեր, ալուկ—տլուկտեր և այլն:

Ն ոնգայինով վերջացող բազմավանկ բառերը հոգնակին կազմում են ֆյտեւ (<ք+տի+եար>եր) բաժանիկով. օրինակ՝ անուն—տնունքտեր, պէրան (<բերան)—պէրոնքտեր, կյուուն (<գարուն)—կյուունքտեր, կլետին (<գետին)—կլետընքտեր, կլերան (<գերան)—կլերոնքտեր, աոմոն (<դամոն)—աոմոնքտեր, էրան (<երան)—էրոնքտեր և այլն:

Ի և ա (կամ տ) ձայնավորով վերջացող բազմավանկ բառերն ստանում են քյ (<ք) հոգնակիակերտ բաժանիկը, օրինակ՝ հոկլի (<ազի)—հոկլիք, հիկլի (<ալգի)—հիկլիք, որպտորի—որպտվորիք, կլերընդի (<գերանդի)—կլերընդիք, կլերի (<գերի)—կլերիք, կլինի (<գինի)—կլինիք, թեղի—թեղիք, կաշի—կաշիք, ափնի—ափնիք, ամբո (<ամիրայ)—ամբէք, բոգո (<բագէ)—բոգէք, բոկլա (<բակլալ)—բոկլէք, ընձո (<ընծալ)—ընձէք, ծառա—ծառէք, ծըմո—ծըմէք, կըթիւտ—կըթիւէք, խինո—խինէք, տկոնդկուլա—տկոնդկուլէք և այլն:

Մանր.—ֆյ հոգնակիակերտ բաժանիկից առաջ ա> է հնչյունա-

չոխությունն օրինաւոր է, երբ նկատի ենք առնում, որ հոգնակիի կազմութեան այս տիպը ուղղակիորեն գալիս է գրաբարից՝ կրելով բարբառին հատուկ հնչյունական օրենքների ազդեցութիւնը, այն է՝ բաղաձայնից առաջ այ երկբարբառի վերածումը է պարզ ձայնավորի. այսպէս՝ գրբ. ամիրայք < բարբ. ամրեք, բակլաք < բոկլեք, ծառայք < ծառեք և այլն: Բայց ա < է փոփոխութիւնը քչ հոգնակիակերտից, ինչպես և որոշյալ ու անորոշ հոգերից առաջ, տեղի է ունենում նաև այնպիսի բառերում, որոնք ուշ շրջանի փոխառութիւններ կամ նորակազմութիւններ են, ուստի երբեք բառաւորացի ա-ից հետո յ չեն ունեցել. օրինակ՝ դոստա—դոստէք, դոհբո—դոհբէք, բէչորո (= լատահաւ) —բէչորէք և այլն: Այսպիսի բառերում ա < է հնչյունափոխութեան ազդուրը ոչ թե գրաբարի այ երկբարբառի վերածումն է է պարզ ձայնավորի, այլ արեւելի փոփոխութեան ենթարկւած բառերի համաբանութիւնն է:

Ի և ա ձայնավորով վերջացող բազմավանկ գոյականների մեծ մասը հոգնակին կարող է կազմել նաև ստար (< ս + տի + ար) մասնիկով. օրինակ՝ հոկկի—հոկկրատար, խոկի (< հոգի)—խոկլըստար, հիկի—հիկլըստար, ամբո—ամբոստար և այլն:

Բնակութեան տեղը նշող՝ -ցի վերջածանցով գոյականների հոգնակին ևս կազմվում է քչ մասնիկով, ինչպես առհասարակ ի-ով վերջացող բառերի հոգնակին, սակայն հաճախ քչ-ի փոխարեն վերոհիշյալ բառերն ստանում են -եւ մասնիկ, չնայած որ միավանկ չեն. օրինակ՝ շտաբիցի—շտաբիցիք, նաև՝ շտաբիցեր, վոնրցի—վոնրցիք—վոնրցեր, հէրէվոնցի—հէրէվոնցիք—հէրէվոնցեր, մոկոցի—մոկոցիք—մոկոցեր և այլն:

-ու ձայնավորով վերջացող գոյականները հոգնակին կազմում են -նեւ մասնիկով, ըստ որում, բառավերջի ու-ն ընկնելով գաղտնավանկ ք-ից առաջ, հնչյունափոխվում է վ-ի. օրինակ՝ լէզու—լէզվըներ, առու—առվըներ, կատու—կատվըներ:

-նեւ հոգնակիակերտ է ստանում նաև աստղ—աստղներ բառը:

Քիչ գործածական հոգնակիակերտ մասնիկներ.

-վանք (< վի + ան + ք). —էծ—էծվանք, էշ—էշվանք:

-տրանք (< տի + եար > եր > ր + ան + ք). —տանիս—տոնըստրանք (ափելի գործածական է՝ տանըսքեր):

-**րանջ** (<հար>եր>ի+ան+ք).—տեղ—տեղրանք, կյեղ—
կյեղրանք;
-**անջ**(<ան+ք).—ծիանք;
-**վեր** (<վի+հար>եր).—ունք—ընքվեր, ծունգ—ծընգվեր:

ՀՈՒՈՎՆԵՐ

Բարբառն ունի 6 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայ-
ցական, բացառական, գործիական:

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է: Այս հոլովում
բառերը կարող են ստանալ որոշյալ կամ անորոշ հոգ. օրինակ՝
«ծիւրն ի փըրթիր, կրկյո սարէն»: «Ձուր տորում չըպընի, փո-
սըմ չըլ՛ցվի»: Ուղղական հոլովը բարբառում նույն կիրառու-
թյունն ունի, ինչ որ արդի հայերենում:

Սեռական հոլովը սովորաբար հոգչի ընդունում, բայց
մեչ (<մեչ), վոր (<վերայ) կապերի հետ կապաւս գործածվելիս
ստանում է ն որոշիչ հոգ. օրինակ՝ մըչ ափին, վոր կըլխուն, վոր
արեւմուն (=ափի մեչ, գլխի վրա, արեւի վրա): Հոգնակի սեռա-
կանը հիմնականում ստանում է ու հոլովիչ. օրինակ՝ տոնըսքեր—
տոնըսքիրու, արճեր—որճիրու, լէղվընկտեր—լէղվընկտիրու և
այլն, բայց եզակիում ա վերջնահնչյուն տնեցող բառերի հոգնակի-
սեռականը կազմվում է ի հոլովիչով. օրինակ՝ բողո—բողէք—
բողէքի, բոկլա—բոկլէք—բոկլէքի և այլն: Սեռական հոլովի
կիրառութիւնը ևս նույնն է, ինչ արդի հայերենում:

Տրական հոլովը ձևով նման է սեռականին: Հոգնա-
կիւում, ինչպես սեռական հոլովը, ստանում է ու կամ ի վերջավո-
րութիւն: Որոշյալ առման ժամանակ ու-ն և հոգից առաջ հնչյու-
նափոխվում է ո-ի. օրինակ՝ կորտսքեր—կորտսքիրու—կորտս-
քիրոն, տոնըսքեր—տոնըսքիրու—տոնըսքիրոն և այլն:

Բարբառում գործածական է ի նախդրով տրականը, որը նշում
է որեւէ բանի տեղը. օրինակ՝ ճարն ի մէշկին (=գտին մեջքին),
բյօլօզն ի կըլխուն (=քօլօզը գլխին), քյարն ի խողին, սերն ի
սըրտին, խավքն ի ծառին և այլն:

Հայցական հոլովը յուրահատուկ կազմութիւն ունի: Ի
տարբերութիւն գրաբարի, բարբառը զանազանում է անծի և իրի
առումները՝ ինչպես արդի գրական հայերենը: Սակայն, հակառակ
արդի հայերենի, բարբառը պահպանում է գրաբարի գ նախդիրը,

որը գործածում է որոշյալ առման դեպքում՝ թե՛ անձի, թե՛ իրի առումների ժամանակ: Ձայնավորով վերջացող բառերը որոշյալ առման դեպքում զ նախդրից բացի ստանում են ն որոշիչ հոգ: Օրինակ՝

Ըզխավուն մորթիր ինքյ (անձի առում, որոշյալ):

Ըզխավ մորթիր ինքյ (իրի առում, որոշյալ):

Խավ մորթըցինքյ, կամ՝ խավըմ մորթըցինքյ (իրի առում, անորոշ):

Երբ հայցական հոլովով խնդիրը հատկացյալ է, նրա զ նախդիրն անցնում է հատկացուցչին, որը սեռական հոլովով է: օրինակ՝ Այսօ գուր աշկիր պրոնից՝ զինքյ էթուլ ծով (=Այսօն իր աչքերը բռնեց՝ իրեն զցեց ծովը): Հոկօ ըզկիւթնի խոփ ֆրացցոց՝ էզոր Մելքին (=Հակոն գութանի խոփը պատեցրեց՝ խփեց Մելքին):

Հայցականի հետ հաղվադեպ գործ է ածվում ց նախդիր՝ արտահայտելով արական հոլովի իմաստ. օրինակ՝ Տովիթ ցխրօխպէր սաց (=Դավիթը հորեղբորն ասաց):

Արդի հայերենում ուղիղ խնդրից բացի հայցական հոլովով կարող են արտահայտվել տեղի, ժամանակի, գնի, չափի պարագաները: Բարբառում, այդ բոլորի հետ միասին, հայցականով կարող են արտահայտվել հանգման անուղղակի խնդիրը, նպատակի պարագան և տեղի պարագայի այնպիսի օրինակներ, որոնք զրական հայերենում դրվում են տրական հոլովով: Օրինակներ՝

1) Հանգման անուղղակի խնդրով.

Նէճըրվանի աշկ ընգլուլ զարն (=Որսորդի աչքն ընկավ արջին):

Ընչ շօրշօի խոտավ ըզլէմ ալանջ՝ հոկոխա (=Որ շշուկը հասավ իմ ալանջին՝ արթնացա):

Քլոցէքլ ըզՄարա Մելիքյ սէքլ, որ Տովիթ տրկլու տր խեա կըրիվ (=Գնացեք Մարա Մելիքին ասեք, որ Դավիթը գալու է իր հետ կովելու):

2) Տեղի պարագայով.

Նեմրութա սար ծինի տըրիր (=Նեմրութ սարին ձյուն է դրել):

Մըկրօ գյօ պըպըզիր թօրվան շուք՝ կըտաքյնա (Մկոն ահա պպզել է թոնրի շրթին, տաքանում է):

Էվարին նամակըմ տըկյըրիմ, տըսիմ՝ տօ յա՛րօ, յէմ աշկ

մընոցիր քլ ճամբոյս... ախււորէ՞ չըս ի՛ կլտ ձի աէս... (Երեկոյան մի նամակ պիտի գրեմ, ասեմ, տոյա՛ր, իմ աչքը մնացել է քո ճանապարհին, դու ինչո՞ւ չես գալիս ինձ տեսութեան...):

3) Նպատակի պարագայով.— Հայցական հոլովով գոյականն այս դեպքում հանդես է գալիս անորոշ դերբայի սեռական հոլովի փոխարեն. օրինակ՝

Մըխէէ Խաչօ պոխ իտի վոր թիպին, կլընոց արտ ճիւք (Մխիթարի Խաչոն բահը գրեց թեին, զնաց արտը ջրելու):

Քլ ախպէր մանգլոց իտտ հընթըւակ, կլընոց Մեղրոցարտ քլաղ¹ (=եղբարւոր մանգաղը տվեց թեի տափ, գնաց Մեղրոցարտը հնձելու):

Տըկլոմ քլ խեա կըռիվ (=Պիտի գամ քեղ հեա կովելու):

Խըլիսոն չըվան արթուլիմ յէմ թե, արցոմ քլէշաճ² (=Առաւիտոյան պարտնը կգցեմ թեիս, կգնամ քաշանելու):

Բացառական հոլովը կազմվում է՝ եզակիում -էն, -ից, -ուց, հոգնակիում՝ -ոց վերջավորութիւններով: Անձ նշող մի շարք բառերի եզակի բացառականը կազմվում է նաև -մէն, մէնէն մասնիկներով, որոնցից երկրորդը դրվում է առանձին՝ սեռական հոլովի հետ: Օրինակ՝ մօրմէն, մօր մէնէն, քյուրոշմէն, քյուրոշ մէնէն, խօրմէն, խօր մէնէն, պառվու մէնէն (չի ասվում՝ պառվումէն): Բացառական հոլովի կիրառութիւնը նույնն է, ինչ արդի հայերենում:

Գործիական հոլովը թե՛ եզակիում, թե՛ հոգնակիում ստանում է -օվ վերջավորութիւն (խացօվ, սէրօվ, յէզներօվ): Անձ ցույց տվող մի քանի բառերի եզակի գործիականը կարող է կազմվել նաև -մօվ մասնիկով (ախպօրմօվ, պապրկմօվ, քյուրոշմօվ):

Երբ գործիական հոլովը ցույց է տալիս միջավայր, տեղ, որով անցնում են, գնում, գալիս՝ կարող է կազմվել -վէ մասնիկով. օրինակ՝ Թաղվէ կլընոց (=Թաղով, Թաղի միջով գնաց), ծոբվէ բնցավ (=ծորով անցավ), տանիսվէ (=տանիքով, տանիքի վրայով), Միծանցվէ (=Միծանցով) և այլն: Կարելի է ենթադրել, որ այս վէ մասնիկը ծագում է վայր բառից, որի այ երկբարբառը հնչյունափոխվել է է-ի (հմմտ. մայր>մէր, հայր>խէր, վայրի>վէրու), իսկ բառավերջի ր-ն ընկել է (հմմտ. մեր>մի, ձեր>ծի,

¹ Բարբառում էլաղ նշանակում է շուռնձ:

² Քլէշաճ կոչվում է ձյան վրայով խոտի ղեղերը քաշ տալով բերելու պրոցեսը:

բեր>պի): Գործիական հոլովի իմաստ արտահայտող վէ մասնիկով հոլովածները հավանաբար ծագում են հին հայերենի քնդ նախդրով հայցականի այն հոլովածներից, որոնք արտահայտել են «միջով», «տարածությամբ» գաղափարը և հաճախ գործածվել են վայր բառի հետ, այսպես՝

Կընտվէ<ընդ ալն վայր

Կըստվէ<ընդ ալս վայր

Թաղվէ<ընդ Թաղ վայր

Միծանցվէ<ընդ Միծանց վայր և այլն:

Ընդ նախդիրը վաղուց դուրս է եկել գործածությունից, իսկ մի քանի հոլովածների հետ գործածվող հնչյունափոխված վայր>վէր>վէ բառը դարձել է մասնիկ և դրվում է միջավայր, տարածություն, անցնելու տեղ նշող բառերի վրա:

Բարբառը ն եր գ ո յ ա կ ա ն հոլով չընի, և այդ իմաստն արտահայտվում է՝

1) Սեռական հոլովով կապի խնդրի և մէշ (<մեջ) կապի միջոցով. օրինակ՝ արտի մէշ, աշիշ մէշ, մըշ կյրլխուն, մըշ սըրտին և այլն:

2) Հայցական հոլովով կապի խնդրի և ինի (=մեջ) կապի միջոցով. օրինակ՝ Յէղներ կուրսան տաշու ինի (=եղները գաշտում կորան): Աման ինի շատ ճիւր տըծիմ (=Ամանի մեջ շատ ջուր պիտի լցնեմ): Տուն ինի (=տան մեջ), կյետ ինի (=գետի մեջ), կըթոց ինի (=կթոցի մեջ) և այլն:

3) Հայցական հոլովի միջոցով. օրինակ՝ Կոճեթտ կյեղ հոխալիւրմ կէր (=Կոճեթ գյուղում մի աղբյուր կար): Ուսկոր ալլուկավ տնա բողազ (=Ուսկորը արգելախից նրա կոկորդում): Խինանց արաւմ կէր ցոբեն (=Խինանցում մի ցոբենի արա կար): Հոնկոխ ձքնուկ շատ մարթ ժողվան (=Այն ժամանակ Ջնուկում շատ մարդ հավաքվեց): Շատխա սարեն Ընջ քլարկը կէն (=Շատախի սարերում մեծ քաղեր կային):

Հ Ո Վ Ո Վ Ո Ւ Մ

Բարբառն ունի 9 հոլովում՝ ի, ու, ան, վա(ն), օր, ոչ, կէ, օ, ա:

«Ի» հոլովում

Վերջավորութունները՝

Եզակի—սեռ. -ի, ար. -ի(-ին), բաց. -են, -ից, -մեն, մենեն, գործ. -ով, -մով, վե.

Հոգնակի—սեռ. $\begin{cases} -ու, \\ -ի \end{cases}$ ար. $\begin{cases} -ու (-ոն) \\ -ի (-ին) \end{cases}$, բաց. $\begin{cases} -ոց \\ -ից \end{cases}$, գործ.

-ով:

Գոյականներից շատերը պատկանում են այս հոլովման, որոնց թվում՝

1) Ա(տ) ձայնավորով վերջացող բառերը՝ ամբո, բոգո, բոկա, ընծո, ծրմո, շուշփո, սոսոնո, վրկա, փէսա, տավոնդո, տկոնջկոյո և այլն:

Բացառութիւն է խինո բառը, որը հոլովվում է ու հոլովիչով (խինու, խինուց):

Հոլովվելիս ա-ով վերջացող բառերի ա-ն սղվում է. օրինակ՝ ամբո—ամբի—ամբից, բոգո—բոգի—բոգից, ծրմո—ծրմի—ծրմից, փէսա—փէսի—փէսից և այլն: Բացառութիւն են ընծո—ընծոյի, վրկա—վրկայի, որոնց ա-ն չի սղվում:

Մ ա ն ո թ. —Բոգո բառը բացառականում -ից (բոգից) վերջավորութիւնից բացի ունի նաև -ուց (բոգուց), որը արդյունք է ու-ով հոլովվող թոչունների անունների համաբանութեան, ինչպես՝ առծիվ—առծվու—առծվուց, կաքլավ—կաքլվու—կաքլվուց, բոտո—բոտու—բոտուց, իսավ—իսավու—իսավուց և այլն:

Ա ձայնավորով վերջացող բառերի հոգնակին հոլովվում է ի հոլովիչով. օրինակ՝ ամբէքլ—ամբէքլի, բոգէքլ—բոգէքլի և այլն:

Մ ա ն ո թ. —Տըղա բառը, եթե հոգնակին կազմում է -էյ մասնիկով (տըղէքլ), հոլովվում է ի հոլովիչով (տըղէքլի): Իսկ եթե հոգնակին կազմում է -տեռ մասնիկով (տըղէտեր), այդ դեպքում հոլովվում է ու հոլովիչով (տըղէտիրու):

Հոլովման ընդհանուր պատկերը.

Ե զ ա կ ի	Հ ո գ ն ա կ ի
Ուղղ. տավոնդո (տավոնդէն)	տավոնդէքլ
Սեռ. տավոնդի	տավոնդէքլի
Տր. տավոնդի(-ն)	տավոնդէքլի(-ն)
Հայց. տավոնդո, դտավոնդին	(զ)տավոնդէքլ, (զ)տավոնդէքլի(-ն)
Բաց. տավոնդից	տավոնդէքլից
Գործ. տավոնդով	տավոնդէքլով

Մ ա ն ո թ .— ա (տ)-ով վերջացող բառերը բացառականում -են վերջավորություն չեն ստանում, այլ՝-ից:

2)-ութէն (<գրբ. -ութիւն) վերջածանցով գոյականները նույնպէս հոլովվում են ի հոլովիչով: Հոլովվելիս —ութէն ածանցի է-ն սղվում է. օրինակ՝ սրբալուծէն—սրբալուծնի, խորանութէն—խորանութնի, տղտրութէն—տղտրութնի և այլն:

Մ ա ն ո թ .— Գրարարում այս ածանցն ունեցող բառերը հոլովվում էին ներքին թեքմամբ՝ սրբութիւն-սրբութեան, հարսնութիւն-հարսնութեան: Ժամանակակից գրական հայերենում այս բառերի ներքին հոլովումը պահպանվել է եղ. սեռականում և տրականում, այնինչ բարբառում իսպառ վերացել է:

-ութէն ածանցով բառերը բարբառում հոգնակի չունեն:

3) Բազմաթիւ գոյականներ հոլովվում են ի հոլովիչով, այդ թիւում՝ գրաբարում է ներքին թեքման ենթարկվող բառերը, ինչպես և ու հոլովմամբ հոլովվող մեղր, ծաղր գոյականները:

տկոցան (<ազցան)—տկոցանի, տկոցանէն (-ից)

ասկ (<ազգ)—ասկի, ասկէն (ասկից), ասկով

տսկտկան (<ազգական)—տսկտկանի, տսկտկանէն (-ից), -ով

աթար (<աթար)—աթարի, աթարից (աթարէն)

աթու (<աթու)—աթուի, աթուից (աթուէն)

ալու (<ալու)—ալուի, ալուէն (ալուից)

հոկոնասա (<ականասա)—հոկոնասաի, հոկոնասաից

ականջ—տկոնջի, տկոնջէն (տկոնջից) տկոնջով

աղ—աղի, աղից (աղէն), աղով

աղանձ—աղանձի, աղանձէն (աղանձից), աղանձով

ախի (<աղբ)—ախիի, ախիից, (ախիէն), ախիով

հախալիւր (<աղբիւր)—հախալիւրի, հախալիւրէն (հախալիւրից)

լէղլակ (<աղեղնակ)—լէղլակի, լէղլակէն (-ից), -ով

աղիք (<աղիք)—աղիքի, աղիքից (-էն), -ով

աղուն—աղունի, աղունէն (աղունից), աղունով

աղքատ (<աղքատ)—աղքատի, աղքատից (աղքատէն, աղքատութեան մէնէն), աղքատով

աղթիկ (<աղթիք)—աղթիկի, աղթիկէն (-ից), աղթիկով

ամբոտ—ամբոտի, ամբոտէն (-ից), ամբոտով

ամու—ամուի, ամուից (-էն), ամուով

ամբ (<ամպ)—ամբի, ամբից (-էն), ամբով

առվտնտնութիւն—առվտնտնութիւն, առվտնտնութիւն

հոնապատ (<անապատ)—հոնապատի, հոնապատից (-էն),
հոնապատով (հոնապատովէ)

հոնդիւաք (<անդունդ)—հոնդիւաքի, հոնդիւաքից (-էն),
հոնդիւաքով (հոնդիւաքովէ)

անէսկ (<անէժք)—անէսկի, անէսկից (-էն), -ով

հունթ (<անթ)— հընթի, հընթից, հընթով

հընթըտակ (<անթատակ)—հընթըտակի, -ից, -ով

անթեղ—անթեղի, -ից, -ով

անթորոց (<անթեղոց)—անթորոցի, -ից (-էն), -ով

անիծ—անիծի, -ից, -ով

գլոհիք (<անկողին)—գլոհընքի, -ից (-էն), -ով

անձրով (<անձրե)—անձրովի, -ից, -ով

անուն—անունի (նաև՝ անվան), -ից, -ով

աշկերտ (<աշակերտ)—աշկերտի, -ից, -ով

ասեղ (<ասեղն)—ասեղի, -ից, -ով

աստղ—աստղի, -էն (-ից), -ով

էրուն (<արիւն)—էրընի, -էն (-ից), -ով

էրմունգ (<արմունկ)—էրմընգի, -ից, -ով

ափ (ծեռքի)— ափի, ափից, ափով

պոմբակ (<բամբակ)—պոմբակի, -էն (-ից), -ով

պորակամ (<բարեկամ)—պորակամի, -էն (-ից), -ով

պէրան (բերան)—պէրնի (պէնի), -ից, -ով

պերթ (<բերդ)— պիրթի, -ից, -ով

մընդիւտ (<բոտոտ)— մընդիւտի, -ից, -ով

պոն (բոն)—պոնի, պոնից, պոնով, պոնիւր, պոնիրու և այլն:

պիւվ (<բու)— պըվի, պըվից, պըվով

պոզկ (բոզկ)—պոզկի, -ից, -ով

տըժխոց (<դժոխք)—տըժխոցի, -էն (-ից), -ով

տիւս (<դուրս)—տըսի, տըսէն (տըսից), -ով

թեվ— թիվի, թիվից (նաև՝ թեվուց), թեվով

թեփ—թիփի, թիփից (նաև՝ թեփուց), թեփով

ժոժիկ—ժոժկի, ժոժկից (-էն), -ով

լէզու—լէզվի (նաև՝ լէզվու), լէզվից (նաև՝ լէզվուց), լէզվով

ծունդըր (<ծունը)— ծընդրի, -ից (-էն), -ով

կըծիք—կըծկի, -ից (-էն), -ով

կո (<կոյ)— կըվի, կըվից (կըվէն), կըվով

ծաղըր— ծաղրի, ծաղրից, ծաղրով

ծիւ (<ծու)—ծըվի, ծըվից (-էն, նաև՝ ծըվուց), ծըվով
 մատենեկ (<մատանի)—մատենեկի, -ից, -ով
 մեղըր—մեղրի, -ից (-էն), -ով
 մանուկ—մանուկի, -ից (-էն), -ով
 ունքչ (<յօնք)—ընքչի, -ընքչից, -ով
 ուսկոր—ուսկրի, ուսկրէն (-ից), -ով
 պուտուկ—պուտկի, -ից, -ով
 պըռուկ—պըռկի, -ից, օվ
 սէմքչ (<սեամ)—սէմքչի, -ից (-էն), -ով
 վիճակ—վիճկի, -ից (-էն), -ով
 ցորեն—ցորնի, -ից (-էն), -ով
 բըռիկ—բըռկի, (-էն), -ով
 թավ—թավի, թավից (-էն), -ով
 լեթ—լիթի, լիթից (-էն), -ով
 խուրիկ—խուրկի, խուրկից (-էն), օվ
 կուլուկ—լուկի, կուլուկից (-էն), -ով
 էրկինքչ—էրկընքչի, էրկընքչից (-էն, նաև՝ էրկնուց)
 քյումակ—քյումկի, քյումկէն (-ից), -ով

Մ ա ն ք. 1— Բառավերջի Ա-ն կորցրած գոյականների մեծ
 մասը որոշ հոլովաձևերում վերականգնում է Ա-ն. օրինակ՝
 խարս—խարսի, խարսնից (խարսնէն), խարսով
 ծեռ—ծեռի, ծեռնից (ծեռնէն), ծեռով
 մատ—մատի, մատնից (մատնէն), մատով
 մուկ—մըկի (նաև՝ մըկան), մըկնից (մըկնէն), մըկնով
 մութ—մըթի (նաև՝ մըթան), մըթնից (մըթնէն), մըթնով
 բոժ—բոժի, բոժնից (բոժնէն), բոժով

Մ ա ն ք. 2— Վերը ցուցակում բերված բառերի մեծ մասը
 եզակի բացառականում հավասարապես ստանում է Ա՝ -էն, Ա՝ -ից
 վերջավորություն: Դժվար է որևէ օրինաչափություն գտնել այդ
 գործածության մեջ, սակայն նկատելի է, որ ըստ սովորության,
 որոշ կապակցություններում հանդես է գալիս միևնույն բառի
 -էն-ով բացառականի ձևը, իսկ այլ կապակցություններում՝ -ից-ով
 ձևը: Բերենք մի քանի օրինակ.

«Կըն խալւորից լօթ չափ ցորեն խորշ կուզին» (Ան ծերունուց
 7 չափ ցորեն հարկ են ուզում):

«Արէ՞ իս կախվիր տն խալւորեն, ի՞նչ կուզիս տն խէխճ մար-
 տու մօտնէն» (Ինչո՞ւ ես կախվել արն ծերունուց, ի՞նչ ես ուզում
 արն խեղճ մարդից):

Մ ա ն ք.—Օժանդակ բայի ձևափոխությունը գրաբարի համեմատությունով.

ճերկա		անց. անկատար	
I դ. եմ > իմ	եմք > ինքի	էի > է	էաք > էնքի
II դ. ես > իս	էք > էքի	էիր > էս	էիք > էքի
III դ. է > ի	են > ին	էր > էր	էին > էն

Վաղակատարն ու անցյալի վաղակատարը կազմվում են վաղակատար դերբայով և օժանդակ բայի համապատասխան ձևերով: Վաղակատար դերբայի -իւ վերջավորությունը (խօսիր, կտրատցիր) անցյալի վաղակատարում, օժանդակ բայի անկատարի է հիմքի ազդեցությամբ, հնչյունափոխվում է -եթ-ի կամ -եթ-ի (հմմտ. վաղակատար՝ խըմիր ի, կիրիր ի, անց. վաղակատար՝ խըմէր է, կիրէր է):

Ապառնին ու անցյալի ապառնին կազմվում են ապառնի դերբայով և օժանդակ բայի համապատասխան ձևերով: Ապառնի դերբայի -իլու վերջավորությունը անցյալի ապառնիում, դարձյալ օժանդակ բայի անկատարի է հիմքի ազդեցությամբ, հնչյունափոխվում է -էլու-ի կամ -ելու-ի (հմմտ. ապառնի՝ ուտիլու իմ, խըմիլու իմ, անց. ապառնի՝ ուտէլու է, խըմէլու է):

Սահմանական ապառնին բարբառում քիչ գործածական է և

հաճախ փոխարինվում է հարկադրական եղանակի բայաձևերով (տուտիմ, տըխըմիմ և այլն):

Անցյալ կատարյալը, ինչպես գրաբարում և արդի հայերենում, պարզ ժամանակ է. կազմվում է բայերի անցյալի հիմքին դիմային վերջավորություններ կցելու միջոցով:

Վերջավորությունների կրած փոփոխությունները գրաբարի համեմատությամբ.

Ի ձայնավորով վերջավորություններ

I դ. ի > ի	աք > ինք
II դ. եր > եր	էք > էք
III դ. — —	ին > ին

ա ձայնավորով վերջավորություններ

I դ. ալ > ա	աք > անք
II դ. ար > ար	այք > արք
III դ. աւ > ավ	ան > ան

ԸՆԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ունի ապառնի և անցյալի ապառնի ժամանակներ: Ապառնին ձևով համընկնում է գրաբարի սահմանական ներկային, իսկ անցյալի ապառնին՝ գրբ. անցյալ անկատարին: Վերջավորությունները ենթարկվել են նույն փոփոխություններին, ինչ որ սահմանական ներկայինն ու անց. անկատարինը:

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Նույնպես ունի ապառնի և անց. ապառնի ժամանակներ, որոնք կազմվում են բղձական եղանակի համապատասխան ժամանակներից՝ տը կամ տ եղանակի չի ավելացմամբ: Ձայնավորով սկսվող բառերից առաջ դրվում է տ (օրինակ՝ տէթամ, տուտիմ, տուզիմ), իսկ բաղաձայնով սկսվող բառերից առաջ՝ տը (տըկյոմ, տըխոտիմ և այլն):

Տը (տ) մասնիկն առաջացել է պիտի եղանակից՝ պի վանկի կրճատմամբ և տի > տը > տ հնչյունափոխությամբ:

Տը (տ) մասնիկը միանում է բային այնպես, ինչպես կը մասնիկը, և չի կարելի բայից անջատ գրել:

Հարկադրական եղանակը գործածվում է նաև սահմանականի

ապառնի, պայմանականի ապառնի ու անցյալի ապառնի ժամանակների արժեքով:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ունի միայն ապառնի ժամանակ, երկրորդ դեմք՝ եզակի և հոգնակի թվով: Կա բուն հրամայական և արգելական հրամայական: Բուն հրամայականը կազմվում է բայերի անցյալի հիմքից՝ համապատասխան վերջավորությունների կցումով: Եզակիում ի խոնարհման բոլոր բայերի և ա խոնարհման ածանցավոր բայերի վերջավորությունն է -ի՝ (կընցնիմ—ընցի՛, կորցկիմ—որցկի՛, կըվոխում—վոխացի՛), իսկ ա խոնարհման պարզ բայերի վերջավորությունն է -ա՛ (խաղա՛, կարտա՛, աղա՛ և այլն): Պատճառական բայերը եզակիում ստանում են -ու վերջավորություն (յէոցցո՛ւ): Հոգնակիում բոլոր բայերի վերջավորությունն է -ե՛ք (ընցե՛ք, որցե՛ք, վոխացե՛ք, կորտացե՛ք և այլն): Արգելական հրամայականը կազմվում է մի՛ > մը > արգելական մասնիկով և ըզձական դերբայով (մըտա՛նի, մո՛ւտի, մըպի՛րի, մըկա՛րտ, մա՛ղա, մի՛տա և այլն): Հոգնակին կազմվում է -ե՛ք վերջավորությամբ (մըտա՛նեք, մըկա՛րտեք և այլն):

* * *

Շատախի ֆեոսանդաշտ գյուղախմբի (Կայնմեբան, Շիդան, Կադազիս, Առեղ գյուղերով), ինչպես և Կվերս գյուղի խոսվածքներում սահմանական ներկան ու անկատարը, հարկադրական ապառնին ու անց. ապառնին ունեն շարունակական ժամանակի բայաձևեր, որոնք կազմվում են ինի (=մեջ) մասնիկի միջոցով: Օրինակ՝ նողորէն կըզորկիմ ինի (=թմբուկ եմ խփում, թմբուկ խփելու մեջ եմ): Մարէն կով կըկըթի ինի (=մալրիկը կով է կթում, կով կթելու մեջ է): Ջոքջօ տուտտուն քլաղ կանէր ինի (=Ջաքոն տապալուտան հունձ էր անում, հունձ անելու մեջ էր): Տըլում ինի, տըկում ինի (=գնալու մեջ պիտի լինեմ, գալու մեջ պիտի լինեմ, կլինեմ):

¹ Շարունակականի բայաձևերում հանդես եկող ինի մասնիկն առաջացել է բարբառում տարածված ինի կապից, որ նշանակում է «մեջ» և պահանջում է հայցական հոլովով խնդիր: Օրինակ՝ զինքս էթու կյառ ինի (=իրեն գցեց զետի մեջ):

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

—Ի՞նչ վերջավորութեամբ ցերեպործական սեռի պարզ բայերի խոնարհումը

Այս բայերի խոնարհման բնորոշ հատկանիշը անց. կատար-
յալում ցոյցական հիմք և ի ձայնավորով վերջավորութուններ
ստանալն է:

Ս ա հ մ ա ն ա կ ա ն և դ ա ն ա կ

որցկել (<արձակել)

Ներկա.—կորցկիմ, կորցկիս, կորցկի

կորցկինք, կորցկէք, կորցկին

Անկատար.—կորցկէ, կորցկէս, կորցկէր

կորցկէնք, կորցկէք, կորցկէն

Փեսանդաշտ գյուղախմբի և Կվերս գյուղի խոսվածքներում
վերոհիշյալ ժամանակներին զուգահեռ գործածվում են շարունա-
կական ժամանակի բայաձևեր.

Շարունակ. ներկա.—կորցկիմ ինի, կորցկիս ինի և ալլն

Շարունակ. անց. անկատար.—կորցկէ ինի, կորցկէս ինի,

կորցկէր ինի և ալլն

Վաղակատար ժամանակ.—որցկիր իմ, որցկիր իս, որցկիր ի

որցկիր ինք, որցկէր էք, որցկիր ին

Անց. վաղակատար.—որցկէր է, որցկէր էս, որցկէր էր

որցկէր էնք, որցկէր էք, որցկէր էն

Ապառնի.—որցկիլու իմ, որցկիլու իս, որցկիլու ի

որցկիլու ինք, որցկէլու էք, որցկիլու ին

Անց. ապառնի.—որցկէլու է, որցկէլու էս, որցկէլու էր .

որցկէլու էնք, որցկէլու էք, որցկէլու էն

Անց. կատարյալ.—որցկըցի, որցկըցի, որցկից

որցկըցինք, որցկըցիք, որցկըցին

Ը դ ձ ա կ ա ն և դ ա ն ա կ

Ապառնի.—որցկիմ, որցկիս, որցկի

որցկինք, որցկէք, որցկին

Անց. ապառնի.—որցկէ, որցկէս, որցկէր

որցկէնք, որցկէք, որցկէն

Հ ա ր կ ա գ ր ա կ ա ն և դ ա ն ա կ

Ապառնի.—տորցկիմ, տորցկիս, տորցկի

տորցկինքլ, տորցկէքլ, տորցկին

Անց. ապառնի.—տորցկէ, տորցկէս, տորցկէր

տորցկէնքլ, տորցկէքլ, տորցկէն

Շարունակ. ապառնի.—տորցկիմ ինի, տորցկիս ինի և այլն

Շարունակ. անց. ապառնի.—տորցկէ ինի, տորցկէս ինի և այլն

Հ ր ա մ ա չ ա կ ա ն և դ ա ն ա կ

Բռն հրամայական՝ տրցկի՛—տրցկէ՛քլ

Արգելական՝ մո՛րցկի—մո՛րցկէքլ

«Պրցկել» բալի նման են խոնարհվում՝

զինել (<զենուլ)— կըզինիմ, կըզէնէ, զինըցի (III դ. զինից):

տըզինիմ, տըզէնէ և այլն

կախել— կըկախիմ, կըկախէ, կախըցի (III դ. կախից):

տըկախիմ, տըկախէ

ճէրել (=բամել)— կըճէրիմ, կըճէրէ, ճէրըցի (III դ. ճէրից):

տըճէրիմ, տըճէրէ

ռվել—կռվիմ, կռվէ, ռվըցի, տռվիմ, տռվէ

պոճել (<բոճել)—կըպոճիմ, կըպոճէ, պոճըցի, տըպոճիմ,

տըպոճէ

պըրտել (<բըրդել)—կըպըրտիմ, կըպըրտէ, պըրտիցի, տը-

պըրտիմ, տըպըրտէ

կյըզել (<զզել)—կըկյըզիմ, կըկյըզէ, կյըզըցի, տըկյըզիմ,

տըկյըզէ

կըլորել (<զլորել)— կըկըլորիմ, կըկըլորէ, կըլորիցի, տըկը-

լորիմ, տըկըլորէ

տիղել (<դեղել)—կըտիղիմ, կըտեղէ, տիղըցի, տըտիղիմ,

տըտեղէ

իփել (<եփել)—կիփիմ, կեփէ, էփըցի, տիփիմ, տեփէ,

ընդրել (<ընտրել)— կըընդրիմ, կընդրէ և այլն

թաղել— կըթաղիմ, կըթաղէ և այլն

թափել— կըթափիմ, կըթափէ...

թըխել— կըթըխիմ, կըթըխէ...

թըռծել, ժողվել, լըկել, լափել, խառնել, խաշել, խարտել, խիթել
(=հրել), խըլել, խըմել, խընայել, խընթրել, խոթել, ծալել, ծա-

խել, ծածկել, ծամել, ծիփել (<ծեփել), կանչել, կապել, կարել, կրթել, կրնքչել, կըշռել, կըռծել, խալել (<հալել), խանել (<հանել), խիրկել (<հերկել), խինել (<հինել), ծէնել (<ծաշնել), իսկել (<ծգել), ծիվել (<ծկել), ճամբխել (<ճանապարհել), ճարել, մաշկել, մըկըրտել, մորթել, ըստկել (<ստակել), շարել, շաժել (<շարժել), շիխճել (<շեղջել), շինել, ուլրել (<ոլորել), օղօղել (<ողողել), հօրօխել (<ուղարկել), պախել (<պահել), պաշտել, պատռել, պատմել, փսակել, ճընջխել (<ջախջախել), ճորակել (<ջարգել), սիրտել (<սերտել), ճըրճընել (<ջրցանել), սպանել, սըրպել (<սըրել), սկըսել, վոլել, կուրսել, վոռել, վոստկել (<վաստակել), վորել, վորցել, աաշել, տապկել (<տապակել), ցանել, ցըվրել (<ցրուել), փոթթել, փորտտել, փխտել, փըշրել, փոխել, փորել, փործել, ուզել, քյամել, քջեշել, քջիթթել, քջանել, օխնել (<օրհնել), ուրուրել (<օրօրել), տիլտիել, բամփել, բըլտվել, գգօմփել, թոլել, թոխկել, թաշել, թեղել, կըքչել, պլինթրուկել, ճըմել:

Մ ա ն ո թ.— Նույն ձևով են խոնարհվում նաև բազմապատկապան կերպածանց ունեցող բայերը, ինչպես՝

պտտըռտել—կըպտտըռտիմ, կըպտտըռտէ, պտտըռտիցի և ալլն: կոտըռտել—կըկոտըռտիմ, կըկոտըռտէ, կոտըռտիցի...

ճորթըրտել—կըճորթըրտիմ, կըճորթըրտէ, ճորթըրտիցի...

կըտըռտել—կըկըտըռտիմ, կըկըտըռտէ, կըտըռտիցի և ալլն:

-ել վերջավորութեամբ չեզոք սեռի պարզ բայերի խոնարհումը

Այս բայերի խոնարհման տարբերությունը նախորդ բայերից անց. կատարյալում արմատական հիմք և ա ձայնավորով վերջավորություններ ստանալն է:

Սահմ. ներկա.— կըխանգչիմ, կըխանգչիս, կըխանգչի...

անկատար.— կըխանգչէ, կըխանգչէս, կըխանգչէր...

հարակատար.—խանգչոժ իմ (խանգչիւկ իմ), խանգչոժ իս (խանգչիւկ իս), խանգչոժ ի և ալլն

անց. հարակատար.—խանգչոժ է (խանգչիւկ է), խանգչոժ էս (խանգչիւկ էս) և ալլն:

վաղակատար.—խանգչիր իմ, խանգչիր իս...

անց. վաղակատար.—խանգչեր է, խանգչեր էս...

անց. կատարյալ.—խանգչո, խանգչոր, խանգչով
խանգչոնքլ, խանգչոքլ, խանգչոն

Նույն ձևով են խոնարհվում՝

թըմբրել (<թմրիմ)— կըթըմբրիմ, կըթըմբրէ, թըմբրա..

թօռօմել— կըթօռօմիմ, կըթօռօմէ, թօռօմա...

հոճհղել (<յաջողիմ)— կըհոճհղիմ, կըհոճհղէ, հոճհղա

նեխել— կընեխիմ, կընեխէ, նեխա

նըստել— կընըստիմ, կընըստէ, նըստա

ուռել (<ուռչիմ)— կուռիմ, կուռէ, ուռա

պառկել— կըպառկիմ, կըպառկէ, պառկա, տըպառկիմ, տը-
պառկէ և այլն:

ապրել— կապրիմ, կապրէ, ապրա

սըկել— կըսըկիմ, կըսըկէ, սըկա

ծըլել— կըծըլիմ, կըծըլէ, ծըլա, ծըլար, ծըլավ

կայնել (<կանգնել)— կըկայնիմ, կըկայնէ, կայնա

մըկյլել (<մպլիմ)— կըմըկյլիմ, կըմըկյլէ, մըկյլա

մըսնել (<մրսիմ)— կըմըսիմ, կըմըսէ, մըսա

ցոմքլել— կըցոմքլիմ, ցոմքլա

փըտել— կըփըտիմ, փըտա

քյընել— կըքյընիմ, քյընա

կատղել— կըկատղիմ, կատղա

ծաղկել— կըծաղկիմ, ծաղկա

տտարել (<դադարիմ)— կըտտարիմ, տտարա

տշկտռել— կտշկտռիմ, տշկտռա

գյըխշել¹— կըգյըխշիմ, կըգյըխշէ, գյըխշա, գյըխշար

դոպքլել— կըդոպքլիմ, դոպքլա

ժըրել— կըժըրիմ, կըժըրէ, ժըրա

կոռմել— կըկոռմիմ, կոռմա

ռըկել— կըռըկիմ, ռըկա

քյըռխել— կըքյըռխիմ, քյըռխա

փըթխել— կըփըթխիմ, փըթխա

տըզկել— կըտըզկիմ, տըզկա

ծոցւորել— կըծոցւորիմ, ծոցւորո

տշխտանել— կտշխտանիմ, տշխտանա, տշխտանար, տշխտանավ

հոկտխել— կըհոկտխիմ, կըհոկտխէ, հոկտխա, հոկտխար և այլն:

Մ ա ն ք. 1— Նշված ձևով են խոնարհվում ներգործական
աւելի հետևյալ բայերը՝ սովրել (<սովորել)— սովրա, սովրար:

¹ «Գյըխշել» բայը հանդիպում է նաև «գյըխշնել» ձևով:

ռովրավ, խավնել (<հաւանել)—խափնա, իրափնար, խափնավ
տղտճել (<աղաչել)—տղտճա, տղտճար, տղտճավ:

Մ ա ճ ո թ. 2— ել-ով վերջացող շեղոք սեռի մի քանի պարզ
բայեր խոնարհվում են ներգործականների նման:

բյելել (<բայլել)— բյելցի, բյելցիր, բյելից
խաճել (<հաջել)—խաճըցի, խաճըցիր, խաճից
վազել (<վազել)—վազըցի, վազըցիր, վազից
ողոթել—ողոթիցի, ողոթիցիր, ողոթից

**—եւ վերջավորութեամբ սոսկածանցավոր բայերի
խոնարհումը**

Այս բայերի խոնարհմանը բնորոշ է այն, որ անց. կատարյա-
լի հիմքում կորցնում են իրենց սոսկածանցը, ստանում են արմա-
տական հիմք և ա ձայնավորով վերջավորություններ:

ընցնել (<անցանիմ)

Սահմ. ներկա.— կընցնիմ, կընցնիս, կընցնի, կընցնինք,
կընցնէք, կընցնին

անկատար.— կընցնէ, կընցնէս, կընցնէր և այլն

հարակատար.— ընցուկ իմ (ընցած իմ), ընցուկ իս, ընցուկ
ի, ընցուկ ինքյ, ընցուկ էքյ, ընցուկ ին

անց. հարակատար.— ընցուկ է, ընցուկ էս, ընցուկ էր

ընցուկ էնքյ, ընցուկ էքյ, ընցուկ էն

վաղակատար.— ընցիր իմ, ընցիր իս, ընցիր ի

ընցիր ինքյ, ընցէր էքյ, ընցիր ին

անց. վաղակատար.— ընցէր է, ընցէր էս, ընցէր էր

ընցէր էնքյ, ընցէր էքյ, ընցէր էն

ապառնի.—ընցնիլու իմ, ընցնիլու իս...

անց. ապառնի.— ընցնէլու է, ընցնէլու էս...

անց. կատարյալ.— ընցա, ընցար, ընցավ

ընցանքյ, ընցաքյ, ընցան

Ռձծական ապառնի.— ընցնիմ, ընցնիս, ընցնի...

անց. ապառնի.— ընցնէ, ընցնէս, ընցնէր...

Հարկադր. ապառնի.—տընցնիմ, տընցնիս, տընցնի

տընցնինքյ, տընցնէքյ, տընցնին

անց. ապառնի.— տընցնէ, տընցնէս, տընցնիր...

Հրամայական.— ընցի՛— ընցէ՛քյ

արգել.— մը՛նցնի— մը՛նցնէքյ կամ մը՛նցէքյ

Նույն ձևով են խոնարհվում՝

խաղչենել (<աղանել)—կըխաղչենիմ, խաղչո
ընգչենել (<անկանիմ)—կընգչենիմ, ընգչո
պըլենել (<փլանիմ)—կըպըլենիմ, պըլա
պիւանել (<բուսանիմ)— կըպիւանիմ, պիւա
պըռծենել (<պըծանիմ)— կըպըռծենիմ, պըռծա
փախենել (<փախչիմ)— կըփախենիմ, փախա
փըրթենել (<փրթանիմ)— կըփըրթենիմ, փըրթա
տըպենել (<դիպանել)— կըտըպետիմ, տըպա

իլենել (<ելանել)—կիլենիմ, էլո

թըռնել—կըթըռնիմ, թըռա

իճնել (<իջանել)—կիճնիմ, էճո

լըսնել—կըլըսնիմ, լըսա

տիսնել (<տեսանել)— կըտիսնիմ, կըտեսնէ, տեսա

խէժենել (<հեծանել)— կըխէժենիմ, խէժա

մըտնել (<մտանել)— կըմըտնիմ, մըտա

գըլիշնել— կըգըլիշնիմ, գըլիշա

խատնել (<հատանել)— կըխատնիմ, խատա

խըլըսնել— կըխըլըսնիմ, խըլըսա

կընդնել (<գտանել)—կըկընդնիմ, կըկընդնէ, կընդո

Մ ա ճ ո ք.— Օծնել (<օծանել) բայը թեև վերոհիշյալ բայերի
տիպին է պատկանում, բայց անց. կատարյալում պահում է ն
սոսկածանցը, ունի ցոյական հիմք և ի ձայնավորով վերջավորու
թյուններ.

Սաճմ. ներկա.— կօծնիմ, կօծնիս...

անկատար.— կօծնէ, կօծնէս...

անց. կատարյալ.— օծնըցի, օծնըցիր, օծնից

օծնըցինք, օծնըցիք, օծնըցին:

-ալ վերջավորութիւնով պարզ բայերի խոնարհումը

ծըծղալ (<ծիծաղիմ)

Ս ա հ մ տ ն ա կ ա ն ե դ ա ն ա կ

ներկա.— կըծըծղամ, կըծըծղաս, կըծըծղա

կըծըծղանք, կըծըծղէք, կըծըծղան

անկատար.— կըծըծղէ, կըծըծղէս, կըծըծղէր

կըծըծղենք, կըծըծղէք, կըծըծղէն

վաղակատար.— ծրծղացիր իմ, ծրծղացիր իս, ծրծղացիր ի
 ծրծղացիր ինքյ, ծրծղացէր էքյ, ծրծղացիր ին
 անց. վաղակ.— ծրծղացէր է, ծրծղացէր էս, ծրծղացէր էր
 ծրծղացէր էնքյ, ծրծղացէր էքյ, ծրծղացէր էն
 ապառնի.— ծրծղալու իմ, ծրծղալու իս, ծրծղալու ի
 ծրծղալու ինքյ, ծրծղալու էքյ, ծրծղալու էն
 անց. ապառնի.— ծրծղալու է, ծրծղալու էս, ծրծղալու էր
 ծրծղալու էնքյ, ծրծղալու էքյ, ծրծղալու էն
 անց. կատարյալ.— ծրծղացի, ծրծղացիր, ծրծղաց
 ծրծղացինքյ, ծրծղացիրքյ, ծրծղացին

Ը ղ ձ ա կ ա ն ն ե ղ ա ն ա կ

ապառնի.— ծրծղամ, ծրծղաս, ծրծղա
 ծրծղանքյ, ծրծղէքյ, ծրծղան
 անց. ապառնի.— ծրծղէ, ծրծղէս, ծրծղէր
 ծրծղէնքյ, ծրծղէքյ, ծրծղէն

Հ ա ր կ ա դ ր ա կ ա ն ն ե ղ ա ն ա կ

ապառնի.— տրծրծղամ, տրծրծղաս, տրծրծղա...
 անց. ապառնի.— տրծրծղէ, տրծրծղէս, տրծրծղէր...

Հ ր ա մ ա չ ա կ ա ն ն ե ղ ա ն ա կ

ծրծղա՛—ծրծղացէ՛քլ
 արգել.— մըծը՛ծղա, մըծը՛ծղէքլ

Ն ու չ ն ձ ն ո վ ե ն խ ո ն ա ր հ վ ու մ՝

տրտծալ—կտրտծամ, կտրտծէ, տրտծացի

Մ ա ն ո ր .—Բարբառում «տրտծալ» բա՛ն ունի ներգործական
 սեռի իմաստ և նշանակում է «արածացնել», օրինակ՝ տղխոր կո-
 րտծամ (= ոչխոր եմ արածացնում):

կլնվալ—կըկլնվամ, կըկլնվէ, կլնվոցիր իմ, կլնվոցեր է
 կլնվոցի, տըկլնվամ, տըկլնվէ, կլնվա՛—կլնվոցէ՛քլ,
 մըկլն՛վա, մըկլն՛վէքլ:

տրտվալ (<երեիմ)—կտրտվամ, կտրտվէ, տրտվացի
 կըկլտլ (<կակազել)—կըկըկզամ, կըկըկզէ, կըկլոցի

Հ զ ձ ա կ ա ն և զ ա ն ա կ

ապառնի.— հիմնամ, հիմնաս, հիմնա
անց. ապառնի.— հիմնէ, հիմնէս, հիմնէք...

Հ ա ռ կ ա դ ր ա կ ա ն և զ ա ն ա կ

ապառնի.— տըհիմնամ, տըհիմնաս, տըհիմնա...
անց. ապառնի.— տըհիմնէ, տըհիմնէս, տըհիմնէք...

Հ ր ա մ ա չ ա կ ա ն և զ ա ն ա կ

հիմցի' — հիմցէ'ք
մըհի'մնա — մըհի'մնէք կամ մըհի'մցէք

Նոյն կերպ են խոնարհւում՝

տծ չընալ (<ամաչել)—տծ չըցա
հէրտըփալ (<երգնուլ)—հէրտըվցա
ծորտփալ (<ծարաւիլ)—ծորտվցա
ճոնչընալ (<ճանաչել)—ճոնչըցա
պորկոնալ (<բարկանալ)—պորկոցա
տիմնալ (<դիմանալ)—տիմցա
լնիկոնալ (<լոգանալ)—լնիկոցա
տսկոնալ (=դեմ առնել)—տսկոցա
զորմոնալ—զորմոցա
լէտոնալ (=ուշանալ)—լէտոցա
վոխոնալ—վոխոցա
մոտոնալ—մոտոցա և այլն:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

«Վ» ածանց ունեցող թե՛ կրավորական սեռի, թե՛ կրավորա-
ւձև չեզոք սեռի բայերը խոնարհւում են ի խոնարհիչով և անցյալ
կատարյալում ստանում են ա ձայնավորով վերջավորություններ:
Խոնարհման պատկերը.
պըռնըվել (=բռնվել)

Ս ա հ մ ա ն ա կ ա ն և զ ա ն ա կ

ներկա.—կըպըռնըվիմ, կըպըռնըվիս, կըպըռնըվի
կըպըռնըվինք, կըպըռնըվէք, կըպըռնըվին

անկատար.— կըպըռնըվէ, կըպըռնըվէս, կըպըռնըվէր
կըպըռնըվէնք, կըպըռնըվէք, կըպըռնըվէն
հարակատար.— պըռնուկ իմ (կամ՝ պըռնըվուկ իմ)

պըռնուկ իս (պըռնըվուկ՝ իս)

պըռնուկ ի (պըռնըվուկ ի)

պըռնուկ ինք (պըռնըվուկ ինք)

պըռնուկ էք (պըռնըվուկ էք)

պըռնուկ ին (պըռնըվուկ ին)

անց. հարակատար.— պըռնուկ է (պըռնըվուկ է)

պըռնուկ էս (պըռնըվուկ էս)

պըռնուկ էր (պըռնըվուկ էր) և այլն:

վաղակատար.— պըռնըվիր իմ, պըռնըվիր իս, պըռնըվիր ի

պըռնըվիր ինք, պըռնըվէր էք, պըռնըվիր ին

անց. վաղակատար.— պըռնըվէր է, պըռնըվէր էս, պըռնըվէր էր

պըռնըվէր էնք, պըռնըվէր էք, պըռնըվէր էն

ապառնի.— պըռնըվիլու իմ, պըռնըվիլու իս, պըռնըվիլու ի...

անց. ապառնի.— պըռնըվէլու է, պըռնըվէլու էս, պըռնըվէլու էր

անց. կատարյալ.— պըռնըվա, պըռնըվար, պըռնըվաժ

պըռնըվանք, պըռնըվաք, պըռնըվան

Ը ղ ձ ա կ ա ն ե ղ ա ն ա կ

ապառնի.— պըռնըվիմ, պըռնըվիս, պըռնըվի

պըռնըվինք, պըռնըվէք, պըռնըվին

անց. ապառնի.— պըռնըվէ, պըռնըվէս, պըռնըվէր

պըռնըվէնք...

Հ ա ր կ ա դ ր ա կ ա ն ե ղ ա ն ա կ

ապառնի.— տըպըռնըվիմ, տըպըռնըվիս, տըպըռնըվի...

անց. ապառնի.— տըպըռնըվէ, տըպըռնըվէս, տըպըռնըվէր...

Հ ր ա մ ա յ ա կ ա ն ե ղ ա ն ա կ

պըռնըվի՛ր — պըռնըվէ՛ք

մըպը՛ռնըվի — մըպը՛ռնըվէք

Կ ր ա վ ո Ր ա ձ և չ ե զ ո ք ս ե ո ի ր ա յ ե Ր ի ց՝

կլոնդլոտովել (<գանգատիլ) — կրկոնդլոտովիմ, կլոնդլոտովա

պոպոնձիլ (<պապանձիլ) — կրպոպոնձիմ, պոպոնձիա

Թուփուփիկ (<Թաալիմ)— կըթուփուփիմ, Թուփուփա
փըթթըվիկ (<փթթիկ)— կըփըթթըվիմ, փըթթըվա
լումըսփիկ—կըլումըսփիմ, լումըսփա
խակիփիկ—կըխակիփիմ, խակիփա
հոուըշփիկ—կըհոուըշփիմ, հոուըշփա

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Պատճառական բայերը նույնպես խոնարհվում են ի խոնարհիչով: Անցյալ կատարյալում, ի տարբերություն կրավորական բայերի, ստանում են -ի ձայնավորով վերջավորություններ: Կատարյալի եզակի Յ-րդ դեմքում պատճառական բայերը, տարբերվելով սովորական բայերից, ունեն -ոց վերջավորություն, որը գալիս է գրբ. նույն բայերի եզակի Յ-րդ. դեմքի -ոյց բաղադրիչից (մատուցի— մատույց, հատուցի— հատույց):

Պատճառական բայերի եզակի հրամայականը կազմվում է -ու վերջավորությամբ, իսկ հոգնակին և արգելականը՝ սովորական ձևով:

Խոնարհման պատկերը

Լիկություն (<լոգացուցանել)

Ս ա հ մ ա ն ա կ ա ն ե դ ա ն ա կ

ներկա.—կըլիկոցցիմ, կըլիկոցցիս, կըլիկոցցի
կըլիկոցցինք, կըլիկոցցեսք, կըլիկոցցին
անկատար.—կըլիկոցցես, կըլիկոցցես, կըլիկոցցես
կըլիկոցցենք, կըլիկոցցեսք, կըլիկոցցեն
ապառնի.—լիկոցցիլու իմ, լիկոցցիլու իս...
անց. ապառնի.—լիկոցցելու է, լիկոցցելու էս...
անց. կատարյալ.—լիկոցցի, լիկոցցիր, լիկոցցոց
լիկոցցինք, լիկոցցիք, լիկոցցիր

Ը դ ձ ա կ ա ն ե դ ա ն ա կ

ապառնի.—լիկոցցիմ, լիկոցցիս, լիկոցցի...
անց. ապառնի.—լիկոցցես, լիկոցցես, լիկոցցես...

Հ ա ր կ ա դ ր ա կ ա ն ե դ ա ն ա կ

ապառնի.—աըլիկոցցիմ, աըլիկոցցիս...
անց. ապառնի.—աըլիկոցցես, աըլիկոցցես...

Հրամայական և դանակ

լնկոցցո՛ւ—լնկոցցէ՛ք
մըլն՛կոցցի—մըլն՛կոցցէք

Նույն ձևով են խոնարհվում՝

լեռցցել, պտրկոցցել, խրմցցել, կերցցել, աղղցցել, թըռցցել, կոլ-
նըրցցել, առարըրցցել, քըրնցցել, տեսցցել և այլն:

Մ ա ն ո թ. 1—Հարցանել բայը բարբառում շփոթվելով պատ-
ճառական բայերի հետ, դարձել է խորցցել և խոնարհվում է պատ-
ճառական բայերի նման:

Սահմ. ներկա.—կըխորցցիմ, կըխորցցիս...

անց. կատարյալ.—խորցցի, խորցցիր, խորցցոց
խորցցինք, խորցցիք, խորցցին

Հրամայական.—խորցցո՛ւ—խորցցէ՛ք
մըխո՛րցցի—մըխո՛րցցէք

Մ ա ն ո թ. 2—Մըտնել և ընցնել բայերի պատճառականը
կազմվում է մի փոքր այլ կերպ՝ ոչ թե ցց, այլ ուց ածանցով. մը-
տուցել, ընցուցել: Այդ բայերի խոնարհումը ունի հետևյալ պատ-
կերը:

Սահմ. ներկա.— կըմըտուցիմ, կըմըտուցիս, կըմըտուցի...

կընցուցիմ, կընցուցիս, կընցուցի...

անկատար.— կըմըտուցէ, կըմըտուցէս, կըմըտուցէր...

կընցուցէ, կընցուցէս, կընցուցէր...

ապառնի.— մըտուցիլու իմ, մըտուցիլու իս...

ընցուցիլու իմ, ընցուցիլու իս...

անց. ապառնի.— մըտուցէլու է, մըտուցէլու էս...

ընցուցէլու է, ընցուցէլու էս...

վաղակատար.— մըտուցիր իմ, մըտուցիր իս...

ընցուցիր իմ, ընցուցիր իս...

անց. վաղակատար.— մըտուցէր է, մըտուցէր էս...

ընցուցէր է, ընցուցէր էս...

անց. կատարյալ.—մըտուցի, մըտուցիր, մըտոց (նաև՝ մըտը-
ցոց)

ընցուցի, ընցուցիր, ընցոց...

Բղծական ապառնի.— մըտուցիմ, մըտուցիս, մըտուցի...

ընցուցիմ, ընցուցիս, ընցուցի...

անց. ապառնի.— մըտուցէ, մըտուցէս, մըտուցէր...

ընցուցէ, ընցուցէս, ընցուցէր...

Հարկադր. ապառնի.— տըմըտուցիմ, տըմըտուցիս, տըմը-
տուցի...

տընցուցիմ, տընցուցիս, տընցուցի...

անց. ապառնի.— տըմըտուցէ, տըմըտուցէս, տըմըտուցէր...
տընցուցէ, տընցուցէս, տընցուցէր...

Հ ր ա մ ա յ ա կ ա ն ե ղ ա ն ա կ

մըտո՛ւ— մըտուցէ՛ք

ընցո՛ւ— ընցուցէ՛ք

մըմը՛տուցի— մըմը՛տուցէք

մը՛նցուցի—մը՛նցուցէք

Մ ա ն ո թ. 3.—Վըրցուցել բայը խոնարհվում է մըտուցել և
ընցուցել պատճառական բայերի նման:

Սահմ. ներկա.— կըվըրցուցիմ, կըվըրցուցիս...

անց. կատարյալ.—վըրցուցի, վըրցուցիր, վըրցոց

Հրամայական.— վըրցո՛ւ— վըրցուցէ՛ք

մըվը՛րցուցի— մըվը՛րցուցէք

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

Անկանոնությունները մեծ մասամբ դրսևորվում են անցյալ
կատարյալում և նրա հիմքից կազմված բուն հրամայականում:

Անել (<առնել)

Սահմ. ներկա.—կանիմ, կանիս, կանի

կանինք, կանեք, կանին

անց. կատարյալ.— արի, արիր, արավ,

արինք, արիք, արին:

Հրամայական.—արա՛—արէ՛ք

մա՛նի—մա՛նեք

Մ ա ն ո թ.—Անել բայի նախաձևն է առնել, որտեղ բայար-
մատը ար-ն է, իսկ ն-ն, որից առաջ արմատի ր-ն հնչյունափոխ-
վել է ո-ի, սոսկածանց է: Խոնարհման ժամանակ բարբառում կա-
տարյալի հիմքում վերականգնվում է ար արմատը, իսկ ն սոսկա-

ժանցն ընկնում է, ինչպես կանոնավոր բայերի անց. կատարյալում (հմմտ. մըտնել— մըտա, տիսնել— տեսա և այլն):

Առնել (<առնուլ)

Սահմ. ներկա.—կառնիմ, կառնիս, կառնի
կառնինքյ, կառնէքյ, կառնին
անց. անկատար.— կառնէ, կառնէս, կառնէր...
անց. կատարյալ.— առի, առիր, առից
առինքյ, առիքյ, առին
Հրամայական.— ա՛ռ, առա՛—առէ՛քյ
մա՛ռնի— մա՛ռնէքյ

Տանել

Սահմ. ներկա.—կըտանիմ, կըտանիս, կըտանի
կըտանինքյ, կըտանէքյ, կըտանին
անց. անկատար.— կըտանէ, կըտանէս, կըտանէր...
անց. կատարյալ.— տարա, տարար, տարալ
տարանքյ, տարաքյ, տարան
Հրամայական.— տա՛ր—տարէ՛քյ
մըտա՛նի— մըտա՛նէքյ

Տընել (<դնել)

Սահմ. ներկա.—կըտընիմ, կըտընիս, կըտընի
կըտընինքյ, կըտընէքյ, կըտընին
անց. անկատար.— կըտընէ, կըտընէս, կըտընէր...
անց. կատարյալ.— տըրի, տըրիր, *իտի, տըրինքյ, տըրիքյ,
տըրին
Հրամայական.— տի՛ր, տի՛—տըրէ՛քյ
մըտը՛նի— մըտը՛նէքյ

Մ ա ն ք .—Տանել, տընել (<դնել) բայերի անց. կատարյալում հանդես եկող տար, դիր հիմքերը, Մ. Աբեղյանի բացատրությամբ, ծագում են հրամայականի տա՛ր, դի՛ր բայաձևերից (տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 345):

Տալ

Սահմ. ներկա.—կըտամ, կըտաս, կըտա
կըտանքյ, կըտէքյ, կըտան
անց. անկատար.— կըտէ, կըտէս, կըտէր...

անց. կատարյալ.—տրվի, տրվիր, *իտու, տրվինք, տրվիք,
տրվին
Հրամայական.— տո՛ւ, տո՛ւր—տրվէ՛ք
մի՛ տա— մըտը՛վէք

Մ ա ճ ո թ.—Տալ բայը զբաբարում ուներ երկու հիմք՝ տա և տու, որոնցից առաջինը հանդես էր գալիս իբրև ներկայի, իսկ երկրորդը՝ իբրև անցյալի հիմք։ Այդ երկու հիմքերն էլ բարբառում պահպանվել են։ Տու-ն ձայնավորից առաջ օրինաչափորեն դարձել է արվ (տրվի, տրվիր և այլն), իսկ բաղաձայնից առաջ և աեկախ դիրքում մնացել է անփոփոխ (տուր, տու, իտու)։

Լուլ (<լալ)

Սահմ. ներկա.—կըլում, կըլուս, կըլու
կըլունք, կըլեք, կըլոն
անց. անկատար.—կըլէ, կըլես, կըլեր...
անց. կատարյալ.—լուցի, լուցիր, *էլուց
լուցինք, լուցեք, լուցին
Հրամայական.—լո՛ւ—լուցէ՛ք
մի՛ լո—մի՛ լուցեք (մը՛ լեք)։

Թըղնել (<թողուլ)

Սահմ. ներկա.—կըթըղնիմ, կըթըղնիս, կըթըղնի
կըթըղնինք, կըթըղնեք, կըթըղնին
անց. անկատար.— կըթըղնէ, կըթըղնես, կըթըղներ...
անց. կատարյալ.— թըղի, թըղիր, *էթող
թըղինք, թըղեք, թըղին
Հրամայական.—թո՛ղ—թըղէ՛ք
մըթը՛ղնի— մըթը՛ղնեք

Պիրել (<բերել)

Սահմ. ներկա.— կըպիրիմ, կըպիրիս, կըպիրի
կըպիրինք, կըպիրեք, կըպիրին
անց. անկատար.— կըպերէ, կըպերես, կըպերեր...
անց. կատարյալ.—պիրի, պիրիր, *իպի
պիրինք, պիրեք, պիրին
Հրամայական.—պի՛ր—պերէ՛ք
մըպի՛րի— մըպե՛րեք

Պոռնալ (<բանալ)

Սահմ. ներկա.—կրպտոնամ, կրպտոնաս, կրպտոնա
կրպտոնանքլ, կրպտոնէքլ, կրպտոնան
անց. անկատար.—կրպտոնէ, կրպտոնէս, կրպտոնէր...
անց. կատարլալ.—պոցի, պոցիր, *էպոց
պոցինքլ, պոցիքլ, պոցին
Հրամայական.—պո'ց—պոցէ'քլ
մըպո'նա—մըպո'ցէքլ

Պոռնալ (<բանալ)

Սահմ. ներկա.—կրպտոնամ, կրպտոնաս, կրպտոնա
կրպտոնանքլ, կրպտոնէքլ, կրպտոնան
անց. անկատար.—կրպտոնէ, կրպտոնէս, կրպտոնէր...
անց. կատարլալ.—պոռցի, պոռցիր, *էպոռց
պոռցինքլ, պոռցիքլ, պոռցին
Հրամայական.—պոռցի'—պոռցէ'քլ
մըպո'նա—մըպո'նէքլ

Ձորկել

Սահմ. ներկա.—կըզորկիմ, կըզորկին, կըզորկի
կըզորկինքլ, կըզորկէքլ, կըզորկին
անց. կատարլալ.—զորկըցի, զորկըցիր, *էզոր
զորկըցինքլ, զորկըցիքլ, զորկըցին
Հրամայական. զո'րկ, զո'ր—զորկէ'քլ
մըզո'րկի—մըզո'րկէքլ

Մ ա ն ո թ. 1—Տընել, տալ, լուլ, թըղնել, պիրել, պոռնալ, պոռ-
նալ, զորկել բաղերի անց. կատարլալի եղակի երրորդ դեմքում
(աստղանիշերով նշան արված) բաղահիմքը սկզբից ունի է կամ ի,
որը գրաբարյան նույն բաղերի եղակի 3-րդ դեմքում հանդես եկող
է նախահավերժածն է: Այսպես՝

տընել (<դնել) - իաի<եզ
տալ (<տալ)—իտու<եա
լու (<լալ)—էլոց<ելաց
թըղնել (<թողուլ)—էթոզ<եթոզ
պիրել (<բերել)—իպի<եբեր
պոռնալ (<բանալ)—էպոց<եբաց

պտռնալ (<բառնալ)—էպտոնց<երարձ

զորկեի (<զարկանեի)—էզոր<եզար

Մ ա ճ ո ր. 2.—Տընել, տանել բայերի իսի (=դրեց), իտու (=տվեց) բայաձևերի բառավերջի ի, ու ձայնավորները հիմքի ձայնավորներ են (<դի, տու հիմքերից), որոնք գրաբարի նույն բայաձևերում չեն պահպանվել (եղ, ետ), իսկ բարբառում հանդես են գալիս (իտի, իտու): Այս բայաձևերը և՛ գրաբարում, և՛ բարբառում դիմային հատուկ վերջավորությունների չունեն կամ, կարելի է ասել, ունեն զրո վերջավորություն:

Կյուլ (<գալ)

Սահմ. ներկա.—կըկյում, կըկյուս, կըկյու

կըկյոնք, կըկէք, կըկյոն

անց. կատարյալ.—իկի, իկիր, իրի

իկինք, իկիք, իկին

չբամայական.—էրի'—էկէ'ք

մի' կյու (մը' կյու)—մի' կէք (մը' կէք)

Սել (<ասել)

Սահմ. ներկա.— կըսիմ, կըսիս, կըսի

կըսինք, կըսէք, կըսին

անկատար.— կըսէ, կըսէս, կըսէր

կըսէնք, կըսէք, կըսէն

վաղակատար.— սիր իմ, սիր իս, սիր ի

սիր ինք, սէր էք, սիր ին

անց. վաղակ.— սէր է, սէր էս, սէր էր

սէր էնք, սէր էք, սէր էն

ապառնի.— սիլու իմ, սիլու իս, սիլու ի

սիլու ինք, սէլու էք, սիլու ին

անց. ապառնի.— սէլու է, սէլու էս, սէլու էր

սէլու էնք, սէլու էք, սէլու էն

անց. կատար.— սիցի, սիցիր, սաց, սիցինք, սիցիք, սիցին

Ըղձակաճ ապառնի.— սիմ, սիս, սի

սինք, սէք, սին

անց. ապառնի.— սէ, սէս, սէր

սէնք, սէք, սէն

Հարկադր. ապառնի.— տըսիմ, տըսիս, տըսի,
 տըսինքյ, տըսէքյ, տըսին
 անց. ապառնի.— տըսէ, տըսէս, տըսէր
 տըսէնքյ, տըսէքյ, տըսէն
 Հրամայական.— սա'— սէ'քյ
 արգել.— մը'սի— մը'սէքյ

Մեկ (<ածեւ)

Սահմ. ներկա.— կըծիմ, կըծիս, կըծի
 կըծինքյ, կըծէքյ, կըծին
 անկատար.— կըծէ, կըծէս, կըծէր
 կըծէնքյ, կըծէքյ, կըծէն
 վաղակատար.— ծիր իմ, ծիր իս, ծիր ի
 ծիր ինքյ, ծէր էքյ, ծիր ին
 անց. վաղակ.— ծէր է, ծէր էս, ծէր էր
 ծէր էնքյ, ծէր էքյ, ծէր էն
 ապառնի.— ծիրու իմ, ծիրու իս, ծիրու ի
 ծիրու ինքյ, ծէլու էքյ, ծիրու ին
 անց. ապառնի.— ծէլու է, ծելու էս, ծէլու էր
 ծէլու էնքյ, ծէլու էքյ, ծէլու էն
 անց. կատարյալ.— ծիցի ծիցիր, ծաց
 ծիցինքյ, ծիցիքյ, ծիցին
 Ըղծական ապառնի.— ծիմ, ծիս, ծի
 ծինքյ, ծէքյ, ծին
 անց. ապառնի.— ծէ, ծէս, ծէր
 ծէնքյ, ծէքյ, ծէն
 Հարկադր. ապառնի.— տըծիմ, տըծիս, տըծի
 տըծինքյ, տըծէքյ, տըծին
 անց. ապառնի.— տըծէ, տըծէս, տըծէր
 տըծէնքյ, տըծէքյ, տըծէն
 Հրամայական.— ծա'— ծէ'քյ
 արգել.— մը'ծի— մը'ծէքյ

Յու

Յու բայը կըքնու (<գնալ) բայի կրճատված ձևն է, որը հանդես է գալիս խոնարհման ոչ բոլոր ձևերում, այլ՝ սահմանական ներկալում, անկատարում, ըղծական եղանակում, հարկադրականում

և արգելական հրամայականում: Իսկ սահմանական եղանակի բազադրյալ ժամանակներում, ինչպես և անց. կատարյալում հանդես է գալիս բալի լրիվ ձևը՝ կլեմոլ, որի անցյալի հիմքն է քյոց (<կլենոց): Կլեմոլ>յոլ փոփոխություն պատճառը սահմանական ներկայում ու անկատարում կը եղանակիչի ափեղացմամբ ստեղծված արտասահմանական գծավարությունն է, որը չէր կարող չհարկվել այսքան զործածական մի բառում: Կըկլեմոմ, կըկլեմոս, կըկլեմո բայաձևերը դարձել են՝ կըյոմ, կըյոս, կըյո: Բառասկզբի երկու նույն բաղաձայններից մեկն ընկել է, մ-ն դարձել է յ. նույն բանը տեղի է ունեցել աղեղնակ>յեղյակ բառում: Այն բայաձևերում, որոնցում արտասահմանական գծավարություն չի ստեղծվում, կլեմոլ բայը մեծ մասամբ պահում է իր սովորական ձևը:

Խոնարհումը

Սահմ. ներկա.—կըյոմ, կըյոս, կըյո

կըյոնքի, կըյէքի, կըյոն

անկատար.— կըյէ, կըյէս, կըյէր

կըյէնքի, կըյէքի, կըյէն

ապառնի.— կլենոլու իմ, կլենոլու իս, կլենոլու ի

կլենոլու ինքի, կլենոլու էքի, կլենոլու ին

անց. ապառնի.—կլենոլու է, կլենոլու էս, կլենոլու էր

կլենոլու էնքի, կլենոլու էքի, կլենոլու էն

հարակատար.—քյոցած իմ, քյոցած իս, քյոցած ի

քյոցած ինքի, քյոցած էքի, քյոցած ին

անց. հարակատար.—քյոցած է, քյոցած էս, քյոցած էր

քյոցած էնքի, քյոցած էքի, քյոցած էն

վաղակատար.—քյոցիր իմ, քյոցիր իս, քյոցիր ի...

անց. վաղակատար.—քյոցէր է, քյոցէր էս, քյոցէր էր...

անց. կատարյալ.—քյոցի, քյոցիր, կլենոց

քյոցինքի, քյոցիրքի, քյոցին

Ը դ ա կ ա ն ե ղ ա ն ա կ

ապառնի.—յոմ, յոս, յո, յոնքի, յէքի, յոն

անց. ապառնի.— յէ, յէս, յէր, յէնքի, յէքի, յէն

Հ ա ռ կ ա գ ռ ա կ ա ն ե ղ ա ն ա կ

ապառնի.—աըյոմ, աըյոս, աըյո

աըյոնքի, աըյէքի, աըյոն

անց. ապառնի.— տըյէ, տըյէս, տըյէր
տըյէնքյ, տըյէքյ, տըյէն

Հրամաւ ապառնի եղանակ

կընտ'—քտցէ'քյ

մի' յտ—մի' չէքյ

Վըրցել (<վերցնել)

Սահմ. ներկա.— կըվըրցիմ, կըվըրցիս, կըվըրցի
կըվըրցինքյ, կըվըրցէքյ, կըվըրցին

անց. կատարյալ.— վըրցի, վըրցիր, վըրցոց
վըրցինքյ, վըրցէքյ, վըրցին

Հրամայական.— վըրցու— վըրցէ'քյ
մըվը'րցի—մըվը'րցէքյ

Պալատավոր բաղեր

իմ (<եմ)

Սահմ. ներկա.— իմ, իս, ի, ինքյ, էքյ, ին

անց. անկատար.— է, էս, էր, էնքյ, էքյ, էն

Խել (<հայել)

Ունի հետեյալ բայաձևերը՝

Սահմ. ներկա.— կըխիմ, կըխիս, կըխի
կըխինքյ, կըխէքյ, կըխին

անկատար.— կըխէ, կըխէս, կըխէր

կըխէնքյ, կըխէքյ, կըխէն

վաղակատար.— ըխիր իմ, ըխիր իս, ըխիր ի

ըխիր ինքյ, ըխէր էքյ, ըխիր ին

անց. վաղակատար.— ըխէր է, ըխէր էս, ըխէր էր

ըխէր էնքյ, ըխէր էքյ, ըխէր էն

Ըղծական ապառնի.— խիմ, խիս, խի, խինքյ, խէքյ, խին

անց. ապառնի.— խէ, խէս, խէր, խէնքյ, խէքյ, խէն

Հարկադր. ապառնի.— տըխիմ, տըխիս, տըխի, տըխինքյ,

տըխէքյ, տըխին

անց. ապառնի.— տըխէ, տըխէս, տըխէր, տըխէնք, տըխէք,
տըխէն

Մ ա ն ք.— Այն ժամանակները, որոնք խել բայը չունի, լրաց-
վում են շկել (<աչխել «նայել»>) բայի համապատասխան բայա-
ծեքով:

Կյիտիմ (<գիտեմ>), ունիմ (<ունեմ>), կամ կէնիմ (<կարե-
նամ>) բայերի ներկան ու անկատարը կազմվում են գրաբարյան
ձևով՝ առանց կը նախամասնիկի.

Կյիտիմ

Սահմ. ներկա.— կյիտիմ, կյիտիս, կյիտի
կյիտինք, կյիտէք, կյիտին
անկատար.— կյիտէ, կյիտէս, կյիտէր
կյիտէնք, կյիտէք, կյիտէն

անց. կատարյալ.— կյետցա, կյետցար, կյետցավ
կյետցանք, կյետցաք, կյետցան

Կյիտիմ բայի մյուս ժամանակները չկան և նրանց փոխարեն
գործածվում են կյիտնալ (<գիտենալ>) բայի համապատասխան
ձևերը:

Ունիմ

Սահմ. ներկա.— ունիմ, ունիս, ունի,
ունինք, ունէք, ունին
անկատար.— ունէ, ունէս, ունէր,
ունէնք, ունէք, ունէն

Մյուս բայաձևերը չկան, և դրանց փոխարեն գործածվում են
ունենալ բայի համապատասխան ձևերը:

Կամ

Սահմ. ներկա.— կամ, կաս, կա, կանք, կէք, կան
անկատար.— կէ, կէս, կէր, կէնք, կէք, կէն

Կէնիմ (<կարենամ>)

Սահմ. ներկա.— կէնիմ, կէնիս, կէնի
կէնինք, կէնէք, կէնին
անկատար.— կէնէ, կէնէս, կէնէր
կէնէնք, կէնէք, կէնէն

անց. կատարյալ.— կէրցա, կէրցար, կէրցալ
 կէրցանք, կէրցաք, կէրցան
 Հրամայական.— կէրցի՛ — կէրցէ՛ք
 մըկէ՛նի — մըկէ՛նէք

Խտպըտել (==զբաղվել)

Սահմ. ներկա.— կըխտպըտիմ, կըխտպըտիս, կըխտպըտի
 կըխտպըտինք, կըխտպըտէք, կըխտպըտին
 անկատար.— կըխտպըտէ, կըխտպըտես, կըխտպըտէր
 կըխտպըտէնք, կըխտպըտէք, կըխտպըտէն
 Բղձական ապ.— խտպըտիմ, խտպըտիս, խտպըտի...
 անց. ապառնի.— խտպըտէ, խտպըտես, խտպըտէր...
 Հարկադրակ. նալ.— տըխտպըտիմ, տըխտպըտիս...
 անց. ապառնի.— տըխտպըտէ, տըխտպըտես...
 Հրամայական.— խտպըտի, խտպըտէք
 մըխտպըտի—մըխտ՛պըտէք

Հատուկել (<ատակել)

Ունի միայն սահմանական ներկայի ու անկատարի ժխտա-
 կան ձևերը:

Ներկա.— չըմ հո՛ւտուկի, չըս հո՛ւտուկի, չը հո՛ւտուկի
 չընք հո՛ւտուկի, չըք հո՛ւտուկի, չըն հո՛ւտուկի
 անկատար.— չը հո՛ւտուկէ, չէ՛ս հոտուկի, չէ՛ր հոտուկի
 չէ՛նք հոտուկի, չէ՛ք հոտուկի, չէ՛ն հոտուկի

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Սահմանական եղանակ

Սահմանական ն ե ռ կ ա ն ու անկատարը կազմվում են
 ըղձական դերբայով և օժանդակ բայի համապատասխան ժխտ-
 ձևերով: Օժանդակ բայն այս ժամանակներում նախադաս է:

Ներկա.— չըմ խա՛կյնի, չըս խա՛կյնի, չը խա՛կյնի
 չընք խա՛կյնի, չըք խա՛կյնի, չըն խա՛կյնի
 չըմ ո՛ւզի, չըս ո՛ւզի, չո՛ւզի, չընք ո՛ւզի, չըք ո՛ւզի,
 չըն ո՛ւզի
 չըմ քը՛նցցի, չըս քը՛նցցի, չը քը՛նցցի

շընք թըր'նցցի, շըք թըր'նցցի, շըն թըր'նցցի
 շըմ պը'ռնըվի, շըս պը'ռնըվի, շը պը'ռնըվի
 շընք պը'ռնըվի, շըք պը'ռնըվի, շըն պը'ռնըվի
 անկատար.— շը խա'կյնէ, շէ'ս խա'կյնի, շէ'ր խա'կյնի
 շէ'նք խա'կյնի, շէ'ք խա'կյնի, շէ'ն խա'կյնի
 շո'ւղէ, շէ'ս ուղի, շէ'ր ուղի
 շէ'նք ուղի, շէ'ք ուղի, շէ'ն ուղի
 շը թըր'նցցէ, շէ'ս թըր'նցցի, շէ'ր թըր'նցցի
 շէ'նք թըր'նցցի, շէ'ք թըր'նցցի, շէ'ն թըր'նցցի
 շը պը'ռնըվէ, շէ'ս պըռնըվի, շէ'ր պըռնըվի
 շէ'նք պըռնըվի, շէ'ք պըռնըվի, շէ'ն պըռնըվի

Մ ա ն ք .— Անկատարի եղակի թռաջին դեմքում դիմային
 վեջավորությունը (-է) օժանդակ բայից անցնում է ըղծ. դերբային
 (շը խա'կյնէ):

Ա պ ա ռ ն ի ն ու անցյալի ապառնի ն կազմվում են
 ապառնի դերբայով և օժանդակ բայի համապատասխան ժխտական
 ձևերով: Օժանդակ բայը կարող է լինել նախադաս կամ ետադաս:

ապառնի.— շըմ խա'կյնիլու (կամ՝ խա'կյնիլու շի'մ)
 շըս խա'կյնիլու (խա'կյնիլու շի'ս)
 շը խա'կյնիլու (խա'կյնիլու շի')
 շընք խա'կյնիլու (խա'կյնիլու շի'նք)
 շըք խա'կյնիլու (խա'կյնիլու շի'ք)
 շըն խա'կյնիլու (խա'կյնիլու շի'ն)
 շըմ ո'ւղիլու (ուղիլու շի'մ)...
 շըմ թըր'նցցիլու (թըր'նցցիլու շի'մ)
 շըմ պը'ռնըվիլու (պըռնըվիլու շի'մ)

անց. ապառնի.— շէ' խա'կյնիլու (խա'կյնէլու շէ')
 շէ'ս խա'կյնիլու (խա'կյնէլու շէ'ս)
 շէ'ր խա'կյնիլու (խա'կյնէլու շէ'ր)
 շէ'նք խա'կյնիլու (խա'կյնէլու շէ'նք)
 շէ'ք խա'կյնիլու (խա'կյնէլու շէ'ք)
 շէ'ն խա'կյնիլու (խա'կյնէլու շէ'ն)
 շէ' ուղիլու (ուղէլու շէ')...
 շէ' թըր'նցցիլու (թըր'նցցէլու շէ')...
 շէ' պըռնըվիլու (պըռնըվէլու շէ')...

Հ ա ռ ա կ ա տ ա ռ ն ու անցյալի հարակատար կազմվում են հարակատար դերբայով և օժանդակ բայի համապա-

տասխան ժխտական ձևերով: Օժանդակ բայը կարող է լինել նա-
խադաս կամ ետադաս:

հարակատար.—խակյոծ չի՛մ (չըմ խա՛կյոծ)
խակյոծ չի՛ս (չըս խա՛կյոծ)
խակյոծ չի՛ (չը խա՛կյոծ)
խակյոծ չի՛նք (չընք խա՛կյոծ)
խակյոծ չէ՛ք (չըք խա՛կյոծ)
խակյոծ չի՛ն (չըն խա՛կյոծ)
պըռնուկ չիմ՝ (չըմ պը՛ռնոված) և այլն:

անց. հարակատար.—խակյոծ չէ, (չէ՛ խակյոծ)
խակյոծ չէ՛ս (չէ՛ս խակյոծ)
խակյոծ չէ՛ր (չէ՛ր խակյոծ)
խակյոծ չէ՛նք (չէ՛նք խակյոծ)
խակյոծ չէ՛ք (չէ՛ք խակյոծ)
խակյոծ չէ՛ն (չէ՛ն խակյոծ)
պըռնուկ չէ՛ն (չէ՛ն պըռնոված) և այլն:

Վ ա դ ա կ ա տ ա ր ն ու ա ն ց յ ա լ ի վ ա դ ա կ ա տ ա ր ք
կազմվում են վաղակատար դերբայով և օժանդակ բայի ժխտական,
ձևերով: Օժանդակ բայը այս դեպքում նախադաս է:

վաղակատար.— չըմ խա՛կյիր (կամ՝ չըմ խա՛կիրի)
չըս խա՛կիր (չըս խա՛կիրի)
չը խա՛կիր (չը խա՛կիրի)
չընք խա՛կիր (չընք խա՛կիրի)
չըք խա՛կիր (չըք խա՛կիրի)
չըն խա՛կիր (չըն խա՛կիրի)
չըմ ո՛ւզիր (չըմ ո՛ւզիրի)
չըմ քը՛նցցիր
չըմ պը՛ռնվիր և այլն:

Մ ա ն ք.—Երեք և ավելի վանկ ունեցող բայերը (քընցցել,
մօտմնալ և այլն) վաղակատարի ժխտական խոնարհման մեջ բա-
ռավերջում -ի ածական չեն ստանում, իսկ միավանկ և երկվանկ
բայերը (ուզել, խակչնել, ուտել, պիրել տալ և այլն) կարող են
ստանալ -ի ածական (չըմ տը՛վիրի, չըմ ո՛ւզիրի, չըմ կի՛րիրի և
այլն):

անց. վաղակատար.— չէ՛ խակյիր (չէ՛ խակիրի)
չէ՛ս խակյիր (չէ՛ս խակիրի)

չէ՛ր խակցիր (չէ՛ր խակցիրի)
 չէ՛նք խակցիր (չէ՛նք խակցիրի)
 չէ՛ք խակցիր (չէ՛ք խակցիրի)
 չէ՛ն խակցիր (չէ՛ն խակցիրի)
 չէ՛ ուզիր (չէ՛ ուզիրի)
 չէ՛ քընցցիր
 չէ՛ պըռնըվիր

Ժխտական անցյալ կատարյալը կադմվում է անց-
կատարյալի դրական բայաձևերին բառասկզբից շ ժխտական մաս-
նիկ ավելացնելու միջոցով.

չըխակո՛ւ՝ չըխակո՛ւր, չըխակո՛ւվ՝
 չըխակո՛ւնք, չըխակո՛ւք, չըխակո՛ւն
 չուզըցի՛, չուզըցի՛ր, չուզի՛ց
 չուզըցի՛նք, չուզըցի՛ք, չուզըցի՛ն
 չքընցցի՛, չքընցցի՛ր, չքընցցո՛ց
 չքընցցի՛նք, չքընցցի՛ք, չքընցցի՛ն
 չպըռնըվա՛, չպըռնըվա՛ր, չպըռնըվա՛վ
 չպըռնըվա՛նք, չպըռնըվա՛ք, չպըռնըվա՛ն

Ըղձական եղանակ

ապառնի.— չըխա՛կցնիմ, չըխա՛կցնիս, չըխա՛կցնի (նաև՝
չըխակցնի՛մ...)

չո՛ւզիմ, չո՛ւզիս, չո՛ւզի (նաև՝ չուզի՛մ...)
 չքընցցիմ, չքընցցիս, չքընցցի (նաև՝
չքընցցի՛մ...)
 չպըռնըվիմ, չպըռնըվիս, չպըռնըվի
 (չպըռնըվի՛մ...)
 անց. ապառնի.— չըխա՛կցնէ, չըխա՛կցնէս, չըխա՛կցնէր
 (չըխակցնէ՛...)
 չըխա՛կցնէնք, չըխա՛կցնէք, չըխա՛կցնէն
 (չըխակցնէ՛նք...)
 չո՛ւզէ, չո՛ւզէս, չո՛ւզէր... (չուզէ՛...)

1 Այս բայաձևերի վրա շեշտը դնում ենք, որպեսզի իմացվի, թե բառի
 որ վանկն է կրում շեշտը, որովհետև ժխտական խոնարհման մեջ շեշտի գոր-
 ծածոթյան ձևերը միակերպ չեն։

չըթյւր'նցցէ, չըթյւր'նցցէս, չըթյւր'նցցէր
 (չըթյւր'նցցէ'...)
 չըպլր'ոնըվէ, չըպլր'ոնըվէս, չըպլր'ոնըվէր...
 (չըպլր'ոնըվէ'...)

Մ ա ն ք.—Երբ -ըղձական եղանակի ժխտական բայաձևերում շեշտը դրվում է բայի առաջին վանկի վրա (չըխա'կյնիմ, չո'ւզիմ, չո'ւտիմ), բայիմաստը հիմնականում արտահայտում է իղձ, ցանկութուն, իսկ երբ շեշտը դրվում է վերջին վանկի վրա (չխակյնի'մ, չուզի'մ, չուտի'մ), բայիմաստն արտահայտում է պայմանականութուն կամ հրաման (չուզի'մ՝ չըմ ի' կլո, չըխակյնի'մ, տըմըսիմ, չըպիրի'ս, չըտանի'ս և այլն):

Հարկագրական եղանակ

Այստեղ ժխտական չ մասնիկը դրվում է տը եղանակիչի և չառնարհվող բայի միջև:

ապառնի.— տըչըխակյնի'մ, տըչըխակյնի'ս, տըչըխակյնի'
 տըչըխակյնի'նքյ, տըչըխակյնէ'քյ, տըչըխակյնի'ն
 տըչուզի'մ, տըչուզի'ս, տըչուզի'
 տըչուզի'նքյ, տըչուզէ'քյ, տըչուզի'ն
 տըչըթյւր'նցցի'մ, տըչըթյւր'նցցի'ս...
 տըչըպլր'ոնըվի'մ, տըչըպլր'ոնըվի'ս...

անց. ապառնի.— տըչըխակյնէ', տըչըխակյնէ'ս...
 տըչուզէ', տըչուզէ'ս, տըչուզէ'ր...
 տըչըթյւր'նցցէ', տըչըթյւր'նցցէ'ս...
 տըչըպլր'ոնըվէ', տըչըպլր'ոնըվէ'ս...

Կյալ (<գալ), լալ (<լալ), տալ (<տալ). անկանոն բայերի ժխտական խոնարհման սահմ. ներկայում ու անկատարում օժանդակ բայի և ըղձական դերբայի միջև պահպանվել է ի նախդիրը.

ներկա.— չըմ ի' կլո, չըս ի' կլո, չի' կլո
 չընքլ ի' կլո, չըքլ ի' կլո, չըն ի' կլո
 չըմ ի' լո, չըս ի' լո, չի' լո
 չընքլ ի' լո, չըքլ ի' լո, չըն ի' լո
 չըմ ի' տա, չըս ի' տա, չի' տա
 չընքլ ի' տա, չըքլ ի' տա, չըն ի' տա

անկատար.—չէ՛ր ի կյո, չէ՛ս ի կյո, չէ՛ր ի կյո
 չէ՛նք ի կյո, չէ՛ք ի կյո, չէ՛ն ի կյո
 չէ՛ ի լո, չէ՛ս ի լո, չէ՛ր ի լո
 չէ՛ ի տա, չէ՛ս ի տա, չէ՛ր ի տա...

Մյուս ժամանակները կազմվում են սովորական ձևով՝ առանց
 ի նախորդի:

Մ Ա Կ Բ Ա Յ

Ժ ա մ ա ն ա կ ց ու չ ց ա վ ո ղ մ ա կ բ ա չ ն ե ռ.—տուլ (=դեռ),
 մըկա (=հիմա), չուր մըկա (=մինչև հիմա), շուտուց (=վաղուց),
 կանուխ (=շուտ), հոբ (=միշտ), հոբկյոխ (=ամեն ժամանակ,
 միշտ), խըլիսոն (=առավոտյան), կյոխուն տիրըմ (=երբեմն):
 Թուրքերենից փոխառվա՝ դոլիմ (=միշտ), դորըմ (=մի պահ),
 հոլո (=դեռ) և այլն:

Ձ ա ց ու չ ց ա վ ո ղ մ ա կ բ ա չ ն ե ռ.—խէթ, մէքյակ (=միայ-
 նակ), կյոխաիկ (=գաղաճի), ճնկ (=ջոկ, առանձին), նըստամանց,
 կոյնոմանց, տակնիվեր, հիրեսվիրես, խըղրուց (=միասին), ջորով
 (=հազիվ): Թուրքերենից՝ բուլքի (=գուցե), հոլբոթ (=խհարկե),
 լարաբ (=արդյոք) և այլն:

Տ ե ղ ց ու չ ց ա վ ո ղ մ ա կ բ ա չ ն ե ռ.—հիտեանց, կողքանց,
 հըռնեանց, մօտանց, գտամանց, հոռկող (<առ ի կող), հոռաճ
 մօտու, գտտու, տեղըրտեղ, տըզն (=ահա, աաս):

Չ ա փ ի մ ա կ բ ա չ ն ե ռ.—տիրըմ (=մի անգամ), փշում (=մի
 փոքր), շատ և այլն:

Կ Ա Պ

Սեռական հոլովով խնդիր պահանջող կապեր.

Խըա, խո (=հետ) գործածվում են նախադաս, խեա՝ ետա-
 դաս: —Խըա տնու, խո ձի, պառվու խեա:

Վար (=վրա) գործածվում է նախադաս, և կապվող բառը
 կարող է ստանալ և հոգ:—Վար կլըլխուն, վոր թիվին, վոր աչիչ,
 վոր արեուն:

Ջըռնն (=առջև) գործածվում է նախադաս, իսկ ճիռնն՝ ետա-
 դաս: —Պընակ իսի հըռն ուր: Մոնըկու հիռն ձի սեցցոց:

Մէչ—ետադաս, իսկ մըչ՝ նախադաս, որի զեպքում կապվող
 բառն ստանում է և հոգ:—Մոկլիւ մէչ, սըրաի մէչ, ծոբի մէչ, մըչ
 սըրաին, մըչ խոկլիւն, մըչ ծոբին:

Մօտ, մո (=մոտ)—նախադաս:—Մօտ տնու, մո ձի, մո քի: Կուշտ (=մոտ)—ետադաս:—Հոխպրի կուշտ թարթըմ տէսա, շատ խալնա:

Պէս (=նման)—ետադաս:—Ճորու պէս, կաքչվու պէս, արճու պէս:

Ցնդ (=նման)—ետադաս:—Իշու ցեղ, տովրի ցեղ, զրկան ցեղ (աքլորի նման) և այլն:

Խումար (=համար)—ետադաս:—Քչ լաճու խումար յա լէմ խօսք, յա քլամու ճողաց (Քո տղայի համար կամ իմ խոսքը, կամ քամու ջրադացը):

Վէրէն (=վրա)—ետադաս:—Պիտրոսկէ կյըլխու վէրէն թուխ մազըմ չըս կը'նդնի:

Թեքեն (=փոխարեն)—ետադաս:—Յէմ թէրէն տիւ իս քլոցեր (Իմ փոխարեն դու ես գնացել):

Տրական հոլովով խնդիր կարող է պահանջել ի նախդիրը՝ նշելով որեւէ բանի տեղը: Օրինակ՝ ճարն ի մեշկին, քյարն ի խողին: Հայցական հոլովով խնդիր պահանջող կապեր.

Ինի (=մեջ)—ետադաս:—Պուտուկ ինի յէղ իմ ծիր: Յէզներ, կուրած տաշա ինի (=Եզները դաշտում կորել են):

Չուր (=միշկ)—նախադաս:—Կլեղէն չուր հոխպրի էրկու մըղոնի: Մեր մաքին չուր կյորուն կյորում իպի (=Մեր մաքին մինչև գարուն մի գառ բերեց):

Քյունն (=քան)—նախադաս:—Քյունն արէկյուկ ի² կա պօծառ:

Թաղ (=դեպի)—նախադաս:—Կլել փիւ կլել՝ պօջ ծալից ուր տակ, տէմ արավ թող սար ու փախավ (Գալլ դու գալլ, պոչը ծալեց իր տակը, դեմքը թեքեց դեպի սարն ու փախավ):

Մա (=մոտ)—հայցական հոլովով դրված անձ նշող բառերի հետ ցույց է տալիս ուղղություն: Նախադաս է:—Մարթըմ իրի մո Մըվթլութէկ: Խլխոն Ջըբրօ մէր քլոցէր էր մո Սինամ (Առափուտան Ջըբրոյի մայրը գնացել էր Սինամի մոտ):

Յ.—հազվադեպ է գործածվում:—Մամիրէ ցՄանուկ սաց (Մամբրեն Մանուկին ասաց):

Բացառական հոլովով խնդիր են պահանջում՝

Խեռ (=հեռու)—նախադաս:—Խեռ մեր տընէն, խեռ ծէնէ, խեռ քյենէ:

Չոտ (=բացի)—ետադաս:—Չէնէ գոտ մարթ չիրի (Ինձնից բացի մարդ չեկավ): Էս ճամբիէն գոտ հըբուշ ճամբոխ չըկա:

Շ Ա. Դ. Կ Ա. Պ

Համադասական՝ ու, թո... թո, հոմո (=բալց), յա (յան, ա՜ն=կամ), յա... յա, նա... նա (==ոչ... ոչ), ուլ (էլ), իսկ, կամ, ուրեմ (=ուրեմն) և այլն:

Ստորադասական՝ թէ, թո, թէ ւոր, ւոր, վոր (ւոր), քանի ւոր, ւոր ասկոն ի և այլն:

Չ Ա. Յ Ն Ա. Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

1. Տարբեր զգացմունքներ արտահայտող՝ ա՛խ, վա՛խ, վա՛յ, օ՛խ, թո՛ւ, տ՛օ, ւո՛յ (զարմանք), ափսօ՛ս, էրանե՛կ, մեղա՛ աստծու, հէ՛-է (ուրախություն, զարմանք) և այլն:

2. Կենդանիներին կանչելու ձայնարկություններ՝ ճի՛ւ, ճի՛ւ... (հավ կանչելու), կո՛ւձի, կո՛ւձի... (շուն կանչելու), փշի՛ փշի՛... (կատու կանչելու), փըշտո՛ (կատվին քշելու), քըշտո՛ (հավ քշելու), քո՛ոի, քո՛ոի... (քուռակ կանչելու), գո՛հէ՛, գո՛հէ (ծի կանչելու), չո՛շ, չո՛շ... (էշ կանչելու), կըղի՛, կըղի՛ (այծ կանչելու), գյըղի՛, գյըղի՛ (շուն հրահրելու), բժօ՛, բժօ՛ (կով կանչելու), հօ՛, հօ՛ (տավար քշելու) և այլն:

Եղանակավորող բառեր

Գործածական են՝ կըսէս (=ասես), քուցէ (=գուցե), մանա-վանդ, խա՛, չէ՛, թըխ (=թող), չէ՛ չիօ (իհարկե), հարկավ և այլն:

Ն Մ Ո Ւ Շ Ն Ե Ր

ՀԱՏԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ ՈՒ ԽԱՂԻԿՆԵՐ

* * *

Մեր տան հիտեմ արտ կորնդլոն,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...
Ծեր տան հիտեմ արտ կորնդլոն,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...
Ծիլանք ինի կըխըրխընջոն,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...
Հապար տարէ՛ք տէքիւր կընդլոն,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...
Թըխ ծեռ զորկի վոր ուր ծընդլոն,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...
Թըխ իըտվրտա ծեռաց մորջոն,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...
Ղոտոտ սար ցանած կտրին,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...
Ղոտոտ սար ցանած կտրին,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...
Կտրին տանիմ տամ իընծորի,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...
Խընծոր հօրօխկիմ¹ լէմ յարին,
Լէ-լէ, Լէ-լէ, Լէ-լէ ջա՛ն...

* * *

Տիկ զորկիմ, լէդ խանիմ,
Սորտկախրոն ճաշ անիմ:

¹ հօրօխկէ՛լ՝ ուղարկել:

* * *

Աղվէս կըսի՝ յէմ ծակ նեղ ի,
 Խաւով ճըտեր փորիս տեղ ի...
 Աղվէս նըստիւր վոր տախաւըկին,
 Աշկն ի տընգլիւր թող տոնդըկին:
 Աղվէս իրի տափիկ-մափիկ,
 Իրի, մըտաւ մեր կոնտփիկ,
 Աղվէս իրի կանաչ տորէն,
 Աշխար թափաւ ուր թոմտոշէն:
 Աղվէս կընոց մըտաւ ճողաց,
 Թաթեր վըրցոց մէ բ'օլ խաղաց:
 Ա՛յ իմ շալիկ, շալ մալալիկ,
 Տըռըշտուոր, տըմբլոնակաս:
 Տէրճկանց ճըտեր, վո՛ւյ, վո՛ւյ...
 Ծի կուտըցցիմ մեղր ու կարաքյ, վո՛ւյ, վո՛ւյ...¹

* * *

Թի կաղ իմ, հոմո կաքյաւ իմ.
 Թի սեւ իմ, հոմո սեր իմ.
 Թի վընշ իմ, հոմո քլոխցըմլէշ իմ.
 Թի կօլօս իմ, հոմո խօրօս իմ...¹

* * *

Մօվուն խաղքըմ կէր, Արօր էր անուն,
 Վըղիկ հէրկէն էր, սըրտիկն էր էրուն.
 Կապիմ բէշարէս՝ էրթամ խըտ տնու,
 Ղն զլէմ դորդ կլիտի, ա՛խ, լէս էլ՝ տնու...
 Իրի խաղքըմ էլ՝ թըխթիկ էր պէրան,
 Ասի, կորտոցի լէմ կլըխու ֆորման².
 Էրի՛, յա՛ր, էրի՛, խընօլ մը կէ՛նա,
 Աստուրի մալը ձի, քյի չը մ՛ընա...
 Հէրէկ էվարին, վոր Կօսօ քլարին
 Թըվոկըմ³ զտրկին՝ բրինդալ⁴ արին:

¹ բեշարա — լաստանաւ:

² ֆորման — հրաման:

³ Թըվոկ — հրացան:

⁴ բրինդալ — վիբալոր:

Հովարըմ սարէք տն սևուորին,
Առնի տեղ ու ճար, կլտ վոր ուր լարին:

* * *

Սըրտիկս էրկու չար կուզեր, հորնա՛զ, հորնա՛զ,
Մէկն էր խալ, մէկն տսորի, դէ՛, շէ՛ն կէնաս.
Ծալու անդ՝ մըչ լէմ սըրտին, հորնա՛զ, հորնա՛զ,
Ղսորուն՝ խըտ լէմ կըշտին, դէ՛, շէ՛ն կէնաս...

* * *

Ջոնիմա՛ն, ջոնիմա՛ն,
Տունմ իմ շինիր կյիտի պէրան.
Ջոնիմա՛ն, ջոնիմա՛ն,
Թալիր վէրէն էրկու կցերան:
Ջոնիմա՛ն, ջոնիմա՛ն,
Մէկն էր խօխի, մէկն էր ծիրան...
Ջոնիմա՛ն, ջոնիմա՛ն,
Ֆօխին կոտրավ, մընաց ծիրան...
Ջոնիմա՛ն, ջոնիմա՛ն,
Թօնէր ընցավ՝ ցան չըթտլի.
Ջոնիմա՛ն, ջոնիմա՛ն,
Վաթը պաղավ, չըմէրէցի,
Ջոնիմա՛ն, ջոնիմա՛ն,
Տըղէն էլաց՝ շօրօրըցի,
Ջոնիմա՛ն, ջոնիմա՛ն,
Յէմ լար տուն չէր՝ նըստա, լոցի...

* * *

Ճիւրն ի փըրթիր, կըկտ սարէն,
Կըկտ, թափվի մարմար քարէն,
Հըրուր մի՛ տա սըրտիս լարէն՝
Խորբոր չունիմ անոշ լարէն...

* * *

Տընէն էլոր տիւ կախար տիւ,
Մէշկըտ պտրակ՝ խոնջորի պիւ,
Քչամին էզոր, խուռ շուռ-մուռ

Յէս քյու սիրուն՝ շիվար ու ծուռ,
 Քյելթյըտ մաքյու, շօրօր՝ ծըկան,
 Կուզիմ իլնիս ձի սիրէկան:
 Թուիս կունդուրէն¹, սրվտակ փուլակ,
 Յէս քյի տառնէ՝ չի՝ թող ֆուլաքյ:
 Քյի կյին իլնի՝ յէս քյի կյընիմ,
 Բլը ծեռ ու լոտ խինտ ալընիմ,
 Նըռան կյինին խո քյի խըմիմ,
 Ստըխոշտնամ՝ քյը ծոց քյընիմ...

* *
 *

Արեն ի առիր վոր Կօսօ խարին,
 Վերու կլտու, մաքյին վոր լողրուն քյարին.
 Կոարիբ ի կօս կովին, պոցվիր թուիս ասմին,
 Ուր խօփն ի թուլիր վոր քյաֆուր վորթին:
 Խաալմ սիլան իլնիմ, ընգչնիմ մոչ քյու քյընարին.
 Որ չոմ ու խասնիմ չէմ անոշ լարին:

* *
 *

Հոսօր քյ հոպօլ ձի տսկոն ի ալփած,
 Որ չէմ միսն ի ուսկորից կախած,
 Յէմ ուսկորքէր տաբըշմօլ ի շարած,
 Յէմ էրուն պոմբկօլ ի քյաղած.
 Հոնկտի ընչ պորի լնս կը:պոցվի, չէմ աշկ կընգչնի
 թող քյ շող բոժ,
 Յէմ խուլիլէն՝ վոր ձի քյաֆուր վորթն էլ չի շաժած:

* *
 *

Աննօն ի ամբիր, կըկլտ մարմար ծին,
 Կըկլտ, կըթոփվի վոր մալուլ մարտուն:
 Յոր, հոսօր աիւ կյընտ, սե օցն ի հորթուն,
 Հոսօր աիւ կյընտ, վող էրի՝ քյի գտատուր...

* *
 *

Յէս կըսիմ՝ աոսա՛, աիւ կըսիս՝ աոսա՛,
 Քյոցինքյ խասանքյ տակիկ յոնոտ.

¹ Կունդուրա—կոշիկ:

Յէս կարմիր կլինի, տիւ կանաչ քլաստ,
Քլտնի կըխըմիմ, տիւ «անո՛շ» աստ:

* * *

Էրանէ՛կ քլի, վարժի բըլբուլ,
Որ չըս տի՛սիւր սըրտի մըրմուռ...
Թէ տիւ տիսնիս սըրտի մըրմուռ՝
Տըթափի քյու նըխշուն փիսուր:

* * *

Խա՛րս, էրի վէ, նազ մա՛նի,
Փեշըտ տուր վէ, թօղ մա՛նի.
Խա՛րս, էրի վէ քյու թախթից,
Կյոնգյոտ մա՛նի քյու բոխտից:

Սանգի յէրք

Շատխու սարեր, պէ՛տ-պէ՛տ քյարեր,
Տու չըլ՝սցէր՝ արեկ առէր...
Սանդ կըծիծիմ, կյոբոխուս ի,
Քյանի ծիծիմ՝ բէնամուս ի:
 Խիյո՛, Խիյո՛, Խանէ՛, Խանէ՛...

Սանգիկ ու ի, ծէծող ծուռ ի.
Սանգիկ հընդի, ծեծող՝ ջընդի՛:
Սանդ կըծիծիմ քյի խըսացու,
Բուլթքյ՝ կասուն մէջ մըսոցու:
 Խիյո՛, Խիյո՛, Խանէ՛, Խանէ՛...

Էլէ՛ք շկէք տն վա՞վ կրկյո,
Թուի ծիլաւոր սարէն կըկյո.
Էրկու ջէյրան սարէն իպի՛
Մէկ յէմ յարն ի, մէկն էլ քյոն ի:
 Խիյո՛, Խիյո՛, Խանէ՛, Խանէ՛...

Իրիկմ ունի տեղին-մեղին,
Վալ լոր տիսնի՛ պատուի լեղին.
Ծեռնէն պըռնիմ, տամ կյըրօղին՝

¹ ջընդի—գեղեցիկ:

² բուլթքյ—շալ:

էրթամ խասնիմ չէմ սիրողին:
 Խիյո՞, խիյո՞, խանէ՛, խանէ՛...
 Իրիկմ ունիմ շորէ՛ շինած,
 Մըչ բողոտնի՛ կանի խինած.
 Բոժն ի կօլօտ, կուզիկ-մուզիկ,
 Չոնիմ կօտին՝ ինի թըզիկ.
 Խիյո՞, խիյո՞, խանէ՛, խանէ՛...
 Իրիկմ ունիմ՝ քլոնձ կաղնի կոճ,
 Մատքեր պտրակ՝ քլոնձ մըկան պոչ,
 Նո ձի պէտք ի, նո չէմ սալոչ,
 Թըխ տանին տան ճոչ տոնդրիկնոչ:
 Խիյո՞, խիյո՞, խանէ՛, խանէ՛...
 Կէսօր իրի, բէրի կյոխ ի,
 Սըվտակ կըթոց թեվիս կախ ի,
 Իկին սիցին իրկան մախ ի,
 Զէ՛մ աշէ կըլտ, սիլտ ուլտա ի:
 Խիյո՞, խիյո՞, խանէ՛, խանէ՛...

ՀԱՐՍԱՆՆԿԱՆ ԵՐԳԵՐ

Թուկլորի մէր

Թուկլորի մէր, տի՛ւս էրի,
 Քյի ճիւր պէրօղմ իմ պիրիբ:
 Թուկլորի մէր տի՛ւս էրի,
 Քյի խաց թըխօղմ իմ պիրիբ:
 Թուկլորի մէր, տի՛ւս էրի,
 Ծովար ծիծօղմ իմ պիրիբ:
 Թուկլորի մէր, տի՛ւս էրի,
 Լըվասկ արօղմ իմ պիրիբ:
 Թուկլորի մէր, տի՛ւս էրի,
 Քյի տախտ՝ տվլօղմ իմ պիրիբ:
 Թուկլորի մէր, տի՛ւս էրի,
 Շիրեփ խըլօղմ իմ պիրիբ:
 Թուկլորի մէր, տի՛ւս էրի,
 ԼՈՃԻԼ կըտփօղմ իմ պիրիբ:

¹ բողոտն—ցանկապատված տեղ:

² տախտ—հատակ:

Թողլուորի մէր, տի՛ւս էրի,
Քչի կյըլօխ դըմփօղմ իմ պիժրիբ:
Թողլուորի մէր, տի՛ւս էրի,
Մազեր փիտօղմ իմ պիժրիբ...

Փէսալոսի յէրք

Թողլուոր, ի՞նչ պիժրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեւիւ նըման,
Ղն արէկյոկա՞ն, ինչ կըծաղկէր,
Մաղկէր քյու արեւիւ նըման...
Թողլուոր, ի՞նչ պիժրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեւիւ նըման,
Ղնթուսան ծաղի՞կ, ինչ կըծաղկէր,
Մաղկէր քյու արեւիւ նըման...
Թողլուոր, ի՞նչ պիժրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեւիւ նըման,
Պուլտուսան ծաղի՞կ, ինչ կըծաղկէր,
Մաղկէր քյու արեւիւ նըման...
Թողլուոր, ի՞նչ պիժրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեւիւ նըման,
Սարի սօսն՝ ծաղի՞կ, ինչ կըծաղկէր,
Մաղկէր քյու արեւիւ նըման...
Թողլուոր, ի՞նչ պիժրիմ քյու նըման,
Քյու կանաչ արեւիւ նըման,
Կյընէրբուկ ծաղի՞կ, ինչ կըծաղկէր,
Մաղկէր քյու արեւիւ նըման...

ՊԱՆԴԻՏԻ ԵՐԳԵՐ

Ս. ԳԱՐԵՆԻ

Սիրտըս նըման էր տն պըլած տըներ,
Կոտրէր էր սըներ, խախտվէր կյերաններ,
Պոն պիտի տընին մէջ վէրու խավքեր,
Էրթամ ձի թուլիմ տն լըման կյետեր,
Իլնիմ ծըկնիրու ծոքիրտն ընգլեր,
Տօ լա՛ճ տընավէր...

¹ սօսն—շուշան:

Սեւ ծովմ իմ տիսիր՝ սրվտակն էր պիւլոր,
Ալին կըզորկեր՝ չէր իսա՛նի հըրաւր.
Ղն վա՞ղն ի տիսիր մէկ ծով՝ էրկթովուր...
Անտունի սիրտն ի պըխտոր ու մոլոր,
Ա՛խ, տիւ մի՛լնի, սըրտի՛կ, սեվաւոր,
Տօ լա՛ճ, տընալէր...

* * *

Սիրտըս կըթի ցեղ կոտորվիր ի,
Ոտաց տակն ի տըրօրվիր,
Հըմէն իսովքլ ուր պո՛ն կընդիր ի՝
Եսն իմ ժաւըրվիր,
Հըմէն քյար ուր տեղ տոտրիր ի՝
Եսն իմ կըլորվիր...

ՎԻՃԱԿԱՆԱՂԵՐ

Վիճակ նըստիր վոր էշուն,
Վիճկի փէշերն ի նըխշուն,
Ազաբ լաճեր՝ տնու շուն...
Վիճա՛կ, վիճա՛կ, տի՛ւս էլով,
Վիճկի վէրէն լո՛ս էլով,
Ղն ինչ աղէկ բո՛խտ էլով...

* * *

Մօլ քյի կյինի,
Գյումին քյի կըթխտ,
Տիւ լից, տիւ խըմի,
Աստված քյի տըտա...

* * *

Կոռակուտոշ կարմիր կով՝
Շաքյոր կիրիր, պառկիր խով:

* * *

Մաշված ափել՝ տըտան հիտեվ:

* * *

Տակ խոնդուկ, պոռա արեկյուկ:

* * *

Քյը մէր կիրիր խովործիւ,
ըզՔյի պիրիր ւռակէ ծիւ:

* * *

Քյը մէր կիրիր լէղէղէն,
ըզՔյի պիրիր խըրեղէն:

* * *

Քյը մէր կիրիր ծըվողեղ,
ըզՔյի պիրիր կոր¹ անձեղ:

* * *

Ժոնգլոտո մախա'թ,
Վա² վ քլի խասրաթ...²

* * *

Ձի ծառըմ կա չընդի քյաղաքլ
Ճըղեր թուլիւ քյաղքլէ քյաղաքլ,
չըմէն ճօղին քյառսուն ճըրաքլ:

* * *

Փունջըմ ոըհուն, խոտ արեկյուկան,
Ճըղերն ի թուլիւ խըտ առվի հոփան:

ԱՌԱՅՆՆԵՐ ԵՎ ԱՍԱՅՎԱՄՔՆԵՐ

Ախ քյոնձ մախ դէն ի:

Ախքլըտի ծեռ կուտըմ տէսան...

Սար ու ծոը՝ տէրարոչ փոր:

Անգօր խաչին կուզիւ խոնդլ ծըխի, կուզիւ՝ փըթիր...

Տէրարոչ մարտսին թի պատիվ իլնէր,

Վտր էծու կլըլխան լոս կըկաթէր:

Էրանե'կ քլի, շըղէ՝ փըշըուկ, տըր էլտըր լամէղ, կըպար պու
կի պըռուկ:

¹ կոր—կուլլը:

² խասրաթ (<հասրաթ)—կարոտ:

Աշկեր փոս, քյիթ հոկցիւկո, ինչ որ անի՝ վերէն կըկու:
 Պան խընանա, տէր՝ շընանա:
 Էրանէ՛կ քի, հերկնովիդ դիկ, նո պախս կլիտիս, նո՛ զատիկ:
 Նո խոնջորով գոր, նո պոմբով քլովի:
 Տու չը՛լիւր խավ՝ կըթըռնի թառ:
 Պատի՛կ, քի կըսիմ, խարսնի՛կ, աիւ լըսի:
 Յէս կըսիմ՝ Լորց ի, աիւ կըսիս՝ կըթի՛...
 Հըմէն սըղալուն ճիւր մըխը՛մի:
 Ծուռ ախօս ճճչ լէզնից ի:
 Խորբոր մոչ պէրնիտ իփի, նոր տիւս թափի:
 Խավ չունի՝ հոկլին¹ ծըռտոտ ի:
 Կէրավ կուզ, ուռավ աղվէս, աշկ խոնըցին տատրակին:
 Խին իշուն՝ նոր ախանջ:
 Քլու ծեռնով օց պըռնի, խուլի ծեռնով ծիւկ մըպը՛ռնի:
 Նո հոսօր անինքջ պորկոնդոնքջ, նո վող տնթի զըկըռ-
 տանքի:
 Աստված Լոր կըռկու ծէն լըսնէր՝ վորտովորին ծիւն՝ կըտընէր:
 Չուր տորըմ չըպըլնի՝ փոսըմ չըլը՛ցվի:
 Պուտուկ սաց՝ լէմ տակ Լոսկի ի,
 Շիրեփի սաց՝ լէս հո՞ւստ կըկլում...
 Էլոց ճողաց է՛ս ի.
 Էլուր խըտ տիրոջ՝ կէս ի:
 Պոնիտ կըկլո՛ւ է՛ս ի,
 Պոնիտ չի՛ կլո՛ւ էս ի:
 Չուր Շուշան գորտորվավ, պտտորաքլ ուրցըկվավ:
 Մարթ չի՝ մորտոխավան չի:
 Կըռէնթ նըստիւր, քյարի դորդ կըլո:
 Քյամին ցըրտուց մեռավ:
 Էշու կըլօխ վոր խալուն:

¹ հոկլի—բզանցք:

էգոր լոքուն, արպավ ծոքուն:

Թիթեկ խելքին ծանդըր պեռ:

Էշ ի՞նչ արժանի ի տռուտին...¹

Ուր աչիչ կներան չը՛խի՝ հըրուշի աչիչ խիլ շանք կըտա:

Հինք՝ քրտնձ լուն, լէզուն՝ քրտնձ սուն:

Քլանի քօլ² էծուն կուտոշ չըկա, կըսի՝ ուլ իմ:

Ճիւր ընդլիւր ի առվըներ,

Սէր ընլիւր ի պտուղներ:

Պոն տիւր՝ փախնի, խաց տիւր՝ իսանի:

Ուտիլու խոմար տղնուլուր ի,

Պոնիլու խոմար՝ փըտուկ:

Յըղէ սունըմ առից սըրսին (ալսինքն՝ մի փոքր հույս ակընկալեց):

Քլարըմ թուլցի տնու սօլ վէ («Քար գցեցի նրա կոշիկի մեջ» ալսինքն՝ արգելակեցի նրա ընթացքը, գործը):

ՀԱՆՅԵԼՈՒԿՆԵՐ

Ղնպոս պտուցին տնծընին,
Առին, գտնատատր ընցուցին:

(աղ, ջորի, գետ)

Անծակ մորկլիւրիտ,

Անուլոր թէրզան,

Աստված կըշարի,

Մարթ կըքլակի:

(խաղող)

Կապ կըճըրիմ, Լորթեկ կըճոճտնա:

(դիւմ, վարունգ, ձմերուկ)

Կապիմ՝ կըլտ, տրցիմ՝ կըտտտրի:

(ոտնաման)

Կըկըրկըրա՝ խավ չի,

Ծիւ կըծի՝ կաքլավ չի:

(կրիա)

¹ տռուտ — արվույտ:

² քօլ — անկոտոր:

Կըսիմ՝ էրի՛, էրի՛ չի կչո,
Կըսիմ՝ մի՛ կչո, մի՛ կչո՝ կըկչո:
(շուրթերը)

Ձի տունըմ կա, տունմ էլ ինի,
Տեղին Տուրթի Նըստիր ինի:
(ծու)

Ձի ծառըմ կա՝ ժըժոն ի,
Ժըժոնի տակ մոլոգոն ի,
Մոլոգոնի տակ անեղ ի,
Անեղի տակ կանթեղ ի,
Կանթեղի տակ զունոն ի,
Չունի տակն էլ մարաք ի,
Մարաք Նլին տրաք ի:
(մարդու գլուխը)

Մըսէ պերթ, էրկըթէ թորոնջոմ¹,
Ան թուրցի՝ էլո:
(ծի նստելը)

Մէկ սընէն, էրկու տընէն:
(քիթ)

Լըպըստակ, քլարի վոստակ,
Քլոնի վոզի՝ փորն ի տոտակ:
(շուրճակի մաքոք)

Պըռնիմ ափով, թըղնիմ տընով:
(ճրագ)

Պըռաի՝ մըլի, պըռաի՝ մըլի,
Անը չըմըտով, կըռծի՝ մըլի:
(ասեղ թեկելու գործողությունը)

Թոկլուոր՝ թաքն² ի սըղոց,
Քլառսուն կընիկ ունի փուղոց,
Ուր կը թըլսնի՝ կըլո էլոց:
(աքաղաղ)

¹ Թորոնջա—լկամ, սանձ:

² Թաք—թագ:

Նապօքլմ իրի էրկընուց,
Ոսկէ լոգլտն կէր կըտուց:
(արեւ)

Սըվըլիկ էլուվ սարն ի վէր,
Սըրպից իպի տակն ի վէր:
(սափրվելու գործողութիւնը)

Ծին մոչ ծնին թումքըցին,
Լըղաբ¹ էրկինքլ կոպըցին:
(ծխածան)

Չըլարվիմ թընիմ քլումակըտ,
Թըրճիմ չուր պըճըճակըտ:
(կոժ)

Չորս վոր խողին,
էրկուս վոր կողին,
Տըսճուման վոր քլումկի ծնղին:
(ձխավոր)

Վէ՛ր, վէ՛ր՝ քլաոսուն պըվկու:
(սանդերք)

Ափ վոր ափին,
Տափ վոր տափին,
Ջըղըղուց իսկիմ աը ծակին:
(հրկանք)

Չորս վոր տասին,
Տաս վոր ծովուն,
Ծով վոր ծընգլտն,
Ծունգլ վոր կըրընգլտն,
Վալ չըխանի՝ մեռնի աը կընգլտն:
(կով կթելու գործողութիւնը)

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

Մեր հիկլին կա տաս տանձի ծառ,
Հըմէն ծառին՝ տաս ծանղըր տանձ...

¹ Լըղաբ—լիամ, սանձ:

Ուլ էլով ուրի ծառ՝

Ուռ ուրեց,

Ուռ ուրող ուլ...

Ծիւկ թուիմ՝ ծիւկ ուտիմ,

Մուկ թուիմ, ծիւկ ուտիմ...

Մի կարմիր պարկըմ կէր,

Կարմիր պարկին կարմիր պտրկոկապըմ կէր.

Մարէ՛, հո՞ւր ի մէր կարմիր պարկի

Կարմիր պտրկոկապ...

Մի չորս չոր չիւր կէր,

Մարէ՛, հո՞ւր ի մեր չորս չոր չիւր...

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

Կաճէթոմ¹ ծըռեր²

Կաճէթոմ կկեղ հոխալւորըմ կէր, վալ տնու ճիւր կըխըմէր՝
կըծըռովէր: Կաճէթցեր ճճչ ու պըստիկ տն հոխալրի ճիւր կըխըմէն՝
կըծըռովէն: Ղնու խոմար շտաըխցիքլ կոշտըցիրոն³ կըսէն «Կա-
ճէթոմ ծըռեր»:

Օրըմ էվարին Կաճէթոմ տէրտէր թոմոշա կանի ու կըտիսնի,
թո ինչըխ արէկտկ մէր կըմըտնի Ղոնօստ սարի հիտեվ: Կըկան-
չի ըզժոմխար, կըսի.

—Տըղա՛, կընտ ժոմտան զոնգչեր զոր.

Ժոմխար զոնգչեր կըզորկի, ու կկեղտկան հըմէն կըժօղվը-
վին կըկտն ժոմտան տիւռ:

Տերտեր կըսի.

—Օրնվոժքեր, մինքլ չուր հոսօր աշկեր պոց կոր էնքլ:
Մինքլ չէնքլ տիսր, ինչըխ հըմէն օր հըրկուն արեկտկ կըլո, կիճ-
նի Ղոնօստ հոնկող, փալ կըտա տնու, կըքլընի: Էկէ՛քլ, աղօվ, մո-
տողօվ լոնքլ տնու մօտ ուխտ:

Մուռ կոշտըցեր խափան կացին ուրենց տէրտըրոչ խըրա-
տին: Գլոցին հըմէն տուն, մոմտ մաքլիմ, էծըմ, կլոտըմ, ուլըմ
պիւրին ժոմտան տիւռ, լոր տանին, մատաղ անին արէկտկան:

¹ Կաճէթ—գլուղ Շատախում:

² Ծըռ—խենթ:

³ Կոշտըցեր—կաճէթցիւր:

—Էկէք, օրնվոծքեր, ժամառն շրկինք տանինք իս մի։
Ա՛յր չըտանինք՝ արեկոյ ըզմէր աշկեր արխանի։

Կոշաւըցիք սիցին։

—Ժամառն տէրաւրոջն ի, թըի տէրտէր շրկի։

—Յա՛, սըշրկիմ,—սաց տէրտէր,—յէս մըկա սըպոնցրո-
նամ, յէմ կըլօխ ժամառն հոկոնտովէ արխանիմ աիւս, աիւք
քյոցէք կիզ, քյոնիմ չըվան կա՛ պէրէք կապէք մոմոկու,
ծէրմ արէք օղ, իսկէք յէմ վիզ, ծէրմ էլ թոլէք ժամառն պիւ-
լոր, քէշէք ժամառն խանէք վոր ձի, ւոր շրկիմ տանիմ։

Կոճէթո ծըռեր ուրէնց չըվանքխեր կոպըցին մոմոկուց,
ծէր արին օղ իսկըցին տէրաւրոջ վիզ, ծէրմ էլ թոլըցին ժամառն
պիւլոր ու կիզօվ թափան, ւոր ըզժամառն քէշէն խանեն վոր
տէրաւրոջ։

Մըկա քյոնի կըքէշին, օղ կըկըքիլի ու ըզտէրաւրոջ վիզ
կըքյամի։ Տէրտէր քիչ կըմընա, ւոր բոհչի¹։ Ղնու պէրան կըպոց-
վի կըխըվիլի, տաոմքեր կորովան։ Կոշաւըցեր կըշկին, գլօ չըն
խոսկոնա, ւոր տէրտէր կըխեխտվի։ Ղնոնց խոլկիին տէրտէր
կըծծղա։

—Քէշէ՛ք սըղէսեր,—կըսին կոշաւըցեր մոմոկա,—քէշէ՛ք,
տէրտէր խընդոց՝ ժամառն սընդոց։

Քէշըցին, տսիօմ քէշըցին, չուր տէրաւրոջ վիզ պօկվափ, կըլ-
լօխ ընգչով ժամառն պատի տակ, ջոնդոկ ընգչով ժամառն մէջ։

Կոճէթո ծըռեր դէս շկըցին՝ տէրտէր չըկա, դէն շկըցին՝
տէրտէր չըկա։ Մըտան ժամառն, տէսան տէրտէր գլօ ընգչիւր ի
վոր տախտին, կըթըփթըփա, կըլլօխ վէրէն չի։

—Տըղա՛, նո հո՞ւր ի մեր տէրաւրոջ կըլլօխ։

—Ա՛յլո, յէս չըմ աի՛սիւրի։

—Ա՛յլո, յէս էլ չըմ աիսիւր։

—Հոպո վա՞փս ի աիսիւր...

—Ասաված կիտի...

—Տօ՛, մո քյոցէք սըրխորուն խորցցէք՝ հոնկոխ ընչ
տէրտէր տընէն իլիւր ի աիւս, կըլլօխ վէրէ՞ն էր, թի՞ չէ...

Կոշաւըցիք քյոցին մո սըրխորին։

—Յաթան սըրխորի,—սիցին,—մեր տէրտէր գլօ ընգչիւր ի
ժամառն մէջ, կըթըփթըփա, կըլլօխ կուրիւր ի, կան իկինք՝ չըկըն-

¹ բոհչիւլ—խեղդամահ լինել։

դռնք: Մըկա չընք, կըխի, տուովտուն տը տընէն տիւս ի իկեր, ուր կըլօխ վէրէն էր, թի՞ չէ...

—Յէս հո՞ւստ կըխիմ՝ կըլօխ վէրէն էր, թի չէ,—սաց արը-
խորին,—մէ պտն կըհիշամ, տը մածուն կուտէր, մուրսու կըլէր,
կըկէր, կըտըմտըմէր...

Հիմաստուն խարս

Նոր խարս էն պէրէր կանկթ, տը տու զտնոնց հոխպրի ճիւր
չէր խըմէր ու ծըպիւր:

Յիտ օր տան անտատոր ճըծիրոց մէկ խտ կըծին կըխաղէր,
տը ուր ծեռ մըտըցոց կըծի պէրան վէ տու տը չըկէրցալ խանի:
Ճիծ ծէն իսկից ուր կըլօխ, էլոց, վըծվըծաց:

Տուն տընօլ ժողվըման, չտըչըրվան, քըրտինք խառ վոր
տնոնց, չըկէրցան ըզճըծու ծեռ տգտաէն: Հավար իսկըցին կեղ:
Կեղի ոէս, կըլզիր, աէրաէր, տիրացու, ժամխար ու քլտթխոպէք
հըմէն իկին, նըստան, կերան, խըմըցին, խեկք-խիկքի տըվին,
ճար ու հընար չըկընդուն: Շատ տըվին առին, թտըլըցին պըռնըցին,
դօր¹ սիցին. «Պէրէք ըզճըծու ծեռ կըտըինք, կըծուց խանինք»:
Թաժտ խարսի սիրտ կըմըմըռէր, հոմտ չըխօսկան էր, չէր կէնի
խաբոր տա, հինք-ինք կըպըապըտէր: Մէկ էլ ի՛նչ տիսնի, տը
նտ աստծու ծըռեր տտնակ պիրիր ին, թի ըզծեռ կըտըին: Սարս
տը չըստիմցալ, ուր տեղէն էլով, ըզկուժ էզտը կեկտին արալ խո-
զտը կըտոր, ըզլաճու ծեռ տգտաից:

Կեկըլըցեր չկըլըցին մոմտկու հերես.

—Ա՛ռա՛, սիցին, մեր խարս հիմաստուն ի, էկէք զտն անինք
կեկի ոէս...

Սիցին, արին:

Քլտնիմ օր ընցալ, նտ խարսն էլ կտնէթտ հոխպրի ճըրէն
ծըովալ:

Օրմ էլ կեկտկան իկին մտ խարս կըտնգլտտ.

—Ռէս,—սիցին,—քլու տոտաց մէռնինք, նտ ճընչըլքլտեր
ըզմեր կօրեկ զըմէն կերան: Թի ճար ոէնիս՝ տէս...

—Բ՛օ՛ ի յէս յէմ խաց ուտիմ, ծի խըրատիմ,—սաց ոէս,—
քլտցէք հոովընիրու կորմընչքեր քլաիէք թտլէք ճիւր, տը
ճընչըլքլտեր չըկտն ծեր կօրեկ ուտին:

¹ դօր—հետո, ասպա:

Մեր Պուղօ անչիկ մըտափոխ էր¹: Խլիսոն ընչ ուր աշկեր
 ֆայոց, ձի սաց:

—Տըղա Մը'կրօ, տղա ձի թէզ² խընձոր կըպի: Յեմ մաղղէն
 Կըլո³ թող Մեղրոցորսի խընձորքի:

Յէսն էլ էլտ, շոնթէն⁴ թուլցի լէմ թեմ, սիցի լոմ փըշում
 խընձոր թափիմ, շըլկիմ պիրիմ, թըխ լէմ կընիկ ուտի, սիրտ խօփնա:
 Յեմ լաճ Զոքլօ կըպապ լէմ փէշէն:

—Ձի տա'ր քչ իւէտ,—սաց,—Կա'կօ:

—Տըղա',—սիցի,—ստատր կաց, կլընտ խո Կորտպօն ճան
 խաղա, թըխ լէս ոընթ⁵ պըռնիմ լէմ ճամբոխ:—Վի'ր կըտիս:
 Յէս սիցի չէ', տն սաց իսա', լէս սիցի չէ', տն սաց իսա'... Տէսապ
 լոր չըմ'ո'լգի տանի խո ձի, զինքլ էթոլ կլետին, քլոնի ծէն կէր'
 քոսաց: Պուղօ անչիկ սաց:

—Մըկրօ, աղղէն տար խո քլի: Քլու լաճն ի, խօ քլի չո'ւտի...

—Աղէ'կ,—սիցի,—աըտանիմ:

Տոլ աընէն չէնքլ էլէր աիւս, աէսա տո առնակալին քլարըմ
 վըրցոց, լոր գորկի աըրկիցու խովիրոն:

—Տըղա Զա'քլօ,—սիցի,—խօ աիւ ծուռ չի'ս, ամօ'թ ի, մը-
 գո'րկի, աըտաս իսավում լոտ աըկոտրիս, ոլ Ալմօ ծեռնից մի
 պըրծնում չի'լնի...

—Տըգորկի'մ,—սաց:

—Տըղա',—սիցի,—շան ծիծ կէրած, ստատր կաց, քլար թոլ
 վէ: Ոլտ, լոր աիւ վոզ չըկլտս, լէս տսիօն պըռնսկիմ աըգորկիմ
 քլու վըզի տակ, լոր քլը կլըլօիս պլինթրոկվի, լո աըպնի նըճան
 պատ, սոշտոքիւրօվ չըփըրթնի...

Զոքլօ կըքլվալ:

—Տըգորկի'մ, աըգորկի'մ,—սաց:

Մըկա քլիչ կըմընա պըտքիմ, սոտոնամ խոզոր կըտոր: Ու
 չըտիմցա, իսասա, լոր աղէկըմ գլօմփիմ, տո կլետին մըտած քլար
 էգոր աըրկիցու խավուն:

¹ մըտափոխ—չգի:

² թէզ—թիւ:

³ Յէմ մաղղէն կըլա,—բառացի՝ «Իմ ախորժակը գնում է», այսինքն՝
 սիրտս ուզում է:

⁴ շոնթա—պայուսակ:

⁵ ոընթ—հանգիստ:

Նապու կըչկըչոցի վերէն Ալմօ արնէն էլալ աիւս: Ալմօ մը'սի կլտզոնըմ սա, սարի դոհքէմ¹: Ալմօ ուր ծէն խսկից ուր կլըլօխ.

—Տօ', տիրամօր տկլտթորկէքլ, քլըրքլըրո'ւկ,—բօռաց,—քլու նա'չ խորիմ, ժըռ մուռ մեռնիս, քլու մէր վոյք քլի կըսկըծա, էրուն լո ու մըղկըսա, սեկ կապի, կապոս կապի, մըռմըռա, ուր՝ ծա'մ կըսորիմ...

Մըկա լէս կլիտիմ, էոր Ալմօ օտօսպի ի: Ղնու պէրան էոր պոց-վալ, տաս նուկի տնլըվա պըրթօվ չըփա'կլի: Օր չըկա, էոր տնու պէրան ախիէսօվ չըպոցվի: Հոմոտ ի'նչ անիմ. իօ չըմ կէ'նի կլըլօխ արնի խըռ տնու: Ճարըս կըսորած հիվի² կանիմ, կոդոհիմ, էոր ուր ծէն կըսորի:

—Ալմօ,—կըսիմ,—լէմ քլոր, քլըւ տոսաց մեռնիմ, հը'չ կաց³, Չոքլօ տու ճիթ ի, խեկքլ չը խա'սնի: Էրի, խափոս աէդ լէս քլի էրկուս տամ: Տիւ էորէ՞ քլի կըճըղիս, քլ ծէն կիսկիս նո գորբոր:

Վի'ր կըսիս... Ալմօ կասղած շան ցեղ ընդլոլ Չոքլօ հի-տեկ, Չոքլօ պըլըրկվալ թոդ սար, Ալմօ՝ տնու հիսեկ: Տէսա, էոր էշուն խեկքլ խոսկոցցեկ հովլի խանգլիսս ի, քլոնձ Ալմօ ու Չոքլօ, թըղի քլոցի լէմ պոնիս:

Տու լէմ ջոնլթէն հլին խընձոր չէ արէր, լէմ աշկ ընդլոլ թոդ Չոքլօ: Ի'նչ ախանիմ... Չոքլօ փշուս ծէնէ գոսու իլիւր վոր Նորտպաու ծառիս, ժուռ ծիրան կուտի:

—Տըղա,—սիցի,—ծիրան մո'ւտի, տու ժուռ ի, քլ փոր արջո վոր քլի, տաքլօթկ արկըպնիս:

Վի'ր կըսիս: Յէմ ծէն Չոքլօ մէկ տկոնջէն կըմըսնի, մո-կլօլ աիւս կըկլո: Ճարըս կըսորած՝ քլոցի, էոր պըսնիմ տնու կոդ ու կուշա աղէկըմ կոկըղցցիմ: Չոր լէս խասա, Չոքլօ զինք ծա-ռից էթու վէ, փախալ...

Պոնըս պըրծա, քլոցի տուն: Նընձորքլիւր արվի Պուդօ ախչը-կան, տնթորոց վըրցի ու կաշնա հըտըվ արուսն: Ընչ Չոքլօ մը-սալ տուն, լէս խասա ասկիմ գորվըցի, աղէկըմ գլօմփըցի, տն-թորոց վերէն կոտըրցի, դօր լէմ սիրա խօլցալ:

Տէրտէ'ր, սամի...

Կէր, չըկէր, տէրաէրըմ կէր: Նա տէրարոջն էլ ախրացում կէր: Տիրացու մը'սի, գոխօլըմ սա: Ղու արնամօլ անկըշաուս էր: Ղնու փոր ինչըս ծակ ընէր, քլոնի կուլ աէր՝ կըպառաքիւր:

¹ գոհրո—գաղան, վայրենի:

² հիվի—աղաչանք:

³ չը'չ կաց—լիւր:

Տէրարոջն էլ անսոված շունչ տըվէր էր, խոկի չէր տըվիր, աղնօխնէքի կլտիս չէր թըղնի տիրացուն տսկում ուտէր, Լոր փորի փոնթեր պարզվէն, շոտ-շոտ ըզսաֆրեն կօխնէր, տիրացուն էլ ուզէր, չուզէր տըքնէշվէր ուտըլոց:

Տիրւմ, երկու նոտ տէրտէր ըզկերած խորումից վոր տիրացուն, տն էլ քլըխտալ, օրւմ ըզտէրարոջ խսկից նոպտնի¹ տեղւմ, սամին առից, բնդչոյ վոր տնու, դէ', տու Լոր կըտաս...

Տէրտէր կըլէր, հիվի կանէր:

—Տօ', անասոված, անխոկի,—կըսէր,—յէս քլի ի՞շկ իմ տիր, Լոր ձի կըտըփիս, չըս ամ'չընա, մարթ էլ ուր էրէցուն տըփի...

—Ձէ', յէս քլի տըսպանիմ,—կըրօւէր տիրացուն,—վար² տուն կըմըտնինքլ, տու պրրտուճւմ խաց չըկէրած, սաֆրէն կօխնիս, չըս թըղնի կուշտ ոտիմ: Լոր տիւ ձի տնթի տըսպանիս, յէս էլ քլի տսկոն տըտըփիմ, Լոր քլը աշկեր թըռնին տիւս, քլը խոկլինքլ պէնէն կլտ վէ...

—'Իէ', օխնած, ու Լորէ՞ կըտըփիս: Ձի մըտը'փի, յէս էլ ուխտ ու պալման ընի, չուր կուշտ չուտիս, սաֆրէն չօխնիմ:

—Աղէ'կ, Լոր տսկոն ի, -ու չըմ տը'փի...

Պոտըփոցէն դէն, հեփ էրէց կըհոգըրվէր, թոտ սաֆրէն օխնի, տիրացուն կըսէր.

—Տէրտէ'ր, սամի...

Տէրտէր կըվտխտնէր, ու չէր օխնի, կըսէր.

—Օխնած, տիւ ծամի...

Նըղլուկի³ ախչկան ու ծոն լանու բախտից

Ծըմըտվան կիսին ծիւն⁴ խարսնախօս հօրօխից մոտ կըղլուկ, սաց.

—Կըղլուկ ախպէր, էրի տոռնանքլ խնամի, քլ ախչիկ տու յէմ լանուն:

Կըղլուկ սաց.

—Վոր յէմ աչիչ, խոգոր պորօվ իս իկիր: Հոմոտ յէմ ախչիկ մըկա խիվանդ ի, տնու ծամեր թափիր ին, տոտրի, թըխ քլորուն կլտ, ախչկան ծամեր տան տիւս, դօր էրի քլ խարս տար:

¹ նապանի—թաքուն:

² վար—որ

³ կըղլուկ—քաղցր արմատապտուղ է:

⁴ ծիւն—ձյուն:

Կյուրուն իրի, կըղլուկի ախչկան ծամեր կոնտչան, տնու աշէ
մընաց ծոն լաճու ճամբոխ, ծոն լաճ չիբի ու չիբի...

Դօր կըղլուկ խորոր արավ ծոն, թի էրի քի խարս տար,
ծիւն սաց.

—Խնամի կըղլուկ, լէմ լաճ խըվընդցիր ի, տսկոն ցըռոցավ
ի կըպիր, Լոր տնու պըրծում չըկա...

ՊԱՄԻՆԿԷ ՈՒ ԶՈՐԵՍ ԿՄԱԷՆ

Տուլ արեմ չէր առէր զոնօտ սար, խորսըխուր Ծիծոնից
էլով տիւս: Մախլուխ¹ թափած կեղի փողոնքտեր, շարված
տոնըսքեր թոմաշտ կանէն ըզխորսըխուր: Կախպու² զուռնաչի
Գլըլ Մուրօ զուռնէն կըփըչէր, սագըտնդ Եղօ էլ նոդորէն³ կըզոր-
կէր: Զըհել տըղէտեր, տիսըկտեր խարս ու փէսի հիռճեմ ծեռնո-
խաղ⁴ կըխաղէն: Փէսէն կանաչ-կարմիր էր կապէր: Սարսի կըլօխ
քյօղք էր թալուկ:

Հոնկտիս ընչ խորսըխուր կեղից իրի տիւս, խորսնըսի խէ-
րոկըլըլօխ⁵ Հուսիկ աշի ընգլով թող ախչիկըմ, Լոր սափոր տըրէր
էր հոխպրի տակ, կախէր էր... Ախչիկ մըսի, լուսու կըտորըմ սա-
ղսկոն սըվտակ էր, ինչըխ մէկ օրվան սըռտուռ ծիւն. Լոր չամիչ
կուլ տէր, քօղաղ վէ կորովէր: Ղոնու հիրենա Հոռտամըռտու խըն-
ձոր էր:

—Սօրօտ ախչիկ,—սաց Հուսիկ,—կաթըմ ճիւր տան խըմիմ:

Ախչիկ ուր սափոր վըրցոց իտու Հուսիկէն: Հուսիկ խըմավ,
զուր պէրան սըրպից, սաց.

—Սօրօտ ախչիկ, տիւ վի՞ր ախչիկն իս:

Ախչկան հիրենից չուր տկոնքքեր ամօթու կարմրավ: Ղոն ուր
սափոր առից, թի գլովըմ⁶ կէր, արավ էրկու, փախավ ուրենց տուն:

—Հոկօ, նո վի՞ր ախչիկն ի,—խարցցոց Հուսիկ:

—Միտըտ ի՞նչ ի, Հուսիկ,—սաց Հոկօ:

—Նո պորի կտիս լէս ծեր խորսըխուր տըտաոցցիմ կեղ-
տըլտմ տու ախչիկ ուղիմ լէմ լաճուն, մէկու տեղ էրկու խարս
տըխանիմ ծեր կեղէն:

¹ մախլուխ—ժողովուրդ, բնակչութիւն:

² Կախպի (< Կաղպի)—գլուղ Շատախի դավառում:

³ նոդորտ—թմբուկ:

⁴ ծեռնոխաղ—պար՝ քայլելու ժամանակ:

⁵ խորսնըսի խէրոկըլըլօխ—հարսանիքի ղեկավար:

⁶ գլով—քայլ:

—Հոսիկ, էրի քյար քյ փէշէն թափի, մէ հրուշ տիր կրկտա
տա ախչիկ կուզիս, մէկ ծեռնով էրկու գլընդօր¹ մըպը՝անի:

—Յէս հոսօրվա պոն չըմ թը՛ղնի վողվան, չուր զախչիկ
չուզիմ, չըմ թը՛ղնի, էոր ծեր խորսըխուր տեղէն լըպըտա: Մըկա
տիւք ձի խոսկոցցէք² նո վի՞ր ախչիկն ի, ի՞նչ պընոթքլի տէր
ի, լէմ տան, լէմ լաճուն բարա՞թ³ ի:

Կլեղականքլ ախսան, էոր Հոսիկ զուր էրկու էտա քլըփսիր մէկ
սօլի մէջ կըկըքլփի, հինքն էլ խորսըխուրի խէրոկլըլօին ի՝ տնու
թուր էրկու պէնէն կըկըարի, խօսկից չէլուն:

—Հոսիկ,—սաց Մարկօ,—թի էոր կուզիս,—հիմցի, էոր տա
ախչիկ մեր կկեղի ծաղիկն ի, անուն Ասմին ի, խօր անուն Պուղօ
ի: Ասմին տսկոմ խնոգտնդ ի, էոր քյար աղաս կօտին, ծէն չըխա՛-
նի, տսկոմ միամիտ ի, էոր փըթիւր տաս ծեռ՝ կլտաէն կառնիս:
Նամուսով ի, ծեռնէն հրմէն պոն կրկտ՝ կարել, կըթել, իփել, թը-
խել, մանել, կլնծել, նըխշել, մէկ խօսկով՝ հրմէն շէնքլ ու շը-
նոխքլ...

Մարկօ սածքեր Հոսիկէ սըրտին սուն էլուն:

—Յէս գլօ քլոցի զախչիկ ուզիլու,—սաց:

Ընչ Հոսիկ Ծըծոնից Պուղօ տիւն էպոց, Պուղօ ծեռ իսի վոր
սըրտին, կլըլօխ իտու Հոսիկէն: Պուղօ կընիկ Զարօ կըզվալ տնու աչ
ծեռ պակնից, կլընոց, էոր ճիւր պիրի զէնու էտաքեր լըվո:

—Այ տիւ պորով իկիր, վոր լէմ աչիչ, վոր լէմ կլըխուն
իկիր,—սաց Պուղօ,—մեռնիմ ասածուն, էոր քլի շոնքլ իտու լէմ
տան ճամբոր:

—Շնորոկալ իմ, Պուղօ, քլը կլըլօխ սաղ մընա, քլ արեպ՝
հէրկէն, ասոված քլ տուն շեն պախի, քլ կլնծ ու մառան՝ հլին:

—Խրամանքլ արա՞, Հոսիկ,—սաց Պուղօ, նըստի վոր թողը-
սին, փալ սու ճըրոքլսոն:

Հոսիկ նըստով, փալ իտու ճըրոքլսան, Պուղօ կընիկ կըզվալ
տնու սըշկըտեր, թաթեր էխան, տաշտըմ ճիւր իպի տնու էտաքեր
լըվոց, շօրով չորցցոց, առոցավ տնու թաթեր ու սըշկըտեր խակլը-
ցոց, պոշպոտոնքլտեր կապից, կլընոց, էոր հոնգլութ վոռի,
խրամէնցի կերակուլ իփի:

Հոսիկ ու Պուղօ քլախցըր զըրոց արին ուրօնց աընից, տե-

¹ գլընդօր—սեխ:

² բարաթ—հարմար:

³ խրամանքլ արա—համեցիր:

զից, արտից, պերքից, գէսից, գէնից, չոր Զարօ ըզսուֆրէն էպոց: Սուֆրի վերէն շարից հունթըմ լօշ, տապկոցըմ արիսով, քլասէմ կաթնով մըրթօխա, քլասէմ չոր սեր, էրկու քլաստ մածուն, ամանըմ հօռօլմանից մեղըր:

Հոնկոտիս ընչ Հուսիկ ու Պուզօ խրամէնց արին ու քէշվան, Հուսիկ սաց.

—Պուզօ, լէմ ախպէր, Լորէ^օ չըս խա՛րցցի, թի վա՛ր քլամին ի ձի պիրիւր քլ տուն:

—Վար քլամին էլ պէրած ինի, պորօվ, խոզոր պորի ի պիրիւր:

—Պուզօ, իկիր իմ, Լոր իտ քլի տոռնանքլ պորտկամ: Հոխպրի կուշա տխիր իմ ըզքլու ախչիկ, շատ խավան իմ կացիր: Երի, գոն տու լէմ լաճուն, ինիինքլ խընամի:

—Յէս ի՞նչըս քլ խօսկից տիւս կլտմ: Ըմր ըզքլու արտոր Լոտ տըրիր իս լէմ սիմքից նես, թըխ լէմ Աամին տոռնա խոզ ու մոխիր, թափի քլ Լոտաց տակ: Մէկ էլ լըսիր իմ, Լոր քլու լաճ շատ կըարիճ ի, կըսին՝ թուր մըտացիս պէրան ինի, աշկ չըթա՛րթի: Յէմ զամինկէն քլ լաճու ցեղ կըարիճ իրիկըմ պէտք ի, Լոր գոնու պատիվ պաշտպանի բէկիրու, ողոստորու լոմկըտիրոց: Ըմր լէս ճըրաքլօվ կան կլէ, քլ ցեղ խընամի, քլ լաճու պէս փէսա չէ կընդնի:

Հուսիկ կանչել իտու ըզաէրաէր, զամինկէն նըշանել իտու վոր ուր լաճուն, ծիաւորըմ հօրօխից ուրօնց տուն, Լոր խորանըսի պտուրտասութէն տիսին, նոր իրավունքլ իտու, Լոր խորսըխուր կլեղէն ինի տիւս:

Զուռնէն կըլկըլաց, նոզորէն արնդոց, ջըհէլքիւր տիրմ էլ պըռնըցին ծեռնոխաղ: Մէնակ մի պոն փոխվափ, մէկ խարսի տեղ խորսըխուր կլեղէն էրկու խարս իպի տիւս, մէկ զամինն էր, մէկ՝ Ալմօ: Ալմօ իրիկ խոտ ուր կըշտին կըլէր, Աամինկէ իրիկ Զօքլօ խորոր էլ չէր, թի ուր խէր կընիկ ի ուզիր ուր խոմար:

Հոնկոտիս ընչ ծիաւոր խասով ճընուկ, քլըշից կլընոց Հուսկէ տիւս, Զօքլօ խամըված¹, քլօլօզ քլիթրած, ձեռքիւր կանթած կախէր էր Ապիանց տանիս:

—Տըղա Զօքլօ, աշկըս լնս,—սաց ծիաւոր, քլ խէր ոսկոն խօրօտ ախչիկմ ի ուզիր քլի, Լոր Հուսիս, չըխըմիս թոմօշա անիս: Ձի հօրօխից, Լոր խորոր պիրիմ, խորսըսի թոզորիք տիսինքլ:

¹ խամըվել—զարդարվել:

Զոքջօ լոր չըլլտապ, ծեւքիւր էգոր կօտին, ախլամ քէշի վոզից մըտապ փորգցտիս, ըզծին թամքից, թըվոկ էթալ ուր թեւ, իւծապ ծին ա հաւրէ Աննօս, ախ դո՛ր իս, լէս իկի:

Խորաընտար իրի խասապ Հուսիէ տուն: Զուսնի, նոդորի ծէնից կեղ աընդոց: Կլեղականք՝ մարթ ա կընիկ, ջըհել ա ախշիկ գջնօ պըռնըցին. ուրթխաթնին չափ չըկէր: Մէնակ Զոքջօ չըկէր: Հուսիէն խորտար աըվին, լոր Զոքջօ ծին իւծապ ա Քչորուտո ճամբտիպէ փախապ թոզ Աննօս:

—Ա՛յ, մոխիր տնու կօտին, մարթ էլ ուր կընգլտն հիրճվէն փախնի, լորտ տն ուր տկոնջօվ մոխիր չաժի: Էկէք մինք մեր խարսնիս անինք: Զոքջօ դո՛ր աըլտ: Ուզի, չուզի՝ աըկլտ: Յէս կլխախմ տնու ինչ տոս աըտամ:

Իրեք օր, իրեք կլիշեր Հուսիէ տուն խարսնիս էր. կուտէն, կըխմէն, կուրտխոնէն, աշկ կըտընէն, թի Զոքջօ աըկլտ, լոր լոժոմ՝ փասի, Զոքջօ չիրի: Դօր Հուսիէ ճար կըտըրվապ, կլեղ իշքան ջըհել կէն ճամբխից, լոր կան կլտն ըզԶոքջօ կընգլտն, պիրին:

Տըղէտեր տնու կընգլտն Իսվէ որսպու¹ կօնի² տակ: Էվարին գտնու խասցցին, Հուսիէ տոտտոստոնին: Հուսիկ տսկոն շոմտիսիմ էգոր տնու, լոր աշկիրոց կըրակ թափապ:

—Դէ կլընտ չօքի լէմ խարսի հիոճև, լոտ պակնի, խաթըր առ, լոր իրավունք տամ քի տնու խետ լոտ ժոմտուն փաակվիս:

Զոքջօ կատարից ուր խօր խրաման, դօր խարսի խետ քլոցին ժոմ, փասիվան, տնոնք խասան ուրօնց մուրազին, ախք էլ խասնիք ծեր մուրազին...

Էրանէ կ'ոն օր...

Խոզա՛ր, խոզա՛ր էրանեկ տն օր, ընչ տոտվտուն շոտ կընէ վէ, կորկէ կըլօրէն³ կըտընէ լէմ ծոց, մախաթ կըզորկէ լէմ դօշ կըպըսպըզէր, պոխ կըտընէ վոր լէմ թիվին, կըլէ թոզ լէմ Ղոնօստ արտ՝ ճիւր: Հոխպրի ճիւր կըկապէ վոր լէմ արտին, կըլէր, կըլըցվէր կորիքվէ, կըտըզկէր ըզարտ՝ կլըխտուորից չուր ափնին:

Դօր կըկլէ կընըստէ խընձորի ծառի խօպ, կըլըհաթէ, չուր լէմ կընիկ Յէխօս ձի խաց կըպէրէր, սուֆրէն կըփրոէնք ա խըդրոց կընըստէնք խրամէնց կանէնք...

¹ որսպի—ռես:

² կօն—վրան:

³ կորկէ կըլօրէն—կորեկի հաց:

Էվարին ընչ արեկոյ կըմըտնէր մէր, դօր ճիւր կըկըտրէ՝ ար-
տից, քլանիմ պիւռ խոփործիւ կըքլաղէ կըտընէ լէմ հընթըտակ-
պտիւ կըտընէ վոր լէմ թիվին, կըտտունէ տուն:

Խոզա՞ր, խոզա՞ր էրտնեկ տն օր...

Գլխի մարթ

Կընիկըմ ուր իրկան սաց.

— Կընտ շուկէն մօռ պտտընջտն պիր:

Իրիկ սաց.

— Մօռ պտտընջտն ի՞նչիւ ի:

Կընիկ սաց.

— Մօռի կըլլօիւ կանաչ ի:

Իրիկ կընտց շուկէն, խոջէմ տէսավ մօռ խալփօվ, կըլլօին էլ.
դյօ կանաչ փոթթուկ. տնու ծեռ պըռնից իպի ուրենց տուն ու.
տըռնէն կանչից.

— Կընիկ, տիւս էրի, պիրի:

— Էրի տտնակ տար ըզկըլլօիւ կըտրի, — սաց կընիկ:

Խոջէն բօռաց, սաց՝ կընի՛կ, լէս քլի ի՞շկ իմ արիւր, լոր լէմ՝
կըլլօի տըկըտրի:

Կընիկ խոջի ծէն լըսավ, վոզից էլտվ տիւս, տեսավ, լոր ուր.
իրիկ պտտընջտնի տեղ խոջեմ ի պիրի: Խոջին սաց.

— Կընեռես, խոջա, լէս լէմ իրկան հօրօխկէր է պտտընջտնի.
դյօ ըզքլի ի պիրի: Նո կուռուշ առ տար շուկէն, պտտընջտն առ.
տու լէմ իրկան պիրի:

Խոջեն կընտց առից, իտու իրկան, տն էլ իպի: Մօռ պտտըն-
ջտն քլեզվըցին, կընիկ սաց.

— Նո քլեզվունքլ տար թուլ կըտ, էրի:

Տարավ կըտ. ծիւլ պըռնօղքլեր հոնտեղ կաշնուկ ծիւլ կը-
պըռնէն: Ինչըի ըզքլեզվունքլ էթուլ ճիւր, ծըկնեք խըրտընան փա-
խան: Ծիւլ պըռնօղքլեր իկին զտն մարթ աղէկըմ տըգիւցին ու
սիցին.

— Կընտ դուղա արա ասածուն, սա. «տէր աստված, տաա
խատ տն ճհչիրոց»:

Գլխի մարթ՝ «տաա խատ տն ճհչիրոց, տաա խատ տն ճհչի-
րոց» սելօվ կընտց, տեսավ, լոր մարթըմ մեռիր ի, կըխորին: Կալ-
նավ հոնտեղ սաց.

— Տէր աստված, տաա խատ տն ճհչիրոց:

Մեռլի աէրեր գոնու աղէկըմ գլոմփըցին, սիցին.

—ԱՐԷ՞ տսկոն կըսիս:

—Պպտ ի՞նչ սիմ.

—Սա՛ աստված ուր խոկլին լուսաւորի:

Գլեժ մարթ Թոնոնց մօտնէն սօվրած կըսէր ու կըլէր: Կլընոց տէսավ շունըմ խատէր էր ու խոտ կըկլէր: Կալնավ վոր խատուկ շան ու սաց.

—Աստված ուր խոկլին լուսաւորի:

Հոնանդաց մարտեր քլոնիմ շամախիկ գորկըցին տնու վըզ-տակ ու խորցցին.

—ԱՐԷ՞ տսկոն պոներ կըսիս:

—Պպտ ի՞նչ սիմ,—սաց գլեժ մարթ:

—Թըքլի վէրէն ու սա՛ նո իշ փիս խոտ կըկլտ:

Պոնոնց մօտնէն սօվրած սելօվ կլընոց խասավ բողնըսի տիւռ: Տեսավ խոնըմքլեր բողնըսից կըկլոն տիւռ, սաց.

—Թո՛ւ, թո՛ւ, նո իշ փիս խոտ կըկլտ:

Խոնըմքլիրու մըշտկտեր ըզգլեժ մարտուն ճորտըցին, սիցին.

—ԱՐԷ՞ տսկոն կըսիս:

—Պպտ ի՞նչ սիմ:

—Սա, օ՛խ, օ՛խ, ինչ անոշ խոտ ի...

Հոնանդի սօվրած խսկից ուր պէրան, կլընաց, տէսավ, Լոր էրկու մարթ կըկըռվին: Կալնավ տնոնց մօտ, սաց.

—Օ՛խ, օ՛խ ինչ անոշ ի...

Կըսվողքլեր մոմտկուց վոզն իկին, գլեժ մարտու կողեր խօ-րօտըմ կտկըզցցին ու սիցին.

—Տիւ Լո՞րէ տսկոն կըսիս:

Պպտ ի՞նչ սիմ.

—Սա՛ է՛լ տոճկըտեր, մըսըմտնքլտեր, էկէքլ տսոնց բո-րըշցցէքլ:

Գլեժ մարթ հոնանդաց սօվրած սելօվ կլընոց, տէսավ, Լոր էրկու շուն կըկըռվին, սաց.

—Է՛լ տոճկըտեր, էկէքլ տսոնց բորըշցցէքլ:

Լըսողքլեր իկին գէնու տսկոմ արփըցին, Լոր ուր հոշ կլընոց: Դօր ճիւր ծիցին վէրէն, հոշ իրի կլըլօխ, սիցին.

—ԱՐԷ՞ տսկոն կըսիս:

—Պպտ ի՞նչ սիմ.

—Սա՛ հօ՛շթ, հօ՛շթ՝ թըխ փախնին:

Հոնանդ սօվրած սելօվ կլընոց խասավ սօլկորնոց, տէսավ սօլկորքլեր կաշիքլ պըննիր ուրօնց պէրան կըքլէշքլըշին, սաց.

—Հօ՛շի՛, հօ՛շի՛:

Սօլիորքեր ըզգչեժուն աղէկըմ ճորտըցին, ճամբխու տըրին:

Մեր գլեժ մարիժ չուր հըրկուն կան իրի ու տըփոց կերավ:
Հըրկուն ջօրօվ կընոց տուն: Էլոժ ուր կընգլուն պատմից, կընիկ
սաց.

—Անխեւք յարտուն տեղն ի: Խեւքօվ կաց, ծէժ մո՛ւտի.

ՀԱՏՎԱԾ ՎԱՍՆԱ ՏՊՎԻԹ» ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊՈՅ

* * *

Խորտը իրի խասավ Մըսըր, լոր Տոմիթ զուր խօր Մարութա
պոնցրիկ տատկորոժնի վոնք շինիր ի: Մըսրա Մէլիք քլըոխավ,
կանչից ըզկոզբոլդին, սաց.

—Կլընո Սասուն, պի՛ր լէմ քլառուն տարվան խորջ. քլառ-
սուն պէնօվ լոսկի պի, ըզՍասուն ավրի, պի թալան:

Քլառսուն հէրկէն կընիկ պի՝ ոխա պոնան,

Քլառսուն կարճ կընիկ, լոր էրկանք աղան,

Քլառսուն խօրօա ախչըկաէր արմաղան,

Քլառսուն կարմիր կօվեր կըլծան,

Քլառսուն բոշ լէզներ լըծկան,

Քլառսուն սեվ էշվանք զըռան,

ըզՍասուն ավրի, պի թալան...

Կոզբոլդին հրամանք առից, վըրցոց ուր զօրք, ուր ծին խէ-
ժավ, քլըշից թող Սասուն: Մըսրո կընգլտեր լըվոց կանէն, ընչ՝
Կոզբոլդին ուր զօրքօվ կըլէր: Ղնոնք ծէն արվին.

—Հե՛ջ Կոզբոլդին, տիւ գո՞ր տըլոս,

—Տըլոմ Սասուն՝ պիրիմ թալան,

Քլառսուն կօվեր պիրիմ կըլծան,

Կլորնան շինէք չէդ ու չորթան,

Վոսկի պիրիմ շարան-շարան,

Սասուն քլակիմ, անիմ վէրան...

Կընգլտեր կլէօվոցին ըզկոզբոլդին, ուրախութենէ գլոնդ պըռ-
նըցին:

Կոզբոլդին ուր զօրքօվ մըտավ Սասուն: Ծէնօվ Հօվանի լէ-
ղին հոխու կըտրավ, սաց.

—Ա՛ռ քյու քյառսուն տարվան խորշ,
 Քյառսուն, քյառսուն հէրկէն կընիկ,
 Քյառսուն, քյառսուն կօլօտ կընիկ,
 Քյառսուն, քյառսուն խօրօտ կընիկ,
 Քյառսուն կարմիր կօվեր կըլծան,
 Քյառսուն բուլթջ լէզներ լըծկան,
 Քյառսուն սեւ էշվոնքլ զրոան,
 Քյառսուն ջրվոլ տեղին լոսկի,
 Մէնակ խըխճա մէր խեխճ ասկին:

Կողբողին ըզկընգյաներ, ըզխօրօտ ախշըխներ ժողվից արավ մարաքլ, կօվեր, լէզներ ու էշվանքլ արավ փորգլտիս, կօտ առից, մըտավ ամբոր, թի ուր ծեռնօվ լոսկին չափի:

Հոնկլտիս ընչ Կողբողին լոսկին կըչափէր, Տօվիթ ժոնգլոտ շեխիբմ առէր, մըտէր էր ախքլատ պառվում շտիկլըմոց, ուր խոմար շտիկլտմ կուտէր: Պառվա աշկ ընչ ընգլտվ ըզՏօվիթ, ծէն իսկից ուր կլըօխ:

—Ա՛յ, Տօվիթ,—սաց,—աիւ լէմ խօր խոց ուտիս, կլըրօղ քլի տանի, Սասնա ծուռ շտիկլտմտիկեր, աիւ լորէ՞ լէմ ապրուստ կըկըտրիս: Թի կըտրիճ իս, կլընտ քլու խօր խըզնին աէրուլթէն արա, լոր Մըսրո Կողբողին իկեր կըտանի...

—Տօ մա՛րէ, հո՞ւր ի Կողբողին, հո՞ւրդիւց կըտանի լէմ խօր խըզինէն:

—Հուրդիւց կըտանի՛, քլու ա՛շկ կըխանի: Գլօ՛հոն, քլու խօր տմբորվէ Կողբողին ուր ծեռնօվ կը չափի գոսկին: Կընգլտեր ու տխշըկտեր արիւր ի մարաքլ, տիւտ շինիր, պոլնիս տըրիւր ուր ջէբ:

—Աղէկ, մարէ՛,—սաց Տօվիթ,—աիւ գտրօղ մա՛նի, մըկա լէս սեւ աըպիրիմ տնոնց կլըօխ:

Տօվիթ կլընոց: Ա՛յ խասավ, տսկիմ էգտր ըզմտրոքլի աիւտ փըլիից իսկից վէ, գտխշըկտեր տգտաից: Դօր հոնտեղից իրի, մըտավ ուր խօր ամբոր, տեսավ ուր խրօխպէր ծեռ տըրիւր ուր ծոց, կլըօխ կախիր, շիվարած թոմաշա կանի, թի Կողբողին ինշըխ կօտ առիւր գոսկին կըչափի, կլընցի թեռներ: Տօվիթ աշկեր էրուն պըռնից, խասավ ըզԿողբողինն զըմըշկլից գէն, կօտ խըլից տնու ծեռնից ու բօռաց:

—Յէմ խօր լոսկին լէս տըչափիմ:

Տօվիթ ըզկօտ շըրճից պէրտնավէ, լոսկին էլից վոր կոտի լոտին, փէտօվ սըրպից էթուլ տակ ու տոտտակ կօտ տարավ թոպ թ հո, սաց:

—Նո մէկ:

Կողբողին քլռւիսով.

—Արէ լէս ծեր տընա՞զն իմ,—սաց,—Լոր թըլօր Տոպիթ ձի ծեռ կաննի, վոր ձի կըծըծղա... Այլա՛, Լոր ծեր խորշ չըտէք, տըլտմ Մըսրտ Մէլըքին տըսիմ, տըկտ ծեր Սասուն անի վէրան, ծեր ասկի կընէթէն՝¹ կըտրի...

—Տոպիթ վոր տնու խօսկին տլ չըտիմցավ, տարավ իպի կօտ էգտր ըզԿողբողին կլըլօի կոտրից, տնու տատմքէր քէշէից պըվոից տնու ճակատ, տկոնշքէր կըտրից, պըռկըտեր պօկից՝ տնու պէրան մընաց պոց:

—Կլընտ,—սաց,—ծեր Մըսրտ Մէլըքին սա, Լոր ինչ տնու ծեռնէն կըկտ, թըի անի: Թի կըտրի՞ ի, թըի հինք կտ ուր խորշ տանի...

Կողբողին փօր-փօշման առոցավ կլընտց Մըսըր: Կընգտեր Լոր տեսան տնու կլըլօի կոտրուկ, տկոնշքէր կըտրուկ, տատմքէր քէշէուկ պըվոուկ ուր ճակատ, պըռկըտեր պօկուկ, ծըծղացին, աիցին.

—Հէ՛լ Կողբողին պոցտպէրան,

Հուրի՞ւց կըկտս լէրան-լէրան,

Պէրնիցըտ կըկաթի ճըպըլտիէ թան...²

Տիւ Սասուն կըպէրէս թալան,

Քյառսուն հէրկէն կընիկ, Լոր ուխտ պտոնան,

Քյառսուն կօլօտ կընիկ, Լոր էրկանք աղան,

Քյառսուն խօրօտ ախչիկ արմաղան,

Քյառսուն կարմիր կօվեր կըթան,

Քյառսուն բոշ լէզներ լըծկան,

Քյառսուն սեվ էշվանք զըռան,

Ասկի պէրէս շարան-շարան:

Քյոցիր Սասուն քյոնձ կլել կլտզան,

Տոռցար ինսօլ քյոնձ շուն վոզան...

Կողբողին պատասխան իտու.

—Յէս կլէտէ առշտ էր մոլգտն,

Յէս չըկլի՛տէ քյար էր, կապան,

Մարթ կէր ինի կլտզոնտկան,

Կընոնց թըրեր սըլուքլտկան,

Կըզորկէն, կըխանէն քյոնձ պտտուխան...

¹ Կընէթա—սերմացու:

² ճըպըլտիէ թան—չորթանից պատրաստված թան:

Բ Ա Ռ Ա Յ Ա Ն Կ

ԳՐԱԲԱՐԻՅ—ՇԱՏԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Ագանել—խակյնել, խակլվել
 Ագի—հոկյի (կանացի հագուստի
 քղանցք)
 Ագուցանել—խոկյցցել, խոկյլցել
 Աղցան—ողոցան
 Աղապ—ազար
 Աղատ—ազատ
 Աղատել—ողոտել
 Աղատութիւն—ողոտութիւն
 Աղզ—ասկ
 Աղզական—ասկական
 Աղզասէս—ասկասէր
 Աղնիւ—աղնիվ
 Աթար—աթար
 Աթոռ (նստարան)—աթոռ (փոքրիկ
 սեղան)
 Ալեւոր—խուլւոր
 Ալի—ալի
 Ալիւր—էլուր
 Ալոջ (էգ ուլ)—ալոջ (մայրացու այծ)
 Ախոռ—ախոռ
 Ածել—ծել (1. լցնել, 2. ձու ասել)
 Ածելի—տոծլի
 Ածու—ածու
 Ակահ (տեղյակ)—հոկախ (արթուն,
 զգոն)
 Ակամայ—հոկոմոկա
 Ականատ (փոս)—հոկոնատ (պատի
 մեջ սարքված պատուհանաձե պա-
 հարան)
 Ականջ—ականջ
 Ակն (ջրի)—ակ

Ակն (քար)—ակ
 Ակօս—ակօս
 Ահ (վախ)—ախ
 Ահա—ահա
 Աղ—աղ
 Աղալ—աղալ
 Աղանձ—աղանձ
 Աղաչել—ողոճել
 Աղաշնի—յէզլընեկ
 Աղբ—ախփ
 Աղբիւր—հոկպիւր
 Աղեղն—անեղ
 Աղեղնակ (ծիրանի գոտի)—յէզյակ
 (ծիածան)
 Աղէ—աղէկ
 Աղի—աղի
 Աղիք—աղիք
 Աղուէս—աղվէս
 Աղուն (աղալու բան)—աղուն
 Աղբատ—աղբատ
 Աղօթք—աղօթիկ, աղօթ
 Աղօթել—ողօթել
 Ամաչել—ամչլնալ
 Ամառն—ամառ
 Ամբար—ամբար
 Ամբարտաւան—ամբարտավան
 Ամեն—հրմէն, զրմէն
 Ամիս—ամիս
 Ամիրայ—ամրո
 Ամոլ—ամոլ
 Ամպ—ամբ
 Այդի—հիկյի

Այդ—տա, տաիկ
 Այլ—ալ, էլ
 Այծ—էծ
 Այն—տն
 Այստեղ—հաստեղ, ստա, ստակ
 Այր (տղամարդ)—իրիկ (ամուսին)
 Այրեւ—էրէցեւ
 Այրի—ւորպովորի
 Անագան—հոնակոյտն
 Անագանել—հոնակոյտնել
 Անալի—ալնի
 Անանուխ—տովտնտնուխ
 Անապատ—հոնակատ
 Անառակ—անառակ
 Անասուն—անասուն
 Անարատ—անարատ
 Անբոյս—անպահ
 Անգաղար—անտոտոր (չարածի)
 Անդունդ—հոնիւտքոյ, անդունդ
 Անեք—անեք
 Անէծք—անէսկ
 Անթ—հունթ
 Անթատակ—հընթըտակ
 Անթեղ—անթեղ
 Անթեղոց—տնթորոց
 Անիծ—անիծ
 Անիծել—անէսկ տալ
 Անկանել—ընդյնել
 Անկողին—գլխիլինք
 Անձրեւ—անձրով
 Անոյշ—անոյ
 Անուն—անուն
 Անցանել—ընցնել
 Անցուցանել—ընցցել, ընցուցել
 Անօսք—նօսք
 Աշակերտ—աշկերտ
 Աշխատել—աշխատել
 Աշխարհ—աշխար, աշխարք
 Աշուն—աշուն
 Աշք—աշկ
 Ապարանջան—տապընջտն
 Ապաւէն—ապավէն
 Ապուր—ապուր
 Ապրանք—ապրանք
 Ապրել—ապրել

Ապրուստ—ապրուստ
 Աջ—աջ
 Առաջ—հոռած
 Առաջեւ—հինճել
 Առաջին—հընճի, հընճին
 Առատ—առատ
 Առաւօտ—տոռովտուն
 Առիւծ—առիւծ
 Առիք—հոռք
 Առնել—անել
 Առնէտ—առնէտ
 Առնուլ—առնել
 Առողջ—առողջ
 Առու—առու
 Ասել—ասել
 Ասեղն—ասեղ
 Աստառ—աստառ
 Աստղ—աստղ
 Աստուած—աստված, ասպած
 Աստուածածին—տավթըտծին
 Ատակել (ժամանակ գտնել)—հո-
 տակել
 Արագիլ—առակլել
 Արածել—որտածել
 Արատ (պակասութուն)—արատ
 (նաե՛ մեղք, հանցանք)
 Արբանեակ (սպասավոր, ծառա)—
 հըրպընէկ (ձեռնահաս, օգնել կա-
 րողացող երեխա)
 Արգար—արտոր
 Արեգակն—արէկոյտ
 Արեւ—արեւ
 Արթուն—հորթուն
 Արժան—հէժան
 Արժանի—արժան
 Արժել—արժել
 Արի'—էրի'
 Արիւն—էրուն
 Արժաթ—առժաթ
 Արծիւ—առծիւ
 Արձակել—որցիկել
 Արճիճ—առճիճ
 Արմաւ—ամբրով
 Արմուկն—էրմունդ
 Արջ—արճ

Արջառ—աճառ
 Արջասպ—արճոսպ
 Արա—արա, առա
 Արտասուք—արտասունք
 Արտոյտ—արտուտիկ
 Արօս (թռչուն)—արօս
 Արօս (շփերկված հող)—հորօս
 Արօտ—արօտ
 Արօր (դորձիքը)—խորօր
 Արօր (ջրային թռչուն)—արօր
 Աւազ—ավաք
 Աւազ—ավադ
 Յւազակ—աւազակ
 Աւան—ավան
 Աւել—ավել
 Աւելիկ—ավելի
 Աւելորդ—հավելորդ
 Աւետարան—ավետրան
 Աւերակ—ավերակ
 Աւերել—ավերել
 Ափ (բուռ)—ափ
 Ափն—հափ
 Ափսոս—ափսոս
 Յփացի—ապիլի
 Բադ—բաւ
 Բազէ—բազու
 Բազուկ (ձեռքի)—պտուկ
 Բազումք—պտուկ
 Բաժանել—պտնել
 Բաժին—պտնի
 Բախտ—բախտ
 Բակ—պակ
 Բակլայ—բուկլայ
 Բահ—պախ
 Բաղանիք—պողնիս
 Բաղաբջ—պողարճ
 Բաղեղն—պտուխ
 Բամբակ—պտմակ
 Բամբասել—պտմասել
 Բան (խոսք)—պտն (1. իր, 2. դորձ, աշխատանք)
 Բանալ—պտնալ
 Բանալի—պտնիս
 Բաշխել—պտշիս

Բառ—պոռ
 Բառնալ—պտռնալ
 Բարակ—պտրակ
 Բարդ (դեղ)—պտրի
 Բարեկամ—պտրեկամ
 Բարեկենդան—պտրեկանդանք
 Բարկ—պտրկ (թեժ)
 Բարի—պտրի
 Բարկանալ—պտրկանալ
 Բարձ—պտրց
 Բարձր—պտնցր
 Բարձրանալ—պտնցրանալ
 Բարաշ—բարաշ
 Բարեաւ—պտրօվ
 Բաց—պտց
 Բեժ—պեժ
 Բեռն—պեռ
 Բեքան—պեքան
 Բեքան—պեքան
 Բէրդ (ամբողջ)—պերի
 Բերել—պերել
 Բեւեւ—պերվեւ
 Բիւր—պերպուկ
 Բլիթ—պերլիթ
 Բնուիթ—պերնուիթ
 Բոլոր (շուրջ)—պերլոր
 Բոկիկ—պոկիկ
 Բոդ—պոդ
 Բողկ—պոդկ
 Բոյթ (մատը)—պոթ
 Բոյն—պոն
 Բոյս—պոս
 Բով—պով
 Բովել—պովել
 Բորակ—պտրակ
 Բորբոս—պիւրպոս
 Բոտոս—մընդիւտ
 Բորբոսել—պերպոսնել
 Բոց—պոց
 Բու—պիւվ
 Բուսն—պիւս
 Բուսանել—պիւսնել
 Բուրդ—պիւրթ
 Բուրվաւ—պիւրվալ
 Բուք—պիւք
 Բանել—պեանել

Բրդել — պըրտել
Բրինձ — պըրթինձ
Բրուտ — պըրուտ

Գար (մի բույս, խաշնղեղ) — կյոփ
(խավարձի տակի տերևները)

Գաղաթն — կյոկյոթ

Գաղ (չափը) — գյող

Գաղ (բույսը) — կյող

Գաղան — կյողոն

Գալ — կյոլ

Գալար կյոլտը

Գալտրել — կյոլտրվել

Գաղափար — քաղափար

Գաղա(ուկ) — կյոխտիկ

Գաճ — գյոճ

Գալլ — կյել

Գայո — քյոո (ցեխ)

Գանգատ — կյոնգյոտ

Գանգատել — կյոնգյոտվել

Գանձանակ — կյոնձոնոկ

Գան — կյոո

Գարի — կյորի

Գարուն — կյորուն

Գաւաղան — կյովողան

Դետ — կյետ

Դետափ — կյետափ

Դետին — կյետին

Դերան — կյերան

Դերանդի — կյերընդի

Դերեզման — կյերեզման

Դերի — կյերի

Դղել — կյըղել

Դղրոց — կյըղրոց

Դիժ — գյեժ

Դին — կյին

Դինդ — կյինդ

Դինի — կյինի

Դինձ — կյինձ

Դիշեր — կյիշեր

Դիտենալ — կյիտենալ

Դիւր — կյիւր

Դիւրք — կյիւրք

Դիւրկ — կյիւրկ

Դիւղ — կյիւղ

Դլորել — կըլորել

Դլուխ — կյլլօխ

Դղթոր — գյըլնթոր

Դմբեթ — քյըմբէթ

Դնալ — կյընալ, յոլ, հոլ

Դոդ — կյոճ

Դոզնոց — կյիւկյնոց

Դոհ — կյոխ

Դոմ — կյոմ

Դոմէշ — կյիւմէշ

Դոյն — կյոն

Դովել — կյլօովալ

Դոդ — կյոճ

Դործ — կործ (աշխատանք) կյոնծ
(գործվածք)

Դորտ — կյոնտ

Դոց — կոծ

Դութ — բութ

Դութան — կյիւթան

Դունդ — կյիւնդ

Դունն — կյիւո (ավաղան)

Դուն (ցեխ) — գյըուն (թարախ)

Դուռ (գանդուր) — կըռնինձ

Դտանել — կընդնել

Դրաւ — գյըրալ

Դրել — կյըրել

Դրկել — կյըրկել

Դագարել — տոտրել (1. դագարել,
2. սպասել, 3. դնալիս կանգնել)

Դալ — տոլ

Դալար — տոլտը

Դահ — տոխ

Դահիճ — գոխիճ

Դամոն — տոմոն

Դանակ — տոնակ

Դաշտ — տոշտ

Դառն — տոո

Դառնալ — տոոնալ

Դաս — տոս

Դատ — տոտ

Դատաստան — տոտոտան

Դար (թերութիւն, բլուր) — տոր

Պարբին—տորպին

Պարձ—տուռ

Պղում—տրտիւմ

Պեն (կողմ)—դէիս

Պեղ—տեղ

Պեղել—տիղել

Պեղին—տեղին

Պես—տալ

Պել—տէվ

Պէզ—տէզ

Պէմ—տէմ

Պիղել—տիղել

Պիմանալ—տիմնալ

Պիպանել—տըպնել (1. զիպնել, 2. կպչել, 3. հանդիպել, 4. այցելել)

Պիւր գալ—տիւր կլալ

Պծոխք—աւժխոց

Պծուար—տըժտը

Պմակ—տըմակ

Պնել—տընել

Պող—տոփ

Պողալ—տոփալ

Պու—տիւ

Պունչ—զունչ

Պունն—տիւն

Պուր—տիւր

Պուրս—տիւս

Պրախտ—տըրտիտ

Պրակից—տըրկեց

Պրանդի—տըրտնդի

Եզն—յէզ

Եզը—յէրզ

Ելանել—իլնել

Եղբայր—տիւղեր

Եղեզն—յէզէք

Եզի (ցորեն)—յէզա

Եզիճ—յէզեճ

Եզի (զու)—յէիք

Եզնիկ—յէզնիկ

Եզունդն—յէզունդ

Եպիսկոպոս—յէպիսկոպոս

Եսալ—յէսալ

Եռանդ (երեկ չէ առաջին օրը)—յէսանդ

Եռանդ—յէսանդ

Ես—յէս

Երազ—էրազ

Երակ—էրակ

Երանի—էրտնիկ

Երբ—հեփ

Երգ—յէրգ

Երդիբ—հիւրտիւս

Երդնուլ—հէրտըմալ

Երդումն—հէրտում

Երեկոյ—հըրկուն

Երես—հըրես

Երեսուն—յէսսուն

Երերալ—էրէրալ

Երեւել—էրէվալ, տըրվալ

Երեք—իրէք

Երեկ—հէրէկ

Երեց—էրէց

Երթալ—էրթալ

Երինջ—էրինջ

Երկաթ—էրկաթ

Երկայն—հէրկէն

Երկանք—էրկանք

Երկինք—էրկինք

Երկիր—յէրկիր

Երկու—էրկու

Երնջնակ—էրնջնակ

Եփ—էփ

Եփել—իփել

Եաւթն—յօթ

Զամբիւղ—զոմբիլ

Զանգակ—զոնգյոկ

Զատ—զոտ, զոտու

Զատիլ—զոտցել

Զատիկ—զոտիկ

Զարգարանք—զոտոտրանք

Զարկանել—զոտրկել, զոտնել

Զարմանալ—զոտմտնալ

Զաւակ—զովակ

Զենուլ—զինել

Զգուել—զիսալ, զըզվալ

Զղշալ — զըխճու
 Զնդան — անդոտն
 Զուարթ — զըվարթ
 Զուգեկ — զուգեկ
 Զոքանչ — զօքանչ
 Զրահ — զըրէի
 Զրկեկ — զըրկեկ
 Զրոյց — զըրոյց
 Զրուցեկ — զըրուցեկ
 Զօրութիւն — զօրութիւն

Էգ — էք
 Էշ — էշ

Ընդ որ — դոր (որտեղ, ուր)
 Ընթրիք — ճընթրիս
 Ընծայ — ընծա
 Ընկեր — ընդհեր
 Ընկոյս — զնկոյս (ընկույթի միջոցով)
 Ընտրեկ — ընդրեկ

Թագ — թագ
 Թագաւոր — թագաւոր
 Թաթ — թաթ (1. ձեռքի թաթ, 2. գուլ-
 ալ)

Թաթախեկ — թաթախեկ
 Թաղիք — թաղիք, թաղիս
 Թաղեկ — թաղեկ
 Թաթսան — թաթսան
 Թաժը — թաժը
 Թան — թան
 Թանկ — թանկ
 Թանաք — թանաք
 Թանձր — թանձր
 Թառ — թառ

Թարթափ — թարթափ
 Թարթեկ — թարթեկ
 Թաց — թաց

Թաւալեկ — թաւալեկ
 Թափեկ — թափեկ
 Թեկ — թեկ
 Թեկն — թեկն

Թեղ — թեղ
 Թեղի (ծառ) — թեղի
 Թեր (շամար) — թէրէն (փոխարեն)

Թիւ — թիւ
 Թեփ — թեփ
 Թէ — թի, թո
 Թթու — թթու
 Թիգ — թիգ
 Թիթեռնիկ — թըրթընիկ
 Թիւ — թիւ
 Թիսեկ — թըսեկ
 Թմբեկ — թմբեկ
 Թոթոշ — քոթոթոշ

Թող — թող, թըս
 Թողուկ — թըղնեկ
 Թոշ — թոշ
 Թոնիր — թոնիր

Թոռն — թոռ
 Թոռամեկ — թոռամեկ
 Թուղ — թուղ
 Թութ — թութ
 Թուխ — թուխ
 Թուխս — թուխս
 Թուղթ — թուղթ

Թուժը — թուժը
 Թունդ — թունդ
 Թուշ — թուշ
 Թուր — թուր

Թուք — թուք
 Թոշեկ — թընեկ
 Թրթնջուկ — թըրթընիկ
 Թրթուր — թրթուր
 Թրիք — թըրիք
 Թրծեկ — թըռծեկ
 Թրջեկ — թըրջեկ
 Թքանեկ — թքքեկ
 Թաղեկ — թըղեկ

Ժած (խնիւ) — ժոժ, ժըժոն
 Ժահր (թույն) — ժոհր
 Ժամ — ժոմ, ժոմտուն

Ժամուց — ժոմոց
 Ժայռ — ժէռ
 Ժանդ — ժոնդ, ժոնդլը
 Ժանդառ — ժոնդլոռ
 Ժառանգ — ժոռանդ
 Ժողովել — ժողովել
 Ժպտալ — ժըմտալ

Գլխի—խլիկ
 Դմ—յէմ
 Ժմանալ—հիմնալ
 Ժնն—ին
 Իննսուն—ինսուն
 Ինչ—ինչ, իշկ, իշ, ընչ
 Ինքն—հինք
 Իշխան—իշխան
 Իջանել—իջանել
 Ինչի—է՛տ
 Իրաւ—իրաւ
 Իրեալ—գիրալ, իրալ, հըրուր
 Իւզ—յէզ
 Ժւր—ուր
 Իւրեանք—ուրօնք, ուրանք

Լաթ—լաթ
 Լալ—լալ
 Լակել—լէկել
 Լակոտ—լակոտ
 Լան—լէն
 Լար—լար
 Լաց—լոց
 Լափել—լափել
 Լեարդ—լերթ
 Լեզու—լէզու
 Լեղակ—լողակ
 Լեղի—լեղի
 Լի—հին
 Լինդ—լենդ
 Լինել—լինել
 Լնուլ—լըցել
 Լոգանալ—լոկոտնալ
 Լողալ—լողալ (սալթաքել), լող ատլ
 (լողալ)
 Լոյս—լոս
 Լուսնեակ—լուսնակ
 Լպրծել—լըպըստըալ
 Լսել—լըսնել
 Լօշտակ—լօշտրակ
 Խաբել—խապել
 Խազ (գիծ)—խազ
 Խաժ—խաժ
 Խալ—խալ

Խախտ—խախտ
 Խաղ—խաղ
 Խաղալ—խաղալ
 Խալթել—խէթել
 Խալտանակ—խալտանակ
 Խանձել—խանձրել
 Խանձրահամ—խոնձրոխամ
 Խանութ—խանութ
 Խանձարուր—խոնձարուր
 Խաչ—խաչ
 Խաչերկաթ—խոռճեկաթ
 Խառնել—խառնել
 Խարազան—խորտոզան
 Խարդախ—խարթախ
 Խարչել—խաչել
 Խարտել—խարտել
 Խարտոց—խարտոց
 Խաւարծիլ—խալտոռծիլ
 Խաւիծ—խալիծ
 Խելաքի—խէլքօլ
 Խելք—խէլք
 Խեղդել—խիխտել
 Խեղճ—խեխճ
 Խեթ—խէթ
 Խեւ—խել
 Խեցի—խէցիկ
 Խէժ—խիժ
 Խթել—խիթել
 Խիզ—խիխճ
 Խիճ—խիճ
 Խիւս—խուս
 Խլել—խըլել
 Խլինք—խըլինք
 Խղճալ—խըխճալ
 Խղճատանք—խըխճալտանք
 Խմել—խըմել
 Խմոր—խըմոր
 Խնամի—խնամի
 Խնայել—խընայել
 Խնդալ—խընդալ
 Խնդրել—խընթրել
 Խնձոր—խընձոր
 Խնջել—խընջել
 Խոզ—խոզ
 Խոզան—խոզան

Խոթել — խոթել
 Խոյորել — խուլորվել
 Խոխ (դեղձ) — խօխ
 Խոյ — խօյ
 Խոնարհ — խոնար
 Խոնջան — խոնջոն
 Խոսպան — խօսպան
 Խոտ — խոտ
 Խոր — խոր
 Խորան — խորան
 Խփ — խփ
 Խոց — խոց
 Խուլ — խուլ
 Խուժար — խուժար
 Խուճկ — խուճկ
 Խուրձ — խուրջ
 Խուց — խուց
 Խուփն — խուփ
 Խուսգատ (խոտաբույս է) — խընըն-
 գատ
 Խոռվել — խըռվել
 Խստոր — սըխտոր
 Խրատ — խըրատ
 Խըխնջալ — խըրխըջալ
 Խփել — խըփել
 Խսիր — խըսիր
 Խօսք — խօսկ

 Մագել — ծագկել
 Մալել — ծալել
 Մախել — ծախել
 Մածկել — ծածկել
 Մակ — ծակ
 Մաղիկ — ծաղիկ
 Մաղկել — ծաղկել
 Մաղր — ծաղըր
 Մամ — ծամ (կնոջ մալ)
 Մամել — ծամել
 Մայր — ծէր
 Մանր — ծանդրը
 Մառ — ծառ
 Մառայ — ծառա
 Մառգարդար — ծռուլորոտոր
 Մարաւ — ծարալ
 Մարավել — ծորավնալ

Մափ — ծափ
 Մեփ — ծեփ
 Մեփել — ծիփել
 Միլ — ծիլ
 Միծաղել — ծըծղալ
 Միծեռնակ — ծըծըռնէկ
 Միտ — ծիտ
 Միրան — ծիրան
 Միրտ — ծեռտ
 Մլել — ծըլլել
 Մծել — ծըծել
 Մղխնի — ճըխան
 Մմակ — ծըմտ
 Մնանել — ծըննել
 Մնծղայ — ցընձղակ
 Մոմ — ծոմ
 Մով — ծով
 Մոց — ծոց
 Մուճկ — ծուճկ
 Մուներ — ծուներըր
 Մուռ — ծուռ (խենթ)

 Կաթիլ (ք) — կաթելք
 Կաթել — կաթալ
 Կաթն — կաթ
 Կաթողիկոս — կոթողիկոս
 Կալ (հացահատիկ) — կաճ
 Կամ (բայլ) — կամ
 Կալամաս — կոլոմաստ
 Կախել — կախել
 Կակաղել — կըկըղալ
 Կակաչ — կակաչ
 Կակժիրակ — կոնջըրտիկ
 Կակուղ — կակուղ
 Կաղ — կաղ
 Կամուրջ — կարմունջ
 Կամենալ — կոմոնալ
 Կայծակ — կէծակ
 Կանաչ — կանաչ
 Կանդնել — կայնել
 Կանեփ — կանափ
 Կանթեղ — կանթեղ
 Կանկար (բույսը) — կանդյոթ
 Կանուխ — կանուխ
 Կանչել — կանչել

Կ աշառք—կաշառք
 Կաշի—կաշի
 Կապ—կապ
 Կապան—կապան
 Կապել—կապել
 Կապեքոտ—կապեքոտ
 Կապոյտ—կապոյտ
 Կառ (փուշ)—կառ
 Կասկած—կածկած
 Կատաղել—կատողել
 Կատար—կատար
 Կատու—կատու
 Կար—կար
 Կարել—կարել
 Կարենամ—կէնիմ
 Կարագ—կարագ
 Կարաս—կարաս
 Կարգալ—կարտալ
 Կարթ (մանված թել)—կոթ (1. նըրբ-
 բազեղիմ ալծի բուրդ, 2. նույն
 բրդից մանված թել):
 Կարիճ—կարիճ
 Կարկամել—կտրկումել
 Կարկատան—կտրկոտան
 Կարկուտ—կարկուտ
 Կարճ—կառճ
 Կարմիր—կարմիր
 Կարօտ—կարօտ
 Կացին—կացին
 Կաւ—կավ
 Կաւիճ—կավիճ
 Կաքաւ—կաքայավ
 Կեղծաւոր—կեխծուոր
 Կեռ—կեռ
 Կեր—կեր
 Կերակուր—կերակուր
 Կէս—կէս
 Կթել—կըթել
 Կթղայ—կըթխա
 Կթոց—կըթոց
 Կիւր—կիր
 Կիւրակէ—կըրակի
 Կլայեկ—կոլոյեկ
 Կծել—կըծել
 Կծու—կըծու

Կծիկ կըծիք
 Կնիկ—կընիկ
 Կնուներ կընուեր
 Կնքաւոր քյոււոր
 Կնքել կընքել
 Կշսել կըշսել
 Կոթ կոթ
 Կոխել կոխել
 Կոծ կոծ
 Կոծիծ կուծոց
 Կոկ կոկ
 Կոկել կոկել
 Կող կող
 Կողմն կող, կողմ
 Կողով կողով
 Կոճղ—կոճ
 Կոճակ—կոճակ
 Կոյր կոր
 Կոյ (աղբ) կո
 Կոշա կոշա
 Կոպ կոպ
 Կով կով
 Կոտոշ կոտոշ
 Կոտորել կօտօրել
 Կոր կու
 Կորդ կորթ
 Կորեակ կորեկ
 Կորիզ կողիւնձ
 Կորկոտ կուրկոտ
 Կորնդան կորնդան
 Կորնշել կուրսել
 Կորուսանել կուրսել
 Կուղ (փայլի կատու) կուղ
 Կուղ (սապատ) կուղ
 Կուժ կուժ
 Կուսն կուս
 Կուտ կուտ
 Կուց (բուս) կուց
 Կաան կըւան
 Կախ կըւիվ
 Կոսնեկ կըւոնդ
 Կտաւ կըւալ
 Կտոր—կըւոր
 Կտուց կըւուց
 Կտրել կըւրել

Կտրիճ—կրտրիճ
 Կտրիճութիւն—կրտրիճութիւն
 Կրակ—կրրակ
 Կրեայ—կըրըրտկօտ
 Կրծել—կրոծել
 Կրճատ—կրճատ
 Կրուկն—կըրուկնդ

 Հագուստ—խակյխուստ
 Հագ—խագ
 Հագալ—խագալ
 Հագար—խագոր
 Հալել—խալել
 Հակառակ—խակառ (համառ)
 Համ—խամ
 Համար (վասն)—խտմար
 Համարանք—խամբրտնքդ
 Համարել—խամբրել
 Համեմ—խամեմ, համեմ
 Հայ—խայ
 Հայել (հայել)—խել
 Հայելի—խալի
 Հայր—խէր
 Հայրական—խէրկան
 Հանգիստ—խանգիստ
 Հանգչել—խանգչել
 Հանգոյց—խանգոյց
 Հանգստանալ—խտնգյլըստոնալ
 Հանել—խանել
 Հանելուկ—խտնլուկ
 Հաջել—խաճել
 Հասանել—խասնել
 Հասկանալ—խտսկտնալ
 Հասկ—խաշկ
 Հաստ—խաստ
 Հաստատ—հաստատ
 Հատ—խատ
 Հատանել—խատնել (ոատկել)
 Հարիւր—խարիւր
 Հարսն—խարս
 Հարսանիք—խարսնիս
 Հարց—խարց
 Հարցանել—խտրցնել
 Հացահան—խացխան
 Հացի (ծառը)—խացի

Հաւ (մարի)—խավ
 Հաւ (թռչուն)—խավքյ
 Հաւանել—խավնել
 Հաւասար—խտվտար
 Հաւասարել—խտվտարել
 Հաւատ—խավատ
 Հաւատալ—տվտալ
 Հեծանել—խէծնել
 Հեծեծալ—խէծալ
 Հեռ—խեռ (=հեռու)
 Հետ—խետ, խտա, խտ
 Հետ իրերաց—խըդրուց, խըդրաց
 Հերիք—խէրիքյ
 Հերկել—խիւրկել
 Հերու—խէրու
 Հիմա (կ)—մըկա
 Հիմն—խիմ, խիմքյ
 Հին—խին
 Հինայ—խինտ
 Հինգ—խինգյ
 Հինել—խինել
 Հինուածք—խինած
 Հիւանդ—խիվանդ
 Հիւանդանալ—խըվընդտնալ
 Հիւանդանոց—խըվընդտրոց
 Հիւս (ծյուհանդեղ)—ուսի (ծյընհեղեղ)
 Հիւսն—խուս
 Հիւր—խուր
 Հնազանդ—խնազտնդ
 Հնար—հուհար
 Հոգալ—խոկյալ
 Հոգի—խոկի
 Հով—խով, զով
 Հովիւ—խովիւ
 Հոտ—խոտ
 Հոտտալ—խոտվտալ
 Հոր—խոր
 Հորդել (մաքրել)—խորտել
 Հուժ—խուժ
 Հուճ—հուճ
 Հուրն ի հրեղեն—խուրն ի խրեղէն
 Հպարտ—խտպարտ
 Հրահան—խրախանդյ
 Հրաման—խրամանքյ

Հրամայեա՛ — խրամել՛
Հրեշտակ — խրշտակ
Հօտաղ — խօտաղ

Չագ — ծաղ

Չախ — ծախ

Չախ — ծէն

Չախնել — ծէնել

Չաւար — ծաւար

Չգել — խցել (1. դղել, նետել, 2. փո-
խար,՝ անցկացնել. օրինակ՝ թել
խցից ասեղ)

Չդռտալ — զըկըռտալ

Չեւբ — ծեւ

Չեւ — ծեվ

Չեւել — ծիվել

Չեղ — ծի

Չեթ — ծեթ

Չի — ծի

Չիւթ — ծիւթ

Չիւն — ծիւն

Չմեռն — ծըմեռ

Չմերուկ — ծըմրուկ

Չող — ծոց

Չոր — ծոր

Չու — ծիւ

Չուածեղ — ծըվտգեղ

Չուկն — ծիւկ

Չնծաղիկ — ծընծաղիկ

Ճախարակ — ճախրակ

Ճակատ — ճակատ

Ճաղ (միլ) — ճաղ

Ճանաչել — ճոնչընալ

Ճանապարհ — ճամբոթ

Ճանապարհել — ճամբխել (ուղարկել)

Ճանկ — ճանդ

Ճանկռել — ճոնդլլթել

Ճանձ — ճանջ

Ճաշ — ճաշ (երկրորդ նախաճաշ)

Ճապղղել — ճապղել

Ճար — ճար

Ճարել — ճարել

Ճարպիկ — ճարպիկ

Ճարտար — ճարտար

Ճգնաւոր — ճըկնուոր

Ճգնել — ճըկնել

Ճեճ — ճեճ

Ճիպու — ճըպուոր

Ճիպոտ — ճըպոտ

Ճիւղ — ճող

Ճկոյթ — ճըկոթ

Ճնճդուկ — ճընջդուկ

Ճշալ — ճըշալ

Ճոխկ — ճըռճըռնկ

Ճրագ — ճըրագ

Մագնիտ(ոս) — մըկլտտուկ

Մաղ — մաղ

Մախաթ — մախաթ

Մածուն — մածուն

Մակարդ — մակարթ

Մակաղել (ոչխարներին պառկեց-
նել) — մաղալել (ոչխարի պառկելը)

Մահ — մախ

Մաղ — մաղ

Մաղձ — մախո

